ԿԱՐԵՆ ՄԱՔԵՎՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՆԵՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԸ ԵՎ ՆՈՐԱՀԱՅՏ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

9(47.925)
Մ-15

"MATANADARAN"
MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

KAREN MATEVOSYAN

THE MANUSCRIPTS AND NEWLY DISCOVERED ADDITIONS OF SAMVEL ANETSI'S CHRONICLES

"NAIRI" Publishing Hause
Yerevan - 2009

44180

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՆԵՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԸ ԵՎ ՆՈՐԱՀԱՅՏ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

«ՆԱԻՐԻ»
Երեւան - 2009

ՀՏԴ 09:941(479.25):93/99(093)
ԳՄԴ 63.3(2Հ)+63.2
Մ 151

Տպագրվում է
Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Մաթեւոսյան Կարեն

Մ 151 Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը եւ նորահայտ լրացումները.– Եր.: «Մատենադարան» Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ, 2009, 222 էջ:

Աշխատությունը նվիրված է 12-րդ դարի պատմիչ Սամվել Անեցու «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց...» ժամանակագրության ձեռագրերի ուսումնասիրությանը: Քննվում են հեղինակային բնագրին վերաբերող, ինչպես նաեւ հետագայում ձեռագրերում կատարված հավելումների հարցերը: Միաժամանակ ներկայացվում են Մատենադարանում պահվող 16 ձեռագրից քաղված պատմական զանազան տեղեկություններ պարունակող չորջ երկու հարյուր ժամանակագրական միավոր, անտիպ հիշատակարաններ եւ այլ նյութեր:

ԳՄԴ 63.3(2Հ)+63.2

ISBN 978-99941-890-0-7
© Կարեն Մաթեւոսյան, 2009 թ.
© Մ. Մաշտոցի անվ. «Մատենադարան», 2009 թ.

ԱՌԱՋԱԲԱՆ

*Հայ մատենագրության 12-րդ դարի նշանավոր ներկայացուցիչներից է Անիի Մայր տաճարի քահանա Սամվել Անեցին, որն իր **«Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ»** վերնագրով ժամանակագրությունը[1] գրել է կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունու (1113-1166) պատվերով:*

Սամվել Անեցու ժամանակագրությունն ինքնին արժեքավոր գործ է հայ միջնադարյան մատենագրության մեջ: Այն ժամանակագրական ընդգրկմամբ ծավալուն (Ադամից մինչեւ 1163 թ.), սակայն միաժամանակ սեղմ չարադրանքով գործ է եւ պատահական չէ, որ միջնադարում բազմաթիվ ընդօրինակություններ է ունեցել: Ժամանակագրության մեր օրերը հասած ընդօրինակությունների թիվը՝ 70, արդեն իսկ տպավորիչ ու բացառիկ է: Սակայն այս ժառանգությունը առանձնահատուկ է նաեւ այն առումով, որ ժամանակագրության ձեռագրերը պարունակում են ոչ միայն Սամվել Անեցու հեղինակային բնագիրը, այլեւ տարբեր ժամանակ այլոց կատարած բազմաթիվ հավելումներն ու լրացումները, որոնք նույնպես աղբյուրագիտական արժեք են ներկայացնում: Ժամանակագրության գրչության աղյուսակային սկզբունքը, ուր էջերի կենտրոնում տարիների թվաշարքն է, իսկ աջ ու ձախ սյունակները հատկացված են տեղեկություններին, հաճախ բավական ազատ գրադաշտ է մնում, որն էլ հնարավորություն է տվել հետագայում այդ մասերում զանազան նոր տեղեկություններ ավելացնել: Ընդօրինակող գրիչները, ստացողները ու բանիմաց ընթերցողները հետագայում իրենց

---

1 *Սամվել Անեցու երկի երկարաշունչ վերնագիրը չկրկնելու համար այսուհետեւ այն կանվանենք ժամանակագրություն, որպես հատուկ անուն:*

հայտնի տարբեր տեղեկություններով յուրովի «լրացրել» են ազատ տեղերը: Բնականաբար հաջորդ գրիչներն ընդօրինակել են նաեւ այդ տեղեկությունները: Այսպիսով, ժամանակագրության ձեռագրերում ժամանակի ընթացքում ավելացվել են զանազան հայտնի եւ անհայտ անձանց կատարած հարյուրավոր հավելումներ: Միեւնույն ժամանակ, ընդօրինակողները եւ ուրիշներ ոչ միայն տեղեկություններ են մուծել ժամանակագրության տարբեր մասերում, այլեւ չարունակել են, հեղինակի նշած վերջին թվականից (1163 թ.) հասցնելով մինչեւ իրենց ապրած ժամանակը, որոշ ձեռագրերում՝ ընդհուպ մինչեւ 18-րդ դար: Հավանաբար նրանք այդպես վարվելու համար հիմնավորում են տեսել Սամվել Անեցու երկի վերնագրում՝ «*յաղագս գիւտի ժամանակաց անցելոց **մինչեւ ի ներկայս***» (այս եւ հաջորդ մեջբերումներում ընդգծումները մերն են - Կ. Մ.), արձանագրելով իրենց համար «ներկա» ժամանակի դեպքերը: 13-րդ դարի վերջերին հենց այդպես է վարվել Սյունյաց մետրոպոլիտ եւ պատմիչ Stեփաննոս Օրբելյանը, որը ձեռքի տակ ունենալով Սամվել Անեցու ժամանակագրության լրացված եւ Հայոց ՈՒԽԲ (1193) թվականով ավարտվող օրինակ, պատշաճ է համարել այն չարունակել, ինչպես ինքն է գրում՝ «...բերել հասուցանել ***մինչ ի մերս ժամանակ***»[2]:

Այսպիսով, մի կողմից զանազան ընդմիջարկություններ ստանալով, մյուս կողմից տարբեր հեղինակների ձեռքով չարունակվելով, Սամվել Անեցու երկը դարերի ընթացքում դարձել է պատմական ամենատարբեր տեղեկությունների յուրօրինակ հա-

[2] *Ժամանակագրութիւն Stեփաննոսի Օրբէլեանի, հրատարակության համար պատրաստեց Ա. Աբրահամյանը, Երեւան, 1942, էջ 21, 31: Հետաքրքիր է, որ միջնադարյան գրիչները չեն կասկածել, որ ժամանակագրությունը պետք է անընդհատ չարունակվի: Նրանցից ոմանք ձեռագրում իրենց ապրած ժամանակին վերաբերող նշումներն անելուց հետո ժամանակագրական աղյուսակներ են գծել նաեւ գալիք ժամանակների համար: Ձեռագրերից մեկի՝ 18-րդ դարի սկզբներին ապրած գրիչը մի քանի թերթերի վրա աղյուսակներ գծելով տարիների թվաշարքը հասցրել է մինչեւ Փրկչական ՍԻ (2020) եւ Հայոց ՌՆԿԹ (2020) թվականը (Մատենադարան, ձեռ. թիվ 3965, թերթ 86բ):*

վաքածու: Դրա չնորհիվ ժամանակագրության ձեռագրերից շատերը պարունակած նյութի առումով ստացել են միանգամայն ինքնուրույն արժեք:

Սամվել Անեցու ժամանակագրության հայերեն միակ հրատարակությունը կատարել է Արշակ Տեր-Միքելյանը Վաղարշապատում 1893 թ.[3], ձեռքի տակ ունենալով Էջմիածնի Մատենադարանի 13 ձեռագիր, հնագույնը՝ 13-րդ դարի (Մատենադարան, ձեռ. թիվ 1898), մյուսները՝ 16-18-րդ դարերի: Նա ժամանակագրությունը ներկայացրել է հետագայի հավելումներով, քանի որ իր ունեցած մատյանները բնագիրն ու հավելումները տարանջատելու հնարավորություն չեն տվել[4]: Այսօր Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է Սամվել Անեցու ժամանակագրության 35 ընդօրինակություն, որոնցից երկուսը՝ 12-րդ դարի:

Վաղարշապատյան հրատարակության մեջ հետագայի հավելումները չափազանց մեծ տեղ են զբաղեցնում: Բավական է նշել, որ 1000 թվականից մինչեւ 1163 թվականն ընկած ժամանակամիջոցի վերաբերյալ Սամվել Անեցու հեղինակային չարադրանքը հրատարակության մեջ նույն ժամանակաշրջանը ներկայացնող հատվածի միայն մեկ երրորդ մասն է կազմում: Ցավոք, հետազոտողներից ոմանք այս հանգամանքին անծանոթ լինելով, Սամվել Անեցու ժամանակագրության հրատարակության մեջ առկա հետնամուտ տեղեկությունները համարել են հեղինա-

[3] *Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց՝ յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893 (այսուհետեւ՝ Անեցի): Սամվել Անեցու երկն ավելի վաղ թարգմանվել ու հրատարակվել է լատիներեն եւ ֆրանսերեն, որոնց կանդրադառնանք ստորեւ:*

[4] *Ձեռագրերից մեկը (Մատենադարան, ձեռ. թիվ 1719, Էջմիածնի նախկին համարը 1700), որը պահպանել է ժամանակագրության գրեթե անխաթար բնագիրը, հրատարակիչը համարել է պակասավոր այդ վերագրելով գրչի անուշադրությանը, գրելով՝ «խիստ անուշադրութեամբ փայլում է գրչակը» (Անեցի, էջ ԺԵ):*

կինը եւ երբեմն նրան հանիրավի քննադատել՝ փաստորեն իրեն չպատկանող տողերի համար: Ժամանակագրության մեջ եղած հավելումների պատճառով սխալ պատկերացումներ են առաջացել նաեւ հեղինակի կենսագրության վերաբերյալ, անգամ նրա պատվիրատուի ինքնության հարցը երկար ժամանակ անորոշ է մնացել[5]:

Բարեբախտաբար մեզ են հասել Սամվել Անեցու երկի 12-րդ դարում կատարված մի քանի հնագույն ընդօրինակություններ, որոնք թույլ են տալիս վերականգնել հեղինակային բնագիրը[6]: Դրա շնորհիվ հնարավոր է Սամվել Անեցու բնագիրը զատել հետագայում տարբեր հեղինակների կատարած հավելումներից:

Ինչպես նշվեց, Սամվել Անեցու ժամանակագրության հիմքի վրա, որպես դրա շարունակություն է ստեղծվել Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրությունը, որը հրատարակել է Ա. Աբրահամյանը[7]: Նույն սկզբունքով են կազմվել եւս երեք անանուն հեղինակների ժամանակագրությունները, որոնք հրատարակել են Վ. Հակոբյանը[8], Ն. Պողարյանը[9] եւ Լ. Տեր-Պետրոսյանը[10]:

Վերջին տարիներին մենք զբաղվել ենք Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրական ժառանգության ուսումնասիրությամբ, որի արդյունքում ճշտվել են հեղինակի կենսագրության, ժամանակագրության առանձնահատկությունների, հեղինակային բնագրի ընդգրկման, ինչպես նաեւ ձեռագրերի հետ

5 Կ. Մաթեւոսյան, Սամուել Անեցու «Ժամանակագրության» ավարտման թվականը եւ պատվիրատուն, «Պատմա-բանասիրական հանդես», 1992, № 1, էջ 156-162:

6 Կ. Մաթեւոսյան, Սամվել Անեցու ժամանակագրության հնագույն ձեռագրերը, ակադեմիկոս Ն. Մառի ծննդյան 140 եւ մահվան 70-ամյակներին նվիրված ժողովածու, Երեւան, 2005, էջ 37-48:

7 Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 11-31:

8 Մանր ժամանակագրություններ, 13-18-րդ դդ., հ. 1, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երեւան, 1951, էջ 317-332:

9 Ն. Պողարյան, Ժամանակագրություն (11-18-րդ դդ.), Բանբեր Մատենադարանի, հ. 9, Երեւան, 1969, էջ 257-282:

10 Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Ա, Երեւան, 2005, հավելված 2, էջ 483-484:

կապված բազմաթիվ հարցեր[11]: Ջուգահեռաբար ժամանակագրության ձեռագրերից քաղել ենք պատմական տարբեր տեղեկություններ պարունակող չուրջ երկու հարյուր ժամանակագրական միավոր, անտիպ հիշատակարաններ եւ այլ նյութեր: Սույն հրատարակության նպատակներից մեկը հենց այդ նյութերի հրապարակումն է:

Այսօր արդեն պարզ է ձեռագրերի այն չրջանակը, որի միջոցով հնարավոր է առաջիկայում իրականացնել Սամվել Անեցու «Հավաքմունք ի գրոց պատմագրաց...» երկի համեմատական բնագրի հրատարակությունը: Սակայն չատ կարեւոր են նաեւ ժամանակագրության ձեռագրերում եղած հավելումներն ու լրացումները, որոնց մի մասը տեղ է գտել Ա. Տեր-Միքելյանի հրատարակության մեջ, մի մասը՝ վերը նշված հրատարակություններում, նյութերի մեկ այլ խումբ ներկայացվում է սույն գրքում: Դրանից բացի որոշ հավելումներ մնում են դեռեւս անծանոթ, գտնվելով ժամանակագրության այն ձեռագրերում, որոնց տեքստն առայժմ մեզ հասու չէ[12]: Այս ամենը եւս պետք է ի մի բերվի եւ հեղինակային բնագրի հետ հրատարակվի առանձին գրքով (առաջարկվող վերնագիրը՝ «Սամվել Անեցու եւ շարունակողների ժամանակագրությունը» (Ադամից մինչեւ 18-րդ դար): Սակայն մինչեւ իրականություն կդառնա այդ ծավալուն գործը, մենք հայագետների ուշադրությանն ենք հանձնում ներկա աշխատությունը, որը Սամվել Անեցու եւ ժամանակագրության ձեռագրերի մասին ամփոփ պատկերացում տալուց բացի պարունակում է մի չարք ձեռագրերից քաղված առաջին անգամ չրջանառության մեջ դրվող աղբյուրագիտական նյութեր:

11 Ուսումնասիրության հիման գրվել է «Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերի աղբյուրագիտական քննություն» դոկտորական ատենախոսությունը (2008 թ.): Մինչ այդ անդրադարձել ենք Անիի ձեռագրական ժառանգությանը (Կ. Մաթեւոսյան, Անի. եկեղեցական կյանքը եւ ձեռագրական ժառանգությունը, Ս. Էջմիածին, 1997):

12 Այդ ձեռագրերի թվում են այն մատյանները, որոնց մանրաժապավենները չկան Մատենադարանում: Հատկապես զգալի է վենետիկի եւ Վիեննայի Մխիթարյանների մոտ գտնվող, ինչպես նաեւ Երուսաղեմի ձեռագրերի մի մասի ավյալների պակասը:

ՍԱՄՎԵԼ ԱՆԵՑՈՒ

ԿՅԱՆՔՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

Անիի հզոր մշակութային միջավայրի ծնունդն է Սամվել Անեցին: Հայ պատմագիրների մատենագրական ցանկերում սովորաբար չեշտվում է Սամվել Անեցու՝ Անիի Կաթողիկեի (Մայր տաճարի) սպասավոր լինելու հանգամանքը՝ «Սամուէլ քահանայ կաթուղիկէին Անւոյ» կամ «Սամուէլ երէց կաթուղիկէին Անւոյ»[1]: Նա ապրել է մի ժամանակաշրջանում, երբ Անին քաղաքական բուռն անցքերի կիզակետում էր, իսկ Կաթողիկեն, որպես նախկին կաթողիկոսարանի եկեղեցի, Անիի հոգեւոր կյանքի կենտրոնն ու խորհրդանիշն էր: 1124 թվականից հետո հաջորդաբար այս եկեղեցում են սպասավորել նշանավոր Հովհաննես Սարկավագ վարդապետը, քահանա պատմիչներ Սամվել Անեցին եւ Մխիթար Անեցին:

12-րդ դարը Անիի պատմության մեջ հատկանշվում է որպես գրեթե մի հարյուրամյա պայքարի շրջան, որ մղում էին մի կողմից Շաղդադյան ամիրաները՝ քաղաքում իրենց իշխանությունը պահպանելու, մյուս կողմից՝ զորացած Վրաց թագավորության գահակալները՝ Անին ու նրա շրջակայքը գրավելու համար: Անեցիները, խուսանավելով այս երկու քաղաքական ուժերի միջեւ, փորձում էին պաշտպանել սեփական շահերը: Անիի քաղաքացիության այս ձգտումներն իրականացնող չարժման գլուխ կանգնած էր տեղի հոգեւորականությունը: Դա ուներ մի քանի պատճառ: Նախ՝ անեցիների քաղաքական զարթոնքը պայմանավորված էր հենց կրոնական խնդրի սրումով (1124 թ. անցքերի մասին կխոսվի ստորեւ): Երկրորդ՝ քաղաքում բնակվող հայ ազնվականության փոքրաթիվ ներկայացուցիչներն իրենց գոյությունը պահպանում էին չնորհիվ այն բանի, որ զինվորական ծառայություն էին կատարում Անիի ամիրաների մոտ եւ չէին կարող ինքնուրույն գործունեությամբ զբաղվել: Երրորդ՝ հոգեւորա-

[1] *Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Ա, Երեւան, 1959, էջ XLIX-LIII: Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիր. Կ. Մելիք Օհանջանյանի, Երեւան, 1961, էջ 51-53:*

կանությունն այդ շրջանում հայ հասարակության այն խավն էր, որն ուներ որոշակի հարկային եւ այլ արտոնություններ, որոնք դեռեւս կաթողիկոս Բարսեղ Ա Անեցին (1081-1113) ստացել էր սելջուկյան սուլթան Մելիքշահից (1072-1092): Վերջապես հիշյալ շրջանում Անիի եպիսկոպոսական աթոռը զբաղեցնողները, սերելով ժամանակի առավել զորեղ Հասանյան (Ապիրատյան) ազնվականական տնից[2], ունեին ոչ միայն հոգեւոր իշխանություն, այլեւ ընդարձակ ազգակցական կապեր, սեփականություն, միջոցներ ու հնարավորություններ, որոնք օգտագործում էին ըստ անհրաժեշտության:

1110 թ. Անիի մահացած ամիրային՝ Մանուչեհին փոխարինած որդին՝ Աբուլասվարը, ի տարբերություն հոր, բարյացակամ չէր հայերի նկատմամբ: Նա անզգուշություն է ունենում վիրավորելու նաեւ անեցիների կրոնական զգացումները, երբ խլաթում մի մեծ մահիկ պատրաստելով՝ բերում ու բարձրացնում է Անիի Կաթողիկեի գմբեթին: Սելջուկները տաճարը մզկիթի էին վերածել դեռ 1064 թվականին, քաղաքի գրավումից հետո, եւ Աբուլասվարը, փաստորեն, միայն հին մահիկը փոխարինում է նորով, բայց քաղաքի զորացած հայ բնակչությունը չի հանդուրժում այդ արարքը եւ օգտագործելով նոր մահիկի տեղադրման առիթը՝ ընդվզում է ամիրայի դեմ: Անեցիները դիմում են Վրաց Դավիթ Դ Շինարար (1089-1125) թագավորին, որը պատեհ առիթն օգտագործելով՝ 1124 թ. արշավելով Անի՝ հեշտությամբ գրավում է այն, գերում ամիրային իր ընտանիքով: Ուշագրավ է, որ Անի գալու հրավերով Դավիթ թագավորի մոտ մեկնած անեցի բանագնացները հոգեւոր դասի ներկայացուցիչներ՝ դպիրներ էին[3]:

Քաղաք մտած Վրաց արքայի առաջին գործերից մեկն այն է լինում, որ հանդիսավոր ծեսով վերստին օծել է տալիս Կաթողիկեն: Մատթեոս Ուռհայեցին, Վարդան Արեւելցին, ինչպես նաեւ վրաց պատմագիրը քաղաքի գրավման մասին գրելիս հիմնականում անդ-

[2] *Տե՛ս Կ. Մաթեւոսյան, Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը եւ նրա տոհմը 11-րդ դարում, «Բանբեր Մատենադարանի», 18, Երեւան, 2008, էջ 67-93:*

[3] *Լ. Մելիքսեթ Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, հ. Ա, Երեւան, 1934, էջ 218:*

բադառնում են Կաթողիկեի վերաօծման դեպքին[4]: Իսկ ահա իրադարձությունների ականատեսը՝ Սամվել Անեցին, միանգամայն այլ տեսանկյունից է կատարվածը ներկայացնում: Սամվել Անեցին Կաթողիկեի հետ պատահածի մասին լռում է, գուցե այն պատճառով, որ չէր ուզում իրադարձության կրոնական կողմն ընդգծել, նկատի ունենալով Աբուլասվարի եւ իր պատվիրատու Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսի հարաբերությունները (այս մասին կնշվի ստորեւ), կամ թերեւս խուսափում է պատմել Կաթողիկեի երբեւէ մզկիթի վերածված լինելու մասին[5]: Սակայն, պատմության այս հատվածը զանց առնելով, Սամվել Անեցին կամա թե ակամա ներկայացնում է անեցիների ընդվզման հիմնական պատճառը, որն Անիի չուրջն ստեղծված անկայուն վիճակն էր, վրացիների ու սելջուկների պարբերական դարձած ասպատակությունները, ավազակությունը, որից ելք գտնելու համար քաղաքացիները դիմում են հիշյալ քայլին: Նա գրում է. «Ի բազում հինահարութեանց եւ իսպառսպուռ ջնջելոյ ասպատակ արձակելով յաշխարհս մեր՝ երբեմն ի Վրաց, երբեմն ի Սկիւթականաց՝ անհնարին նեղութեամբ, տարակուսեալ տառապեալ բնակիչք քաղաքիս Անւոյ եւ Շիրակ գաւառի խորհեցան ելս գտանել մրրկին...»[6]: Հենց այս էր քաղաքի ու Շիրակ գավառի բնակչության դժգոհության բուն պատճառը, որը նշում է Սամվել Անեցին, իսկ մյուս հեղի-

4 Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն (աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի), Երեւան, 1991, էջ 392, Վարդան Աբեւելցի, Տիեզերական պատմություն, աշխարհաբար թարգմանությունը Գ. Բ. Թոսունյանի (գրաբար տեքստը վերահրատարակությունն է 1862 թ. Վենետիկի հրատարակության), Երեւան, 2001, էջ 122-123, Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, հ. Գ, Երեւան, 1955, էջ 42-43:

5 Կաթողիկեի ավագերեցը լինելով՝ Սամվել Անեցին իր Ժամանակագրության մեջ այս եկեղեցին տարբեր անուններով մեծարելով կոչում է «պայծառափառ», «մեծափառ», «սխրատեսիլ» (Անեցի, էջ 103, 104, 108): Վերջին ածականը գուցե հեղինակի գյուտն է, քանի որ հայ մատենագրության մեջ նրանից առաջ եւ հետո, որքան մեզ հայտնի է, «սխրատեսիլ» բառը չի հանդիպում:

6 Անեցի, էջ 125, Համմտ. Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 103ա, Մատենադարան, ձեռ. թիվ 3613, թերթ 67ա: Ժամանակագրության հրատարակության մեջ, հիշյալ հատվածում բացակայում են «երբեմն ի Վրաց» բառերը:

նակները հիմնականում գրում են ընդվզման առիթի մասին, որը նոր մահիկի տեղադրումն էր: Փաստորեն Անիի չրջանը ենթարկվել է ասպատակությունների ինչպես մահմեդականների, այնպես էլ վրացիների կողմից, եւ տարակուսած քաղաքացիները, որպես ստեղծված դրությունից դուրս գալու ելք, որոշել են ապավինել քրիստոնյա ուժեղ տիրակալին՝ «...ձեռս տալով յարքայն Վրաց ի Դաւիթ, նենգեցին ամիրային Ապլասւարայ որդւոյ Մանուչէի, որ տիրէր քաղաքին յետ հաւրն մահու, առնլով զթագաւորն ի ներքս, բանալով զդրունս քաղաքին, որ ընդ մտանելն առ ժամայն եղեւ վնաս արեան եւ ոչ միոյ չնչոյ»[7]: Անիի այս «անարյուն» գրավումը, սակայն, դրամատիկ չափ բուռնակություն է ունենում. «Բայց (Դավիթը – Կ. Մ.) կալեալ զԱպլասւար որդւովքն՝ ընդ իւր խաղացոյց յերկիրն Վրաց, ի մահարար տեղւոջ բնակեցոյց զնոսա, ուր երկուս յորդւոցն, հանդերձ հարբն, վճարեցին զկենցաղոյս»[8]: Պատմիչներից միայն Սամվել Անեցին է նշում Աբուլասվարի եւ նրա որդիների մահվան պատճառը (այն, որ նրանց բնակեցրել են «ի մահարար տեղւոջ»):

Անեցի պատմիչն այնուհետեւ գրում է Դավթի մահվան եւ որդու՝ Դեմետրեի հաջորդելու մասին, ապա նշում, որ Աբուլասվարի անդրանիկ որդին՝ Փաղւունը, որը Խորասանում էր, կատարվածի մասին տեղեկանալով չտապում է Անի եւ պաշարում քաղաքը: Սկսվում է սով, որից փրկվելու համար պարիսպներից դուրս եկող տղամարդիկ կոտորվում են, իսկ կանայք ու երեխաները «վաճառակուր» լինում: Վրացիները ժամանակ առ ժամանակ ուժեր են ուղարկում՝ «արք ընտիրք, որպէս եւ անուանի քաջագաւտիս Իւանէ որդի Ապլհեթի, որ բազում արուեստիւնս ցուցեալ, զասպատակս կոտորէր: Եւ ի զաւրաժողով լինել ի վերայ քաղաքիս Փաղնոյ բազում հեծելօք, առ ոչինչ համարեալ զեկեալս ի պարտութիւն մատնեաց, այլեւ սակաւ արամբք պատճառ եղեւ փրկութեան քաղաքիս, մարտակցութեամբ բնակչաց սորա»[9]:

7 Անեցի, էջ 125-126, Համմտ. Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 103բ:

8 Նույն տեղում:

9 Անեցի, էջ 126, Համմտ. Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 104ա, տե՛ս նաեւ Պ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երեւան, 1977, էջ 229-230:

Հայրենի քաղաքի հերոսական ինքնապաշտպանության մասին գրելիս հեղինակն, ասես հակիրճության իր սկզբունքից չեղվելով, ոգեշունչ տողերով արձանագրել է անեցի մի խիզախ կնոջ՝ Այծյամի անունը. «Եւ յայսմ պատերազմի առաքինացաւ կին մի ի վերայ պարսպացս, առնացի սառացեալ սիրտ՝ հալածականս առնէր քարամբք զմարտուցեալսն յելանել ընդ պատուարն, առ ոչինչ համարեալ զխոցուածս նետիցն, զոր վիրաւորէին արտաքուստ: Եւ էր անուն նորա, ըստ արժանի արագութեան նորա, Այծեամն կոչեցեալ»[10]: Այս փոքրիկ հատվածը ցույց է տալիս, որ ամիրաների 60-ամյա իշխանությունը թոթափած անեցիները ժողովրդական բուռն դիմադրություն են ցուցաբերել, կենաց մահու կռիվ մղել քաղաքի պաշտպանության համար:

Անեցի պատմիչը շարունակում է, գրելով, որ քանզի վրաց իշխանությունն ամենուրեք չէր հաստատվել, սովն ու մյուս դժվարությունները շարունակվում էին, ստիպված են լինում քաղաքը հանձնել Փառլունին, պայմանով, որ հորը դավաճանողներից վրեժխնդիր չլինի[11], սակայն հետո նա այլեւայլ միջոցներով վրեժ է լուծում: Այդ ժամանակ երկիրը թեեւ խաղաղվում է սովորական դարձած ավազակություններից, սակայն, հեղինակի խոսքերով, «յաղագս վերոյգրեալ նեղութեանց՝ եւ վասն հարկապահանջ յափշտակութեանց եկն եհաս ի վերայ մեր վերջին աղքատութիւն եւ տառապանք անհնարինք... եւ աստանաւր յաւելաւ յաճախապէս՝ մի գհետ միոյ, մինչեւ յաւուրսս յայսոսիկ, յորում եմք»[12]: Անիի բնակիչների նեղ կացությունը ներկայացնող այս տողերից հետո պատմիչը հաղորդում է չափազանց հետաքրքիր մի տեղեկություն: Պարզվում է, որ Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսը բանակցություններ էր սկսել Անիի ամիրա Աբուլասվարի հետ, եւ 1120-ական թվականների սկզբներին նրա ու ամիրայի միջեւ նախնական համաձայնություն էր կայացել կաթողիկոսական աթոռի Անի փոխադրման համար: Սակայն 1124-26 թթ. դեպքերն ինքնըստինքյան խափանել են այս կարեւոր ձեռնարկը, որը հարուցել է հայրապետի զայրույթը: Սամվել Անեցին գրում է. «Բայց սրբազան հայրապետն եւ առաջնորդն հաւատոյ Տէր Գրիգորիս, վասն զի ուխտ սիրոյ ունէր առ Ապլսուար՝ վասն իւր սեփհական աթոռոյս, զալ այսրէն նորա յաւժար կամակցութեամբ, յորժամ լուաւ զհամբաւս զայս՝ առաւել զայրացաւ տրամադիր ցասմամբ առ գործողս իրին»[13]:

Սամվել Անեցին այս մասին հայտնող միակ հեղինակն է, ընդ որում՝ խնդրին քաջածանոթ, քանի որ կաթողիկոսի հետ անմիջական կապ ուներ: Փաստն արձանագրելուց հետո Անեցին արդեն իր անուներից համաքաղաքացիներին պարսավող տողեր է գրում՝ «Եւ այս ամենայն լինի... ի յառաւելութենէ մեղաց, զի իբրեւ տուն դառնացողաց արարաք զանձինս մեր...»[14] եւ այլն:

Գրիգոր Գ Պահլավունու Անիում հաստատվելու մտադրության մասին Սամվել Անեցու հաղորդումը չափազանց կարեւոր է, ինչպես Հայոց կաթողիկոսության, այնպես էլ Անիի պատմության տեսանկյունից: Հայտնի է, որ Բարսեղ Ա Անեցին 1105 թ. Անիից Քեսունի հայկական իշխանություն մեկնեց մահամերձ Գրիգոր Բ Վկայասերի կանչով: Վերջինիս մահից հետո Բարսեղը, Ներսես Շնորհալու բնորոշմամբ՝ «զսեփականն աթոռ թողեալ ի Շիրականն Անի»[15], մնաց Քեսունի կարմիր վանքում: Բարսեղ Անեցին դժբախտ պատահարի հետեւանքով մահկանացուն կնքեց 1113-ին, բայց հասցրեց որպես իր հաջորդ հաստատել երիտասարդ Գրիգոր Գ-ին՝ Գրիգոր Վկայասերի

---

10 Անեցի, էջ 126-127, Համմա. Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 104ա-104բ: Անիի հերոսուհու անունը մի շարք հրատարակություններում նշվում է «Այծեմնիկ»: Այն նույնպես ծագում է այծյամ բառից (տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երեւան, 1942, էջ 142):

11 Մատթեոս Ուռհայեցին գրում է նաեւ մեկ այլ կարեւոր պայմանի մասին, ամիրան խոստանում է, որ Կաթողիկեն այլեւս միայն հայերին պետք է պատկանի եւ ոչ մի մուսուլման այնտեղ պետք է ոտք չդնի (Մատթեոս Ուռհայեցի, էջ 400-401):

12 Անեցի, էջ 127, Համմա. Մատենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 104բ:

13 Անեցի, էջ 127, Համմա. Մատենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 105ա:

14 Նույն տեղում: Հատվածն ավարտելով պատմիչը գրում է. «Իսկ մեք ի կարդ չարագրութեանն գնասցուք, զի **զանձնէ ամբաստանեմ**» (Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 105ա): Վերջին բառերը համեմատելի է Սամվել Անեցու ուսուցչի Հովհաննես Սարկավագի գործերից մեկի վերնագրին՝ «**Ամբաստանութիւն զանձնէ**» (Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երեւան, 1956, էջ 127):

15 Տեառն Ներսէսի Շնորհալւոյ Հայոց կաթողիկոսի Բանք չափու, Վենետիկ, 1830, էջ 550:

քրոջ թոռանը, որը, նաեւ իր հորեղբոր թոռն էր[16]: Դրանից երկու տարի անց Քեսունի իշխանությունը վերացավ, եւ Գրիգորը եղբոր՝ Ներսես Շնորհալու հետ տեղափոխվեց Տլուք դավառի Ծովք ամրոց, որը Սմբատ Սպարապետը կոչում է «փոքրագոյն դղեակն Ծովք»[17], իսկ Շնորհալու վարքագիրը հավելում է, որ «փոքրագոյն դղեակն Ծով կոչեցեալ... ոչ ունէր այնչափ ամրութիւն...»[18] եւ անապահով էր: Նույն աղբյուրը վկայում է, որ «ի բնիկ աշխարհէն վտարեալ էին սուրբը հայրապետաքն Հայոց, ուր երիցագոյն աթոռն էր զառաջինն՝ ի Շիրականն անդ...»[19]: Ահա այդ «երիցագոյն» եւ Բարսեղ Անեցու «սեփական» աթոռն էր, որ Գրիգոր Գ Պահլավունին համարում էր նաեւ իրենը եւ, Սամվել Անեցու վկայությամբ, քաղաքի ամիրայի հետ «ուխտ սիրոյ ունէր... վասն իւր սեփհական աթոռոյս»:

Գրիգոր Գ Պահլավունին երկրորդ անգամ փորձում է Անի տեղափոխվել 1149-50 թվականներին, ինչպես հաղորդում է Սմբատ Սպարապետը, բայց հանգամանքների բերումով սեփականում է «զանմատչելի բերդն Հռոմկլայն» եւ այնտեղ հաստատում կաթողիկոսարանը (ուր այն մնում է մինչեւ 1292 թ.)[20]: Սակայն կաթողիկոսը սերտ կապեր է պահպանում Անիի հետ: Դրա մի արտահայտությունը կարելի է համարել այն, որ նա ժամանակագրություն է պատվիրել քաղաքի Կաթողիկեի երեց Սամվել Անեցուն:

Այսպիսով, Անին վերադարձվում է Շադդադյաններին, սակայն վերջիններս երգվում են այլեւս Կաթողիկեի նկատմամբ ոտնձգություն չանել[21]: Բնականաբար այդ դեպքից հետո հայ հոգեւորականության դիրքը քաղաքում ավելի է ամրապնդվում: 1124-ին վերաօծված Կաթողիկեի հոգեւոր դասը գլխավորում է ծերունազարդ Հովհաննես Սարկավագ վարդապետը[22], որին հավանորեն ծառայակցում են նրա անեցի սաները, որոնց թվում՝ Սամվել Անեցին:

Շադդադյանների եւ Վրաց թագավորների հակամարտությունը չարունակվում է, եւ քաղաքի հայ բնակչությունն անմասն չի մնում կատարվող անցքերից: Խոսելով 1155 թ. Անիում ծավալված իրադարձությունների մասին՝ երեք արաբ պատմիչներ՝ Իբն ալ-Ասիրը, ալ-Ֆարիկին եւ Այնին, գրեթե նույն բառերով հետեւյալն են հաղորդում. «...Անի քաղաքում Հայոց քահանաները ապստամբեցին, եւ այն գրավելով ամիր Շադդադից՝ հանձնեցին եղբորը՝ Ֆադլունին»[23]: Բայց ինչպես երեւում է, այս ամիրան եւս անեցիների սրտով չի լինում, եւ 1161-ին նրանք վերջինիս վռնդում են քաղաքից: Ալ Ֆարիկին այս մասին գրում է. «Անա (Անի) քաղաքում քահանաներն ապստամբեցին նրա տիրոջ՝ Ամիր Ֆադլուն իբն Մանուչիհրի դեմ, որը պարտվեց ու գնաց Բաբրան (Բագարան) կոչված ամրոցը Սուրմարիի մոտ: Քահանաներն Անան հանձնեցին Ափխազաց թագավոր Քարթուրին (Գեորգի): Նրա զորքը եկավ տիրեց, մեծ հարստություն կողոպտեց...»[24]:

Այս եւ նախորդ վկայություններին անդրադարձած ուսումնասիրողները սովորաբար նշում են, որ Անիի քահանաներ ասելով պետք է հասկանալ քաղաքի քրիստոնյաներին[25]: Սակայն ճշմարտությունը պահանջում է ասել, որ եթե այս ժողովրդական ելույթների շարժիչ ուժն իրոք Անիի քրիստոնյա հայ բնակչությունն էր, ապա նրան գլխավորողը քաղաքի հոգեւորականությունն էր: Այդ է պատճառը, որ արաբ հեղինակները միահամուռ չեչտում են քահանաներին: Այս իրողությունն ավելի է հիմնավորվում 1161 թ. դեպքերի կապակցությամբ Մխիթար Գոշի մոտ պահպանված վկայության շնորհիվ: Նա նշում է, որ Անիի Բարսեղ Բ եպիսկոպոսն ու Հասանյան ազնվականական տունը ներկայացնող նրա եղբայրները մի քանի անգամ հրա-

16 Գրիգոր Գ Պահլավունու հոր՝ Ապիրատի մայրը Գրիգոր Մագիստրոս Պահլավունու դուստրն էր (հետեւաբար Գրիգոր Վկայասերի քույրը), իսկ Ապիրատի հայրը՝ Աղբ[illegible]ահապ՝ Բարսեղ Անեցու հոր Վասակի եղբայրն էր (նրանք որդիներն էին 1021 թ. սպանված Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի), Կ. Մաթեւոսյան, Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը եւ նրա տոհմը 11-րդ դարում, էջ 67-93:

17 Սմբատայ Սպարապետի տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 161:

18 Սոփերք հայկականք, ԺԴ, Վենետիկ, 1854, էջ 46-47: Բ. Կիւլէսէրեան, Ծովք (Ծովք-Տլուք եւ Հռոմ-Կլայ), Վիեննա, 1904, էջ 10-16:

19 Նույն տեղում:

20 Սմբատայ Սպարապետի տարեգիրք, էջ 168, Կ. Մաթեւոսյան, Անի, էջ 61-62: Մատթեոս Ուռհայեցի, էջ 400:

21 Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 126:

22 Իբն Ալ-Ասիր (Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին 11, «արաբական աղբյուրներ» Բ), թարգմանություն բնագրից, առաջաբան եւ ծան. Ա. Տեր-Ղեւոնդյանի, Երեւան, 1981, էջ 257, 400, Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երեւան, 1980, էջ 99:

23 Հ. Մարգարյան, նշվ. աշխ., 101:

24 Տե՛ս Հ. Մարգարյան, նշվ. աշխ., 1980, 99:

4480

վիրել են Վրաց Գեորգի Գ թագավորին (1156-1184)՝ Անին գրավելու, բայց հետո (ինչպես երեւում է, այն բանից հետո, երբ սեփական ուժերով վատարել են քաղաքի ամիրային), երբ Գեորգին արշավել է դեպի Անի, չեն ուզել քաղաքը հանձնել նրան: Վրաց թագավորը քաղաքը գրավել է բռնությամբ եւ ընդդիմացողներից չատերին պատժել, որոնց թվում՝ քահանաների ու կրոնավորների[26]:

Այստեղից միանգամայն որոշակի է դառնում, որ հիշյալ դեպքերի ժամանակ, որպես անեցիների ընդհանուր շահերի արտահայտիչ, հանդես է եկել քաղաքի հոգեւորականությունն իր եպիսկոպոսի գլխավորությամբ: Իսկ թագավորն ընդդիմացողներին պատժելիս թեեւ եպիսկոպոսին հրապարակայնորեն չի դատապարտել, բայց նրա ենթականերին՝ քահանաներին ու կրոնավորներին, հասարակ քաղաքացիների հետ միասին ծաղր ու ծանակի է ենթարկել: Բնական է, որ քաղաքի քահանաները ինքնագլուխ չէին գործում, այլ ղեկավարվում էին իրենց հոգեւոր պետի՝ Բարսեղ Բ-ի կողմից, որը, լինելով Անիի այս շրջանի ամենաազդեցիկ աղնվականական տան զավակ, հետագայում եւս բավական ինքնուրույն գործունեություն է ծավալել[27]:

Սամվել Անեցին եւս անդրադարձել է 1161-63 թթ. դեպքերին, բայց առանց ներքաղաքային խմորումները ներկայացնելու: Ըստ նրա, երբ վրացիները երկրորդ անգամ գրավեցին Անին առաջ բերեցին շրջակա մահմեդական իշխանությունների պատասխան գործո-

26 «Իսկ Գիորգի իբրեւ թագաւորեաց... առնոյր եւ զքաղաքն Անի միանգամ եւ երկիցս կոչելով եպիսկոպոսին Բարսղի եւ եղբարաց նորա՝ որդոց Մագիստրոսին Հասանայ. եւ ապա ընդդիմացեալ ոչ տային ի ձեռն նորա զքաղաքն. եւ առեալ բռնաբար զքաղաքն եւ հրամայեաց աւար հարկանել եւ մերկացուցեալ զօրացն զամենեսեան զարս եւ զկանայսն, զքահանայս եւ զկրօնաւորս՝ բաղում անարգանս ցուցանէին յաղագս ընդդիմանալոյ...»: Տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, հ. Բ, էջ 390:

27 Բարսեղ Բ Անեցին իբրեւ «արքեպիսկոպոս թագաւորանիստ քաղաքին Անւոյ», «եպիսկոպոս յարեւելս հիւսիսոյ» համարվում էր Հյուսիսային Հայաստանի ողջ հայ հոգեւորականության առաջնորդը, գլխավոր դեր կատարում Հռոմկլայի կաթողիկոսական աթոռի հետ եղած հարաբերություններում՝ հանդես գալով դավանական անզիջողականության պաշտպանությամբ, իսկ 1195թ. Անիում կաթողիկոս է ձեռնադրվում: Հռոմկլայի աթոռը, որ մեկ այլ դեպքում անհապաղ անօրինական կհամարեր նման ձեռնադրությունը, ձեռնպահ է մնում որեւէ որոշում կայացնելուց (Կ. Մաթեւոսյան, Անի, էջ 66-69):

դությունները:

«ՈԺ (1161): Յայսմ ամի թագաւորն Վրաց Գեորգի՝ առ զԱնի՝ ի յունիս ի ԺԳ(13) եւ ապա յօգոստոս ամսամտին՝ կոտորեաց զՇահիարմէն եւթն հազարաւ՝ զՁՈ-ան (80 000) եւ այսորիկ ականատես եղաք մեք: Ի ԳՌ (3000) գրով այն էր զոր գերեաց, թող զանկեալ զղիակունս՝ որ ծածկէր զանդաստանս մեր...

ՈԺԲ (1163): Ապա զաւրաժողով լինելով սուլտանն Խորասանայ՝ եկեալ ի դուռն քաղաքիս Անւոյ եւ զարհուրեցոյց զբնակիչք սորա. յետ Լ (30) աւուր գնաց գաղտագողի աղուեսաբար եւ հար զթագաւորն Գեորգի եւ զաւար նորա էառ եւ դարձաւ ի տեղի իւր»[28]:

Այս դեպքերի մասին հայտնում են նաեւ այլ հեղինակներ, սակայն Սամվել Անեցու հաղորդումն աչքի է ընկնում ականատեսի անմիջականությամբ: Նա հայ հեղինակներից միակն է, որ արձանագրել է Վրաց թագավոր Գեորգի Գ-ի պարտությունը թշնամու անակնկալ հարձակման հետեւանքով[29]:

1164-ի վերջերին Անին կրկին վերադարձվում է Շադդադյաններին[30], սակայն այս փաստն արդեն տեղ չի գտել Սամվել Անեցու մոտ, քանի որ նա ժամանակագրության չարադրանքը դադարեցրել է 1163-ին:

1174-1176 թթ. քաղաքը մեկ անգամ եւս անցնում է վրացիներին, ապա վերադարձվում Շադդադյաններին: 12-րդ դարի վերջին քաոսրդում անեցիներն ավելի վճռական են դառնում: Հատկանշական է, որ 1186 թ. թեեւ քաղաքը գտնվում էր ամիրայական տիրապետության տակ, բայց անեցիները զենք վերցնելով հարձակվում են մահմեդականների զավթած եւ ավազակային որջ դարձած Ծառաքար ամրոցի վրա, գրավում այն եւ վերադարձնում իր օրինական տիրոջը, որն այլ ոք չէր, քան Անիի եպիսկոպոս Բարսեղ Բ-ը:

Տեւական պայքարի գնով անեցիները հասնում են այն բանին, որ Շադդադյանների տիրապետության վերջին շրջանում ոչ միայն լիակատար կրոնական ազատություն են վայելում, այլեւ ձեռք են բերում քաղաքական կշիռ: Անիի շուրջը ծավալված երկարամյա հակա-

28 Մատենադարան ձեռ., թիվ 5619, էջ 106բ-107ա, համմտ. Անեցի, էջ 137-138:

29 Հ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 112-113:

30 Հ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 116:

մարտությունը վերջնականապես հանգուցալուծվում է 1198 թ. վերջերին, երբ Շաղդադյան վերջին ամիրա Սուլթանի մահից հետո Զաքարե եւ Իվանե Զաքարյանների գլխավորած հայ-վրացական զորքերն անարգել մուտք են գործում քաղաք[31]:

Ահա այսպիսի բուռն իրադարձությունների շրջանում է ապրել ու ստեղծագործել Սամվել Անեցին: Նրա կենսագրության վերաբերյալ նախորդ ուսումնասիրողներն առավել հաճախ բավարարվել են «նրա մասին կենսագրական տեղեկություններ չունենք»[32] կամ «նրա մասին գրեթե ոչինչ չի պահպանվել»[33] եւ նմանօրինակ ձեւակերպումներով[34]:

Ժամանակագրության հրատարակության առաջաբանում Ա. Տեր-Միքելյանը գրում է, որ Սամվել Անեցին «միայն մի տեղ է իւր անունը յիշում»[35] վկայակոչելով ժամանակագրության համապատասխան մասում զետեղված հետեւյալ տեղեկությունը. «Ի ՇՀԸ թվին փոխի յաշխարհէս մեծ վարդապետն Սարգիս՝ որ էր ի Փառիսոսայ՝ որդի քահանայի միոյ՝ եւ աշակերտ սորա Երեմիա. որ եւ յաւելն վարդապետին թէ՝ լուռ լեր, գամս Գ (3). լուռ եկաց՝ ընդ միտս եւ ընդ Աստուծոյ խօսէր, որ եւ Անձրեւ կոչեցաւ: Եւ ընկերք սորա տէր Խաչատուր

31 Կ. Մաթեւոսյան, Անիում Զաքարյանների հաստատման ժամանակն ըստ նորահայտ հիշատակարանի, «Պատմա-բանասիրական հանդես», 1997, N 1, էջ 280-283, Ա. Շահնազարյան, Զաքարյանների ազատամարտերի առաջին փուլը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 6, Երեւան, 2005, էջ 140-142:

32 Մ. Աբեղյան, երկեր, հ. Դ, Երեւան, 1970, էջ 94:

33 Լ. Բաբայան, Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության, Երեւան, 1981, էջ 176:

34 Անեցի, էջ ե, Ս. Տ. Մելիք-Բախշյան, Հայոց պատմության աղբյուրագիտություն, Երեւան, 1979, էջ 173, Թ. Հակոբյան, Անիի պատմություն, գիրք Բ, Երեւան, 1982, էջ 116: Սամվել Անեցու ժամանակագրության հրատարակիչ Արշակ Տեր-Միքելյանը նրան ենթադրաբար նույնացրել է Կիլիկիայում ապրած գրիչ Սամվելի հետ, որը Ներսես Լամբրոնացու (1153-1198) հանձնարարությամբ 1190 թ. սկեւռայում ձեռագիր է ընդօրինակել եւ մի ընդարձակ հիշատակարան գրել (Անեցի, էջ ե): Սակայն այն հանգամանքը, որ իրեն «նուաստ եւ յետին» գրիչ անվանող այս Սամվելը Սկեւռայի միաբան էր եւ վանքի մոտ գտնվող Լամբրոնն անվանում է «ամրոց տէրանց մերոց», անհավանական է դարձնում Սամվել Անեցու հետ նրա նույնության հնարավորությունը:

35 Անեցի, էջ ե:

եւ Գրիգոր եւ Յովհաննէս եւ Սամուէլ ամենեքեան սոքա Անեցիք»[36]: Այս հատվածը չկա Սամվել Անեցու ժամանակագրության հնագույն երեք ձեռագրերից ոչ մեկում: Փաստորեն Սամվել Անեցին նման բան չի գրել եւ իր անունը ժամանակագրության մեջ չի հիշատակել: Մինչդեռ Ա. Տեր-Միքելյանի հրատարակությունից հետո այս տեղեկությունը Սամվել Անեցու «հեղինակությամբ» անցել է գրքից գիրք: Այլ աղբյուրներից հայտնի է, որ Երեմիա Անձրեւիկը եւ Սամվել Անեցին աշակերտել են Հովհաննես Սարկավագին[37] (հենց նա էր Փառիսոսից), եւ ուսումնասիրողները տարակուսել են, թե հիշյալ հատվածում ինչ Սարգսի մասին է խոսքը[38]:

Ժամանակագրության մեջ կատարված հետագայի հավելումներից է գալիս նաեւ Սամվել Անեցու կենսագրության առնչությամբ մեկ այլ չփոթմունք: Դեռեւս Գ. Զարբհանալյանը պատմիչին անդրադառնալով գրում է, որ նա «ինքզինքը աշակերտած կաւանդէ Գէորգ անունով վարդապետի մը, որ հաւանաբար Մեղրեցին է, ուրիշներն ալ՝ եւ մանաւանդ Վարդան պատմիչ, Յովհաննու Սարկաւագայ աշակերտ կը համարին զինքը»[39]:

Որտեղից է ծագում այս տվյալը: Ժամանակագրության հատվածներից մեկում, ուր Սամվել Անեցին խոսում է Հայոց մեծ թվականի

36 Նույն տեղում, էջ 128:

37 Վարդան Արեւելցին գրում է. «Էին եւ վարդապետք յայնմ ժամանակի **Յովհաննէս, որ եւ Սարկաւագ**... որոյ յիշատակ ճառագայթիցն փայլին մինչեւ ցարդ ի բանս իւր եւ ի նմանէ աշակերտեալսն՝ **Երեմիա**, որ եւ **Անձրեւիկ**... եւ **Սամուէլ երէց աշխարհի**, որ զգաւազանան յօրինեաց Քրոնիկոնին՝ **Անեցին**», Վարդան Արեւելցի, էջ 125:

38 Ա. Աբրահամյանը «Սամվել Անեցու մոտ Սարկավագ անունը Սարգիս ձեւով» հիշելը համարում է «առեղծված» եւ այն փորձում է լուծել կամրջաձորի օրինակից, աշակերտների անուններ պարունակող վկայության հետ կապ չունեցող, բայց Սարկավագի մահվան մասին հայտնող տեղեկությունը մեջբերելով: Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 32:

39 Գ. Զարպհանալեան, Պատմութիւն Հայերէն դպրութեանց, Վենետիկ, 1865, էջ 547, նույնի Հայկական հին դպրութիւն, Վենետիկ, 1897, էջ 672: «Սամուել Անեցին ուսումնառութիւնն անց է կացրել Գեւորգ անունով վարդապետի մոտ»,– գրում է Լ. Բաբայանը (Լ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 177):

հաստատման մասին[40], ավելացված է մի նախադասություն, որը չկա հնագույն եւ համեմատաբար նոր ձեռագրերի մեծագույն մասում: Այն հետեւյալն է. «Մինչեւ ցդիր թուականիս մերոյ ուղղեալ էր սուրբ վարդապետին իմոյ Գէորգեայ ըստ քրոնիկոնին զնահանջն եւ ասէ. «Տէսի ի Շ (500) եկին զգիր թուականին առաջին ամն նահանջ, ոչ գիտելով զղիարդն՝ թողլով աստի եւ յառաջ ըստ գրեանս»[41]: Ե՞րբ եւ ո՞վ է այս ավելացումը կատարել եւ ո՞ր Գեւորգ վարդապետին է նկատի ունեցել: Մատենադարանի ձեռագրերից ամենավաղը, որ ունի այս տվյալը, 16-րդ դարի վերջերին գրված թիվ 1486 մատյանն է, որն օգտագործել է նաեւ Ա. Տեր-Միքելյանը (հրատարակության ձեռագրերի Գ օրինակն է): Ձեռագրի գրիչ Սահակ Երզնկացին, որը հիշատակարանում խոստովանում է, թե ժամանակագրությունն իր համար անհասկանալի գիրք է, հավանաբար հենց իր Գեւորգ վարդապետի կատարած դիտողության մասին է գրել: Ընդ որում, վերը նշված հատվածը ձեռագրում գրված է բուն գրչությունից ավելի մանրատառ եւ ակներեւ է, որ այն հավելում է (նկ. 1): Այս մատյանը որպես նախօրինակ օգտագործած գրիչներն ակամա «բազմացրել» են Գեւորգ վարդապետի մասին տեղեկությունը:

Հովհաննես Սարկավագի Անիի դպրոցի մասին վկայություն է պահպանվել նրա կենսագրության մեջ, ուր բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ կան դպրոցի գործունեության, ուսումնական ծրագրի, կրթական գործընթացի մասին[42]:

11-րդ դարի վերջերին Անիում կարճ ժամանակով վերականգնվեց կաթողիկոսական Աթոռը, երբ կաթողիկոս դարձավ Բարսեղ Ա Անեցին: 1081-ին Հաղպատում ձեռնադրված Բարսեղը հավանաբար հենց այդ ժամանակ էլ այնտեղից իր հետ Անի է բերել տեղի նշանավոր վարդապետ Հովհաննես Սարկավագին՝ նրան հանձնարարելով

40 Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 73ա-73բ:

41 Անեցի, էջ 75:

42 Կենսագրի պատկերավոր արտահայտությամբ՝ Հովհաննես Սարկավագը, «իբրեւ զիմաստուն մեղու, բարձեալ յանդամս մտաց զծաղիկս յերանգոց գունոց եւ հոտոց եւ համոց, բերէր **ի քաղաք իւր եւ տեղի սննդեան՝ ի քաղաքամայրս Անի** եւ լի առնէր ըզտունն ի փարթամութենէ անտի... Շուրջ բակ բոլորեալ զմանկունս զիւրեաւ՝ խոնարհաբար եւ ախորժելի սիրով ուսուցանէր զխրթին եւ զխորին իրս...» (Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 120-121):



1. Գեւորգ վարդապետի անվամբ հավելումը (Մատենադարան, ձեռ. թիվ 1486, 138բ):

կաթողիկոսարանի դպրոցի վերաբացումը[43]: Այս էր պատճառը, որ հոգեւոր բարձրագույն կրթություն ստանալու համար Հովհաննես Սարկավագի մոտ էին գալիս Հայաստանի տարբեր ծայրերից, որպես «իմաստութեան գանձուց վաճառականք», Անիում ուսանելով դառնում «ուսուցիչք եւ լուսաւորք ոգւով», եւ վերադառնալով իրենց գավառները՝ վարդապետի պատգամները տարածում ողջ երկրում՝ «...նորայն առաւսգութիւնք լցին զոլորտս Հայաստանեայց»[44]:

Բնական է, որ Հովհաննես Սարկավագի Անիի դպրոցում քիչ չեն եղել նաեւ աննեցիները: Հենց նրանց է հիշատակել Սամվել Անեցու ժամանակագրության լրացնողներից մեկը. «տէր Յաչատուր եւ Գրիգոր եւ Յովհաննէս եւ Սամուէլ ամենեքեանք սոքա աննեցիք»[45]: Հնարավոր է, որ սրանցից Գրիգորն է 1129 թ. հիշվում է որպես Անիի կաթողիկեի ավագերեց, որի դեմ, ըստ Վարդան Արեւելցու, փորձում է ճնշում գործադրել Փալդուն ամիրան, բայց հաջողության չի հասնում[46]: Գրիգորի հետ պատահած միջադեպը ցույց է տալիս, որ կաթողիկեի ավագերեցն այդ ժամանակ բավական մեծ հեղինակություն էր վայելում: Շուտով Գրիգորին փոխարինում է Սամվել Անեցին:

Արժանահիշատակ է, որ Հովհաննես Սարկավագը ոչ միայն զբաղվել է մանկավարժությամբ, այլեւ տոմարի բարեկարգման հարցերով[47], տոմարագիտություն ուսուցանել նաեւ իր սաներին[48]: Այդ գիտելիքները լավագույնս կիրառեց նրա սաներից Սամվել Անեցին, որը ոչ միայն Եւսեբիոս Կեսարացու Քրոնիկոնի սկզբունքով կազմեց Ադամից մինչեւ իր օրերը հասնող ժամանակագրություն, այլեւ գրեց տոմարագիտական աշխատություն. «Մեկնութիւն տումարի, զոր արարեալ է Սամուէլի քահանայի ի խնդրոյ Ստեփանոսի Իմաստասիրի»[49]: Այն շարադրված է հարց ու պատասխանի ձեւով, ընդ որում՝ Սամվել Անեցին օգտվել է Անանիա Շիրակացու Քննիկոն աշխատության տոմարագիտական բաժնից, երբեմն առանձին հատվածներ նույնությամբ արտագրելով[50]:

Սամվել Անեցու ժամանակագրության ստեղծման համար պարտական ենք ոչ միայն հեղինակին, այլեւ պատվիրատուին՝ կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունուն: Ինչպես վերը նշվեց, նա մտադրություն ուներ հաստատվելու Անիում, որը սակայն չկայացավ: Սամվել Անեցին ժամանակագրության մեջ մի քանի անգամ ուղիղ խոսքով դիմում է պատվիրատուին: Հնարավոր է, որ նա իր գործը հատված-հատված ուղարկել է նրան եւ աշխատանքը չարունակել համապա-

---

43 Հովհաննես Սարկավագի գլխավորած դպրոցին անդրադարձող ուսումնասիրողները սովորաբար չեն խորացել նրա հիմնադրման հանգամանքների մեջ, որի պատճառով անտեսել են այդ շրջանում Անիում կաթողիկոսական Աթոռի վերահաստատման հանգամանքը՝ կարծելով, թե Սարկավագը քաղաքում մի մասնավոր դպրոց է ստեղծել (Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 25, Թ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 114, Ա. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի եւ մանկավարժության պատմության, Երեւան, 1958, էջ 243, Կ. Միրումյան, Հովհաննես Սարկավագի աշխարհայացքը, Երեւան, 1984, էջ 29): Մինչդեռ Շաղդադյան ամիրաների իշխանության տակ գտնվող Անիում համահայկական նշանակություն ունեցող բարձրագույն դպրոց կարող էր բացվել միայն եկեղեցական բարձր հովանավորության պայմաններում (Կ. Մաթեւոսյան, Հովհաննես Սարկավագի գործունեությունն Անիում, «Էջմիածին», 2005, Է-Ը, էջ 59-72):

44 Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 120:

45 Անեցի, էջ 128:

46 Վարդան Արեւելցի, էջ 124: Չի բացառվում, որ վերը նշված հավելման մեջ հիշատակված Գրիգորը հետագայում Հառիճը վերականգնած Գրիգոր վարդապետն է (տե՛ս աստ, հավելված բ):

47 Գ. Բրուտյան, Օրացույց հայոց, Ս. Էջմիածին, 1997, էջ 115-145, Ռ. Վարդանյան, Հայոց տոնացույցը, Երեւան, 1999, էջ 230-266:

48 Այդ մասին նշվում է վարդապետի վարքում. «...կրթէր, արկանէր ի գիրս նուրբս եւ դժուարալուծս..., Յետ այսորիկ ի խոյզ եւ ի քնին ընթացից լուսաւորացդ մտեալ, տայր դումարել ի միաւեսակ եւ յանսեռիւր թիւս տումարի, զուշ եւ զակն ոգւոց: Եւ տեղեակ առնէր տօնից կարգաւորաց եւ փոփոխման ամսոց եւ ամանակաց եւ եղանակաց...» (Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 121):

49 Ա. Աբրահամյան, Սամվել Անեցու տոմարական եւ տիեզերագիտական աշխատությունները, էջ 30-36: Ըստ Ռ. Վարդանյանի, Ա. Աբրահամյանի հրատարակած բնագիրը Անեցու տոմարագիտական երկի մի մասն է միայն: Յովոք պատվիրատուի վերաբերյալ անունից բացի ոչինչ հայտնի չէ: Սակայն նկատենք, որ «իմաստասեր» պատվանունը բավական տարածված է եղել Անիում:

50 Ուշագրավ է, որ Շիրակացու հիշյալ աշխատության բնագիրը 1040-ական թվականներին պահվել է Անիի կաթողիկոսարանում, որի վերաբերյալ ուղղակի նշում կա Գրիգոր Մագիստրոսի՝ Պետրոս Գետադարձին ուղղված նամակներից մեկում: Գիտնական իշխանը կաթողիկոսին խորհուրդ է տալիս այդ աշխատությունն օգտագործել ուսումնական նպատակով: Գրիգոր Մագիստրոսի թղթերը (աշխատասիրությամբ՝ Կ. Կոստանյանցի), Ալեքսանդրապոլ, 1910, էջ 8-9, Կ. Մաթեւոսյան, Անի, էջ 236-237:

տասեան ցուցումներ ստանալով: Հայտնի է, որ Գրիգոր Գ Պահլավունին վախճանվել է 1166 թվականին[51]: Թե երբ է մահացել ինքը՝ Սամվել Անեցին, հայտնի չէ:

Ա. Աբրահամյանն իր գրքերից երկուսում նշում է Զմմառի հավաքածուի ձեռագրերից մեկը, որի գրիչը հունարեն եւ հայերեն խառն տառերով հիշատակություններ է թողել, իրեն անվանելով «Սանուիել մեղապարտ քահանա», եւ որն ըստ հեղինակի, «պատմա-տոմարագիտական բովանդակությամբ արժեքավոր ունիկում է՝ գրված հայ ականավոր ժամանակագիր Սամուել Անեցու կողմից 1178 թ.»[52]: Հիշյալ ձեռագիրը բազմազան նյութերի ժողովածու է, որի միայն սկզբի մասն է այս գրչինը[53], չարունակությունը գրել են ուրիշները, մի մասը՝ Թադեոս քահանան 1123 թ. Դրազարկում, իսկ ձեռագրի վերջում դարձյալ հունարեն եւ հայերեն խառնագրով հիշատակվում են Սիմեոն եւ Ռատակես քահանաները[54]: Զմմառի ձեռագրացուցակը կազմող Մ. Քէշիշյանը, այստեղ հիշված «Սանուիել» քահանային, իրավացիորեն, չի նույնացնում Սամվել Անեցու հետ[55]:

Բավական հետաքրքրական է Սամվել Անեցու որդու եւ թոռան մասին պահպանված տեղեկությունը, որին անդրադառնալուց հետո կփորձենք ընդհանրացնել Անեցու կենսագրության մասին առկա տվյալները:

1233 թ. Սամվել Անեցու թոռը՝ Աբրահամ երեցը, Անիում գտնվող իր ունեցվածքից արժեքավոր նվիրատվություն է կատարել Խծկոնքի

---

51 Կյանքի վերջին շրջանում նա ծանր հիվանդ էր եւ կաթողիկոսարանի գործերը հանձնել էր եղբորը՝ Ներսես Շնորհալուն (Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 1622, Ա. Բոզոյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165-1178 թթ.), Երեւան, 1995, էջ 34-42):

52 Ա. Աբրահամյան, Հայկական ծածկագրություն, Երեւան, 1978, էջ 147-148, նույնի, Հայոց գիր եւ գրչություն, էջ 271:

53 Այս գրչին պատկանող էջերում տեղ են գտել «Աչխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ» (թերթ 1ա-45ա), «Մշտնահամարք ճանապարհաց» (թերթ 45ա-46ա), «Տոմար» (թերթ 47ա-105բ): Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանի, կազմեց Մ. Քէշիշեան, Վիեննա, 1964, էջ 490-491:

54 Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի, էջ 495:

55 Նույն տեղում, էջ 804: Ձեռագիրը հալանաբար հայ-հունական սերտ առնչություններ ունեցող միջավայրի ծնունդ է:

վանքին: Տեղի Ս. Սարգիս եկեղեցու արձանագրության մեջ նա հիշում է հորը՝ Սարկավագ քահանային, եւ համբավավոր պապին՝ վերջինիս հիշատակին նվիրելով կատարած նվիրատվության դիմաց ստացած վեց պատարագներից երկուսը: Ահա այդ արձանագրությունից մի հատված. «Ի ՈՁԲ (1233) թուիս չնորհիւն Քրիստոսի, ես Աբրահամ երէց, որդի Սարկաւագ քահանայի, թոռն Սամուէլ երիցոյ Անեցի ետու զիմ գանձագին Բ (2) տուն նորաչէն եւ ի վերէն Բ (2) կուղպակ ի սուրբ ուխտս ի Խծկաւնս... եւ փոխարէն հատուսցէն մեզ յամենայն ամի Զ (6) աւր պատարագ՝ Դ (4) Աբրահամու եւ Բ (2) տէր պապ երիցու...»[56]:

Արձանագրության չնորհիվ մեզ հայտնի է դառնում, որ Սամվել Անեցու քահանա որդին Սարկավագ անունն է կրել: Կարելի է ենթադրել, որ Սամվել Անեցին որդուն Սարկավագ է անվանել ի պատիվ սիրելի ուսուցչի՝ Հովհաննես Սարկավագի:

Հնարավոր է, որ Սամվել Անեցու որդի Սարկավագն է 1151 թ. նորոգել Անիի Ս. Սարգիս եկեղեցին, որը գրականության մեջ երբեմն կոչվում է նաեւ Սարկավագի եկեղեցի: Պահպանված արձանագրությունը վկայում է. «Ի թուին Ո (1151) ես Սարկաւագ քահանա զայս ծերացեալ տաճարս Սըրբոյն Սարգսի վերստին նորոգեցի ի հըմանէ ի յիմոց գուց. Որք ի ներկայդ էք զիս եւ ծնաւդս յիշեսջիք ի Քրիստոս Յիսուս»[57]: Սույն արձանագրությունը Անիի Շադդադյան տիրապետության շրջանից հայտնի առաջին չինարարական վկայագիրն է: Հիշենք, որ այդ ժամանակ եկեղեցաշինության համար պայմանները բնավ էլ նպաստավոր չէին, եւ նման գործ կարող էր կատարել միայն քաղաքում ամուր դիրք ու հենարան ունեցող մեկը: Սամվել Անեցին, որը նույն այդ տարիներին կաթողիկեի ավագերեցն էր, կապեր ուներ ժամանակի Հայոց կաթողիկոսի հետ, կարող էր իր որդու ձեռնարկի երաշխավորը հանդիսանալ եւ նրան օժանդակել: Սարկավագի արձանագրության վերջաբանը եւս ասես հուշում է այս մասին. այն ոչ թե ուղղված է հետագա սերունդներին, այլ «ծերացյալ» տաճարը հիմնո-

---

56 Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 211:

57 Դիվան հայ վիմագրության, պր. Ա, կազմեց Հ. Օրբելի, Երեւան, 1966, էջ 56:

վին նորոգված տեսնելու եկած ներկաներին՝ «Որք ի ներկայդ էք զիս եւ ծնաւղս յիշեսջիք...»: Սամվել Անեցու որդու եւ Ս. Սարգիս եկեղեցին նորոգողի նուիրատուման օգտին է խոսում նաեւ այն հանգամանքը, որ այդ ժամանակ Սարկավագը սակավ հանդիպող անուն էր[58]:

Սամվել Անեցու թոռ եւ Սարկավագի որդի Աբրահամ երեցից հետո այս հեղինակավոր քահանայական տոհմը շարունակվել է, թե ոչ՝ հայտնի չէ: Խծկոնքի արձանագրության մեջ Աբրահամի հիշատակած իր բոլոր ազգականները՝ Խոցադեղ, Հովհաննես երեց, Տիրանց, Շահմամ, արդեն մահացել էին եւ թաղվել վանքի Ս. Սարգիս եկեղեցու մոտ[59]: Այս հանգամանքը վկայում է, որ 1233 թ. արձանագրության գրության ժամանակ Աբրահամն առաջացած տարիքում գտնվող մարդ էր:

Անեցի մատենագրի տոհմի երեք սերնդի մասին պահպանված վկայություններն արդեն իսկ ուշագրավ իրողություն է: Սամվել Անեցին այս առումով միակն է հայ միջնադարյան պատմիչների շարքում:

Երբ է ծնվել եւ երբ մահացել Սամվել Անեցին: Քանի որ թվականները ստույգ հայտնի չեն, այս մասին արված ենթադրությունները միշտ էլ մոտավոր են լինելու[60]: Ուսումնասիրողները սովորաբար պատմիչի ծնունդը տեղադրում են 12-րդ դարի առաջին տասնամյա-

---

58 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 4, Երեւան, 1948, էջ 262: Սարկավագ անձնանվան հայտնի ամենավաղ հիշատակությունը 1047 թվականից է (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., աշխատասիրությամբ Ա. Մաթեւոսյանի, Երեւան, 1988, էջ 88-89):

59 «...ի Սուրբ Սարքսի կողման ննջեցեալն (թվարկում է անունները)...» (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 211): Գուցե պատահական չէ, որ Սամվել Անեցու որդի Սարկավագը նորոգել է Անիի Ս. Սարգիս եկեղեցին, իսկ վերջինիս որդին հիշատակում է իրենց ազգականների՝ Խծկոնքի Ս. Սարգիս եկեղեցու մոտ թաղված լինելը: Հնարավոր է, որ սուրբ Սարգիսն այս ընտանիքի հովանավոր սուրբն է եղել: Ավելորդ չէ հիշել, թե ինքը՝ Սամվել Անեցին, ինչպես է ներկայացնում Խծկոնքն ու վանքի գլխավոր եկեղեցին. «զհրաշալի վանս զԽծկոնս չինեաց. պայծառ պսակաւ զարդարեալ զսուրբ քաւարանն՝ որ ճանաչի անուն սուրբ Սարգիս» (Անեցի, էջ 106):

60 Ա. Տեր-Միքելյանը, որը նուիրատվել է Սամվել Անեցուն եւ 1190-ին հիշատակարան գրած Սամվել Սկեւռացուն, գրում է. «Կգանք այն եզրակացութեան, որ Սամուէլ Անեցին վախճանուել է խորին ծերութեան մէջ՝ մօտաւորապէս 1190 թուից յետոյ, ուրեմն համարեա թէ հարիւր տարեկան հասակում: Ըստ այմ Սամուէլ ծնուած պէտք է լինի շուրջ 1100 թուին» (Անեցի, էջ Զ):

կում, մահը՝ նույն դարի 80-ականներին[61]:

Սամվել Անեցին հայրենի քաղաքում ուսանել է Հովհաննես Սարկավագի մոտ (1110-20-ական թվականներ), որից հետո, հավանաբար 1130-ական թվականներից, քահանայագործել է Կաթողիկեում: Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսից ժամանակագրություն կազմելու պատվեր ստանալով՝ չարագրանքը հասցրել է մինչեւ 1163 թ.: Ռ. Վարդանյանի հաշվարկներով Սամվել Անեցին «Պատճեն տոմարի» գործը խմբագրել է 1165 թ.[62]: Քանի որ 1173 թ. ժամանակագրության մեջ մի քանի վկայություններ են ավելացվել, որոնց հեղինակը Սամվել Անեցին չէ (այս մասին կնչվի ստորեւ), մեր կարծիքով նա մահացել է մինչեւ այդ թվականը, կամ հենց 1173 թվականին:

---

61 Ա. Աբրահամյան, Սամվել Անեցու տոմարական..., էջ 31, Ս. Մելիք-Բախշյան, նշվ. աշխ., էջ 173, Լ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 177:

62 Ռ. Վարդանյան, «Պատճէն տոմարի Հայոց»-ի խմբագրությունների ժամանակի որոշումը, Երեւան, 2007, էջ 195-196, Գ. Սիմոնյան, Ռ. Վարդանյան, Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տոմարի Հայկազնեայ» տոմարական ժողովածուն, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի Տարեգիրք, Ա, Երեւան, 2006, էջ 60, 69, 71:

ՍԱՄՎԵԼ ԱՆԵՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սամվել Անեցին ժամանակագրությունը գրել է Եվսեբիոս Կեսարացու (մոտ. 260-340) նշանավոր «Քրոնիկոնի»[1] սկզբունքով՝ ժամանակագրական տարբեր համակարգերի ներդաշնակեցմամբ կազմված աղյուսակներով: Ժամանակագրությունը սկսվում է փոքր առաջաբանով, որից հետո, առաջին մասում, ուր աղյուսակներ չկան, Ադամից հասնում է մինչեւ Քրիստոսի ծնունդը: Երկրորդ մասը, որն աղյուսակներով է (բացառությամբ համեմատաբար մեծ հատվածների), սկսվում է Քրիստոսի ծննդյան հիշատակությամբ՝ Փրկչական 1 թվականով[2] եւ ավարտվում 1163 թվականին վերաբերող տեղեկության արձանագրմամբ:

Սամվել Անեցու աշխատությունն սկզբնապես վերնագրված է եղել՝ «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ»: Հետագայում գրիչներից ոմանք սկզբում հավելել են հեղինակի անունը՝ «Սամուէլի քահանայի...» (արվել են նաեւ այլ միջամտություններ): Վերնագրին համապատասխանելով ժամանակագրությունը մեծապես քաղվածքային աշխատություն է: Հեղինակը բարեխղճորեն է օգտվել սկզբնաղբյուրներից, հաճախ դրանց նկատմամբ քննական վերաբերմունք հանդես բերել: Բացի հայոնի պատմագրքերից, նա օգտագործել է իր ուսուցչի՝ Հովհաննես Սարկավագի պատմական թղթերը, դրանցից մի քանի համեմատաբար ծավալուն մեջբերում կատարել եւ դրանով իսկ փրկել այդ հատվածները, քանի որ թղթերի բնագրերն

1 Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ Ժամանակագիր, Վենետիկ, 1818: Հայերեն հրատարակության մասին տե՛ս Ա. Մաթեւոսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» չորրորդ գիրքը, Երեւան, 1995, էջ 192-194:

2 Սամվել Անեցու, նրա ուսուցչի՝ Հովհաննես Սարկավագի եւ մի քանի այլ հեղինակների մոտ Փրկչական 1 թվականը (այսպես կոչված հայկական քրիստոնեական թվականը), այսօր կիրառվող թվականի համեմատությամբ հետ է երկու տարով: Այս մասին ավելի մանրամասն կնչվի ստորեւ:

այժմ կորած են[3]: Իր ժամանակի դեպքերը նա ներկայացրել է որպես ականատես՝ այլ պատմիչներից տարբերվող վերաբերմունք դրսեւորելով այս կամ այն իրադարձության նկատմամբ: Յուրօրինակ է պատմիչի տեսակետը հատկապես Անիի պատմության հետ կապված դեպքերի կամ գործիչների վերաբերյալ[4]:

Սամվել Անեցու ժամանակագրությունը թեեւ հիշատակվում է հայ մատենագրությանը վերաբերող գրեթե բոլոր աշխատություններում, սակայն առանձին ուսումնասիրության չի արժանացել[5]: Այստեղից էլ ծագում են ժամանակագրության հետ կապված բազմաթիվ թյուրիմացություններ:

Հետազոտողներից նրանք, ովքեր փորձել են ժամանակագրությանն ու նրա հեղինակին անդրադառնալ՝ հիմնվելով վաղարշապատյան հրատարակության վրա, ակամա հայտնվել են դժվար կացության մեջ, քանի որ այնտեղ եղած հետագայի ընդմիջար կուլտյունները, որոնք միախառնված են հեղինակային տեքստին, երբեմն ներքին հակասություններ են առաջացնում: Լ. Բաբայանն, օրինակ, Սամվել Անեցուն համարում է հակասական եւ պատմական կարեւոր անցքերի նկատմամբ «անորոշ վերաբերմունք» ունեցող հեղինակ[6]: Կարծելով, թե Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրությունն Անեցու աղբյուրներից մեկն է, նա գրում է. «Դժվար է բացատրել, թե ինչու հույների կողմից Անիի գրավման մասին գրելիս Սամուելը հարազատ չի մնացել իր աղբյուրին՝ Ուռհայեցուն, չի պահպանել նրա ոգին, իսկ ասենք, նույն Գագիկի եւ Մարկոսի չան մասին նույն աղբյուրի գրածը ամբողջությամբ արտագրել է առանց փոփոխելու»[7]: Իրականում

3 Կ. Մաթեւոսյան, Հովհաննես Սարկավագի պատմական թղթերն ըստ Սամվել Անեցու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 6, Երեւան, 2005, էջ 122-131:

4 Կ. Մաթեւոսյան, Սամվել Անեցին Անիի պատմության մասին, «Էջմիածին», 2006, Բ-Գ, էջ 72-85:

5 Սամվել Անեցու բուն ժամանակագրության վերաբերյալ ցայժմ ամբողջական ուսումնասիրություն չի հրապարակվել: Ժամանակագրության ուսումնասիրությամբ երկար տարիներ զբաղվել է Մատենադարանի գիտաշխատող, ցուցադրության բաժնի վարիչ Սամսոն Լալաֆարյանը (1923-1994), սակայն, ցավոք, նրա ուսումնասիրությունն անավարտ է մնացել:

6 Լ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 182-185:

7 Նույն տեղում, էջ 184:

Սամվել Անեցին ընդհանրապես ծանոթ չի եղել Մատթեոս Ուռհայեցու երկին. դրա առանձին տեղեկություններ ու հատվածներ ժամանակագրության մեջ մուծվել են հետագայում:

Անիի բյուզանդական նվաճման մասին գրողներից ոմանք հետեւյալ մեջբերումն են անում Սամվել Անեցու ժամանակագրության հրատարակությունից. «Էէր Պետրոս եւ ազատ Սարգիս եւ Գրիգոր Բջնեցին նենգեցին զԳագիկ եւ զԱնի եւնուն ի կայսրն Յունաց. վասն որոյ ելին ի բընիկ աչխարհէն իւրեանց՝ Տէր Պետրոս եւ Գրիգոր Վասակայ որդին, Գագիկ եւ այլք իշխանք Հայոց եւ եկին ի Հոռոմս»[8]: Հնագույն ձեռագրերից ոչ մեկը չունի նման տեղեկություն: Այստեղ խնդիրն այն չէ, թե հիշատակությունն ինչ չափով է իրականությանը համապատասխանում, պարզապես այն չի պատկանում Սամվել Անեցու գրչին:

Դեռեւս Մաղաքիա Օրմանյանը Պետրոս Ա կաթողիկոսի (1019-1054) մասին գրելիս «Գետադարձի զրույցը» ենթաբաժնում պատմելով այն մասին, թե ինչպես Տրապիզոնի ջրօրհնեքի ժամանակ Արիստակես Լաստիվերցու նկարագրած՝ մեռոնը լցնելու ժամանակ ջրի ցոլարձակումը հետագա պատմիչները դարձրել են հրաշք, ավելացնում է. «գետին ընթացքին կենալուն կամ ետ դառնալուն պարագան յետիններէ միայն յիշուած է, զոր չունին խոհականագոյն պատմիչներ՝ Լաստիվերացին եւ Վարդան»[9]: Իսկ «հետո եկողների» ձեռքով պատմության «աճումը» ցույց տալու համար գրում է. «Անեցիին մօտ կը կարդանք. «Տէր Պետրոս արդել զգետն ժամ մի հրաշիւք ամենազօր սուրբ նշանին, առաջի Վասիլ թագաւորին»[10]: Ստացվում է, որ «հրաշքին» առաջին «քաղաքացիություն» տվողը Սամվել Անեցին է, մինչդեռ մեր համառոտաբան պատմիչն ընդհանրապես չի անդրադարձել Պետրոս կաթողիկոսի Տրապիզոն կատարած այցին[11]:

Այս եւ տասնյակ այլ մեծ ու փոքր տեղեկություններ, որ տարբեր հրատարակություններում տեղ են գտել որպես Սամվել Անեցու վկա-

[8] Անեցի, էջ 107-108:
[9] Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 1406:
[10] Նույն տեղում, համմա. Անեցի, էջ 106:
[11] Ա. Տեր-Միքելյանի հրատարակությունից մեր հիշատակած վերջին երկու եւ Անեցուն չպատկանող մի քանի այլ մեջբերումներ անելով Լ. Բաբայանը պատմիչին մեղադրում է պատմական փաստերը հաշվի չառնելու, դրանք կամայական ներկայացնելու եւ այլ «մեղքերի» մեջ: Լ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 180-185:

յություններ, իրականում այլոց ներմուծումներն են նրա ժամանակագրության մեջ: Բազմաթիվ են հատկապես Կիլիկիայի հայկական իշխանության հիմնադիր Ռուբեն Ա-ի մասին հավելումները: Դրանց անդրադառնալով Լ. Տեր-Պետրոսյանը գրում է. «Եթե փորձելու լինենք դասդասել Սամուել Անեցու հաղորդած տեղեկությունները Ռուբենի մասին, ապա Մատթեոսի (Ուռհայեցու – Կ. Մ.) նշած երկու փաստի փոխարեն կստանանք միանգամից տասներեքը»[12]: Դրանք թվարկելուց հետո նա բացատրում է, որ «Անեցու «Ժամանակագրության» սկզբնական բնագրում (Մատենադարան, ձեռ. թ. 5619, 1176 թ.) իսպառ բացակայում են Ռուբինյաններին եւ ընդհանրապես կիլիկյան անցուդարձերին վերաբերող տվյալները», որոնք հետագայի հավելումներ են[13]: Ուսումնասիրության ընթացքում թյուրիմացություններից խուսափելու համար հեղինակը Մատենադարանի հիշյալ ձեռագրի բնագիրը համարում է «Սամուել Անեցու «Բուն ժամանակագրություն», իսկ Ա. Տեր-Միքելյանի 1893 թ. հրատարակությունը՝ «Խմբագրյալ ժամանակագրություն»[14]: Հենց այս «Խմբագրյալ ժամանակագրության» մեջ են Ռուբեն Ա-ին վերաբերող 13 տվյալները: Ա. Տեր-Միքելյանին անծանոթ ձեռագրերի ուսումնասիրության արդյունքում մեզ հաջողվեց դրանց թիվն ավելացնել եւս երկուսով[15]:

Հավելումների հեղինակներին, հատկապես ժամանակագրությունը շարունակած անձանց Սամվել Անեցուց տարանջատելու համար Լ. Խաչիկյանը Ա. Տեր-Միքելյանի հրատարակությունը հղելով, ուշ չընդունի դեպքերի կապակցությամբ օգտագործել է «Սամուէլ (շարունակող)» ձեւակերպումը[16]:

Սամվել Անեցու երկի մեջ հետագայում կատարված հավելումների ու լրացումների պատճառով է, որ անգամ ժամանակագրության պատվիրատուի ինքնության եւ ավարտման թվականի հարցը երկար ժամանակ մնացել է բաց եւ ամենատարբեր ենթադրությունների առիթ դարձել: Հարցի կարեւորությունը նկատի ունենալով այն կներկայացնենք ավելի հանգամանորեն:

[12] Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, Երեւան, 2007, էջ 65:
[13] Նույն տեղում, էջ 70:
[14] Նույն տեղում:
[15] Մատենադարան, ձեռ. թիվ 7261, էջ 58ա, ձեռ. թիվ 6354, էջ 316ա (տե՛ս ստորեւ բնագրերի բաժնում):
[16] Լ. Խաչիկյան, Աշխատություններ, հ. Գ, Երեւան, 2008, էջ 8, 47, 67, Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ, հ. VI, Երեւան, 1972, էջ 2, 28, 58:

ա. Ժամանակագրության պատվիրատուն եւ ավարտման թվականը

Սամվել Անեցու պատվիրատուի ինքնության եւ ժամանակագրության ավարտի թվականի հարցը փոխկապակցված են: Բանն այն է, որ Սամվել Անեցին իր պատվիրատուին անվանում է Գրիգոր կամ Գրիգորիս՝ նկատի ունենալով ժամանակի կաթողիկոսին: Քանի որ հիշյալ շրջանում աթոռակալել են Գրիգոր Գ Պահլավունին՝ 1113-1166 եւ Գրիգոր Դ Տղան՝ 1173-1193 թվականներին, ուսումնասիրողներից շատերը պատվիրատուին որոշելիս հենվել են ժամանակագրության ավարտման թվականի վրա: Իսկ քանի որ ժամանակագրության մեջ կատարված հավելումները սովորաբար առաջ են անցնում 1166 թվականից, շատերը պատվիրատու են համարել Գրիգոր Տղային, եւ այս տեսակետն ավելի մեծ տարածում է գտել:

Վկայաբերենք նախորդ ուսումնասիրողների կարծիքները: Ղ. Ալիշանը Գրիգոր Գ Պահլավունու մասին գրելիս նշում է, որ նա հորդորիչ եւ մեկենաս եղավ իր մերձավոր եւ հեռավոր վարդապետների համար, «որոց մէջ համարուի ժամանակագիրն Սամուէլ երէց Անեցի», իսկ քիչ անց ավելացնում է. «թէեւ սովորաբար ըսինք կարծուի, որ Սամուել Գրիգորիսի յորդորմամբ գրած ըլլայ ժամանակագրութիւնը, այլ ինձի թուի թէ ոչ այնր, այլ Գր. Տղայոյ խնդրոյ գրած է, որոյ ժամանակն ալ կը դաղարցընէ պատմութիւնը...»[17]: Գիտնականը ժամանակագրության ավարտի թվական է համարում 1177 թ.[18]:

Գ. Զարբհանալյանի կարծիքով Սամվել Անեցու չարադրանքը հասնում է մինչեւ 1179 թ., պատվիրատու է համարում Գրիգոր Գ Պահլավունուն[19]: Ա. Զամինյանն այս վերջին թվականի հետ համամիտ լինելով, Սամվել Անեցու երկի պատվիրատու է կարծում Գրիգոր Տղային[20]:

Մ. Աբեղյանը չի կասկածում, որ ժամանակագրության պատվի-

17 Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայք իւր, Վենետիկ, 1873, էջ 121-122:
18 Նույն տեղում:
19 Գ. Զարբհանալեան, Պատմութիւն հայկական հին դպրութեան, Վենետիկ, 1886, էջ 600, 650-651: Տե՛ս նաեւ Մ. Օրմանյան, Ազգապատում, հ.Ա, էջ 1394:
20 Ա. Զամինեան, Հայ գրականութեան պատմութիւն, մաս Ա, Նոր Նախիջեւան, 1914, էջ 191:

րատուն Գրիգոր Գ Պահլավունին է, ավարտի թվական է նշում 1180-ը[21]: Իսկ Հ. Աճառյանը տարակուսում է, թե Անեցին «գրել է Գրիգոր Գ (կամ Դ՞) կաթողիկոսի հորդորանքով»[22]:

Պատվիրատու համարելով Գրիգոր Տղային, ժամանակագրության ավարտը 1180 թվականին է նշանակել Ս. Մելիք-Բախշյանը[23]: Գրիգոր Տղայի չափածո ստեղծագործությունները ներկայացնող աշխատության առաջաբանում Ա. Մնացականյանը նրան կոչում է Սամվել Անեցու պատվիրատու[24]: «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական բազմահատորյակում Լ. Բարայանը նույնպես Անեցու պատվիրատու է համարում Գրիգոր Տղային, ավարտական թվական՝ 1180 թ.[25]: Այս տեսակետը մուտք է գործել նաեւ հայկական չորս հանրագիտարան[26]: Ն. Պողարյանը, առանց տեսակետը փաստարկելու, ենթադրաբար Սամվել Անեցու պատվիրատու է համարել Սանահինի վանքի վարդապետ Գրիգոր Տուտեորդուն[27]:

Յավոք հետազոտողների մեծ մասը ձեռքի տակ ունենալով ժամանակագրության Ա. Տեր-Միքելյանի հրատարակությունը, ուր Անեցու ժամանակագրության վերջին նշումը դրված է Հայոց ՈԻԹ (1180) թվականի դիմաց, ուշադրություն չի դարձրել նույն էջի տողատակի ծանոթագրությանը, ուր ասվում է, որ այդ եւ նախորդ՝ 1176 թվականի իրադարձության մասին նշված է եղել հրատարակության համար օգտագործած 13 ձեռագրերից միայն մեկում[28]: Հետաքրքիր է, որ Ա. Տեր-Միքելյանն ընդհանրապես չի անդրադարձել պատվիրատուի խնդրին:

21 Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, էջ 103:
22 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 4, էջ 384:
23 Ս. Մելիք-Բախշյան, նշվ. աշխ., էջ 173:
24 Գրիգոր Տղա, Բանաստեղծություններ եւ պոեմներ, աշխատասիրությամբ Ա. Շ. Մնացականյանի, Երեւան, 1972, էջ 45, 175:
25 Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ, հ. III, Երեւան, 1976, էջ 805, տե՛ս նաեւ A Bibliography of Classical Armenian Literature To 1500 ad, by R. W. Thomson, Brepols-Turnhout, 1995, p. 191.
26 Հայկական սովետական հանրագիտարան, հ. 10, Երեւան, 1984, էջ 161, Քրիստոնյա Հայաստան (հանրագիտարան), Երեւան, 2002, էջ 884, Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 4, Երեւան, 2003, էջ 328, Ով ով է. Հայեր (կենսագրական հանրագիտարան), հ. 2, Երեւան, 2007, էջ 391:
27 Ն. Պողարեան, Հայ գրողներ, Երուսաղեմ, 1971, էջ 240:
28 Անեցի, էջ 139:

Իրականում Սամվել Անեցու երկը միանշանակ վկայում է, որ ժամանակագրության պատվիրատուն Գրիգոր Գ Պահլավունին է: Ժամանակագրության սկզբում, իր օգտագործած աղբյուրները թվարկելուց հետո, հեղինակը դիմելով պատվիրատուին, գրում է. «Իսկ իմ մոռացեալ զգաիտութիւն եւ զանուսումնութիւն իմ, ի թախանձելոյ քոյ, սրբազգեացդ Գրիգոր, յաղթեցայ ի սիրոյ կամաց ձերոց, առ ի գրել, զոր կամեցար. եւ այժմ օժանդակեալ ի Հոգւոյն Սրբոյ՝ ժողովեցից ի սոցանէ կարճ ի կարճոյ զախորժակս ձեր զբանից հանդէս, միայն զճշմարտութեան գնալով զհետս»[29]:

Մարդկության պատմությունը սկսելով Ադամից եւ հասնելով մինչեւ Հիսուս Քրիստոսի ծնունդը, պատմիչը մեկ անգամ եւս անվանապես դիմում է պատվիրատուին. «Արդ, ով սրբազգեաց տէր իմ Գրիգոր, հարկեցայ ի թախանձելոյ ձեր, զեղկելի անձն իմ, եւս զանարհեստ անձն իմ ի մշակութիւն այս գործոյ»[30]:

Ինչպես վերը տեսանք, պատմիչը նշում է փաստերի հիշատակման իր սկզբունքը՝ «կարճ ի կարճոյ»: Սակայն քիչ անց դրանից չեղվում է, երբ գրում է Գրիգոր Գ Պահլավունու կաթողիկոսական ընտրության ու գործունեության մասին: Գրիգոր Լուսավորչից սկսած բոլոր կաթողիկոսներին Սամվել Անեցին մի քանի բառ կամ մի քանի տող է նվիրել, իսկ Գրիգոր Գ Պահլավունու գահակալմանը՝ մի քանի էջ: Նա գրում է. «Ի ՇԿԲ (1113) ամին վախճանեցաւ Տէր Բարսեղ Հայրապետն Հայոց եւ յաղորդէ զաստիճանն Տէր Գրիգորիս մեծաշուք պատուով նստեալ յաթոռ վիճակի Սրբոյն Գրիգորի Հայաստանեայցս լուսաւորչի. որ յազգէ նորին հարազատութեան ճանաչի: Եւ յաղագս աստուածընկալ եւ հոգիընկալ չնորհի ընկալելոյ եւ սրբական եւ մաքրափայլ վարուց պատուեալ փառաւորութեամբ, ոչ միայն ի մերազնեայ արանց, այլեւ յաւտարասեռ թագաւորաց եւ յիշխանաց, մանաւանդ ի Հռոմայեցւոց թագաւորացն եւ պատրիարգացն: Սա չոգաւ ի քաղաքն սուրբ յերուսաղէմ[31], եւ անդ... իմացեալ զառատահոս ծաւալումն աստուածային չնորհին ի վերայ հայրապետին ազգն Հռոմայեցւոյ... պատշաճագեղ տեսիլ մարմնոյն ծանեան եւ զհոգւոյն գե-

[29] *Անեցի, էջ 3:*
[30] *Անեցի, էջ 51:*
[31] *Գրիգոր Գ Պահլավունին Երուսաղեմում Զատկի տոնին եւ եկեղեցական ժողովի է մասնակցել 1142 թ. (Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա , էջ 1598):*

ղեցկութիւն եւ.... ուրախացան հաճելութեամբ եւ առաւել սէր հաստատեցին ընդ հայրապետին եւ ընդ ազգս մեր...»[32] եւ այլն:

*Ակներեւ է, որ այսպիսի փառաբանության կարող էր արժանանալ միայն պատվիրատուն: Սակայն ավելի խոսուն է այն, որ այս հատվածի վերջում Սամվել Անեցին ուղիղ խոսքով դիմում է Գրիգոր Գ Պահլավունուն. «Բայց վասն զի զսկիզբն ամաց եւ յաջորդել առաջնորդութեան կամիմք տակաւին նշանակել եւ այսպիսի յաջողուածք եւ այլ բարեբաղտութիւնք եւ գործք զկնի ամաց աւր ըստ աւրէ յաւելաւ, այնր աղագաւ աստանօր թողաք զայլոցն պատմութիւն, զորս եթէ արժանի լինիմք յիւրում տեղւոջ գրեսցուք: **Եւ աստանօր զայսոսիկ ծանուսցուք մերոյ հրամանատուիդ եւ պատուասիրի**»[33]:*

Ահավասիկ, պատմիչի միանգամայն որոշակի նշումը իր պատվիրատուի վերաբերյալ, որին կոչում է իրեն «հրաման տվող», մի փաստ, որը զարմանալիորեն անտեսել է ուսումնասիրողների զգալի մասը:

Հետաքրքրությունից զուրկ չէ դիտարկել պատմիչ-պատվիրատու առնչությունները՝ զուգահեռ անցկացնելով Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի եւ Սամվել Անեցու միջեւ: Բանն այն է, որ ե՛ւ Ասողիկը, ե՛ւ Սամվել Անեցին կատարել են կաթողիկոսական պատվեր, երկուսն էլ աշխատել են Անիում (Թերեւս օգտվել նույն գրադարանից), եւ նրանց երկերն ունեն կառուցվածքային որոշ ընդհանրություններ: Ասողիկը չահեկանորեն տարբերվելով իր նախորդ պատմիչներից, Պատմության սկզբում թվարկում է այն հեղինակներին, որոնց երկերից օգտվել է: Նա գրում է. «Որպէս եւ ճշմարիտ թուղն ժամանակաց Եւսեբի Պամփիլեեայ սկսեալ ի մարդն առաջին... Եւ զկնի նորա Սոկրատէս: ...Իսկ ըստ հայումս՝ նախ եւ առաջին քաջն Ագաթանգեղոս, որ նորասքանչ հրաշից եւ չարչարանաց սրբոյն Գրիգորի եւ աս-

[32] *Անեցի, էջ 122-123, Համմտ., Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 101բ-102ա:*
[33] *Անեցի, էջ 123, Համմտ. Մատենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 102ա-102բ: Ինչպես երեւում է Գրիգոր Գ Պահլավունին հետաքրքրված է եղել ժամանակագրական երկերով: Հայտնի է, որ Եւսեբիոս Կեսարացու ժամանակագրության հայերեն թարգմանության Մատենադարանում պահվող հնագույն օրինակը (ձեռ. թիվ 1904) ժամանակին պատկանել է Գրիգոր Գ. Պահլավունուն (տե՛ս Ա. Մաթեւոսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» չորրորդ գիրքը, էջ 192):*

տուածածանօթութեանս մերոյ է պատմիչ: Եւ զկնի մեծն Մովսէս...»[34]: Թվարկելով ինը հայ պատմիչի անուն, Ասողիկը խոսքն ուղղում է իր պատվիրատու Սարգիս Ա կաթողիկոսին (992-1019):

Նույնն է անում Սամվել Անեցին, ժամանակագրության սկզբում գրելով՝ «...Երեւելագոյն քան զյոլովս եղեւ Եւսերի երանելի, ի մէջ առաջնոցն եւ վերջնոցն. եւ զհետ նորա Սոկրատէս պատմագիր այլօք բազմօք: Իսկ մերայինս ազգի ասել առաջին պատմագիր զԱգաթանգեղոս՝ որ գրեաց գպատճառ լուսաւորեալոյ զՀայս սրբոյն Գրիգորի՝ նորասքանչ համբերութեամբ: Եւ ապա Մովսէս Խորենացի...»: Սամվել Անեցին ճիշտ նույն հաջորդականությամբ թվարկում է նույն հայ պատմիչներին, հաճախ բնութագրական միեւնույն բառերով, վերջում ավելացնում Ասողիկի անունը («եւ ի վերջին ժամանակս Ստեփաննոս վարդապետ մականուն Ասողնիկ...»)[35], որից հետո դիմում է իր պատվիրատու Գրիգոր կաթողիկոսին:

Աղբյուրների թվարկումից հետո Ասողիկը Սարգիս կաթողիկոսին հայտնում է, որ դրանցից՝ «յամենեցունց ի սոցանէ» օգտվել է եւ մատուցել՝ նրա իսկ հրամանի համաձայն՝ «ի հարկեցուցանող հրամանաէ քոյ ստիպեալ»[36]: Իսկ պատմության երկրորդ հանդեսի սկզբում նշում է, որ վաղ չրջանի մասին գրել է. «...քաղուածոյս Աստուածայնոց գրոց՝ կարճ ի կարճոյ՝ համառօտիւ...»[37]:

Նույն կերպ Սամվել Անեցին աղբյուրների թվարկումից հետո դիմելով պատվիրատու Գրիգոր կաթողիկոսին գրում է, որ գործը ձեռնարկել է նրա կամքով, աղբյուրներից նյութեր ժողովել համառոտա-

---

34 Ստեփաննոսի Տարօնեցւոյ Պատմութիւն տիեզերական, աշխատասիրութեամբ Ստ. Մալխասեանցի, ՍՊր, 1885, էջ 6-7:

35 Անեցի, էջ 2-3: Իր երկի սկզբում օգտագործված աղբյուրների մատենագիտական ցանկ է ներկայացնում նաեւ Մխիթար Անեցին: Սա կարելի է համարել Անիի մատենագրության որդեգրած ուշագրավ սկզբունք: Այս ժամանակաշրջանում էր, որ Ս. Գրքի եւ եկեղեցական գրականության վերաբերյալ մատենագիտական աշխատություններ ստեղծեցին Դավիթ Քոբայրեցին եւ Աբասի որդի Գրիգոր վարդապետը (Պ. Մուրադեան, Կովկասեան մշակութային աշխարհը եւ Հայաստանը, պր. Ա, Երեւան, 2008, էջ 308-314, տե՛ս նաեւ Գ. Տէր-Վարդանեան, Շիրակի մատենա-գրական մշակոյթի կենտրոնները եւ Բագրատունեաց-անիական շրջանի հայ մատենագրութիւնը, Հանդէս ամսօրեայ, 2000, էջ 236):

36 Ստեփաննոսի Տարօնեցւոյ Պատմութիւն, էջ 7:

37 Ստեփաննոսի Տարօնեցւոյ Պատմութիւն, էջ 59:

բար՝ «ժողովեցից ի սոցանէ կարճ ի կարճոյ՝ զախորժակս ձեր՝ զբանից հանդէս»[38]:

Ինչպես որ Ասողիկն է դեպքերի սովորական չարադրանքը հասցնելով պատվիրատու Սարգիս Ա կաթողիկոսի գահակալությունը, այստեղ մի առանձին գլուխ նվիրում նրան՝ պատմելով, թե ինչպես «նստուցանեն զնա յաթոռ կաթողիկոսութեան մեծաչուք պատուով» եւ գովաբանական խոսքեր չի խնայում[39], նույն ձեւով էլ Սամվել Անեցին ժամանակագրորեն հասնելով Գրիգոր Գ-ի աթոռակալությանը, դադարեցնում է աղյուսակաձեր տեքստը եւ գրում էջով մեկ, պատմելով, թե ինչպես «Տէր Գրիգորիս մեծաչուք պատուով նստեալ յաթոռ...» հռչակվեց «փառաւորութեամբ ոչ միայն ի մերազնեայ աբանց, այլեւ յաւտարասեռ թագաւորաց»[40] եւ այլն:

Ակնառու է, որ Սամվել Անեցին աչքի առաջ է ունեցել կաթողիկոսական պատվեր կատարող Անիում աշխատած իր նախորդ պատմիչի օրինակը:

Բնական պիտի լիներ տեսնել երկու հեղինակների աշխատությունների եզրափակումը՝ նույն սկզբունքով: Ասողիկը Պատմութիւն ավարտել է «Բան վախճանի փառատրական ի սպառուած յիւնն ավարտել է «Բան վախճանի փառատրական ի սպառուած յիշատակարանիս» հատվածով, ուր նշում է թվականը՝ 1004, երախտապիտությամբ գրում պատվիրատուի մասին եւ հիշատակ հայցելով եզրափակում երկը: Մոտավորապես նույնը պիտի աներ նաեւ Սամվել Անեցին: Սակայն նա ժամանակագրությունն առանձին տեքստով չի եզրափակել: Ջի բացատրում, որ հեղինակը համարել է, թե ժամանակագրությունը չի կարող ավարտվել, քանզի ժամանակն առաջ է գնում, ուստի ժամանակագրությունը պետք է չարունակվի նոր տեղեկություններով: Ինչպես ստորեւ կտեսնենք, նրա հաջորդները հենց այդպես էլ վարվել են ժամանակագրության հետ:

Այժմ տեսնենք, թե մինչեւ որ թվականն է հասնում Սամվել Անեցու ժամանակագրության հեղինակային բնագիրը: Այս հարցը պարզելու համար հարկավոր է դիմել ժամանակագրության հնագույն եւրեք ընդօրինակություններին:

Առաջինը կամբջաձորի օրինակն է (Մատենադարան, ձեռ. թիվ

---

38 Անեցի, էջ 3:

39 Ստեփաննոսի Տարօնեցւոյ Պատմութիւն, էջ 259-260:

40 Անեցի, էջ 122, Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 101բ:

5619): Ընդօրինակել է Ավետիս գրիչը. «ի ՈԻԵ (1176) թուականուԹեանն Հայոց ի տիեզերահռչակ ուխտս Կամրջաձոր»[41]:

Երկրորդը Հոռոմոսի օրինակն է (Մատենադարան, ձեռ. թիվ 3613): Ձեռագրի գրիչն ու ստացողը Մխիթար Անեցի աբեղան է, որը հիշատակարանում իրեն անվանում է Հոռոմոսի վանքի աշակերտ[42]:

Երրորդը պայմանականորեն համարում ենք Անիի օրինակ, քանի որ այն 1236 թվականին Կիլիկիա է տարվել Անիից (Երուսաղեմ, Սրբոց Հակոբյանց վանք, թիվ 1801, էջ 387-557, Երեւանի Մատենադարան, դրսի մանրաժապավեն թիվ 750)[43]: Գրչության ժամանակի հիշատակարան չունի: Սակայն ձեռագիրը մի կազմի մեջ է ամփոփված հմուտ գրիչ Հովհաննեսի 1187 թ. Հոռոմոսում ընդօրինակած Բարսեղ Կեսարացու «Վեցօրէից» գրքի հետ (որպես երկրորդ մաս): Բնագրերը մի կազմի մեջ են եղել 1236 թվականից առաջ, որի մասին կարելի է եզրակացնել ժամանակագրության վերջին թերթի վրա եղած հիշատակարանից[44]: Այստեղ գրիչը նշում է ձեռագրի առաջին մասի սկզբում եղած վերնագիրը («գիրքս այս կոչեցեալ Վեցաւրեա»), իսկ բուն հիշատակարանը գրում է երկրորդ մասի վերջին թերթին, որը ցույց է տալիս թե 1236-ին մատյանները եղել են նույն կազմի մեջ: Չի բացառվում, որ դրանք միասին կազմել է հենց Հովհաննես գրիչը, քանի որ նա ոչ միայն Բարսեղ Կեսարացու գործի ընդօրինակողն էր, այլեւ ստացողը («զՅովանէս զաշխատասիրողս եւ զստացողս յիշեսջիք...»)[45], միաժամանակ հայտնի էր որպես կազմա-

41 Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 108ա, հմմտ. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 219:

42 Մատենադարան, ձեռ., թիվ 3613, թերթ 35բ, 26բ:

43 Ժամանակագրության վերնագիրը գրված է կլեսախորանի գլխագարդի մեջ, բնագրի առաջին տառը զարդագիր է, հանդիպակաց կողմում ունի լուսանցազարդ (Երուսաղեմ, ձեռ. թիվ 1801, թերթ 387ա): Մատյանը գրված է թղթի վրա, բոլորգրով, սյունակները գծված են կարմիրով:

44 «Ի թուականիս Հայոց ՈՁԵ (1236), ի դժնդակ ժամանակի, յանիծեալ յազգէն Քամա, կոչեցեալ անդադար (իմա՝ թաթար – Կ.Մ.) ի պաշարեալ զմայրաքաղաքն Անի, եւ զամենիսեան ի սուր սուսերի մաշեալ, զսրբութիւնն անարգեալ եւ զգրեանս գերի վարեալ: **Եւ գիրքս այս կոչեցեալ Վեցաւրեա, բերաւ յաշխարհ Կիլիկեցւոց** եւ ստացա զգիրքս քահանա անուն կոչեցեալ Հայրապետ...»: Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 6, կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1972, էջ 163-164:

45 Նույն տեղում, էջ 162: Այս մատյանը Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայի» հայերեն պահպանված հնագույն օրինակն է (Կ. Մուրադյան, Բարսեղ Կեսարացին եւ նրա «Վեցօրեան» հայ մատենագրության մեջ, Երեւան, 1976, էջ 138-139):

յար[46]: Ամեն դեպքում, փաստն այն է, որ 1236-ին մատյանները մի կազմի մեջ Անիից հասել են Կիլիկիա: Ն. Պողարյանը տեքստի մասին նշում է. «ժամանակագրական աղիւսակներ համառօտ տեղեկութիւններով, առանց յետնագոյն այն յավելումներու որոնք կը գտնուին Արշակ Տէր-Միքելեանի հրատարակութեան մէջ»[47]:

Երեւանի Մատենադարանի եւ Երուսաղեմի հավաքածուներում կան եւս մի քանի ձեռագրեր, ուր Անեցու բնագիրը համեմատաբար անխաթար է, սակայն այս երեքը՝ Կամրջաձորի, Հոռոմոսի, Անիի օրինակները, որոնք պատմիչի ապրած դարաշրջանի ծնունդ են, միանգամայն բավարար են ժամանակագրության նախնական պատկերը վերականգնելու, ինչպես նաեւ ավարտման թվականը պարզելու համար:

Ինչպես նշվեց, Անեցու երկը զուրկ է վերջաբանից: Եթե ժամանակագրության սկզբում պատմիչը դիմում է պատվիրատու Գրիգոր Պահլավունուն, շարադրանքի ընթացքում այս կամ այն հարցի առիթով նրան բացատրություններ տալիս[48], ապա ավարտում է 1161-1163 թթ. Անիի շուրջը ծագած վրաց-մահմեդական պատերազմին վերաբերող դեպքերի պարզ հիշատակությամբ, որի վերջին նշումը հետեւյալն է 1163 թ. Գեորգի Գ-ի պարտությանը[49]:

Հաջորդ թվականին Գեորգին ստիպված էր Անին կրկին վերադարձնել Շադդադյաններին, որը վկայված է տարբեր սկզբնաղբյուրներում[50], սակայն այս փաստն այլեւս տեղ չի գտել Սամվել Անեցու երկում: Կամրջաձորի ձեռագրում 1163 թվականի դեպքի հիշատակությունից հետո դրված է զարդագիծ ավարտանշան[51]: Սակայն դրանից հետո առկա է եւս չորս վկայություն՝

46 Հովհաննեսից հայտնի է 1181-1187 թթ. Հոռոմոսում ընդօրինակած երեք ձեռագիր: Նրա եղբայր Վարդանը վանքի ավագ միաբաններից էր: 1199 թ. նրանք երկուսով հիշատակվում են որպես մի Ավետարանի կազմողներ: Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 10, կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1990, էջ 605, Կ. Մաթեւոսյան, Անի, էջ 267-270:

47 Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 10, էջ 163:

48 Անեցի, էջ 3, 39, 51, 97, 109, 116, 123, 128:

49 Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 106բ-107ա, հմմտ. Անեցի, էջ 137-138:

50 Դեպքերի հանգամանալից պատմությունը տե՛ս Հ. Գ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 110-116:

51 Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 107ա:

1166 թ.՝ Գրիգոր Գ-ի մահը եւ Ներսես Դ-ի նրան հաջորդելը,

1167 թ.՝ երկրաշարժ Երզնկայում,

1168 թ.՝ Թորոս իշխանի (Կիլիկիա) մահը,

1173 թ.՝ Ներսես Դ-ի մահը եւ Գրիգոր Տղայի հաջորդելը:

Կամրջաձորի ձեռագրում ամենավերջին տեղեկությունը հետեւյալն է. «ՈՒԲ (1173): Փոխի մահուամբ առ Քրիստոս տէր Ներսէս, եւ փոխանորդէ զաթոռն տէր Գրիգոր՝ Տղայ կոչեցեալն»[52]: Դրանից հետո ձեռագրի երկրորդ գրիչը (հավելումների հեղինակը) այլ գրով ավելացրել է Գրիգոր Տղայի տարիների թիվը՝ Ի (20):

Հոռոմոսի եւ Անիի օրինակներում տեղեկությունը գրեթե նույնն է[53]: Հնագույն ձեռագրերում եղած վերջին հիշատակության միանման լինելը վկայում է այն մասին, որ դրանց համար նախօրինակ ծառայած ձեռագրում կամ ձեռագրերում ժամանակագրությունն ավարտվել է հենց այդ թվականով եւ այդ հիշատակությամբ: Փորձենք պարզել, թե արդյոք այս վկայությունները պատկանում են Սամվել Անեցուն:

1163 թվականի «ի տեղի իւր» բառերով ավարտվող հատվածից հետո Հոռոմոսի օրինակում նախ նշվում է երզնկայի երկրաշարժը, նոր միայն Գրիգոր Գ-ի մահը: Անիի օրինակում երզնկայի երկրաշարժն ընդհանրապես չի նշվում: Եթե մինչ այդ բոլոր երեք մատյանների գրիչները պահպանել են գրչության արվեստի հիմնական պահանջը՝ հավատարմությունը նախօրինակին, ապա 1163-ից հետո եղած վկայությունները միանման չեն[54]:

Սամվել Անեցին հայրենի քաղաքին վերաբերող հարցերում բավական հետեւողական էր, մանավանդ որ պատվիրատու կաթողիկոսն էլ

---

52 Մատենադարան ձեռ., թիվ 5619, թերթ 107ա:

53 «ՈՒԲ (1173): Փոխի մահուամբ ի Քրիստոս տէր Ներսէս, եւ փոխանորդէ զաթոռն տէր Գրիգոր Տղա» (Մատենադարան, ձեռ. թիվ 3613, թերթ 70բ): Այլ գրով նշված է կաթողիկոսի տարիների թիվը՝ Ի (20): «ՈՒԲ (1173): Փոխի մահուամբ առ Քրիստոս տէր Ներսէս, եւ փոխանորդէ զաթոռն տէր Գրիգոր», գրված է վերջակետ, որից հետո այլ գրով ավելացված է՝ «Տղա կոչեցեալն» (Երուսաղեմ, ձեռ. թիվ 1801, թերթ 556բ):

54 Մխիթար Անեցին գրում է՝ «...յաջորդէ զաթոռն եղբայրն Ներսէս ամս Է» (Մատենադարան ձեռ., թիվ 3613, թերթ 70բ), իսկ Ավետիսը՝ «...յաջորդէ գնի նորա եղբայր նորուն տէր Ներսէս», աղյուսակում՝ «Տէր Ներսէս ամս Է» (Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 107ա): Երկու գրիչները փաստոր ներկայացնում են ազատ չարաղրանքով:

հետաքրքրված էր քաղաքում կատարվող դեպքերով: 1161-ին Վրաց Դեորգի Թագավորի՝ քաղաքը գրավելու եւ 1163-ին մահմեդականներից նրա կրած պարտությունը արձանագրելուց հետո Սամվել Անեցին չէր կարող չնշել մեկ տարի անց քաղաքի՝ մահմեդականներին վերադարձվելու փաստը: Բայց նրա ժամանակագրական այսունակի 1164 կամ 1165 թվականի դիմաց որեւէ նշում չկա: Կամրջաձորի օրինակում Անեցու գրած վերջին հատվածը եզրափակող «տեղի իւր» բառերն առնված են այսունակի երկու կողմերից եկող վերջնագծի մեջ (նկ. 2), մի նշան, որ չկա բնագրի այլ մասերում, եւ որը, մեր կարծիքով, գալիս է նախօրինակից, որտեղ այս կամ մեկ այլ եղանակով արտահայտված է եղել այդ հատվածի՝ վերջինը լինելու իրողությունը: Հոռոմոսի եւ Անիի օրինակներում այդ նույն հատվածը դուրս է բերված աղյուսակից եւ գրված է էջով մեկ:

Դրանից հետո եղած վկայություններից առաջինը (Հոռոմոսի օրինակում երկրորդը) վերաբերում է Գրիգոր Գ Պահլավունու մահվանը՝ «ՈԺԵ (1166): Վախճանի Տէր Գրիգորէս եւ յաջորդէ զկնի նորա եղբայր նորուն տէր Ներսէս»[55]: Կարծում ենք, որ իր երկի նախորդ հատվածներում պատվիրատու կաթողիկոսին փառաբանող հեղինակը չէր կարող նման սառնությամբ արձանագրել նրա մահը: Կաթողիկոսի անունն Անեցին չարաղրանքում գրում է Գրիգոր կամ Գրիգորիս (այդպես է նաեւ այսունակների վերնամասում)[56], իսկ այստեղ, հնագույն բոլոր ձեռագրերում նշված է Գրիգորէս:

Նկատենք նաեւ, որ ավելացված տեղեկությունների մեջ 1168 թվականի դիմաց նշվում է Կիլիկիայի Թորոս իշխանի մահը, մինչդեռ ժամանակագրության նախընթաց չարաղրանքում Անեցին ընդհանրապես չի անդրադառնում Կիլիկիայի հայ իշխաններին:

---

55 Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 107ա:

56 Հետաքրքիր է, որ Կամրջաձորի օրինակում 1113 թվականի դիմաց աղյուսակի սկզբում Գրիգոր Գ Պահլավունու մասին նշված է՝ «**Տէր Գրիգորիս ամս Ծ** (50)» (Մատենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 103ա): Կարելի է ենթադրել, որ ժամանակագրության վերջին մասի գրության պահին կաթողիկոսն իր աթոռակալության 50-րդ տարվա մեջ է եղել՝ 1113+50=1163: Հոռոմոսի օրինակը գրողն արդեն ամբողջացրել է տվյալը՝ «ՇԳ (53)» (Մատենադարան, ձեռ. թիվ 3613, թերթ 67ա), նկատի ունենալով կաթողիկոսի գահակալման բոլոր տարիները (1113-1166): Բայց կան ձեռագրեր, ինչպես Ստեփանոս Օրբելյանի օրինակը եւ 13-րդ դարի մեկ այլ ձեռագիր, ուր նույնպես տարիների թիվը 50 է նշված (Մատենադարան, ձեռ. թիվ 8481, թերթ 202ա, ձեռ. թիվ 5596, թերթ 323ա):



2. Ժամանակագրության ավարտը Կամրջաձորի ձեռագրում (Մատենադարան, ձեռ. թիվ 5619, 107ա):

Այս եւ վերը բերված փաստարկները ենթադրել են տալիս, որ ժամանակագրության մեջ վերջին չորս տեղեկությունները չեն պատկանում Սամվել Անեցուն:

Հարց է առաջանում, ե՞րբ են ավելացել վերջին չորս (Անիի օրինակում՝ 3) վկայությունները: Դրանք հեղինակային բնագրին են ավելացվել չատ վաղ, հնարավոր է հենց 1173 թվականին (Սամվել Անեցու՝ գործը դադարեցնելու տասնամյակին), քանի որ 1174-ին Անին կրկին անցավ վրացիներին, որի մասին ժամանակագրության մեջ նշում չկա: Ճիշտ է, Սամվել Անեցուն ավելացումների հեղինակ չենք համարում, որպեսզի համոզված լինենք, թե նա զանց չէր առնի այդ փաստը: Սակայն հավելում անողն Անիից չատ էլ հեռու չի եղել, դատելով թեկուզ հեղինակային բնագրի եւ հնագույն ձեռագրերի գրչության վայրերից (Անի, Հոռոմոս, Կամրջաձոր): Ամեն դեպքում, իրողությունն այն է, որ Սամվել Անեցու ժամանակագրությունը բազմացման համար ընդօրինակողներին է տրվել 1173 թվականին կամ դրանից հետո (մինչեւ 1176 թ., Կամրջաձորում կատարված ընդօրինակությունը), երբ արդեն ներառում էր 1163 թվականի դեպքի հեղինակային վերջին արձանագրմանը հաջորդած երեք կամ չորս հավելյալ տեղեկություն:

Հետաքրքիր է, որ Սամվել Անեցու կրտսեր ժամանակակիցն ու Անիի Մայր տաճարում նրա գործի շարունակողը՝ Մխիթար Անեցին իր Պատմությունը հասցրել է մինչեւ 1193 թվականը, ինչպես ինքն է գրում՝ «լայն եւ տարած բանիւք յընդարձակեալ մինչ ի ՈՒԲ թուականս»[57]: Վստահաբար նա գիտեր, որ Սամվել Անեցու ժամանակագրությունն ավարտվել է հայոց ՈԺԲ (1163) թվականով, հավելումներով՝ ՈԻԲ (1173) թվականով, եւ գուցե հենց այդ նկատառումով իր գործը եղրափակել է ՈՒԲ (1193) թվականին՝ տասնամյակների որոշակի պարբերականություն պահպանելով:

Այսպիսով, հնագույն ձեռագրերում ժամանակագրության ավարտի հատվածի քննությունը մեզ բերում է այն համոզման, որ Սամվել Անեցու վերջին նշումը վերաբերում է 1163 թվականին: Դրանից տասը տարի անց, հնարավոր է պատմիչի մահից անմիջապես հետո, ինչ-որ մեկը ժամանակագրության հեղինակային բնագրի տերը դառնա-

[57] Մխիթար Անեցի, Մատեան աչխարհավէպ հանդիսարանաց, աչխատասիրությամբ Հ. Գ. Մարգարյանի, Երեւան, 1983, էջ 59:

լով, վերջում ավելացրել է այդ տասնամյակի առավել կարեւոր տեղեկություննները, որից հետո այն ընդօրինակվել է Անիի չրջակա վանքերում (Կամրջաձոր՝ 1176 թ., Հոռոմոս՝ 1177 թ.):

բ. Կառուցվածքը եւ ժամանակագրական աղյուսակները

Սամվել Անեցու ժամանակագրությունը կազմված է մի սկզբունքով, որը դրանից առաջ չի կիրառվել հայ մատենագրության մեջ: Ինչպես արդեն նշել ենք, հեղինակը որդեգրել է Եւսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնի» սկզբունքը, մի երկ, որից օգտվել են դեռեւս Ագաթանգեղոսն ու Մովսես Խորենացին, նաեւ հետագա չրջանի պատմիչները:

Սամվել Անեցու աշխատությունը կարելի է երկու մասի բաժանել: Առաջինը՝ առանց աղյուսակների, ընդգրկում է փոքր ներածական եւ մարդկության պատմությունը սկսած Ադամից մինչեւ Քրիստոսի ծնունդը: Երկրորդ՝ աղյուսակավոր մասը սկսվում է Քրիստոսի ծննդից եւ հասնում մինչեւ 1163 թվական: Միջնադարում եւս երկն ընկալվել է երկմասնյա, քանի որ գրիչներից ոմանք իրենց հիշատակարանը թողել են առաջին մասի ավարտից հետո եւ երկրորդ մասից առաջ, իսկ երբեմն ընդօրինակել են միայն առաջին կամ երկրորդ մասը[58]:

Երկի սկզբում հեղինակը խոսում է ժամանակի բնույթի մասին՝ «Յերիս որոշմունս բաժանեալ սահմանեցան թիւք ժամանակաց՝ յանցեալն՝ ի ներկայն եւ յապառնին»[59], ապա անդրադառնում ժամանակի աստվածաչնչային եւ աստվածաբանական ընկալումներին, օգտվելով հիմնականում Եւսեբիոս Կեսարացուց: Այնուհետեւ նշում է ժամանակագրության անհրաժեշտության մասին. «...իւրաքանչիւր ոք ի կորովաբան եւ յիմաստախոհ արանց յագգին իւրում զժամանակագրութիւնս կարգեալ ձեռնարկեաց, առ որս երեւելագոյն քան զյոլով եղեւ Եւսեբի երանելի...»[60]: Դրանից հետո հեղինակը թվարկում է իրենից առաջ եղած պատմագիրներին, որոնցից օգտվել է, հասնելով մինչեւ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, ապա ուղիղ խոսքով դիմում է պատվիրատու կաթողիկոսին[61]: Պատմիչն այնուհետեւ նշում է առաջին մասի իր հիմնական երկու աղբյուրը՝ Եւսեբիոս Կեսարացուն եւ Մովսես Խորենացուն[62], որից հետո հակիրճ ներկայացնում է իր երկի ընդգրկումն ու կառուցվածքը. «Եւ նախ յԱդամայ սկսեալ՝ կատարեացուք ի Նոյ, եւ անտի մինչեւ ցԱբրահամ եւ անտի մինչեւ ի ծնունդն Քրիստոսի, եւ ապա ըստ քրոնիկոնին գաւազանօք զրաւեացուք ի ներկայս, զաւելորդն թողլով եւ զկարեւորսն ի ներքս մուծանելով...»[63]: Այսպիսով, հեղինակն ինքն է վկայում, որ երկի առաջին մասը հասնում է մինչեւ Քրիստոսի ծնունդը, իսկ երկրորդ մասն արդեն ժամանակագրական աղյուսակներով («քրոնիկոնին գաւազանօք») Քրիստոսի ծննդից հասնում է մինչեւ ներկան (իր ապրած ժամանակը):

Այդ խոստման համաձայն Անեցին հասնելով առաջին մասի վերջին կրկին դիմում է պատվիրատուին. «Արդ, վասն զի ըստ կանխադիր խոստմանցն ժամանեցաք յայսոսիկ, ուրանօր կէտ եդեալ էր բանից, հասանել ի յայտնութիւն մարմնացելոյ Բանին Աստուծոյ...»[64]: Շարունակելով պատվիրատուին ուղղված խոսքը, նա հատվածը եզրափակում է ժամանակագրական այսնակների մասին ծանուցմամբ. «Սկսեալ յառաջին ամէն ի ծննդենէն Քրիստոսի, զոր կարգեցից բուն թուական, եւ զթագաւորս Հոռոմոց, Հրէից եւ Պարսից եւ զմերոյ ազգի, ստոյգ գտակաւ գրեցից անյապաղ»[65]:

Քանի որ աղյուսակներով մասն ավելի բարդ էր ժամանակագրական տարբեր համակարգերը ներդաշնակեցնելու առումով, հեղինակը ստիպված է եղել քննական մոտեցում ցուցաբերել, ճշտել թագավորների գահակալման, կաթողիկոսների աթոռակալության թվականները: Եւ քանի որ թվականները նշանակվում էին հաջորդաբար (ուղ-

---

58 Սամվել Անեցու ժամանակագրությունը որպես երկմասնյա գործ է ներկայացնում նաեւ Հ. Տաշյանը (Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Յակովբոս Տաշեան, Վիեննա, 1895, էջ 290-291):

59 Անեցի, էջ 1:

60 Նույն տեղում, էջ 2:

61 Նույն տեղում, էջ 3:

62 «Եւ ի յոլովիցն առաւել զերկոքումքս թեւակոխեացուք, ձեռնտու ունելով զնոսա, զԵւսեբի ասէմ եւ զՄովսէս Խորենացի» (Նույն տեղում):

63 Անեցի, էջ 3-4:

64 Նույն տեղում, էջ 51:

65 Նույն տեղում, էջ 52:

ղահայաց հերթականությամբ), որեւէ մեկի իշխանության թեկուզ մեկ տարվա տարբերությունը մեխանիկորեն փոխում էր նաեւ հաջորդի թվականները: Մինչդեռ Սամվել Անեցու ունեցած աղբյուրները տարբեր տեղեկությունների առումով հաճախ անմիաբան էին, ուստի, հասնելով Տրդատ Գ-ի եւ Գրիգոր Լուսավորչի ժամանակներին, պատմիչը ստիպված է լինում բացատրություն տալ, տարակուսել՝ «յաղագս անմիաբան գրելոյ պատմագրացն» եւ փորձել գտնել ժամանակագրական ճշմարիտ պատկերը[66]:

Աղյուսակների մասում էջի կենտրոնն զբաղեցնում են ժամանակագրական հինգ ուղղահայաց սյունակները, ուր առաջին սյունակում նշվում է Փրկչական թվականը, հաջորդ սյունակներում հռոմեական (այնուհետեւ բյուզանդական) կայսրերի տարիները, սկզբնական մասում՝ հրեական ու պարսից թագավորների թվականները (ավելի ուշ՝ պարսից թագավորների սյունակում արաբ խալիֆաների կառավարման տարիները) եւ Հայոց թագավորների տարիները[67]: 72 թվականից հետո հրեական թագավորների անուններն դադարում են, եւ սյունակները դառնում են չոսը: Հայաստանում քրիստոնեության հաստատումից հետո՝ Գրիգոր Լուսավորչից սկսած ավելանում է Հայոց կաթողիկոսների տարիները ներկայացնող սյունակը (5 սյունակ), իսկ Հայոց մեծ թվականի հաստատումից հետո՝ այդ թվականի սյունակը (6 սյունակ): Սրանից զատ, սյունակների սկզբում, դրանցից դուրս դրված է օլիմպիադայի թվականը (սկսվում է Ք.ա. 776 թվականից)[68]:

66 «Մինչեւ ցայսոսիկ ժամանակ վայր՝ անկասկած հետեւությամբ առաջնորդ ունելով զգիրս հաւաստապատումս ծայրագոյն զառաջասացեալ վարդապետացն (նկատի ունի Եւսեբիոս Կեսարացուն եւ Մովսես Խորենացուն – Կ. Մ.): Իսկ յայսմհետէ՝ ի տեղւոջ ուր պիտոյացաւ այլ ինչ յաւելուլ ի շարագրութիւնս մեր, աշխատութիւնք եւ տարակուսանք յաղագս անմիաբան գրելոյ պատմագրացն, ոմն առաւել եւ ոմն նուազ շարագրելով, կամ թէ ոչ բնաւ: Սակայն մեք՝ զընախաւսիցն զոճ պահելով սկսցուք ըստ կարի գհետ ճշդրտութեան հետեւելով...» (Անեցի, էջ 62, համմտ. Մատենադարան, ձեռ. 5619, թերթ 64ա):

67 Արշակունյաց թագավորության անկումից հետո նշվում են Հայոց մարզպանների, ապա Հայոց իշխանների եւ ավելի ուշ՝ Բագրատունի թագավորների տարիները:

68 16-րդ դարից սկսած ի հայտ են գալիս ձեռագրեր, ուր օլիմպիադայի թվականը նույնպես առնված է սյունակի մեջ:

Աղյուսակների կարգի փոփոխմանը Սամվել Անեցին անդրադառնում է Բագրատունյաց թագավորության անկման մասում: Նշելով, որ Հայոց թագավորների իշխանության հաջորդական թվականները այլեւս չեն լինելու, հեղինակը նշում է, որ այդտեղից սկսած մինչեւ իր ապրած ժամանակը չորս սյունակ է պահպանում՝ Փրկչական թվականը, կայսրերի տարիները, հայրապետների տարիները եւ Հայոց թվականը[69]:

Ժամանակագրության երկրորդ մասում էջի կենտրոնն զբաղեցնող ժամանակագրական սյունակների աջ ու ձախ կողմում գծված են աղյուսակներ՝ նախատեսված համապատասխան տեղեկությունների համար (մեծ տեքստի հատվածներում աղյուսակներն ընդհատվում են): Ա. Տեր-Միքելյանը հրատարակության մեջ աղյուսակները համարել է «անընթերցանելի», «ժամանակագրական համեմատութեան բազմաթիւ սխալներ» ունեցող եւ որոշել «...դուրս ձգել այդ տաղտկալի աղիւսակն, որ ոչ մի օգուտ չկարէ տալ՝ բացի խանգարիչ լինելուց պատմութեան եւ նորա ամբողջ ընթացքին»[70]: Նկատենք, որ 1876-ին Մ. Բրոսսեն Սանկտ Պետերբուրգի Կայսերական ակադեմիայի գրադարանում պահվող Սամվել Անեցու ժամանակագրության միակ օրինակից հրատարակել է ժամանակագրության երկրորդ մասը աղյուսակներով (ավելի վաղ Վենետիկի Մխիթարյաններն էլ Եւսեբիոս Կեսարացու կոթողային Քրոնիկոնն են հրատարակել աղյուսակներով):

Հարկ է նշել, որ աղյուսակները հրատարակության տեսակետից իրոք որոշ դժվարություն են ներկայացնում, քանի որ երբեմն մակագրությունները ոչ միայն աջ ու ձախ կողմերում են, այլեւ հենց նեղ սյունակների հատվածում: Ժամանակագրական անհամապատասխա-

69 «Իսկ մեք զկանոնելոցս չափ հաստուցուք մնացելովքս մինչեւ ի մերս ժամանակ. զմարդեղութիւն Արարչին ըստ սահմանելոյս սկիզբն դնելով եւ զկայսերացն եւ զհայրապետականն եւ զթուականն, սկսանելով անտի, ուր զվախճանն էառ» (Անեցի, էջ 109):

70 Անեցի, էջ IԸ-IԻ: Վաղարշապատյան հրատարակության մեջ աղյուսակների բացակայության կապակցությամբ Ա. Աբրահամյանը նկատում է. «Տպագրական դժվարությունների պատճառով, դժբախտաբար, հնարավոր չի եղել Սամվել Անեցու ժամանակագրությունը տալ զուգահեռ գրաֆիաներով, ինչպես ձեռագրում է, ուստի եւ տպագիրը չունի այն արժեքը, ինչ ձեռագիրն է» (Ա. Աբրահամյան, Մատենադարանի ձեռագիր գանձերը, Երեւան, 1959, էջ 41):

նութիւններ աղյուսակներում նույնպես կան, սակայն դեպքերի հիշատակման այս եղանակը հնարավորութիւն է տալիս որեւէ իրադարձության թվականը տեսնել ժամանակագրական տարբեր համակարգերում: Դիցուք նշված է որեւէ դեպք, իսկ աղյուսակներում՝ թվականը՝ Քրիստոսի ծննդից հաշված, բյուզանդական ո՞ր կայսեր, Հայոց ո՞ր թագավորի, Հայոց ո՞ր կաթողիկոսի ո՞րերորդ տարում էր, հայոց մեծ թվականի ո՞ր թվականին: Այստեղ հիմնական ուղենիշը Քրիստոսի եւ Հայոց Մեծ թվականներն են, սակայն կան դեպքեր, ուր, օրինակ, կաթողիկոսի աթոռակալության տարվա նշումը կարող է որոշիչ լինել իրադարձության տարեթիվը պարզելու գործում[71]:

Մխիթար Անեցու պատմության հրատարակիչ Հայրապետ Մարգարյանը պատմիչի աղբյուրներին անդրադառնալիս նշում է, որ նա Սամվել Անեցու ժամանակագրությունը համարում էր ամենահավատին, «քանի որ վերջինիս հեղինակն արդեն հաղթահարել էր այն տքնական աշխատանքը, որն անհրաժեշտ էր բոլոր աղբյուրները պրպտելով՝ համապարփակ ու ամփոփ ժամանակագրություն կազմելու համար»[72]: Այդ տքնական աշխատանքի արդյունքը չի կարելի անուշադրության մատնել եւ Սամվել Անեցու ժամանակագրության առաջիկա հրատարակության մեջ դրանք անպայման պետք է տեղ գտնեն, այլապես խախտվում է հենց բնագրի ամբողջականությունը: Նկատենք նաեւ, որ այժմ դա ավելի հեշտ է, քանի որ հայտնի են ժամանակագրության հնագույն, ընդմիջարկություններից համեմատաբար ղերծ մնացած մատյանները, որոնք հայտնի չէին Ա. Տեր-Միքելյանին:

Հրատարակության մեջ աղյուսակները հանվել են եւ թողնվել է հիմնականում Քրիստոսի թվականը, հավելադեպ նաեւ Հայոց թվականը: Այս հանգամանքը մեծապես վնասել է բուն ժամանակագրությանը, քանի որ տարբեր դեպքերի թվականներն ավելի ստույգ են հենց Հայոց թվականով: Իսկ ժամանակագրության մեջ Քրիստոսի թվականի վերաբերյալ ժամանակին կատարված կարեւոր ճշտումը, ցավոք, ծանոթ չի եղել ուսումնասիրողներից շատերին, եւ նրանք, Սամվել Անեցու ժամանակագրությունից տվյալներ վերցնելով, փաստորեն ներկայացրել են անստույգ թվականներ:

Սամվել Անեցու ժամանակագրությունը շարունակած Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրության Ա. Աբրահամյանի կատարած հրատարակության առիթով գրված գրախոսականում Լ. Խաչիկյանը եւ Վ. Հակոբյանը նշում են. «Սամուել Անեցին հետեւել է այն տոմարագետներին, որոնք Քրիստոսի ծննդյան տարեթիվը դրել են այժմ գործող թվականից 2 տարի առաջ, ուստի Սամուելի, ինչպես եւ Ստեփանոսի ժամանակագրության մեջ, ամենուրեք, քրիստոնեական եւ հայկական թվականների տարբերությունը ոչ թե 551, այլ 553 տարի է»[73]:

Նկատենք, որ Սամվել Անեցին այս հարցում հետեւել է իր ուսուցչին՝ Հովհաննես Սարկավագին, ըստ որի՝ «ի ծննդենէն Քրիստոսի ի հայ թվականն՝ ՇՃԳ (553)»[74]: Այս սկզբունքը որդեգրելով՝ Անեցին ժամանակագրության Քրիստական ՇՃԴ (554) թվականի դիմաց նշել է

71 Այդպես է, օրինակ, Արուճի տաճարի կառուցմանը վերաբերող տեղեկության դեպքում (Կ. Մաթեւոսյան, Արուճ, Երեւան, 1987, էջ 14):

72 Մխիթար Անեցի, էջ 31: Սամվել Անեցու ժամանակագրական այս նախնեները գնահատել է նաեւ Ստեփանոս Օրբելյանը, գրելով. «Զայս դաւազանք եւ չափ ժամանակաց գտաք ճշդիվ սահմանեալ եւ եղեալ Սամուէլի ճշտաբան քահանայի...» (Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 21):

73 Լ. Խաչիկյան, Վ. Հակոբյան, Ինչպես չպետք է հրատարակվեն պատմական սկզբնաղբյուրները, ՀՍՍՌ ԳԱ հասարակական բաժանմունքի Տեղեկագիր, 1949, թիվ 2, էջ 82: Այս դիտողությունն ընդունել է Ա. Աբրահամյանը, որը Հովհաննես Սարկավագի մատենագիտության մեջ նշում է. «Միջնադարյան հայ մատենագրության մեջ գործող քրիստոնեական թվականն այն թվականը չէ, ինչ որ գործ ենք ածում մենք ներկայումս, այլ քրիստոնեական այսպես կոչված հայկական հաշվումների թվականը, որը երկու տարով ավելի է, քան մեր ներկայումս գործածած թվականը, այլ խոսքով ասած, ըստ հայկական հաշվարկների, Քրիստոսի ծնունդը եղած պետք է լինի մեր ներկա թվականից 2 տարի առաջ» (Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 300, նույնի, Հայ գիր եւ գրչություն, էջ 110-111), տե՛ս նաեւ Բ. Թումանյան, Տոմարի պատմություն, Երեւան, 1972, էջ 132:

74 Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 23, Գ. Սիմոնյան, Ռ. Վարդանյան, Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տոմարի Հայկազնեայ» տոմարական ժողովածուն, էջ 75, 96:

Հայոց Ա (1) թվականը[75]:

Այսպիսով, Սամվել Անեցու ժամանակագրության վաղարշապատյան հրատարակությունից օգտվողները պետք է նկատի ունենան, որ այնտեղ նշված Քրկէական թվականն իրական Քրկէական թվականից ավելի է 2 տարով: Եթե ժամանակագրության հրատարակության մեջ նաեւ Հայոց թվականը նշվեր, այդ դեպքում հրատարակությունը մեծապես կշահեր: Մինչդեռ այդ թերության պատճառով ուսումնասիրողները երբեմն որոշ թերահավատությամբ են վերաբերվել Սամվել Անեցու հայտնած տեղեկություններին, քանի որ հրատարակության մեջ տեղ գտած թվականները հաճախ տարբերվում են այս կամ այն դեպքի վերաբերյալ այլ աղբյուրներից հայտնի, ճշտված թվագրություններից:

[75] Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 73բ:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Սամվել Անեցու ժամանակագրության առավել մեծ թվով մատյաններ պահվում են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում՝ 35, այնուհետեւ՝ 13 ձեռագիր պահվում է Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի Սրբոց Հակոբյանց վանքում, նույնքան օրինակ էլ գտնվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանում: Վիեննայի Մխիթարյանների մոտ պահվում է 4 ձեռագիր, մեկական օրինակներ գտնվում են Զմմառում, Փարիզում, Տյուբենգենում, Հռոմում, Սանկտ Պետերբուրգում: Ձեռագրերի ամբողջական ցանկը ներկայացվում է սույն գրքի վերջում:

Ժամանակագրության ձեռագրերի ամբողջական ցանկը թույլ է տալիս մի քանի ընդհանրացում կատարել: Պարզվում է, որ ամենից շատ ընդօրինակություններ են պահպանվել 17-րդ դարից: Ըստ դարերի ընդօրինակությունները հետեւյալ կերպ են դասակարգվում. 12-րդ դ.՝ 3 մատյան, 13-րդ դ.՝ 5, 14-րդ դ.՝ 3, 15-րդ դ.՝ 2, 16-րդ դ.՝ 8, 17-րդ դ.՝ 31, 18-րդ դ.՝ 7, 19-րդ դ.՝ 6:

Տարբեր ընդօրինակություններում ժամանակագրության ավարտման թվականը կամ շարունակության ավարտի թվականները հետեւյալ պատկերն են ներկայացնում. 1173 թվականով ավարտվող օրինակների թիվը՝ 9, 1180-ականներին ավարտվողները՝ 2, մինչեւ 13-րդ դար շարունակված ձեռագրերի թիվը՝ 8: Ավելի շատ հավելումներ ու լրացումներ կատարվել են 14-րդ դարում: Այստեղ առանձնանում է ընդօրինակությունների մի խումբ՝ 9 մատյան, ուր ժամանակագրությունը հասցված է մինչեւ 1335 թվականը: Մինչեւ 1338-1348 թթ. հասնող օրինակները 7-ն են, 1423-1425 թթ. հասնող օրինակները՝ 4-ը: Ժամանակագրությունը շարունակված է մինչեւ 1660-90-ական թվականները 6 մատյանում եւ հասնում է մինչեւ 18-րդ դար 3 ձեռագրում:

Գրչության վայրերի վերաբերյալ կարելի է ասել, որ հնագույն ձեռագրերը ծագում են Անիի շրջանից (Հռոմոս, Անի): 16-17 րդ դդ. ժամանակագրության 5 ընդօրինակություն է կատարվել Եւդոկիայում (Թոխաթ), մյուս կենտրոններից պահպանվել են երկուսական (Հո-

ոմոս, Ուռհա, Բաղեշ, Ամիթ, Կամենեց, Կ. Պոլիս) եւ մեկական օրինակներ (Ուռընկար, Կարին, Գետկա վանք, Սանահին, Ամրդոլու վանք, Տրապիզոն, Սեբաստիա, Կեսարիա, Արմաշ, Երուսաղեմ, Իլով):

Ստորեւ որոշակի խմբավորմամբ եւ համառոտ կներկայացնենք ժամանակագրության ձեռագրերը, իսկ դրանց մի մասին կանդրադառնանք բնագրերի բաժնում:

ա. Հնագույն երկու օրինակը

Սամվել Անեցու ժամանակագրության առայժմ հայտնի հնագույն ընդօրինակությունը կատարվել է Կամրջաձորի վանքում[1], Ավետիս գրչի ձեռքով, 1176 թ. (Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 6ա-108ա)[2]: Այն մաս է կազմում տարբեր նյութեր ընդգրկող ժողովածուի, որը գրիչն ընդօրինակել է իր վարդապետի՝ Քրիստափորի հանձնարարությամբ:

Ձեռագիրը, որպես ժամանակագրության հնագույն թվագրված օրինակ, արժանացել է մի շարք ուսումնասիրողների ուշադրությանը[3]: Գլխավոր հիշատակարանի առաջին մասում գրիչը յուրովի բնութագրում է ժամանակագրությունը, ապա նշում ստացողին, գրչության ժամանակն ու վայրը. «Ձեռամբ անպիտանի եւ ապիկար անձին Աւետիս կոչեցելոյ տառագծեցաւ այս համառաւտ յայտարարութիւնք ի-

1 Շիրակի սահմանակից Արշարունիք գավառում գտնվող Կամրջաձորի վանքը ծագում է ապրել 11-12-րդ դարերում, հայտնի էր իր բանիբուն վարդապետներով ու հմուտ գրիչներով: Այս վանքի նշանավոր վարդապետներից է եղել Սամվել Կամրջաձորեցին՝ «բազմաշնորհն ի գիտութիւնս Գրոց սրբոց եւ յերգս երաժշտութեանց» (Ստեփաննոս Տարոնեցի Ասողիկ, էջ 174), որը Սարգիս Ա Սեւանցի կաթողիկոսի հանձնարարությամբ պատրաստել է Սեբաստիայի մետրոպոլիտին ուղարկվելիք պատասխան թուղթը: Վանքի վարդապետներից է եղել Հովհաննես Սարկավագի ուսուցիչ Գեւորգ Ուռճացին, որին պատմիչները կոչում են «վարդապետ Հայոց», «լուսաւորիչ Տանս Հայոց»: Մահացել է 1091 կամ 1093 թ. եւ թաղվել Կամրջաձորի վանքում (Կիրակոս Գանձակեցի, էջ 2):

2 Ձեռագիրը գրված է թղթի վրա (թերթ՝ 226, 16,8×12 սմ), բոլորգրով (միասյուն, տող 19-21), բաց չագանակագույն թանաքով, աղյուսակները եւ սկզբնամասի որոշ սկզբնատողեր՝ վարդագույնով:

3 Գ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 464, Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 20, Գ. Աբգարյան, Մատենագրական նորույթներ, ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1964, № 1, էջ 84, Հ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 11, 88: Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Ա, էջ 474-481:

րաց գործեցելոց եւ ցոյցք ժամանակաց ի նախաստեղծէն եւ այսր, հրամանաւ տեառն իմոյ սրբազանի Քրիստափորի, ի ՈԻԸ (1176) թուականութեանն Հայոց, ի տիեզերահռչակ ուխտս Կամրջաձոր»[4]: Շարունակության մեջ գրիչը եւս երկու անգամ հիշատակում է ստացողին:

Վերը նշել ենք, որ այս մատյանում ժամանակագրության վերջին թերթին (107ա) 1163 թվականից հետո գրված ավարտանշանը կարեւոր կովաններից մեկն է դա հեղինակային բնագրի ավարտ համարելու համար: Այստեղ ավարտելով ժամանակագրությունը՝ գրիչն իր հիշատակարանը գրել է ոչ թե անմիջապես թերթի հաջորդ երեսին (107բ), քանի որ այդտեղ նախապես աղյուսակ էր գծել, այլ 108ա թերթում: Հետագայում, երբ այս նույն ձեռագրում 108բ թերթից սկսած, նոր ժամանակագրություն են կցել, 107բ թերթի աղյուսակի վրա արտագրել են անհայտ հեղինակի այն ծանոթագրությունը, որը վերաբերում է Սամվել Անեցու ժամանակագրության ավարտին եւ տեղ է գտել բազմաթիվ այլ ձեռագրերում: Քանի որ Կամրջաձորի ձեռագիրը թվագրմամբ հնագույնն է, այս ծանոթագրությանը ուրիշ ձեռագրերի առիթով չանդրադառնալու համար ներկայացնում ենք ստորեւ:

«Աստանաւր զտեղի առեալ կացին չարագրութիւնքս գեղեցկաբանին Սամուէլի՝ զոր բազում երկասիրութեամբ հոգ տարեալ ստուգագրութեան, եւ ճշգրտիւ հասուցեալ մինչեւ յիւրն ժամանակ: Եւ վասն դի պատմագրութեանց սահման է զանցելոյն եւ զներկայէն ճառել, իսկ յառաջիկայն ոչ գոյ հնար անցանել: Այլ թէպէտ յայսմ հետէ դարձեալ մտանէ կանոն իշխանութեան Հայոց ի չարագրութիւնս, սակայն սխալն յոլով տեսանի կանոնացս, վասն զի յայսմ հետէ այլոյ ուրուք է չարագրութիւնս: Եւ գրէթէ Քրիստոսի ծննդեանն ամք եւ թուականն Հայոց միայն գոյ անսխալ»[5]:

Այստեղ ուշադրավ է նախ Սամվել Անեցու ժամանակագրության ստուգության մասին նշումը, ապա ժամանակագրության չարունակողներին վերաբերող քննադատությունը: Հեղինակը գրում է, որ չարունակության մեջ կրկին վերականգնվում է Հայոց գահակալների տարիների այնունակը («կանոն իշխանութեան Հայոց»), որտեղ, սակայն, սխալները հաճախակի են, ուստի վստահելին մնում են Փրկչա-

4 Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 108ա:

5 Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 107բ, համմտ. Անեցի, էջ 140:

կան եւ Հայոց թվականները:

Հարկ է նշել, որ Կամրջաձորի ձեռագիրը նույնպես ունի հավելումներ: Դրանցից մի քանիսը, որ ժամանակագրության առաջին մասում են, պատկանում են հենց Ավետիսին: Նա դրանց սկզբում սովորաբար գրում է «Այլուստ», որով զգուշացնում է այլ տեղից քաղած լինելը: Հավելումները սկսվելով որեւէ պարբերության ավարտին, այնուհետեւ շարունակվում են լուսանցքներում բոլորաձեւ գրված տողերով: Առաջինը Արփաքսաթին նվիրված հատվածի վերջում է. «Այլուստ, յոլովք ասեն, թէ այն է լեզուն Ադամա, որ առ ևբեր մնաց յաշտարակին բաժանմանն...» (թերթ 11բ): Այս տեղեկությունն ունեն նաեւ այլ ձեռագրեր, եւ այն տեղ է գտել հրատարակության մեջ[6]: Երկու հավելում էլ արված է հաջորդ թերթին[7]: Հավանական է, որ այս ավելացումներն Ավետիսը կատարել է ձեռագիրն ընդօրինակելուց հետո, դրա համար էլ լուսանցքներն է օգտագործել:

Հետագայում ձեռագրում ժամանակագրությունը շարունակվել է: Կատարվել են նաեւ ընդմիջարկություններ Սամվել Անեցու ժամանակագրության մեջ: Դրանք սկսվում են վերնագրից: Ավետիսը վերնագրի սկզբում նշել է՝ «Սամուէղի քահանայի», մեկ այլ գրիչ սեւ թանաքով ավելացրել է՝ «Անեցոյ» (թերթ 6ա): Այս գրիչը սեւ թանաքով երեք կարգի միջամտություն ունի. տառեր կամ բառեր ավելացնելով՝ սրբագրական աշխատանք է կատարել, սեւ թանաքով անցել է Ավետիսի գրի վրայից (հավանաբար դրանց որոշ մաշվածության պատճառով)[8], եւ որոշ փոքր տեղեկություններով հավելումներ է կատարել: Այս գրչի կատարած հավելումները կներկայացնենք «ժամանակագրական մանր միավորներ» բաժնում:

Սամվել Անեցու ժամանակագրության հնությամբ երկրորդ մատյանը ստեղծվել է Հոռոմոսի վանքում[9] (Մատենադարան, ձեռ. թիվ 3613, թերթ 6ա-108ա)[10]:

Սամվել Անեցու Հոռոմոսում ընդօրինակված մատյանը ժամանակագրության եզակի օրինակներից է, որը պարունակում է միայն այդ երկը, քանի որ ձեռագրերի մեծագույն մասը, որտեղ պահպանվել է ժամանակագրությունը, ժողովածուներ են: Ձեռագրում Անեցու բնագիրը հիմնականում զերծ է միջամտություններից, եղած հավելումները գրությամբ հստակ առանձնանում են:

Հոռոմոսի ձեռագիրը գրչության հստակությամբ եւ անխաթարությամբ կարող է հիմք դառնալ Անեցու ժամանակագրության հեղինակային բնագրի վերականգնման համար: Այս ձեռագիրն ուշագրավ է նաեւ նրանով, որ գրիչը նույնպես անեցի է, ընդ որում, մեծ հավանականությամբ, Սամվել Անեցու կրտսեր ժամանակակից՝ պատմիչ Մխիթար Անեցին: Ի՞նչ հիմքեր կան նման ենթադրության համար:

Նախ ծանոթանանք գրչի հիշատակարաններին: Առաջինը գտնվում է ժամանակագրության առաջին հատվածի վերջում, աղյուսակներից անմիջապես առաջ. «Զյետնեալս արդիւնական գործոց գչուառ գրիչս զՄխիթարիչ Անեցի սուտանուն աբեղայ եւ աշակերտ

6 Անեցի, էջ 8:

7 Առաջինը Սերուքի ժամանակ տեղի ունեցած, ամազոնուհիների մասին հիշեցնող մի պատմություն է. «Այլուստ: Սերուք չինեաց զՍրուճ: Ի սորա աւուրս կին ոմն թագաւորեաց ի վերա տանն Թորգոմա եւ զաւրսն (պետք է լինի զաւրուսն) ամենայն եսպան եւ կանայս արար զաւրականս: Եւ յամենայն տարի միանգամ երթեալ յաչխարհ խառնակէին ընդ այրս եւ ծնեալք զարուս սպանանէին եւ զէգսն պահէին: Եւ ժողովեալ մետասան թագաւորք բարձին գնոսա, եւ առին զամուրս», (հմմտ. Անեցի, էջ 8, ծան.): Նույն էջում կա եւս մի հավելում Փաղեկի անունից հետո. «Ի սորա աւուրս եղեւ սկիզբն զինադադարութեան եւ բերդի շինութեան» (թերթ 12ա), (հմմտ. Անեցի, էջ 8): Մեկ այլ հավելում էլ հաջորդ էջում է. «Այլուստ: Ասա չինեցաւ Դմիրէկ ի Մաւրբոս Հիւթացոյն...» (թերթ 12բ), (հմմտ. Անեցի, էջ 8-9):

8 Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 6բ, 7ա, 8ա, 8բ, 9ա, 11ա, 13ա, 20ա, 20բ, 22բ, 23ա, 28ա, 31ա, 34բ, 36բ, 37ա, 39ա, 39բ, 42ա, 54ա, 54բ, 55ա, 55բ, 56ա, 56բ, 57ա, 57բ, 58ա, 59ա, 59բ, 63բ, 65ա, 66ա, 67ա, 68ա, 68բ, 69ա, 69բ, 70ա, 70բ, 71ա, 72բ, 79ա, 91բ, 94բ, 97ա, 99բ, 101ա, 103ա, 105բ, 106բ, 107ա:

9 Անիի արվարձաններից ոչ հեռու գտնվող Հոռոմոսի վանքը բացառիկ դեր է ունեցել քաղաքի կյանքում: Այն Բագրատունի թագավորների դամբանավայրն էր եւ վայելում էր արքունիքի հովանավորությունը: Վանքը նաեւ առաջնակարգ հոգեւոր կենտրոն էր, հայտնի իր դպրոցով ու գրչատնով: Անիի շրջանից ամենից մեծ թվով ձեռագրեր մեզ հասել են հենց Հոռոմոսից, ընդ որում 12-րդ դարի վերջին քառորդը եւ 13-րդ դարի առաջին տասնամյակներն առավել արդյունավետ շրջան են եղել: Այդ ժամանակ են վանքում աշխատել գրիչ Հովհաննեան ու նրա եղբայր Վարդանը, հայտնի գրիչ եւ մանրանկարիչ Իգնատիոս Հոռոմոսցին, կազմարար Աբրահամը եւ ուրիշներ (Կ. Մաթեւոսյան, Հոռոմոսի գրչության կենտրոնի պատմությունից, «Էջմիածին», 1984, 6, էջ 45-49):

10 Ձեռագիրը գրված է թղթի վրա, բոլորգրով, սեւ թանաքով (միասյուն, տող՝ 24 եւ 26), ունի 79 թերթ (16,5×11,5 սմ), աղյուսակները՝ կարմրագիծ են: Ձեռագրի կաշվե կազմի վրա սեւ թանաքով գրված է «Սամուէլ քհ. Անեցւոյ ժամանակագրութիւն», իսկ դրա տակ «Ի. Պատկանեան»: Նույն անունը ռուսերենով գրված է կազմի ներսում, կտորի վրա: Շատ հնարավոր է, որ ձեռագիրը պատկանել է Հայոնի աղբյուրագետ, պատմաբան Քերովբե Պատկանյանին (1833-1889):

բանի ի վանացն Հոռոմոսի, սնեալ առ ոտն Սուրբ Յովանիսի յիշեալ ի Քրիստոս աղաչէմ» (Թերթ 26բ), երկրորդը՝ Հայաստանում քրիստոնեության հաստատմանը վերաբերող հատվածից հետո. «Զմեղաւոր ստացաւղս եւ գաչխատաւորս զՄխիթար եւ ծնաւղսն մեր եւ եղբարսն յիշել աղաչէմ» (Թերթ 35բ):

Ինչպես տեսնում ենք, 12-րդ դարի վերջերին (1173 թվականից հետո) Հոռոմոսում աշխատած գրիչն իրեն կոչում է Մխիթարիչ (կամ Մխիթար) Անեցի: Ճիշտ նույն ժամանակաշրջանում է ապրել նաեւ պատմիչ Մխիթար Անեցին, որը հիշվում է որպես քաղաքի Կաթողիկե եկեղեցու փակակալը, եւ իր Պատմությունը գրել է Հաուիճի վանքի առաջնորդ Գրիգոր վարդապետի պատվերով (վերջինս մահացել է 1188 թ.) եւ ավարտել 1193 թվականին[11]:

Այն հանգամանքը, որ աղբյուրներում Մխիթարը հիշատակվում է որպես քահանա (երեց), իսկ այս հիշատակարանը գրողն աբեղա է, նրանց նույնացումը բացառող հանգամանք չի կարող լինել, որովհետեւ հիշյալ շրջանում Անիի մերձակա վանքերում, այդ թվում՝ Հոռոմոսում, որպես միաբանության անդամ հիշատակվում է նաեւ «աշխարհական աբեղան»[12]: Չի բացառվում նաեւ աբեղայական կարգից հետագայում քահանայականին անցումը (կուսակրոնությունից հրաժարումը):

Հոռոմոսում աշխատած Մխիթարը ոչ միայն Սամվել Անեցու

11 Մխիթար Անեցի, էջ 5-6, 12, 59:

12 Բագնայրի եւ Արշոտաձի վանքերի 13-րդ դ. սկզբի արձանագրություններում, որոնք կանոնակարգում են մահացած միաբանների համար մատուցվող պատարագների թիվը, հետեւյալ պատկերն ենք տեսնում. Բագնայրում՝ վանահորը՝ 4 քառասունք, երեցին եւ աբեղային՝ 3 քառասունք, «աշխարհական աբեղին»՝ 2 քառասունք: Արշոտաձում՝ վանահորն ու վարդապետին՝ 4 քառասունք, երեցին եւ «բնաբեղային»՝ 3 քառասունք, «աշխարհական հաբեղին եւ մանգաննն»՝ 2 քառասունք (Ն. Սարգիսյան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, էջ 183, 191, Գ. Սարգսյան, Միջնադարյան կրոնաիրավական նորմերի վիմագրական արտացոլումները, Պատմա-բանասիրական հանդես, 2006, թիվ 2, էջ 128-129): Այստեղ երեւում է, որ «աշխարհական աբեղա» անվանվածը մի կարգ ցածր էր համարվում երեցից եւ աբեղայից, եւ հավասար էր «մանգաննն»: Հոռոմոսում պահպանված 1195 թ. նույնաբնույթ արձանագրության մեջ վանահոր համար դարձյալ 4 քառասունք է նախատեսված, իսկ վերջում ավելացված է՝ «աշխարհական հաբեղայի» 2 քառասունք (Ա. Մխիթարեանց, Պատմութիւն Հոռոմոսին վանից ի Շիրակ, Վաղարշապատ, 1870, էջ 39): Հոռոմոսցի գրիչը, որպես «աշակերտ բանի», թերեւս համապատասխանում է հենց այս կարգավիճակին:

մանայանի գրիչն է, այլեւ ստացողը («ստացաւղս եւ գաչխատաւորս զՄխիթար»), մի հանգամանք, որը վկայում է, թե նա պատմագիտական նախասիրություններ ունեցող անձ էր: Հետաքրքրական է նաեւ նրա՝ «Անեցի» մականունով հանդես գալը, որովհետեւ սովորաբար ծննդավայր տեղանունը մականուն էին դարձնում հոգեւոր բնագավառում կամ գրական, մատենագրական ասպարեզում որոշակի գործունեություն ծավալողները, կամ առնվազն նման հակումներ ունեցողները: Բազմաթիվ բնիկ անեցիներ վիմագիր արձանագրություններում կամ հիշատակարաններում իրենց անվանը «Անեցի» մականուն չեն կցում: Օրինակ, 1211 թ. «Հաղբատի ավետարանը» ստացող, Հաղբատում ուսանած անեցի Սահակ քահանան իր մասին գրում է. «ազգաւ եւ տոհմիւ ի մեծ մայրաքաղաքէն յԱնւոյ», սակայն ոչ իրեն, ոչ եղբայրներին կամ հորը «Անեցի» մականունով չի կոչում[13]: Իսկ ահա Մխիթարը վերցրել է այդ մականունը, որով հետո նրան ճանաչել են նաեւ ուրիշները՝ «պատուական երէցն Մխիթար Անեցին» (Վարդան Արեւելցի), «գեղեցիկ պատմութիւնն Մխիթարայ Անեցւոյ» (Ստեփանոս Օրբելյան)[14]:

Ուշադրության է արժանի այն միջամտությունը, որ Մխիթար Անեցին կատարել է Սամվել Անեցու ժամանակագրության վերնագրում: Նա փոքրիկ փոփոխություն է կատարել, որով ընդգծել է Սամվելի անեցի լինելը. «Սամուելի քահանայի հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս, ծայրաքաղ, քաղաքաւ անեցի» (Թերթ 1ա):

Հետաքրքիր է, որ Մխիթար Անեցու պատմության առաջին հատվածը պարունակող մեզ հասած միակ ձեռագրում (15-րդ դ. ընդօրինակություն) երկի անվանման մեջ եւս նշված է Անին[15]:

13 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 68-71:

14 Վարդան Արեւելցի, էջ 99, Ստեփաննոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Տփղիս, 1910, էջ 373:

15 «Հանդէպ բանից աչխարհագումար գրուցաց, տիեզերապատում անցից՝ վիպասանեալ ի քաջ գիտնականէ ***Մխիթարայ, աւագերիցու մեծ կաթուղիկէին Անւոյ հոյակապ քաղաքի, ի խնդրոյ հաւր Հաուիճայի*** Գրիգորոյ վարդապետի» (Մխիթար Անեցի, էջ 56): Ստեփանոս Օրբելյանը, Բաղաց թագավորության կործանման մասին գրում է. «...ընդիերցաք ի թղթոյն Տեառն Ստեփաննոսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, զոր գրեալ էր ***ի հոյակապ քաղաքն Անի ի խնդրոյ սուրբ քահանային Մխիթարայ՝ աւագերիցու քաղաքին եւ փակակալի սուրբ կաթողիկէին***» (Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 332):

Հոռոմոսի մատյանում գրչի մեկ այլ միջամտություն գտնում ենք այս վանքի հիմնադրմանը վերաբերող հատվածում, ուր Սամվել Անեցու բնագրում նշված է «հռչականունն Հոռովմոսին կոչեցեալ վանք»[16], իսկ Մխիթար Անեցու մոտ մի փոքր այլ է. «հռչակաւոր տունն՝ Հոռովմոսին կոչեցեալ վանք» (թերթ 49 բ): Ինչպես ժամանակագրության վերնագրում (նկ. 3), այնպես էլ այստեղ Մխիթար Անեցին թեեւ փոքրիկ միջամտությամբ, այնուամենայնիվ, սեփական վերաբերմունքն է արտահայտել: Ընդօրինակության գործը սերտած սովորական գրիչը դժվար թե իրեն նման բան թույլ տար:

Մխիթար Անեցու պատմության հրատարակիչ Հ. Մարգարյանը նշում է, որ իր աշխատությունը գրելիս Մխիթար Անեցին Սամվել Անեցու երկն օգտագործել է առավել չափով, «իբրեւ ամենահավաստի ժամանակագրական ուղեցույց», եւ անհավանական չի համարում, որ օգտվել է Սամվել Անեցու «ինքնագիր» օրինակից[17]: Իր օգտագործած աղբյուրները թվարկելիս («Թե ո՞յք պատմագիրք ծանաւթ մեզ») Մխիթարը վերջինը նշում է իր ավագ ժամանակակցին՝ Սամվել Անեցուն[18]: Նրա պատմության պահպանված հատվածում կարելի է գտնել Սամվել Անեցու ժամանակագրությունից քաղված մեծ ու փոքր հատվածներ[19]:

Մխիթար Անեցին Սամվելի աշխատության ողջ առանցքը կազմող աղյուսակներից դուրս է բերել Հայոց թագավորների, մարզպանների, իշխանների անվանացանկերը՝ իշխանության տեւողության թվերով, նույն սկզբունքով կազմել նաեւ իր երկի «Կարգ կաթողիկոսաց» բաժինը[20]:

Վերը նշված խորագրի հետ զուգահեռները հուշում են, որ Օրբելյանի խոսքի վրա զգալի հետք է թողել Մխիթարի երկի վերնագիրը:

16 Անեցի, էջ 99, Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 91ա:

17 Մխիթար Անեցի, էջ 31-33:

18 Մխիթար Անեցի, 73:

19 Պատմության սկզբում («Ճառ երկրորդ»), Մխիթար Անեցին Ադամի ու նրա հաջորդների մասին հատվածը բառացիորեն արտագրել է Սամվել Անեցուց: Նույնն են նաեւ Հայոց թագավորների, իշխանների եւ կաթողիկոսների ցանկերը:

20 Մխիթար Անեցի, 65-69:



3. Ժամանակագրության սկիզբը Հոռոմոսի ձեռագրում (Մատենադարան, ձեռ. թիվ 3613, 1ա):

Ակներեւ է, որ Մխիթարն իր գործն ստեղծելիս Սամվել Անեցու ժամանակագրությունն ունեցել է որպես սեղանի գիրք[21]:

Իհարկե, Սամվել Անեցու ժամանակագրությունից Մխիթար Անեցին կարող էր օգտվել նաեւ Հռոմոսի ձեռագրի գրիչը չլինելով, սակայն անվան, մականվան եւ ժամանակի համապատասխանությունը, Հռոմոսում աշխատած գրչի պատմական նախասիրությունները (ստացող լինելու հանգամանքը), Սամվելի «անեցի» լինելն ընդգծելու համար երկի վերնագրին միջամտելը մեզ բերում են այն համոզման, որ Հռոմոսում ուսանած եւ քննվող ձեռագիրն ընդօրինակած գրիչը հենց պատմիչ Մխիթար Անեցին է:

Այս առումով հիշենք նաեւ Ղեւոնդ Ալիշանի դիտարկումը: Հնարավոր է, որ մեր ձեռագրի հիշատակարանը նկատի ունենալով (կամ գուցե այլ աղբյուր օգտագործելով), Հռոմոսի վանքի մասին գրելիս նա նշում է. «Ի կէս կամ ի վերջ ԺԲ դարու աստանօր ասի վարժեալ եւ Մխիթար Անեցի բազմահմուտն, որոյ սակաւ ինչ ի գրուածոցն եհաս առ մեզ»[22]:

Հռոմոսի ձեռագրի վերջին թերթը թույլ է տալիս ենթադրություն անել մատյանի գրության թվականի մասին: Ժամանակագրության վերջում արձանագրված է Գրիգոր Տղայի աթոռակալությունը. «ՈԻԲ (1173): Փոխի մահուամբ ի Քրիստոս տէր Ներսէս, եւ փոխանորդէ զաթոռն տէր Գրիգոր Տղա» (թերթ 70բ): Դրանից հետո մեկ այլ գրիչ ավելացրել է՝ «ամս Ի (20)»: Նույն գրիչը նաեւ Մխիթարի գրած վերջին՝ «Տղա» բառի «ա»-ն դարձրել է «պ», «ղ» տառը ջնջել է, թողել «ա»-ն եւ շարունակել «լհաւունի»: Ստացվել է «տէր Գրիգոր Պալհաւունի»: Այս գրչի կատարած մյուս միջամտություններն ու հավելումները կներկայացնենք գրքի երկրորդ մասում (Անանուն, 1400 թ.):

Ուշադրության է արժանի այն, որ Մխիթարի գծած ժամանակագրական աղյուսակը վերջանում է էջի կեսին: Այսինքն, գրիչը նախապես որոշել է, թե մինչեւ որ թվականն է նշելու եւ ըստ այդմ գծել աղյուսակը: Ինչպես տեսանք, ժամանակագրության վերջին տեղեկությունը զետեղված է 1173 թվականի դիմաց, իսկ ահա աղյուսակում նշված վերջին թիվը Հայոց ՈԻԶ (1177) թվականն է: Հավանաբար դա է ձեռագրի գրության թվականը, քանի որ ճիշտ նույն սկզբունքն է կիրառված Սամվել Անեցու ժամանակագրության Կամրջաձորի օրինակում: Այնտեղ աղյուսակն ավարտվում է Հայոց ՈԻԵ (1176) թվականով[23], իսկ հիշատակարանում Ավետիս գրիչը նշում է, որ մատյանը գրել է «ի ՈԻԵ (1176) թուականութեեանն Հայոց...»[24]:

Գրիչների այս մոտեցումը տրամաբանական է: Եթե ժամանակագրական վերջին նշումը 1173 թվականից է, ապա գրիչը աղյուսակում մեկուշտ մեկ տարի ավելի նշելու որեւէ պատճառ չէր կարող ունենալ (մանավանդ եթե ողջ էջով մեկ աղյուսակ չէր գծել): Քանի որ շարունակել է տարիների թվարկումը, ապա դրանում որեւէ իմաստ է տեսել, ավելի ճիշտ, փաստագրել է իր ապրած ժամանակը: Իսկ այդ (գործը կատարելու) թվականից առաջ չի անցել (ասենք, չի նշել 1178, 1179, 1180 եւ հաջորդ թվականները), քանի որ դրանք իր համար դեռեւս անհայտ, ապառնի ժամանակ էին:

Հռոմոսի ձեռագրում Մխիթարը ոչ միայն թվականները չի շարունակել, այլեւ աղյուսակի գիծն է փակել էջի կեսին (նկ. 4): Հեռեւաբար կարող ենք ենթադրել, որ ինչպես Կամրջաձորում Ավետիս գրիչն է աղյուսակը վերջացրել ձեռագրի գրչության թվականով, նույն կերպ է վարվել նաեւ Մխիթար Անեցին: Այս ենթադրությամբ Հռոմոսի ձեռագրի գրչության տարեթիվ կարող ենք համարել 1177 թվականը: Պատմիչ Մխիթար Անեցու կենսագրության հայտնի տվյալները նկատի ունենալով կարելի է ասել, որ 1177 թվականը միանգամայն համապատասխանում է այն տարիքին, երբ նա կարող էր գտնվել Հռոմոսում, որպես «աշակերտ բանի ի վանացն Հռոմոսի, սնեալ առ ոտն Սուրբ Յովանիսի» (թերթ 26բ):

---

21 Հ. Մարգարյանը տարբեր առիթներով ընդգծում է Սամվել Անեցու ժամանակագրության՝ Մխիթարի երկի վրա ունեցած ազդեցությունը: «Մխիթար Անեցին ջանում է ճշգրիտ որոշել ժամանակը եւ դիմում է ժամանակագրական հարցերում նրա համար ամենամեծ հեղինակությունը հանդիսացող Սամվել Անեցու Պատմությանը: ...Սամվել Անեցու պատմական երկի առավելագույն օգտագործմամբ են գրված նաեւ Մխիթար Անեցու մյուս ժամանակագրական ցանկերը: Նա ոչ միայն ուղղակիորեն է օգտվում Սամվել Անեցու աշխատությունից, այլեւ անդամ ժամանակագրություն է հյուսում նրա տարբեր առիթներով հաղորդած տեղեկություններից: Սամվել Անեցու ազդեցությունը հատկապես նկատելի է Մխիթար Անեցու Պատմության մեզ հասած վերջին գլխում»: Մխիթար Անեցի, էջ 17, 32:

22 Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 27:

23 Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 107ա:

24 Նույն տեղում, թերթ 108ա:

Ձեռագրում Սամվել Անեցու երկից բացի կան ժամանակագրական այլ փոքր միավորներ. սկզբում եղած երեք մագաղաթյա թերթերի վրա, եւ վերջում՝ 71ա-71բ թերթերին, որոնք երկու խմբի բաժանելով հրատարակել է Վ. Հակոբյանը[25]: Սակայն դրանք տարբեր ժամանակ եւ չորս տարբեր գրիչների թողած տեղեկություններ են[26]: Ժամանակագրական չորս միավորներից առնվազն երկուսը՝ երրորդն ու չորրորդը գրվել են Ղրիմում: Հնարավոր է, որ ձեռագիրն այնտեղ է հասել Անիի գաղթականության հետ, որն, ինչպես հայտնի է, տեղի հայության հիմնական մասն էր կազմում:

Սամվել Անեցու ժամանակագրության հնագույն ձեռագրերը՝ Կամրջաձորի եւ Հռոմոսի օրինակները ոչ միայն հնարավորություն են տալիս վերականգնելու հեղինակային բնագիրը, այլեւ օգնում են որոշ պատկերացում կազմելու պատմիչի ինքնագիր մատյանի գրչական մանրամասների մասին: Օրինակ, աղյուսակներից դուրս, ընդարձակ տեքստով պատմելով Բագրատունի վերջին թագավոր Գագիկ Բ-ի գահազրկման ու Բագրատունյաց թագավորության անկման մասին, Սամվել Անեցին նշում է. «Զի դադարեաց իշխանութիւնն թագաւորական՝ պարտ է եւ ի կանոնացս դադարեցուցանել»: Դրան հաջորդող հայոց թագավորների թվականների այուններում Սամվել Անեցին ողբ հիշեցնող սրտառուչ խոսք է գրել[27]: Քանի որ ժամանակագրական այունակի լայնությունը բավարարում է ընդամենը երկու-երեք երկաթագիր տառ գրելուն, ապա նշված ոչ մեծ հատվածը ձգվում է մի քանի էջ: Հնագույն բոլոր ձեռագրերում այս հատվածը գրության ճիշտ նույն ձեւն ունի, ներառված է ժամանակագրական նեղ այունակի մեջ[28]: Սա նշանակում է, որ այն հենց այդպես է եղել Սամվել Անեցու ինքնագիր մատյանում:

---

25 Մանր ժամանակագրություններ, 13-18-րդ դդ., հ. 2, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երեւան, 1956, էջ 513-514:

26 Այս մասին տե՛ս Կ. Մաթեւոսյան, Սամվել Անեցու ժամանակագրության Մխիթար Անեցու ընդօրինակությունը, «Էջմիածին», 2006, Ա-Ա, էջ 88-100:

27 «Աւա՛ղ զի ոչ գոյր թագաւոր Հայոց, կարծեմ խափանել կամի այս գաւազանս: Բայց թէ զայն չարժէաք ոչ ածէր Աստուած զդառն սուգս ի վերայ մերոյս ազգի, զի եառես Արարիչն զհպարտութիւն մեր եւ հակառակ կալով կսկծեցոյց զմեզ՝ որպէս ի հնումն զիսրայէլ, զի թէ յանդրանիկն ոչ խնայեաց, զիա՞րդ ի կրտսերս խնայէր, որ նման գոլով կրտսէր որդւոյն քամահեցաք զտէրութիւն նորա» (Անեցի, էջ 110):

28 Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 96բ-97ա, ձեռ. թիվ 3613, թերթ 62ա-62բ:



4. Ժամանակագրության ավարտը Հռոմոսի ձեռագրում (Մատենադարան, ձեռ. թիվ 3613, 70բ):

Ճիշտ այսպես է նաեւ Նախճավանում հայ իշխանների այրման մասին տեղեկությունը. «Առ այսու ժամանակօք այրեցին զիշխանսն Հայոց ի Նախճաւանի եւ այնր աղագաւ պակասեցան կարգ այսր գաւազանի...»[29]: Հայոց իշխանների թվարկումը դադարեցնելով նա այս հատվածը մանրատառ տեղավորել է թվականների նեղ սյունակում: Իսկ հատվածն ավարտել է հետեւյալ բառերով՝ «...ուստի եւ ես սկսայց չարագրել ի տողիս յայս» (Մատենադարան, ձեռ. թիվ 3613, թերթ 48բ-49բ): Ավելի ուշ շրջանի ձեռագրերում այս հատվածը գրել են աղյուսակից դուրս, եւ հրատարակության մեջ վերջաբանը մասամբ ձեւափոխվել դարձել է՝ «...ուստի եւ ես սկսայց չարագրել ի տեղւոջն իւրում»[30]:

Սամվել Անեցու բնօրինակը, առաջին մասում (մինչեւ աղյուսակները) ունեցել է նաեւ ընդգծված հատվածներ: Կամրջաձորի ձեռագրում դրանք գրված են մանուշակագույն թանաքով, իսկ Հոռոմոսի ձեռագրում այդ նույն հատվածներն ունեն բառերի վերնամասում դրված կետագծային նշումներ (ընդգծման ձեւ): Հետեւաբար Սամվել Անեցին նույնպես ընդգծումներ է ունեցել մեկ կամ մյուս եղանակով:

բ. Հայերեն հրատարակության ձեռագրերը

Սամվել Անեցու ժամանակագրության հայերեն հրատարակությունը, ինչպես նշել ենք, կատարվել է Վաղարշապատում, Ա. Տեր-Միքելյանի աշխատասիրությամբ, որն առաջաբանում ժամանակագրության լատիներեն եւ ֆրանսերեն թարգմանությամբ հրատարակությունները նկատի ունենալով գրում է. «Տեսնում ենք, որ օտարներն առաւել առաջ են գնացել այս նշանաւոր պատմութեան նկատմամբ, որ մեր սեփականութիւնն է եւ մեզ անհրաժեշտ»[31]: Սակայն, այն ժամանակ երիտասարդ հետազոտողը միայն մասամբ է կարողացել լուծել իր առջեւ ծառացած դժվարին խնդիրը[32]:

Վաղարշապատյան հրատարակությունը բաղկացած է առաջաբանից, ուր հրատարակիչը ներկայացնում է Սամվել Անեցու կենսագրությունը, համառոտաբար՝ հրատարակության համար օգտագործված ձեռագրերը, յուրովի հիմնավորվում է ժամանակագրական աղյուսակների դուրս թողնվելը (էջ Գ-Լ): Ապա ներկայացվում է ժամանակագրության բնագիրը (էջ 1-160): Հրատարակիչը հիմնական է համարել իր օգտագործած մատյաններից Բ օրինակը եւ մյուսները համեմատել դրա հետ: Ըստ այդ ձեռագրի, հրատարակիչը ժամանակագրությունը հասցրել է մինչեւ 1335 թ., ապա առանձին ենթավերնագրի տակ ներկայացրել «Շարունակութիւն այլ օրինակներից» (էջ 161-174), դեպքերի հիշատակությունը հասցնելով 1424 թ., որից հետո ԺԳ օրինակից քաղել է 1392-1665 թվականներին վերաբերող տեղեկություններ (էջ 175-180): Ապա «Յաւելուածներ» բաժնում ներկայացրել է հարակից հինգ պատմական բնագիր (էջ 183-243) եւ գիրքն ավարտել ծանոթագրություններով (էջ 245-301):

Ժամանակագրության հրատարակության համար իր օգտագործված ձեռագրերի մասին Ա. Տեր-Միքելյանը գրում է. «Սամուէլ Անեցու պատմութեան 13 գրչագիրներ կան Ս. Էջմիածնի մատենադարանում, որոնք մեծ մասամբ յետին դարերից են: ...Դոցանցից միայն մէկը մագաղաթի վրայ է գրուած եւ բոլորովին, ինչպէս համեմատութիւնից եւս նկատւում է, իրաւեսակ է, ըստ որում ունի նաեւ այնպիսի կտորներ, որոնք միւսների մէջ պակասում են: Բոլոր այդ գրչագիրները պատահական կարգով նշանակել եմ հայերէն մեծատառերով Ա-ից մինչեւ ԺԳ»[33]: Այնուհետեւ նա չատ համառոտ ներկայացնում է ձեռագրերը, հիմնականում վկայաբերելով հիշատակարանները: Ձե-

29 Անեցի, էջ 85-86:
30 Անեցի, 86:
31 Անեցի, էջ Իե:

32 Ա. Տեր-Միքելյանը (1864-1901) Էջմիածնի ճեմարանն ավարտելուց հետո աստվածաբանական գիտելիքները կատարելագործելու համար մեկնել է Գերմանիա եւ Ենայի համալսարանն ավարտել 1892-ին: Անեցու ժամանակագրությունը հրատարակելիս նա 29 տարեկան էր: Ձեռագրերի բնագրերը համեմատելիս նա որպես օգնական ունեցել է Էջմիածնի Գեւորգյան ճեմարանի Ա լսարանի առնվազն ութ ուսանող (Անեցի, էջ ԻՀ), որոնք, բնականաբար, փորձառու չէին նման աշխատանքի համար:

33 Անեցի, էջ Է: Ըստ նոր ձեռագրահամարների Ա. Տեր-Միքելյանի օգտագործած ձեռագրերը մաշտոցյան Մատենադարանի հետեւյալ մատյաններն են՝ 1898 (Ա), 1899 (Բ),1486 (Գ), 1717 (Դ), 1865 (Ե), 1719 (Զ), 3072 (Է), 1718 (Ը), 1897 (Թ), 1484 (Ժ), 1483 (ԺԱ), 1869 (ԺԲ), 2965 (ԺԳ):

ռագրերը թվարկելուց հետո ավելացնում է. «Նորերս ձեռքս ընկաւ եւ մի օրինակ № 484»[34]: Այս ձեռագիրը, սակայն, նա չի օգտագործել հրատարակվող բնագիրը կազմելիս:

Համառոտակի ներկայացնենք հրատարակության ձեռագրերը:

Ա օրինակ, Մատենադարան, ձեռ. թիվ 1898[35], ժողովածու է, գրչության ժամանակը, վայրը, գրիչն անհայտ են, Մատենադարանի ձեռագրացուցակում համարվում է 13-րդ դարի մատյան[36]: Ժամանակագրության առաջին մասն ամբողջական է, սակայն աղյուսակներով սկսվող երկրորդ մասը (32ա թերթից) առաջին մի քանի թերթերից հետո սակավաթիվ տեղեկություններ ունի: Հիմնականում նշված են հռոմեական կայսրերի եւ Հռոմի պապերի անունները, Սամվել Անեցու՝ աղյուսակներից դուրս գրած ոչ մի հատված այստեղ չկա: Գրիչը բավական լայն է գծել աղյուսակները, որի պատճառով ամեն էջում իրար տակ ընդամենը 10 տարի է տեղավորվել (այլ ձեռագրերի 18-20 տարիների փոխարեն), միաժամանակ սյունակների վերին մասում չի նշել գահակալների անունները, այլ հաջորդաբար գրել է, օրինակ, «Պապ ի Հռոմ», «կայսր Հռոմայ», «կաթողիկոս Հայոց», «թագաւոր Հայոց»: Իսկ կոնկրետ անձանց անունները եւ տարիները գրել է աղյուսակում պատմական վկայությունների համար նախատեսված մասերում: Ձեռագրում եղել են պակասող թերթեր, որոնք նոր թերթերով լրացրել են Նորոգման ժամանակ[37]: Հնարավոր է, որ դա արվել է ձեռագրի 1747 թ. Նորոգման ժամանակ[38]:

Ժամանակագրության վերջին հատվածի ժամանակագրական միավորների մի մասը, որոնք Ա. Տեր-Միքելյանը չի ընդգրկել վաղարշապատյան հրատարակության մեջ, քաղվածաբար (առանձնացնելով Կիլիկիայի պատմությանը վերաբերող միավորները) հրատարակել է Լ. Տեր Պետրոսյանը[39], իսկ մնացածները ներկայացվում են սույն պրքի բնագրերի մասում:

Բ օրինակ, Մատենադարան, ձեռ. թիվ 1899[40], ժողովածու է, գրված 1676 թվականին Ամրդոլու վանքում, գրիչն է Պողոս Գավառցին, Վարդան Բաղիշեցու սանը, որի համար էլ ընդօրինակել է մատյանը: Այս ձեռագիրը Ա. Տեր-Միքելյանը հրատարակության համար օգտագործել է որպես հիմնական օրինակ: Նա գրում է. «...մի գեղեցիկ գրուած գրչագիր է, որ եւ հարազատագոյն երեւալով իւր կազապարի հնութեամբ՝ ծառայել է ինձ իբրեւ հիմնական Ա-ից յետոյ: Սա հասցնում է Սամուէլի պատմութիւնն մինչեւ 1337 թուականը»[41]: Սակայն ձեռագիրը ավարտվում է Հայոց ՉՉԴ (1335) թվականի տեղեկությամբ՝ «ի ՉՉԴ (1335) ի լնուլ չափոյ մեղաց մերոց...» (թերթ 73բ-74ա), որը նաեւ հրատարակության մեջ զետեղված վերջին տեղեկությունն է[42]:

Հրատարակության տողատակերում այս կամ այն տեղեկության վերաբերյալ հաճախ կարելի է կարդալ «այլք չունի» բառերը, որ վկայում է, թե մյուսները համեմատվել են հիմնական՝ Բ օրինակի հետ: Սակայն, ցավոք, Բ օրինակի եւ հրատարակության պատահական ընտրված մի քանի էջերի համեմատությունը ցույց տվեցին, որ սակավ չեն չեղումները: Այսպես, «ի ՇՀԶ (1127) թվին ի սուլտանն

---

34 Անեցի, էջ ԻԳ: Նոր ձեռագրահամարն է՝ 481: Ժողովածու է, գրված թղթի վրա, բոլորգրով (թերթ՝ 90, 19,5×14,5սմ), գրչության ժամանակը՝ ենթադրաբար 17-րդ դ.: Ժամանակագրությունը զբաղեցնում է 19ա-68ա թերթերը: Աղյուսակները գծված են հորիզոնական դիրքով: Բուն գրչի չարադրանքը ավարտվում է Հայոց ՉՉԴ (1335) թվականով (թերթ 62ա), որին հաջորդող թերթերին կան հետագայի մի քանի հավելումներ:

35 Էջմիածնի նախկին համարը՝ 1696: Գրված է մագաղաթի վրա, բոլորգրով (թերթ 280, 23,5×17,5սմ): Ժամանակագրությունը զբաղեցնում է 6ա-96բ թերթերը (97ա-121բ թերթերին աղյուսակները գծված են, բայց ոչինչ չի գրված): Սկսվում է կիսախորանով եւ գլխագրով:

36 Ցուցակ ձեռագրաց Մատենադարանի, Ա, էջ 669: Ա. Տեր-Միքելյանը ձեռագիրը ներկայացնելով հիմնականում թվարկել է ամբողջ մատյանի պարունակած նյութերը, վկայաբերել ուշ շրջանի հիշատակարաններն ու գրություններ (Անեցի, էջ Է-Թ):

37 Լրացված թերթերն են՝ 33-38, 40-47, 51-52, 58-61, 66-69, 71-72, 75-77, 83-84, 90, 97:

38 Այդ ժամանակ ձեռագիրը ստացել է Հակոբ եպիսկոպոս Շամախեցին, իսկ Նորոգման մասին հիշատակարանում գրված է. «Վերստին նորոգեալ կազմեցաւ գիրքս եւ գրեցաւ յիշատակարանս ի ՌՃՂ եւ Զ (1747)» (Մատենադարան, ձեռ. թիվ 1898, թերթ 280բ): Ձեռագրի ավելի վաղ մի ստացող երկու տեղում իր անունն է թողել՝ «Գրիգոր վարդապետին է» (16բ-17ա, 135ա):

39 Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Ա, էջ 483-484:

40 Էջմիածնի նախկին համարը՝ 1697: Ձեռագիրը գրված է թղթի վրա, բոլորգրով (թերթ՝ 447, 23×17սմ): Ժամանակագրությունը զբաղեցնում է ձեռագրի սկզբնամասը (թերթ 1ա-74ա): Բնագիրը սկսվում է կիսախորանով, զարդագիր տողով եւ լուսանցազարդով:

41 Անեցի, էջ Թ:

42 Անեցի, էջ 159:

գնացին Հայոց եւ Վրաց թագաւորքն՝ Կիւրիկէ եւ Գօրգի»[43] տեղեկության թվականը ուսումնասիրողի տարակուսանքն է հարուցել, քանի որ այլ աղբյուրներ հիշյալ դեպքի համար նշում են 1080-ական թվականները[44]: Իրականում ժամանակագրության հրատարակության մեջ սպրդած սխալի հետեւանքով «Լ»(30)-ի փոխարեն տպվել է «Հ»(70): Հրատարակության հիմնական Բ օրինակում (նաեւ մյուս ձեռագրերում) հստակ գրված ՇԼԶ՝ այն է՝ 1087 թ. (թերթ 61ա):

Եթե նշված դեպքի վերաբերյալ հայտնի են այլ սկզբնաղբյուրներ եւ հեշտ է ճշտում կատարել, ապա ավելի ցավալի է վրիպումը այն տեղեկության մեջ, որի համար Անեցու ժամանակագրությունը միակ սկզբնաղբյուրն է: Այսպես, «Ի ՇՀԲ (1123) ամին ի բռնութենէն Տաճկաց եւ Օշին իշխանն ի ժառանգութենէն իւրմէ՝ որ կոչի Մայրեաց ջուրք՝ հանդէպ Գանձակայ... եւ եկեալ յաչխարհն Կիլիկեցւոց...»[45] արժեքավոր տեղեկությունը Բ օրինակում միանգամայն հստակ ունի ՇԻԲ (1073) թվականը (թերթ 60բ)[46]:

Պարզվում է, որ վաղարշապատյան հրատարակության 114-117 էջերում Հայոց ՇԻ (520) եւ ՇԼ (530) թվականներով բոլոր տեղեկությունները դարձել են ՇՀ (570)-ով սկսվող: Հետեւանքները պարզ են:

1124 թ. վրացիների կողմից Անիի գրավմանը նախորդած վիճակը

---

43 Անեցի, էջ 118:

44 Ռ. Մաթեւոսյանը գրում է. «Մեր պատմիչները այցելությունը նշում են տարբեր թվականներով... Վարդանը նշում է 1088 թվականը, Մխիթար Այրիվանեցին՝ 1081-ից մինչեւ 1084 թթ. ընկած ժամանակաշրջանը, իսկ Սամվել Անեցին՝ 1127 թ.» (Ռ. Մաթեւոսյան, Տաշիր-Զորագետ, Երեւան, 1982, էջ 98): Այդ տեղեկությունը չկա Սամվել Անեցու հնագույն ձեռագրերում եւ հետագայի հավելում է, սակայն պատմական ստույգ տվյալ պարունակող:

45 Անեցի, էջ 117:

46 Այս տեղեկության առնչությամբ Բ. Ուլուբաբյանը քննադատելով նախորդ ուսումնասիրողներին գրում է. «...պատմաբան հետազոտողը մոտավորապես կրկնել է Ալիշանի սխալ կարծիքը Օշինի՝ Գանձակից ելնելու տարեթվի մասին. իբր թե, այդ կատարվել է 1073 թ., մինչդեռ Սամվել Անեցին՝ այս առթիվ տեղեկություն հաղորդող միակ աղբյուրը, տարեթիվ է համարում ՇՀԲ (1123)-ը» (Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երեւան, 1975, էջ 96): Նկատենք, որ Ղ. Ալիշանն օգտվել է ժամանակագրության Վենետիկում պահվող ձեռագրերից եւ ոչ ժամանակագրության վաղարշապատյան հրատարակությունից, դրա համար էլ ճիշտ թվականն է նշել: Ավելացնենք, որ հիշյալ տեղեկությունը հետագայի հավելում է Սամվել Անեցու ժամանակագրության մեջ:

նկարագրելիս Սամվել Անեցին գրում է. «Ի բազում հինահարութեանց եւ իսպառասպուռ ջնջելոյ ասպատակ արձակելով յաչխարհ մեր՝ երբեմն ի Վրաց, երբեմն ի Սկիւթականաց՝ անհնարին նեղութեամբ, տարակուսեալ տառապեալ բնակիչք քաղաքիս Անւոյ...»[47]: Ժամանակագրության հրատարակության հիշյալ հատվածում դուրս են թողնվել «երբեմն ի Վրաց» բառերը[48], որոնք առկա են հրատարակության համար հիմք ծառայած Բ օրինակում (63բ), նաեւ մյուս բոլոր օրինակներում:

Գ օրինակ, Մատենադարան, ձեռ. թիվ 1486[49], ժողովածու է, կազմված 16-րդ դարի վերջերին: Վերնագրի սկիզբը տարընթերցումով է. «Սամուէլ քահանաի կաթողիկեցւոյ հաւաքմունք...» (թերթ 104բ): Սամվել Անեցու ժամանակագրության հատվածում եղած հիշատակարաններից երեւում է, որ գրիչը երզնկացի Սահակ երեցն է. «Ով եղբայր, յիշեցէք զհողոյ հաւասար եւ զանպիտան երզնկացի Սահակ երէցս, որ տգիտութեամբ գրեցի զանհասկանալի գիրքս եւ պիրթիմ գիրքս, որ ոչ գիտէի զելն եւ զմուտն: Թէ այլ ինչ մտացուած բան կայ՝ վաղիւն գրեմ, թէ Հոգին Սուրբ առաջնորդէ» (130ա)[50]:

Այս հիշատակարանը նկատի ունենալով Ա. Տեր-Միքելյանը նշում է, որ «այս օրինակը տգէտ գրչի է պատկանում», բայց բնագրի վերաբերյալ նկատում է՝ «համանման Բ-ին»[51]: Եւ իրոք, այն նույն ընդգրկումն ունի, ավարտվում է ՋՁԴ (1335) թվականի տեղեկությամբ, իսկ հրատարակության բազմաթիվ տողատակերում կարելի է կարդալ՝ «Գ եւս ունի այս կտորը»[52], այսինքն հիմնական Բ օրինակից բացի Գ օրինակն էլ ունի այդ:

---

47 Անեցի, էջ 125, Համմտ. Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 103ա, Մատենադարան, ձեռ. թիվ 3613, թերթ 67ա:

48 Այդ առաջինը նկատել է Հ. Մարգարյանը (Հ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 88):

49 Էջմիածնի նախկին համարը՝ 1703: Մատյանը գրված է թղթի վրա, բոլորգրով եւ նոտրգրով (թերթ 211, 26×18սմ): Սկզբում տարբեր պատմական նյութեր են, իսկ 104բ-167ա թերթերում՝ Անեցու ժամանակագրությունը:

50 Մյուս հիշատակագրությունը նույնպես բնութագրական է գրչի համար. «Գրեցաւ ձեռամբ Սահակ երիցուս, գիտեանաք, որ Դ (4) ամիս է ջուր չէմ խմեր, ամէն» (էջ 159բ), Համմտ. Անեցի, էջ ԺԱ:

51 Անեցի, էջ ԺԱ:

52 Անեցի, էջ 103-106, 110, 112, 117, 124, 133, 143, 144, 150:

Հետաքրքիր է, որ Գ օրինակում Սամվել Անեցու հեղինակային բնագրի ամենավերջին տեղեկությունը (1163 թ.) տարընթերցումով է, սակայն այն չի նշված հրատարակության մեջ: Այն հետեւյալն է. «Ապա զաւրաժողով եղեալ սուլտանն Խորասանայ՝ անթիւ բազմութեամբ եկեալ ի դուռն քաղաքիս Անւոյ եւ զարհուրէցոյց զբնակիչք սորայ եւ յետ սակաւ աւուրց դարձաւ յաչխարհ իւր ոչ ինչ կարացեալ ստանանել սորայ զի Տէր պահպանէր եւ Ինքն հովանի Աջովն Իւրով, որ աւրհնեալ է յաւտիեանս ամէն»[53] (թերթ 162բ): Այս տարընթերցումն ունի նաեւ Վենետիկի ձեռագրերից մեկը, որից ժամանակին օգտվել եւ վաղարշապատյան հրատարակությունից առաջ այն հրատարակել է Ղեւոնդ Ալիշանը: Հետաքրքրական է, որ նա հատվածի փառաբանական ավարտը նկատի ունենալով գրում է. «Եւ աստանօր թուի աւարտեալ հեղինակին գժամանակագրութիւնն»[54]:

Գ օրինակը լուծում է Սամվել Անեցու ժամանակագրության մեջ մուծված Գեւորգ վարդապետին վերաբերող հատվածի հարցը, որը ձեռ. Գ. Զարբհանալյանը համարելով հեղինակային, այս վարդապետին թյուրիմացաբար Սամվել Անեցու ուսուցիչ է համարել, մինչդեռ նա Սահակ երզնկացի գրչի ուսուցիչն էր (այս մասին նշվել է վերեւում, պատմիչի կենսագրության բաժնում):

Դ օրինակ, Մատենադարան, ձեռ. թիվ 1717[55], ժողովածու է: Վերնագրի տարընթերցումը՝ «Սամուէլի մարգարէի քահանայի հաւաքմունք...»: Թորոս եպիսկոպոսը ձեռագիրն ընդօրինակել է 1664 թ. Մինաս Որոտնեցի վարդապետի պատվերով, որի մասին փոքրիկ հիշատակարաններ ունի (թերթ 96բ, 151բ):

Ժամանակագրության ամենավերջին վկայությունը վերաբերում է Վրաց թագավոր Գեորգիի 1162 թ. Դվինը գրավելուն (թերթ 151բ):

---

53 Բնագրում՝ «Ապա զաւրաժողով լինեալ սուլտանն Խորասանայ՝ եկեալ ի դուռն քաղաքիս Անւոյ եւ զարհուրեցոյց զբնակիչք սորա. յետ Լ (30) աւուր գնաց գաղտագողի աղուեսաբար եւ հար զթագաւորն Գեորգի եւ զաւար նորա էառ եւ դարձաւ ի տեղի իւր» (Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 106բ-107ա, հմմտ. Անեցի, էջ 137-138):

54 Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 100:

55 Էջմիածնի նախկին համարը՝ 1698: Գրված է թղթի վրա, նոտրգրով (թերթ՝ 208, 20,5×14,5սմ): Ժամանակագրությունն զբաղեցնում է 97ա-151բ թերթերը:

Փաստորեն հեղինակային բնագրից երկու նախադասություն է պակասում: Վերջին էջի աղյուսակն ավարտվում է ՈԺԴ (1165) թվականով:

Ե օրինակ, Մատենադարան, ձեռ. թիվ 1865[56], ժողովածու է, ժամանակագրության վերնագրի սկիզբը՝ «Սամուէլ յԱնեցոյ հաւաքմունք...»: Ընդօրինակել է Թորոս եպիսկոպոսը 1656 թ. երուսաղեմում[57]: Թերեւս նույնն է նախորդ ձեռագրի գրչի հետ, սակայն բնագրերում գգալի տարբերություններ կան: Այս օրինակում հանված են ժամանակագրական աղյուսակները: Գրիչը տողերի սկզբում ամեն վկայությունից առաջ կարմիր թանաքով գրել է «Ի Քրիստոսէ սկսեալ», սակայն թվականը չի գրել: Տեքստում հատ ու կենտ տեղերում գրել է Փրկչական եւ Հայոց թվականները: Վերջին նշված թվականն է Հայոց ՊԵ (1356 թ.), (թերթ 135ա):

Զ օրինակ, Մատենադարան, ձեռ. թիվ 1719[58], ժողովածու է, կազմված 17-րդ դարի սկզբներին: Սամվել Անեցու ժամանակագրությունը ձեռագրի միջնամասում է, սկզբում «Ավետարանք հանգստեան» ընթերցվածներ են, բոլորգրով (թերթ 1բ-37ա), որոնց գրիչը, հիշատակարանի համաձայն Նիկոլ Լովցին է, եւ գրել է 1615-ին (թերթ 32բ)[59]: Դրան հաջորդում են մանր նյութեր, ապա Սամվել Անեցու ժամանակագրությունը (թերթ 43ա-125ա), որի հատվածում հիշատակարան չկա: Ձեռագրի վերջնամասում Զաքարիք գրչի հիշատակարանն է՝ գրված 1616 թ. (թերթ 161ա)[60]: Ժամանակագրության գրչությունը նման է Զաքարիքի գրին[61]:

Այս ձեռագիրն ընդօրինակված է ժամանակագրության հին եւ անաղարտ օրինակից, զերծ է հետագայի հավելումներից, ավարտվում

---

56 Էջմիածնի նախկին համարը՝ 1675: Գրված թղթի վրա, նոտրգրով (թերթ՝ 282, 21×15,5սմ): Ժամանակագրությունն զբաղեցնում է 104բ-135ա թերթերը:

57 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Գ, կազմեց Վ. Հակոբյան, Երեւան, 1984, էջ 693-694:

58 Էջմիածնի նախկին համարը՝ 1700: Մատյանը գրված է թղթի վրա, բոլորգրով եւ նոտրգրով (թերթ՝ 185, 19,6×15,7սմ):

59 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա, կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երեւան, 1974, էջ 546:

60 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա, էջ 572:

61 Նույնական է հատկապես մեծատառ Ա, Թ, Ո, փոքրատառ թ, ջ, ք եւ այլ տառերի գրելաձեւը:

է հնագույն ձեռագրերի նման (1173 թվականով):

Ուշագրավ է, որ այստեղ, վերջին վկայության մեջ անգամ նշված չեն Գրիգոր Դ-ի մականունը (Տղա) եւ աթոռակալության տարիների թիվը: Ձեռագրի վերջին երկու էջերի բացվածքը, հնարավոր է, որ պահպանել է Անեցու ժամանակագրության ավարտական մասի նախնական կառուցվածքը (նկ. 5):

Է օրինակ, Մատենադարան, ձեռ. թիվ 3072[62], ժողովածու է, գրիչն է Կարապետ երեցը, ստացողը՝ Արիստակես վարդապետը (րաբունապետ), գրչության ժամանակ է համարվում 17-րդ դ.[63]:



5. Ժամանակագրության ավարտի էջերի բացվածք (Մատենադարան, ձեռ. թիվ 1719, 124բ-125ա):

62 Էջմիածնի նախկին համարը՝ 247: Գրված թղթի վրա, նոտրգրով (թերթ՝ 452, 20,3×14,8սմ): Ժամանակագրությունը զբաղեցնում է 220ա-292բ թերթերը, ավարտվում Հայոց ՊՀԳ (1424) թվականով: Օլիմպիադայի տարեթվերը գրված են սյունակի մեջ:

63 Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, Երեւան, 1965, էջ 933:

Ը օրինակ, Մատենադարան, ձեռ. թիվ 1718[64], ժողովածու է: Ներսես Կամենցու ընդօրինակած այս մատյանի հիշատակարանը Վ. Հակոբյանը հրատարակել է 1625 թ. շարքում, որպես ձեռագրի Բ հիշատակարան: Սակայն Ներսես Կամենցու հիշատակարանն այստեղ թվական չունի (հիշատակարանի չարունակության մասում թուղթը կտրված է)[65]: Իսկ թվակիր է ձեռագրի Բ մասը (Կյուրեղ Երուսաղեմցու «Կոչումն ընծայութեան»), որը կապ չունի Սամվել Անեցու ժամանակագրության հետ եւ գրված է 1625 թ. Երուսաղեմում՝ Մաղաքիա գրչի ձեռքով: Կարծում ենք, որ Ներսես Կամենցու ընդօրինակությունն ու հիշատակարանն ավելի վաղ են գրվել[66]:

Թ օրինակ, Մատենադարան, ձեռ. թիվ 1897, ժողովածու[67], գրիչն է Հայրապետ վարդապետը: Ձեռագրում ժամանակագրության սկիզբը թերի է, սակայն պակասում է միայն առաջին թերթը[68]: Ավարտվում է Սամվել Անեցու հնագույն ձեռագրերից հայտնի վերջին տեղեկությամբ (Ներսես Շնորհալու մահվան եւ Գրիգոր Տղայի աթոռակալության մասին): Մատենադարանի ձեռագրացուցակում մատյանի գրչության ժամանակ է համարվում 12-րդ դարը[69], թեեւ Հայրապետ վարդապետի թողած հիշատակագրություններում գրչության ժամա-

64 Էջմիածնի նախկին համարը՝ 1699, հրատարակության մեջ նշված է 1692, որը վրիպակ է (Անեկի, էջ ԺԶ): Ձեռագիրը գրված թղթի վրա, նոտրգրով (թերթ՝ 198, 18,6×15սմ): Ժամանակագրությունն զբաղեցնում է 2ա-69բ էջերը, հասնում է մինչեւ 1202 թ.:

65 Ներսեսի հիշատակարանը հետեւյալն է. «Գրեցաւ յայս Գաւազանագիրքս ձեռամբ մեղաւոր եւ անարժան **Ներսէս սարկաւագի**, որգւոյ Հօլուպ վոյթի Կամէնեցոյ, ի յաշխարհս Իլախաց, ի նոյն քաղաքի, ի վայելումն հոգեւոր հօրն մերոյ սրբոյ եւ քաջ բար...» (Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երեւան, 1978, էջ 167):

66 Իր հաջորդ ձեռագրում, որը նույնպես պարունակում է Անեցու ժամանակագրությունը (Մատենադարան ձեռ. թիվ 3965), բայց ընդօրինակվել է այլ նախօրինակից (Հառոմոսում Մխիթար Անեցու գրած մատյանից), 1624 թվականին, Ներսեսն իրեն կոչում է «դպրապետ» (Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, էջ 131):

67 Էջմիածնի նախկին համարը՝ 1695: Գրված է թղթի վրա, բոլորգրով (թերթ՝ 284, 25,5×16,5սմ):

68 Տեքստը սկսվում է «...թեւակոխեցուք ձեռնըտու ունելով զնոսա, զեւսեբի ասեմ...» (Մատենադարան, ձեռ. թիվ 1897, թերթ 1ա, հմմտ. Անեցի, էջ 3):

69 Յուցակ ձեռագրաց Մատենադարանի, հ. Ա, էջ 670: Վ. Հակոբյանը ձեռագիրը համարել է Անեցու ժամանակագրության երկու հնագույն ձեռագրերից մեկը (Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 20):

նակի ու տեղի վերաբերյալ նշում չկա: Ա. Մաթեւոսյանը Հայրապետ վարդապետի հիշատակարանները հրատարակել է 13-րդ դարի անթվական հիշատակարանների շարքում[70]:

Այս ձեռագիրը Ա. Տեր-Միքելյանի օգտագործած ձեռագրերի մեջ հնագույնն է, սակայն հրատարակիչն անտեղյակ է եղել դրան եւ պատշաճ կերպով չի ներկայացրել տարընթերցումները:

Ժ օրինակ, Մատենադարան, ձեռ. թիվ 1484[71], ժողովածու է: Գրիչն է Հովհաննեսը, գրչության ժամանակը՝ 1666 թ.: Վերնագրին հաջորդում են «Տէր Սամուէլի պատմագրի» բառերը: Բագրատունյաց անկման կապակցությամբ Հայոց թագավորների տարիների սյունակը դադարեցնելու մասին Սամվել Անեցու գրած փոքրիկ ողբի հատվածում գրիչը ողբ-հիշատակարան է գրել իր ապրած ժամանակի մասին[72]: Ձեռագրում կան մանր հավելումներ, որոնք դուրս են մնացել հրատարակությունից[73], կամ թերի են տպագրված, մինչդեռ այս

70 Հիշատակագրություններից մեկում Հայրապետը հիշատակում է իր երկու եղբայրներին «...զեղբարց իմոց Կարապետին եւ զՆաչատրին յիշեայ ով պատուական վերծանող եղբայր ի Քրիստոս»: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 905:

71 Էջմիածնի նախկին համարը՝ 1672: Գրված է թղթի վրա, բոլորգրով (թերթ՝ 359, 28×19,5սմ): Ժամանակագրությունը զբաղեցնում է 127ա-190ա թերթերը: Օլիմպիադայի տարեթվերը գրված են առաջին սյունակի մեջ:

72 «Արդ ընդ այս խափանած գաւազանիս հարկ եղեւ եւ զմեզ տարակուսանքս գծագրել, որ դառն էր ժամանակս... վանորայքս ամէնն աւերեցան եւ չկայ տեղի գնալոյ...: Բայց զհանդիպողքդ ամին... մեզաց թողութիւն հայցեցէք...(եւ այլն)» (173բ): Հովհաննես գրչի այս հիշատակարանը դուրս է մնացել Մատենադարանի նոր ձեռագրացուցակից (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Դ, կազմեցին՝ Ա. Քեօշկերեան, Կ. Սուքիասեան, Յ. Քեօսէեան, Երեւան, 2008, էջ 1398): Զարմանալիորեն ձեռագրացուցակից դուրս է մնացել նաեւ գրչի չափածո հիշատակարանը (175ա), որը հրատարակել է դեռ Ա. Տեր-Միքելյանը (Անեցի, էջ ԺԹ):

73 Օրինակ, թվականների շարքից դուրս գրված այս տեղեկությունը. «Զաքարէ եւ Իւանէ տիրեցին Հայոց եւ Վրաց եւ զԱնի բերդ առին» (281ա): Մեկ այլ հավելում. «Այժմ Լեւոն թագաւորէ, ամս Իե (25)» (181բ): Սա հետաքրքիր է այնքանով, որ արձանագրում է հավելումը կատարելու թվականը: Լեւոնն իշխան է եղել 1187-1198 թթ. (11 տարի), եւ թագավոր՝ 1198-1219 թթ. (21 տարի), հավելում կատարողը 25 տարի նշելով հավանորեն նկատի է ունեցել նրա իշխանության սկիզբը: Ըստ այդմ նա ապրել է 1187-ից 25 տարի անց՝ 1212 թվականին եւ այդ ժամանակ Սամվել Անեցու ժամանակագրության իր օրինակում կատարել վերը նշված հավելումը:

մատյանը տալիս է ճիշտ տարբերակը[74]:

Ժամանակագրությունը հասնում է մինչեւ Հայոց ՊՀԳ (1424) թ., որից հետո ծանոթագրված է. «Այս յայլ օրինակէ է յետեւ ի ձեռս անկաւ, զպակասն ի հոս գրեցաք եւ թուական եղաք, թէ ուզես գիտ եւ տես յառաջն» (թերթ 187բ): Այստեղ Հայոց ՃԿԴ (715) - ՋԾԸ (1309) թվականներն ընդգրկող ժամանակահատվածին վերաբերող տարբեր տեղեկություններ են գրված (թերթ 187բ-190ա):

ԺԱ օրինակ, Մատենադարան, ձեռ. թիվ 1483[75], ժողովածու է, գրիչը՝ Մկրտում Ջուղայեցին, ստացողը՝ Մինաս վարդապետ Հասթենցին, ընդօրինակված է 1688 թ. Թոխաթում (Եւդոկիա): Ունի պատկերազարդ սկզբնաթերթ (նկ. 6): Մինչեւ ժամանակագրության առաջին մասի վերջը յուրաքանչյուր բացվածքի ալ էջի ստորին լուսանցքի կենտրոնում գրված է՝ «Սամուէլի Յանեցւոյ», ձախ էջի նույն մասում՝ «Պատմագիրք», իսկ երկրորդ՝ աղյուսակների մասից սկսած ձախ էջում՝ «Գիրք գաւազանաց» կամ «Շարս գաւազանաց»: Ժամանակագրությունը կառուցվածքով նման է վերը նշված Ժ եւ հաջորդ՝ ԺԲ օրինակներին:

ԺԲ օրինակ, Մատենադարան, ձեռ. թիվ 1869[76], ժողովածու է, գրիչը եւ ստացողն է Անդրեաս սարկավագը, ձեռագիրն ընդօրինակել է Եւդոկիայում, 1589 թ.: Վերնագրին հաջորդում են «Տէր Սամուէլի պատմագրի» բառերը (թերթ 193բ):

Ժամանակագրությունը հասնում է մինչեւ Հայոց ՊՀԳ (1424) թ., (թերթ 262բ), որից հետո կարդում ենք այն նույն ծանուցումը, որը կա Ժ օրինակում. «Այս յայլ օրինակէ է... (եւ այլն)»:

74 Հայոց ՈՀԴ (1225) «Սուլտանն եհար զվրացին ի Գառնի» (182ա): Գառնիի ճակատամարտի մասին ճիշտ թվագրմամբ այս տեղեկությունը հրատարակության մեջ ՈՀԵ (1226) թվականի դիմաց է եւ տեղանվան սխալով «... ի Կարնի» (Անեցի, էջ 149): Փրկչական ՌՄԿԲ (1262) Հայոց ՉԹ (1260) «Զաքարէն սպանին: Շահինշահն մեռաւ» (183ա): Այստեղ հիշատակված է 1261 թ. մոնղոլների ձեռքով դաժանորեն սպանված Զաքարեն Բ-ը: Որդու մահվան լուրն առնելով կսկծից մահացավ նրա հայրը Շաւնշահ Ա Զաքարյանը: Հրատարակության մեջ տեղեկությունը կիսատ է. «ՌՄԿ: Շահին-շահն մեռաւ» (Անեցի, էջ 161):

75 Էջմիածնի նախկին համարը՝ 1671: Գրված թղթի վրա, բոլորգրով (թերթ՝ 309, 28,4×20,8սմ): Ժամանակագրության թերթերը՝ 131ա-192բ:

76 Էջմիածնի նախկին համարը՝ 1679: Գրված է թղթի վրա, բոլորգրով (թերթ՝ 400, 21,7×15,7սմ): Ժամանակագրության թերթերը՝ 193բ-266բ:

6. Ժամանակագրության սկզբնաթերթ (Մատենադարան, ձեռ. թիվ 1483, 131ա):

ԺԳ օրինակ, Մատենադարան, ձեռ. թիվ 2965[77], ժողովածու է (17-րդ դ.): Ժամանակագրության գրիչը դժգոհ է եղել գաղափար օրինակից եւ գրում է. «Օ՛չ թէ զերծանէի ի խառնեալ օրինակէս» (թերթ 105ա): Փրկչական ՇԾԴ (554) թվականի դիմաց Հայոց Ա (1) թվականը դնելով ծանոթագրում է. «Յայլ օրինակս զՀայոց Թուականն ի Քրիստոսի ՇԾԱ (551) ամէն էր սկսեալ» (թերթ 86բ):

Սրանք են այն ձեռագրերը, որ հրատարակության համար օգտագործել է Ա. Տեր-Միքելյանը: Բնական է, որ այս մատյաններում եղած հավելումների ճնշող մեծամասնությունը տեղ է գտել հրատարակության մեջ, թեեւ եղել են նաեւ բացթողումներ:

Ձեռագրերի մեջ կա մի խումբ՝ Ժ, ԺԱ, ԺԲ օրինակներ, որոնցում կառուցվածքային նմանություններ կան եւ հավանորեն ծագում են նույն գաղափար օրինակից, որի գրիչը աղյուսակային մասի եւ մի քանի վկայություններից հետո դրել է. «Այս յայլ օրինակէ է յետեւ ի ձեռս անկաւ...» եւ տեղադրել հավաքածու տեղեկություններ: Այս խմբի մեջ հնագույնը ԺԲ օրինակն է՝ Եւդոկիա, 1589 թ., ապա՝ ԺԱ օրինակը, գարձյալ Եւդոկիա, 1688 թ., երրորդի գրչության վայրը հայտնի չէ, ժամանակը՝ 1666 թ.[78]:

գ. Արտասահմանյան հավաքածուների ձեռագրերը

Երուսաղեմի Հայոց պատրիարքության Սրբոց Հակոբյանց վանքի մատենադարանում պահվող հավաքածուն Սամվել Անեցու Ժամանակագրության բավական արժեքավոր նմուշներ ունի: Այդ ձեռագրերը հանգամանորեն նկարագրված են Ն. Պողարյանի կազմած բազմահատոր ձեռագրացուցակում: Հեղինակը երբեմն ժամանակագրության ընդօրինակությունները համեմատել է Ա. Տեր-Միքելյանի հրատարակության հետ եւ հայտնաբերված ժամանակագրական նոր միավորները զետեղել ցուցակում: Անեցու ժամանակագրության չարունակություն կազմող մի բնագիր (Երուսաղեմի թիվ 3701 ձեռագրից) նա հրատարակել է «Բանբեր Մատենադարանի» տարեգրքում[79]:

---

[77] *Էջմիածնի նախկին համարը՝ 98: Գրված է թղթի վրա, նոտրգրով (թերթ 121, 21,5×15սմ): Ժամանակագրության թերթերը՝ 64ա-115ա:*

[78] *Այս նույն խմբին է պատկանում Մատենադարանի թիվ 6483 ձեռագիրը (Ա. Տեր-Միքելյանին անծանոթ), որը գրվել է Կաբինում, 1757 թ.:*

[79] *Ն. Պողարյան, Ժամանակագրություն (11-18-րդ դդ.), էջ 257-282:*

Երուսաղեմի ձեռագրերի մեջ ժամանակագրության հնագույն ընդօրինակությունը Անիից կամ Հոռոմոսից ծագող, վերը նշված թիվ 1801 մատյանն է, որը հիշատակարանի համաձայն Կիլիկիա է տարվել 1236 թ.:

Հավաքածուն ունի եւս մի քանի ուշագրավ մատյաններ: Մասնավորապես թիվ 69-ի վերաբերյալ (1728-30 թթ. մատյան է) Ն. Պողարյանը ծանոթագրում է. «Սոյն ձեռագիրը կը ներկայացնէ Սամուէլ Անեցիի ժամանակագրութեան նախնական բնագիրը, զերծ Միխայէլ Ասորիի ժամանակագրութենէն ներմուծուած ընդարձակ հատուածներէն: ...Գաւազանները կը վերջանան ՌՃՀԹ – ՈԻԶ թուականներով»[80]: Այս ձեռագրի՝ Մատենադարանում պահվող մանրաժապավենից (թիվ 740) երեւում է, որ այստեղ ժամանակագրության վերջին վկայությունը վերաբերում է Գրիգոր Տղայի աթոռակալությանը՝ Հայոց ՈԻԲ (1173) թվականի դիմաց՝ «Տէր Գրիգոր», որից հետո աղյուսակը գծված է եւս չորս տարվա համար (թերթ 827բ)[81]: Ձեռագրի առանձնահատկությունն այն է, որ ժամանակագրության աղյուսակների մասում (807ա թերթից սկսած) ամեն էջի վրա երկու շարք ժամանակագրական այուններ են տեղավորված:

Երուսաղեմի թիվ 743 ձեռագրում (Մատենադարան, դրսի մանրաժապավեն, թիվ 747) ժամանակագրության վերջին տեղեկությունը վերաբերում է Վրաց Գեորգի Թագավորի՝ Դվինը գրավելուն (1162 թ.), իսկ թվականների այունակը գծված է մինչեւ Հայոց ՈԺԴ (1165) թվականը[82]:

Երուսաղեմի թիվ 783 մատյանը (Մատենադարան, դրսի մանրաժապավեն, թիվ 748) այն փոքրաթիվ ձեռագրերից է, որ պարունակում է միայն Սամվել Անեցու ժամանակագրությունը եւ հիմնականում հավելումներից զուրկ օրինակ է[83]: Ժամանակագրական աղյուսակում նախավերջին տեղեկությունը Անեցու վերջին հաղորդումն է՝

80 Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմեց Նորայր եպս. Պողարեան, հ. 1, Երուսաղեմ, 1966, էջ 237:
81 Նույն էջի ստորին մասում գրիչը Ներսես Լամբրոնացուն նվիրված հավելում է կատարել. «Ի վեց ՃԽԷ (1198) թուականին փոխի մահուամբ առ Քրիստոս Տէր Ներսէս Լամբրոնացին...»: Համմտ. Անեցի, էջ 145:
82 Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմեց Նորայր եպս. Պողարեան, հ. 3, Երուսաղեմ, 1968, էջ 190:
83 Նույն տեղում, էջ 232:

«...ի տեղի իւր» բառերով ավարտվող, որին հաջորդում է միայն մեկ տեղեկություն. ՈԻԲ (1173) «Փոխի մահուամբ Տէր Ներսէս եւ յաջորդէ Տէր Գրիգոր Տղա կոչեցեալ ամս ԻԲ (22)»: Դրան հաջորդում է գրչի՝ Արմաշի վանքի վարդապետ Նիկողայոսի 1721 թ. հիշատակարանը, որն ավարտվում է. «վերջ եղեւ գաւազանագիրս, ամէն» բառերով[84]:

Երուսաղեմի թիվ 1221 մատյանը (Մատենադարան, դրսի մանրաժապավեն, թիվ 749) ժամանակագրության ուշագրավ օրինակներից է, պատկանում է այն ձեռագրերի խմբին, որի մի օրինակը ժամանակին անցել է Ստեփանոս Օրբելյանի ձեռքը, որն էլ շարունակել է այն: Երուսաղեմի ձեռագրացուցակում մատյանը ներկայացված է հպանցիկ, նշված են միայն ժամանակագրության հրատարակության հետ համընկնող տեղերը, մինչդեռ չհամընկնողները չեն դիտարկվել: Յուցակից դուրս են մնացել անգամ գրչի հիշատակարանը, նրա եւ ստացողի անունները[85]: Բանն այն է, որ ժամանակագրության առաջին մասի ավարտին, ուր Սամվել Անեցու՝ պատվիրատու Գրիգոր Գ Պահլավունուն հասցեագրված խոսքն է՝ «Արդ, ով սրբազգեաց տեր իմ Գրիգոր...»[86], ընդօրինակող գրիչը վերափոխել է. «Արդ, ով սրբազգեաց տեր իմ Յակոբ, հարկեցա ի թախանձելո քո, զեղկելի անձն իմ եառու զանարհեստ ձեռն ի մշակութիւն այս գործո...» (էջ 38)[87]: Շարունակությունը նույնպես Անեցու խոսքերի որոշ փոփոխություններով չարադրանք է (հավանաբար այդ պատճառով Ն. Պողարյանը չի նկատել, որ հատվածը չեղում է բնագրից): Անեցի պատմիչի «...եւ զմերոյ ազգի, ստոյգ գտակաւ գրեցից անյապաղ»[88], խոսքերը գրիչը դարձրել է «...եւ զմերս ազգիս կտակագրեցից անյապաղ», ու շարունակել՝ «Եւ մեզ եւ մերոցն ողորմութիւն արասցէ Քրիստոս, յորժամ գա հայրական փառօք եւ ինձ՝ վերջին գծողիս՝ Դաւթի եւ ամենայն հաւատացելոց, եւ Նմա փառք յաւիտեանս, ամէն» (էջ 39): Այսպիսով, պարզվում է այս ձեռագրի գրչի անունը՝

84 Նույն տեղում:
85 Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմեց Նորայր եպս. Պողարեան, հ. 4, Երուսաղեմ, 1969, էջ 359-360:
86 Անեցի, էջ 51:
87 Համմտ. Անեցի, էջ 51: Այս ձեռագիրը ոչ թե թերթակալված, այլ էջակալված է:
88 Անեցի, էջ 52:

Դավիթ եւ ստացողինը՝ Հակոբ:

Ձեռագրի տարբեր էջերում, աղյուսակների ազատ մասերում եւ լուսանցքներում անկանոն գրով ժամանակագրական տարբեր հաշվարկների կամ կրոնական բովանդակությամբ տարբեր ընդմիջարկություններ կան (էջ 40, 41, 43, 53-55, 68, 69, 86, 87, 96-99): Բնագրի առանձնահատկություններին կանդրադառնանք ժամանակագրության՝ Ստեփանոս Օրբելյանի օրինակին նվիրված բաժնում:

Երուսաղեմի թիվ 1553 ձեռագիրը (Մատենադարան, դրսի մանրաժապավեն թիվ 1299) 1649 թ. ընդօրինակել է Դավիթ աբեղա Բաղիշեցին: Ժամանակագրությունը սկզբից պակասավոր է, սկսվում է աղյուսակներից եւ Փրկչական Լե (35) թվականից (թերթ 347բ): Ձեռագիրն ունի հավելումներ ինչպես հիմնական, այնպես էլ այլ գրով[89]: Աղյուսակն ավարտվում է Հայոց ՉՀԹ (1330) թվականով, իսկ վերջին տեղեկությունը, որ վերաբերում է կաթողիկոս Հակոբ Բ Անավարզեցու աթոռակալությանը, գեղեցված է Հայոց ՉՀԵ (1326) թվականի դիմաց (թերթ 392բ):

Վենետիկի Մխիթարյանների հավաքածուն նույնպես պատկառելի է, ուր առկա են Անեցու երկի բավականաչափ հին ընդօրինակություններ: Ձեռագրերը ներկայացված են Ս. Ճեմճեմյանի կազմած ձեռագրացուցակում[90], սակայն այնտեղ չի նշված, թե ձեռագրերում ժամանակագրության հրատարակության համեմատությամբ ինչ տարընթերցումներ կամ հավելումներ կան: Յավոք, Մեսրոպ Մաշտո-

89 Աչոտ Ա Բագրատունու վերաբերյալ Սամվել Անեցու տեղեկության մոտ այլ գրով ավելացված է. «Սա առաջին թագաւոր ի Բագրատունեաց, որ են հրէա, դարձեալ ի Քրիստոս, զոր գերեաց Տիգրան թագաւոր Հայոց, արար թագաւիր...» (թերթ 374ա): Այս ձեռագիրն այն քչերից է, որ ունի Գեւորգ վարդապետի մասին հատվածը՝ «Մինչեւ ցդիր թուականիս մերոյ ուղղեալ էր սուրբ վարդապետին իմոյ Գէորգեայ ըստ քրաւնիկոնին...» (թերթ 361բ), որը վերագրվել է Սամվել Անեցուն, սակայն առաջին անգամ հանդիպում է 16-րդ դարի վերջերին գրված Մատենադարանի թիվ 1486 ձեռագրում:

90 Հավաքածուի 721 ձեռագրում վերնագիրը տարընթերցումով է. «Սամուէլի քահանայի լուծումն եւ հաւաքումն ի գրոց...» (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Զ, յօրինեաց Ս. Ճեմճեմեան, Վենետիկ, 1996, էջ 205): Այս հավաքածուի մեջ է նաեւ ժամանակագրության ամենաուշ կատարված ընդօրինակություններից մեկը, որը 1833 թ. կատարել է Մխիթարյան միաբաններից մեկը՝ «ներքին եւ առաձեռն գործածութեան համար» (նույն տեղում, էջ 283):

յի անվ. Մատենադարանում չկան այս մատյանների մանրաժապավենները:

Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի ձեռագրերի մեջ հնագույնը 1585 թվականից է (թիվ 89): Այն պատկանում է ժամանակագրության այն օրինակների թվին, որոնցում օլիմպիադայի թվականը նույնպես դրված է սյունակի մեջ[91]:

Ֆրանսիայի Ազգային գրադարանում՝ Փրիզում[92] պահվող ձեռագրում ժամանակագրությունը զբաղեցնում է 18ա-79ա թերթերը, դրված է մանր բոլորգրով, որոշ հատվածներ չափազանց մանրատառ են, սակայն նույն գրչին են պատկանում: Ունի այն հավելումների մեծ մասը, որոնք տեղ են գտել վաղարշապատյան հրատարակության մեջ: Ժամանակագրության վերջին տեղեկությունը Հայոց ՉՀԴ (1335) թվականի դիմաց է (թերթ 65ա)[93]: Դրան հաջորդող մի քանի թերթերում (66ա-79ա) գծված են ժամանակագրական աղյուսակները մինչեւ Փրկչական ՌՈԿԴ (1664) եւ Հայոց ՌՃԺԱ (1662) թվականները, սակայն տեղեկություններ չեն գրված:

Հռոմում (Վատիկան, N 3) պահվող ձեռագիրը (Մատենադարան, դրսի մանրաժապավեն, թիվ 1103), 1287 թ. մի արժեքավոր ժողովածու է, որի մեջ գտնվող Սամվել Անեցու ժամանակագրությունից (թերթ 327բ-368բ) այն լատիներեն են թարգմանել Հ. Զոհրաբը եւ Ա. Մայը: 1865 թ. Վենետիկում լույս տեսած իր «Պատմութիւն հայերէն դպրութեանց» գրքում Գ. Զարպհանալյանը Սամվել Անեցուն անդրադառնալուց հետո հայ ընթերցողին ծանուցում է. «Ակն գրեթէ յիսուն տարի առաջ՝ անուանի ծիրանաւոր Մայ՝ որ այն ատեն Միլանու մատենադարանին տեսուչն էր, եւսեբեայ Քրոնիկոնն հրատարակելու ատեն լատիներէն թարգմանեաց նաեւ Սամուէլի երիցու ժամանակագրութիւնը եւ տպագրեց կրկին, մէյմը ի Միլան

91 Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Յակովբոս Տաշեան, Վիեննա, 1895, էջ 356:

92 Raymond H. Kévorkian, Armen Ter-Stepanian, Manuscrits arméniens de la Bibliotheques nationale de France, Catalogue, Paris, 1998, p. 756.

93 Համմտ. Անեցի, էջ 159: Այս ձեռագիրն ուսումնասիրելու առիթ ունեցանք 2007-ի հունիսին: Ձեռագրացուցակում այն շատ հակիրճ է նկարագրված, չի նշված նաեւ, թե մինչեւ որ թվականն է հասնում ժամանակագրությունը:

(1818) երկրորդ անգամ ի Հռոմ (1839)»[94]: Այս մատյանը մեծապես տարբերվում է Սամվել Անեցու ժամանակագրության հայտնի մյուս ձեռագրերից: Նախ այն ներկայացնում է ժամանակագրության միայն երկրորդ՝ աղյուսակային մասը, սկսվելով Քրիստոսի ծննդից: Բոլոր էջերում դրադաշտը (կենտրոնում՝ ժամանակագրական այուներակները եւ աջ ու ձախ կողմերում՝ վկայությունների համար նախատեսված աղյուսակները) տողատված է եւ վերցված ուղղանկյուն չրջագծի մեջ: Օլիմպիադայի թվականը դրված է դրանից դուրս, ձախակողմյան էջի՝ ձախ, աջակողմյանի՝ աջ կողմում: Սամվել Անեցու երկի բոլոր մեծ հատվածները, որ գրվել են աղյուսակներից դուրս, էջով մեկ, այս ձեռագրում ընդհանրապես չեն ներառվել, իսկ միջին ծավալի հատվածները գրված են լուսանցքներում: Բուն աղյուսակների համապատասխան տողերում գրված են միայն հակիրճ տեղեկությունները: Փաստորեն այս ձեռագիրը, որից կատարվել է լատիներեն թարգմանությունը, Սամվել Անեցու ժամանակագրության ամենախիտ համառոտումն է:

Սանկտ Պետերբուրգի Կայսերական ակադեմիայում պահվող ձեռագիրը (այժմ ՌԴ Գիտությունների ակադեմիայի արեւելագիտության ինստիտուտ՝ B 280): 17-րդ դարի ժողովածու է, ուր ժամանակագրությունը զբաղեցնում է 109ա-124բ եւ 136ա-173ա թերթերը, հասնում մինչեւ 1346 թ.[95]: Այս ձեռագրից Մ. Բրոսսեն Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը 85

յու ժամանակագրությունը հրատարակել է ֆրանսերեն թարգմանությամբ: Նա նախ ժամանակագրությանն անդրադառնում է փոքրիկ առաջաբանով, նշելով, որ Սամվել Անեցու երկը բաղկացած է երկու մասից, առաջինը քաղագրություն է Եւսեբիոս Կեսարացուց, որը պատմական նորություն չի պարունակում, ուստի ինքը զանց է առնում, իսկ երկրորդ՝ աղյուսակավոր մասը, հեղինակային չարադրանքով հասնում է մինչեւ 1179 թ., ապա չարունակվում մինչեւ 1346 թ., որն ինքը ներկայացնում է եւ ծանոթագրում ըստ կարողության[96]: Այնուհետեւ Մ. Բրոսսեն ներկայացնում է Անեցու երկը ժամանակագրական աղյուսակներով, ընդ որում յուրաքանչյուր բացվածքում աջակողմյան էջը հատկացնում է բնագրին, իսկ ձախակողմյանը՝ աջում եղած նյութին վերաբերող ծանոթագրություններին[97]:

Սանկտ Պետերբուրգի ձեռագրում Անեցու բուն ժամանակագրության վերջին նշումը վերաբերում է 1173 թ., Գրիգոր Տղայի աթոռակալությանը, ինչպես հնագույն ձեռագրերում (իսկ աղյուսակը գծված է մինչեւ 1179 թ.): Դրան հաջորդում է Անեցու երկի ավարտի մասին հետագայի ծանուցումը («Աստանօր զտեղի առեալ կացին չարանգրութիւնք գեղեցկաբանին Սամուէլի...»), որից հետո ժամանակագրությունը չարունակվում է Ռուբեն Բ իշխանի հիշատակմամբ եւ հասնում մինչեւ 1346-ին կամախում տեղի ունեցած դեպքի հիշատակումը[98]:

Ձմմառում պահվող ձեռագիրը անավարտ է, քանի որ ավարտվում է 1077 թ. դեպքի հիշատակմամբ, բայց հետաքրքիր է, որ ժամանակագրական այուներակները գծվել են մինչեւ Հայոց ՊՀԲ (1423) թվականը[99]:

Գերմանիայի Տյուբենգենի համալսարանում[100] նույնպես պահվում

---

94 Գ. Զարպհանալեան, Պատմութիւն հայկբէն դպրութեանց, Վենետիկ, 1865, էջ 550 (գիրքը չորս վերահրատարակություն է ունեցել): Այս հրատարակության մեջ Անեցու երկը ունի հետեւյալ վերնագիրը՝ Samuelis presbyteris Aniensis, Temporium usque ad snam aetatem ratio libris historicorum summstim collecta. Opus ex Haicanis quinquie copicibus ab Joh. Zohrabo diligenter excerptum atque emendatum. Zohrabus et Ang. Maius nunc primum conjanctis curis latinitate donatum notisque illustratum ediderunt (Mediolani, 1818, p. 32-80). Այն կարելի է դասել մատենագիտական եզակի հրատարակությունների շարքին, քանի որ որոշ ժամանակ անց ժամանակագրությունը ֆրանսերեն թարգմանությամբ հրատարակած Մ. Բրոսսեն նշում է, թե լատիներեն հրատարակությունն ինքը չի տեսել եւ դրա մասին գիտի միայն հայր Գարեգինի (Զարբհանալյանի – Կ. Մ.) հայտնածից (M. Brosset, Collection d'Historiens Arméniens, S.-Petersburg, 1876, p. III.): Լատիներեն հրատարակությանն անծանոթ է եղել նաեւ ժամանակագրության հայերեն բնագրի հրատարակիչը:

95 К. Юзбашян, Армянские рукописи в Петербургских собраниях (каталог), Православний Палестинский сборник, выпуск 104, С. Петербург, 2005, с. 139-140.

96 M. Brosset, Collection d'Historiens Arméniens, p. III.-VI.

97 M. Brosset, Collection d'Historiens Arméniens, p. 339-483.

98 M. Brosset, Collection d'Historiens Arméniens, p. 467-483, համմտ. Անեցի, էջ 169: Անեցու ժամանակագրության չարունակությունը կազմող հատվածը տեղ է գտել նաեւ խաչակիրների պատմությանը վերաբերող Ֆյուլորյի խմբագրած ժողովածուի մեջ: Recueil des Histories des Croiasades (Documents Arméniens), t. I, p. 447-468.

99 Յուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանի, էջ 514:

100 Systematsch-alphabetischer Hauptkatalog der königlichen universitätsbiblothek zu Tübingen, von Franz Nikolaus Fink und Levon Gjandschezian, Tübingen, 1907, p. 129-130.

է Սամվել Անեցու ժամանակագրության մեկ օրինակ, ուր ժամանակագրությունը հասնում է մինչեւ 1423 թ.: Այս, ինչպես եւ Վենետիկի, Վիեննայի, Զմմառի, նաեւ Երուսաղեմի ձեռագրերի մի մասի մանրաժապավենները չկան Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանում, եւ շատ հնարավոր է, որ դրանցում լինեն անտիպ ժամանակագրական միավորներ:

դ. Ստեփանոս Օրբելյանի շարունակած օրինակը եւ համանման ձեռագրեր

Սամվել Անեցու ժամանակագրության օրինակներից մեկը, որը հասնում էր մինչեւ 1193 թվականը, ժամանակին անցել է Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի ձեռքը, որն այն լրացրել է մեկ հարյուրամյակ ընդգրկող ժամանակագրությամբ եւ կազմել է մի ինքնուրույն ժամանակագրություն: Այն եզակի օրինակով պահվում է Մատենադարանում (ձեռ. թիվ 8481), որը 1942 թ. հրատարակել է Ա. Աբրահամյանը: Դրանից հետո քննադատական հոդվածով հանդես են եկել Լ. Խաչիկյանը եւ Վ. Հակոբյանը[101]: Գրախոսության հիմնական մասը նվիրված է Ստեփանոս Օրբելյանի հեղինակության հանգամանքի ժխտմանը: Այս հարցը Վ. Հակոբյանն արծարծել է նաեւ «Մանր ժամանակագրությունները» հրատարակելիս[102]:

[101] Լ. Խաչիկյան, Վ. Հակոբյան, Ինչպես չպետք է հրատարակվեն պատմական սկզբնաղբյուրները, էջ 77-87:

[102] «Մանր ժամանակագրություններում» հարցին կրկին անդրադարձած Վ. Հակոբյանը, որպես հնարավոր մեկ այլ հեղինակ, Օրբելյանից տարբեր Ստեփանոս եպիսկոպոս, նշում է Մոմիկի՝ Նորավանքում ընդօրինակած ձեռագրի 1292 թ. հիշատակարանը. «... եւ վերադիտողի Տանս Սիւնեաց Տեառն Տէր Ստեփաննոսի, առաջնորդի սուրբ ուխտիս...» (Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 33): Եթե անգամ Մոմիկը միայն այսքանը գրած լիներ, դարձյալ անհնար էր կասկածել, որ նա խոսում է հենց Ստեփանոս Օրբելյանի մասին, որը ոչ միայն Սյունյաց մետրոպոլիտն էր, այլեւ Օրբելյանների հոգեւոր կենտրոն եւ մետրոպոլիտական աթոռանիստ Նորավանքի առաջնորդը: Սակայն ավելի պերճախոս են նշված հատվածին նախորդող տողերը. «...գծագրեցի... ի փառաբանակ եւ ի հոյակապ եւ ի հռչակաւոր մենաստանիս Նորավանս կոչեցելոյ, յարքունապատիւ գահոյս հայրապետութեան, գերափառ եւ մեծապատիւ, հրաշագան, ամէնիմաստ հզաւր իմաստասիրի եւ բանիբուն բաբունապետի եւ արհիական քաւչապետի եւ վերադիտողի Տանս Սիւնեաց Տեառն Տէր Ստեփաննոսի...» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց՝ Ա. Մաթեւոսյան, Երեւան, 1984, էջ 677-678): Դույզն իսկ կասկած չի կարող լինել, որ Մոմիկը նկատի ունի իր հովանավոր եւ Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանին:

[103] «Հանդէս ամսօրեայ», 1921, էջ 177-178, Յուցակ ձեռագրաց որ ի Հանդէս ամսօրեայ, Վիեննա, 1976, էջ 11:

[104] Է. Բաղդասարյան, 13-րդ դարի մի ժամանակագրության հեղինակի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, թիվ 2, էջ 210-216:

[105] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբելեանի, էջ 31: Այս դեպքի մասին նա նշում է նաեւ իր Պատմության մեջ (Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 440-441):

[106] Լ. Խաչիկյան, Վ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 83, 87:

Նշենք, որ ժամանակագրության մի քանի հատվածին Հ. Քոսյանի կազմած ցուցակի միջոցով ծանոթացած առաջին բանասերը՝ Ն. Ակինյանը, չի կասկածել, որ հեղինակը Ստեփանոս Օրբելյանն է[103]: Այս տեսակետը հիմնավորել է նաեւ Է. Բաղդասարյանը[104]: Մեր կարծիքով Սամվել Անեցու ժամանակագրության շարունակությունը կազմող՝ 1193-1290 թթ. ժամանակահատվածի հեղինակը, որն իրեն կոչում է «Ստեփանոս անուամբ այցելու», նաեւ նշում, որ Կոստանդին Բ կաթուկեցու (1286-1289) աթոռանկությունից հետո հաջորդ կաթողիկոսի ընտրության համար իրեն հրավիրել են Սիս («...հրաւիրեցին զմեզ եւ զայլ եպիսկոպոսունս եւ զայլ իշխանս Արեւելից՝ երթալ ի թագաւորութիւնս մեր ի Սիս», բայց ինքը չի գնացել՝ «...որում անպարապ գտեալ ո՛չ ժամանեցաք»)[105], չէր կարող ուրիշ մեկը լինել, քան Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանը:

Լ. Խաչիկյանի եւ Վ. Հակոբյանի գրախոսականի երկրորդ մասը ժամանակագրության հրատարակության մեջ տեղ գտած բազմաթիվ թերությունների (սխալ վերծանությունների, տառասխալների, ծանոթագրությունների խիստ մակերեսայնության) արդարացի քննադատություն է: Նրանց դիտողություններից մեկը վերաբերում է ժամանակագրության ընդգրկմանը. «Ստեփանոս Օրբելյանի անունով հրատարակված ժամանակագրության ճիշտ կեսը (էջ 11-21, տող 27) պատկանում է Ս. Անեցուն... ուստի հրատարակիչը սխալ է գործել Ստեփանոսի անվամբ հրատարակելով Մատենադարանի N 8481 ձեռագրի 197ա-203բ էջերի բազմաթիվ հատվածները: Ստեփանոսի ժամանակագրությունը սկսվում է ձեռագրի 204 էջից»[106]:

Սակայն նկատենք, որ Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրությանը նախորդող հատվածը Սամվել Անեցուն է պատկանում միայն մասամբ: Այն բառացիորեն ողողված է հետագայի հավելում-

ներով, որոնք տեղ են գտել նաեւ մի քանի այլ ձեռագրերում: Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերի ուսումնասիրության ժամանակ հաջողվեց գտնել երեք ձեռագիր, որտեղ ավելի կամ պակաս չափով կատարված են այն նույն հավելումները, որոնք եղել են Ստեփանոս Օրբելյանի օրինակում: Դրանք են Մատենադարանի թիվ 9796, Երուսաղեմի թիվ 1221 (Մատենադարան, մանրաժապավեն, թիվ 749) եւ թիվ 3397 ձեռագրերը, որոնց կանդրադառնանք քիչ հետո:

Ավելի հանգամանորեն ծանոթանանք Մատենադարանի թիվ 8481 ձեռագրին: Այն ենթադրաբար 14-15-րդ դարի ժողովածու է[107]: Ընդօրինակող գրիչը, որի անունը չի պահպանվել, բնագրում որոշ բառեր բաց է թողել, հավանաբար նախօրինակից չկարողանալով վերծանել, երբեմն էլ սխալ է արտագրել[108]: Նրա գործը բավական բարդ է եղել այն առումով, որ ստիպված էր փոքրաչափ մատյանի թերթերին տեղավորել ոչ միայն Սամվել Անեցու բնագրի տեղեկությունները, այլեւ կատարված հավելումները: Տարբեր տեղեկությունների խառնաշփոթից խուսափելու համար նա երբեմն դրանք առանձնացրել է կարմիր եղրագծերով: Այս ձեռագրում Սամվել Անեցու ժամանակագրության առաջին մասը բացակայում է[109]: Այն սկսվում է երկրորդ մասից՝ աղյուսակներից (թերթ 171ա) եւ շարունակվում մինչեւ այն տեղ, ուր Օրբելյանը համապատասխան նշում է կատարում Անեցու երկի ավարտման եւ իր առաջիկա անելիքի մասին (թերթ 204ա): Ստեփանոս Օրբելյանի հեղինակած ժամանակագրությունն ավարտվում է նրա հոր՝ Տարսայիճ Օրբելյանի մահվան հիշատակությամբ

107 Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, Երեւան, 1970, էջ 754, ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 4: Ձեռագիրը գրված է թղթի վրա, բոլորգրով (թերթ՝ 215, 15,4×11 սմ):

108 Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 4: Ա. Աբրահամյանի նշած օրինակներին ավելացնենք եւս մեկը. Հայոց ՂԶ (647) թվականի դիմաց Արծափի գրավման մասին Անեցու նշումը. «Արծափա առն» (Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 78ա), այս ձեռագրում դարձել է «Արծաթափառն» (Մատենադարան, ձեռ. թիվ 8481, թերթ 187բ):

109 Ձեռագրում Սամվել Անեցու ժամանակագրությանը նախորդում է Միքայել Ասորու ժամանակագրությունը, որին կցված է նաեւ «Վասն քահանայութեան» ճառը (թերթ 3ա-161բ) եւ Վարդան Արեւելցու հիշատակարանը (թերթ 162ա-170ա):

(թերթ 214ա)[110]:

Ժամանակագրության հրատարակիչ Ա. Աբրահամյանը գրում է. «Օրբելյանի «Ժամանակագրության» ուսումնասիրությունից երեւում է, որ Օրբելյանը նպատակ չի ունեցել կազմել ինքնուրույն ժամանակագրություն, այլ ցանկացել է լրացնել ու շարունակել Անեցու «Ժամանակագրութիւնը»: Թերթ 197ա-ից սկսած նա սկսել է կատարել մասնակի լրացումներ մինչեւ 202բ, իսկ այնուհետեւ շարունակել է ինքը՝ առանց սահմանազատելու իր գրած «Ժամանակագրութիւնը» Սամվել Անեցու «Ժամանակագրութիւն»-ից»[111]:

Նկատենք, որ այս ձեռագրում Սամվել Անեցու ժամանակագրությունը ոչ միայն ավելացումներ ունի, այլեւ կրճատումներ: Կամ Օրբելյանի ձեռքը հասած ձեռագիրը այդպիսին է եղել, կամ նա ինքն է համապատասխան փոփոխություններ կատարել, որն ավելի հավանական է: Այս երկին անդրադարձած նախորդ ուսումնասիրողները (Ա. Աբրահամյան, Վ. Հակոբյան, Լ. Խաչիկյան) հիմնականում կենտրոնանալով լրացնող հեղինակի գործի, այսինքն ժամանակագրության 1193-1290 թթ. ժամանակահատվածի վրա, անհրաժեշտ ուշադրություն չեն դարձրել Սամվել Անեցու ժամանակագրության տեքստին, որի պատճառով կատարված միջամտությունների ամբողջական պատկերը չի պարզվել: Հարցին այդ տեսակետից մոտենալու դեպքում տեսնում ենք, որ Օրբելյանը ոչ միայն շարունակել, այլեւ նախորդ հատվածներում կրճատումներ է կատարել, մի տեղում ծանոթագրություն թողել, այսինքն, որոշ իմաստով հանդես է եկել որպես խմբագիր: Մանրամասնենք ասվածը:

Նկատելի կրճատումներն սկսվում են Աբաս Բագրատունու մասին հատվածից, որն ավարտվում է «եբարձ զխոռվարար աւազակսն»[112] բառերով, իսկ շարունակությունը, որ վերաբերում է Արշարունիքի եւ Շիրակի որոշ վանքերի հիմնադրմանը, չկա (թերթ 196բ):

Գրիգոր Նարեկացու մասին եղած երկու հավելումները (թերթ

110 «ՉԼԹ (1290) թուին մեռաւ Տարսաիճն, եղբայր Սմպատայ, որդի մեծին Լիպարիտի, ի ցեղէն Աւբրէլեանց եւ եղաւ ընդ Հարսն իւր, ի Նորավանս, ի Վայոց ձոր» (Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 50):

111 Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 4:

112 Համմա. Անեցի, էջ 99:

197ա)[113] տարբերվում են Անեցու երկի այլ օրինակներում եղած հավելումից[114]: Հայոց ՆԽԲ (993) թվականի հատվածում նշված է Անանիա Մոկացու մահից հետո Վահան Սյունեցու աթոռակալության մասին տեղեկությունը (թերթ 197բ), որից առաջ Օրբելյանը ծանոթագրել է. «Զկնի մահուան Անանիայի հայրապետի է պատմութիւնս, որ է ՆԺԶ (967) թուին Հայոց: Յաւրինակն այսպէս էր, զնոյն եւ մեք կարգեցաք»[115]: Իսկապես, հիշյալ հատվածը կամրջաձորի օրինակում հենց Հայոց ՆԺԶ (967) թվականից հետո է[116]: Հավանաբար Օրբելյանի ձեռքին եղած օրինակում թերթերի հետեւառաջություն է եղել, եւ հիշյալ հատվածը, որը ծավալուն լինելով գրված է աղյուսակներից դուրս, հայտնվել է 993 թվականի մասում: Օրբելյանը նկատել է սխալը, ծանոթագրել այդ մասին, բայց քանի որ «յաւրինակն այսպէս էր», ինքն էլ այդպես է թողել:

Բագրատունիների անկման մասին Սամվել Անեցու գրած ողբը (թերթ 199բ) ժամանակագրական սյունակի մեջ է, ինչպես հնագույն ձեռագրերում, միայն սյունակն ավելի լայն է գծված[117]: Դրանից հետո Անեցին ունի երկու մեծ հատված, մեկը Հայոց ՇԻԱ (1072) թվականի դիմաց՝ Մանազկերտի ճակատամարտի, մյուսը՝ Մելիքշահի իշխանության մասին (քաղված Հովհաննես Սարկավագի Թղթից), որոնք ժամանակագրության հնագույն՝ կամրջաձորի օրինակում չորս

[113] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 11: Այս էջում հրատարակության մեջ գրված է «Զկնի ԺԹ (19) ամին Խաչիկ առաջնորդ եկաց երկիրս Հայոց ամս Բ (2)...», պետք է լինի «...անառաջնորդ...» (Մատենադարան, ձեռ. թիվ 8481, թերթ 197ա):

[114] Անեցի, էջ 103:

[115] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 11:

[116] Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 92ա: Ժամանակագրության հրատարակության մեջ եւս դրան մոտ թվականի դիմաց է նշված (Անեցի, էջ 100-101): Երուսաղեմ, թիվ 1221 ձեռագրում (Մատենադարան, մանրապատճենն, թիվ 749), որը հավելումներով ամենից մոտ է Օրբելյանի նախօրինակին, այս տվյալը ճիշտ տեղում է՝ ՆԺԶ (967) թվականի դիմաց (էջ 89):

[117] Հատվածի վերջին բառերը հրատարակության մեջ սխալ են ներկայացված. «...կրսեր որդոյն Քամայ եկաք զտէրութիւն նորա» (Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 14): Ձեռագրում՝ «...կրսեր որդոյն քամայհեցաք զտէրութիւն նորա» (թերթ 199բ), համմտ. Անեցի, էջ 110:

էջ են զբաղեցնում[118], բայց Օրբելյանի ձեռագրում բացակայում են:

Հայոց ՇԽԲ (1093) թվականի դիմաց Մելիքշահի մահվան մասին հատվածը (թերթ 200ա), որ Անեցու մոտ բավական ընդարձակ է, այստեղ կիսատ է ներկայացված[119]: Սամվել Անեցու մոտ դրան հաջորդում է Հայոց ՇԽԶ (1097) թվականի դիմաց դարձյալ Հովհաննես Սարկավագից քաղված մի հատված, որը վերաբերում է խաչակրաց առաջին արշավանքին[120], որը նույնպես չկա Օրբելյանի ձեռագրում:

1124-26 թթ. վրացիների կողմից Անիի գրավման մասին Սամվել Անեցու բնագրում եղած ծավալուն հատվածը (որը Կամրջաձորի օրինակում երեք ու կես էջ է զբաղեցնում), այս ձեռագրում չկա (թերթ 201ա), այլ միայն հակիրճ նշված է. «...ՇՀԳ (1124) թուին Դաւիթ թագաւոր... առնու զԱնի եւ ինքն մեռանի»[121]:

1140-ական թվականների դեպքերին վերաբերող մասում (թերթ 201բ), Հայոց ՇՂԷ (1148) թվականի դիմաց Սամվել Անեցու մոտ առկա խաչակրաց երկրորդ արշավանքի մասին տեղեկությունն այս ձեռագրում չկա[122]:

Կատարված կրճատումների մեջ նկատվում է երկու կարգի օրինաչափություն: Նախ դրանք կատարված են ծավալային նկատառումով, հանված են մեծ, աղյուսակներից դուրս գրված հատվածները: Դրանք հիմնականում այն նյութերն են, որոնք Սամվել Անեցին գրել է՝ չեղվելով իր որդեգրած «կարճ ի կարճոյ» սկզբունքից, հավանորեն իր պատվիրատուի հետաքրքրությունները բավարարելու համար, ինչպիսիք են Մելիքշահին եւ Անիի 1124-26 թթ. դեպքերին վերաբերող հատվածները: Երկրորդը, որքան էլ անսովոր թվա, քաղաքական

[118] Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 97բ-99ա, համմտ. Անեցի, էջ 114-115:

[119] Մինչեւ՝ «...խռովութիւն եղեւ ամենայն քրիստոնէից զամս Դ (4)» (Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 15, համմտ. Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 99բ-100ա, Անեցի, էջ 118-119):

[120] «Հռոմայեցիք ելին ընդ Թիւրակ...»: (Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 100բ, Անեցի, էջ 120): Օրբելյանի ձեռագրում նշված է Մանուէլ ամիրայի մահվան մասին Անեցու տեղեկությունը, որը հրատարակության մեջ դուրս է մնացել (Մատենադարան, ձեռ. թիվ 8481, թերթ 200բ, համմտ. Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 16):

[121] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 17, համմտ. Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 103ա-105ա, Անեցի, էջ 125-128:

[122] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 18, համմտ. Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 106ա-106բ, Անեցի, էջ 134:

կամ դավանաբանական է, քանի որ ձեռագրում դուրս են թողնված խաչակիրների արշավանքներին վերաբերող Սամվել Անեցու մոտ եղած ընդամենը երկու տեղեկությունները: Կարծում ենք, որ այստեղ գործ ունենք գիտակցված կրճատումների հետ:

Չի կարելի բացառել, որ Օրբելյանի ձեռքն անցած նախօրինակն արդեն կրճատումներով է եղել, սակայն ավելի հավանական է, որ այդ կրճատումները նա ինքն է արել: Սրանում ավելի ենք համոզվում՝ ծանոթանալով հետագայի հավելումների գրեթե նույն կառուցվածքն ունեցող Մատենադարանի թիվ 9796, Երուսաղեմի թիվ 1221 եւ թիվ 3397 ձեռագրերի համապատասխան հատվածներին, ուր չի արված Օրբելյանի ձեռագրում եղած կրճատումներից եւ ոչ մեկը: Նկատենք, որ ինչպես Բագրատունիների անկման մասին Սամվել Անեցու ողբի ժամանակագրական այսունակի մեջ գրված լինելը, այնպես էլ այլ մանրամասներ վկայում են, որ Ստեփանոս Օրբելյանի նախօրինակը թեեւ ունեցել է մասնակի հավելումներ, սակայն հիմնական մասով քիչ է տարբերվել հեղինակային բնագրից[123]: Ըստ երեւույթին Օրբելյանին անհրաժեշտ է եղել ունենալ Քրիստոսի ծննդից մինչեւ իր օրերը հասնող մի համառոտ ժամանակագրություն, առանց ծավալուն ընդհատումների: Դրա համար էլ նա չի ընդօրինակել Անեցու երկի առաջին մասը, այլ միայն երկրորդը՝ աղյուսակավորը, զրանից ընտրողաբար դուրս թողնելով մեծ, կամ ոչ այնքան մեծ, բայց ինչ-ինչ պատճառներով իրեն անհարազատ հատվածները:

Այժմ տեսնենք, թե ինչպես է Ստեփանոս Օրբելյանը չարունակել ժամանակագրությունը: Աղյուսակը հասցնելով Հայոց ՈՒԲ (1193) թվականին, Օրբելյանն ընդհատել է այն եւ էջով մեկ գրել. «Զայս գաւազանք եւ չափ ժամանակաց գտաք ճշդիվ սահմանեալ Սամուէլի ճշ[մար]տաբան քահանայի զկարգս թագաւորաց եւ կայսերաց, [ընդ որոց] եւ կաթողիկոսացն [Հայոց]՝ սկսեալ յառաջին ամէ [մարմնա]նալոյ Տեառն, մինչեւ ի ՌՃՂԵ (1195) ամն եւ ի ՈՒԲ (1193) թիւն Հայոց» (թերթ 204ա)[124]: Յաւոք չարունակությունը, ուր Օրբելյանը

[123] Գրիգոր Գ Պահլավունու տարիների թիվը նշված է «ամս Ծ» (50) (թերթ 201ա), թեեւ տարիների թվարկումը հասնում է մինչեւ ԾԳ (53) (թերթ 202ա): Կաթողիկոսի տարիների թիվը Ծ (50) է նշված նաեւ Կամրջաձորի օրինակում (Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 103ա):

[124] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 21, Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 35:

նշում է, թե ինքն ինչ է պատրաստվում անել, սկզբում վնասված մասեր ունի, սակայն հիմնական ասելիքը միանգամայն հասկանալի է. «Եւ հանդէպ միմեանց եդեալ զիւրաքանչիւր/// որ յիւրաքանչիւր ժամանակն իրագործեցան /// սակաւուք զթերին, միայն ամբողջ պահել զհամա[ռատագ]ոյն եւ զկարգ հայրապետացն եւ զվերջին թագաւորութիւնն Հայոց՝ որ ի Կիլիկիա, ի ներսի գաւառսն եւ զՎրացն՝ արտաքոյ միայն զանուանսն, նաեւ համառաւտիւք զգործս եւ զբանս, որ յիւրաքանչիւր ժամանակս եղեն, բերել հասուցանել մինչ ի մերս ժամանակ» (թերթ 204ա)[125]:

Դրանից հետո, մինչեւ աղյուսակ գծելը, նա պատմում է Գրիգոր Դ Տղային հաջորդած կաթողիկոսների մասին, նախ նշելով Գրիգոր Ե Քարավեժին (որին հին հեղինակներից ոմանց պես Տղա մականունն է տալիս, երիտասարդությունը նկատի ունենալով), ներկայացնում նրա ողբերգական մահը: Ապա Օրբելյանը նշում է Գրիգոր Զ Ապիրատին[126] եւ հայտնում մի տեղեկություն, որ հայ պատմիչներից ոչ մեկը չունի եւ միայն Միքայել Ասորի պատրիարքի ժամանակագրության մեջ է արձանագրված: Ներսես Շնորհալու մահից հետո նրա մոտ գտնվող Գրիգոր Ապիրատը ստանձնել է կաթողիկոսական պարտականությունները, որը չատ կարճ է տեւել, քանի որ աթոռը նախանշված հավակնորդ է ունեցել հանձին Գրիգոր Տղայի, որն էլ Մլեհ իշխանի աջակցությամբ չուտով զրավել է այն[127]: Լամբրոնի եւ Տարսոնի եպիսկոպոսությունը ստացած Գրիգոր Ապիրատը այնուամենայնիվ կաթողիկոս է դարձել Գրիգոր Տղայից եւ Գրիգոր Քարավեժից հետո: Այս դեպքերը համառոտ նշելով Օրբելյանը գրում է. «Ես՝ նուաստ Ստեփաննոս անուամբ այցելու կարգեցից ի գաւազանս սկիզբն արարեալ» (թերթ 204բ)[128]: Դրանից անմիջապես հետո նա

[125] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 21, Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 35:

[126] «Եւ ապա յաջորդէ ի տեղին միւս Գրիգորիս, Ապիրատն կոչեցեալ, եղբայր որդի մեծ հայրապետացն Գրիգորի եւ Ներսէսի, որ եւ ի մահուան նորին նախ սա քարոզեցաւ կաթողիկոս» (թերթ 204բ): Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 21:

[127] Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի ասորւոց պատրիարքի, Երուսաղեմ, 1871, էջ 472-473, տե՛ս նաեւ Գրիգոր Տղա, բանաստեղծություններ եւ պոեմներ, էջ 20-30: Մլեհի կինը Գրիգոր Տղայի քույրն էր (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 152):

[128] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 21, Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 35:

դծել է ժամանակագրական աղյուսակ, ուր երեք սյունակ կա՝ Քրիստոսական թվականով, Հայոց կաթողիկոսների տարիներով եւ Հայոց թվականով: Կաթողիկոսներից առաջինը նշել է Գրիգոր Քարավեժին՝ Հայոց ՈՆԳ (1194) թվականի դիմաց՝ 1 տարի, ապա Գրիգոր Ապիրատին՝ Հայոց ՈՆԴ (1195) թվականի դիմաց՝ 7 տարի (թերթ 204բ)[129]: Նույն էջի վերջում Օրբելյանը գրում է. «Աստանաւր կամիմ կարգել զնորոգ թագաւորութիւնն Հայոց» (թերթ 204բ)[130], պատմում է Կիլիկիայում Լեւոն Բ-ի թագադրության մասին եւ արդեն հաջորդ էջում ժամանակագրական սյունակների շարքում Քրիստոսական թվականից հետո ավելացնում Հայոց թագավորների տարիները. Հայոց ՈՆԶ (1197) թվականի դիմաց՝ «Թագաւոր Հայոց Լեւոն կացեալ ամս Իե (25)» (թերթ 205ա)[131]: Այդ չորս սյունակներն Օրբելյանը պահպանում է մինչեւ ժամանակագրության վերջը: Իր խոսման համաձայն նա իրադարձությունները ներկայացնում է համառոտ, սակայն անհամեմատ ընդարձակ է գրում այն դեպքերի մասին, որոնք վերաբերում են Սյունիքին:

Այսպիսով, Ստեփանոս Օրբելյանը նախ համառոտել է Սամվել Անեցու ժամանակագրությունը, որը նրա ձեռքն է հասել արդեն որոշ հավելումներով, հավանաբար որոշ նշումներ է կատարել մինչեւ 1193 թվականը, որից հետո չարունակել է մինչեւ իր ապրած ժամանակը եւ եզրափակել 1290 թվականով, իր հոր մահվան մասին հիշատակությամբ:

Այժմ երբ պարզ է, թե ինչ է ներկայացնում Մատենադարանի թիվ 8481 ձեռագիրը, փորձենք պարզել, թե այստեղ եղած Սամվել Անեցու ժամանակագրությունը հավելումների տեսակետից ինչ աղերսներ ունի այլ ձեռագրերի հետ:

Մատենադարանի թիվ 9796 մատյանը ձեռագրացուցակի համաձայն 17-րդ դարի ժողովածու է[132]: Ձեռագրի սկզբում (թերթ 1բ), էջի վերին մասում թանաքով գրված է. «Միքայէլ արքեպիսկոպոսին է»: Սրանից վերեւ եւ ներքեւ պահպանվել է մատիտով գրված, դժվա-

[129] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 22, Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 36:

[130] Նույն տեղում:

[131] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 22, Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 37:

[132] Գրիչն ու գրչության վայրն անհայտ են, գրված է թղթի վրա, նոտրգրով (թերթ՝ 122, 15×10,2 սմ):

րությամբ ընթերցվող հետեւյալ գրությունը. «Մինչեւ զԳրիգոր կաթ(ողիկոս) եղբայր Ներսիսի Շնորհալւոյն, յորոյ խնդրոյ յօրինեաց Սամուէլ զայս ժամանակագրութիւնն՝ 1164, թուական Հայոց ՈԺԳ»: Փաստորեն, այստեղ ճիշտ է նշված Անեցու ժամանակագրության սահմանը, թեեւ ներկա ձեռագրում այն չարունակված է մինչեւ 1187 թ.: Ժամանակագրությունը զբաղեցնում է 2ա-76բ թերթերը, աղյուսակները սկսվում են 37բ թերթից: Դրանից առաջ (թերթ 36բ-37ա) տեղ է գտել մի ընդմիջարկյալ նյութ՝ «Անցանք մեք ընդ հուր եւ ընդ ջուր...» սկսվածով, որը Բարսեղ Կեսարացու «Ի սուրբ քառասունսն» քարոզից է:

Այստեղ ժամանակագրության վերջնամասում տեղ են գտել Անեցու երկից դուրս մի շարք հավելումներ, որոնք չեն եղել Ա. Տեր-Միքելյանի օգտագործած ձեռագրերում, ուստի չկան վազարշապատյան հրատարակության մեջ: Սակայն դրանք եղել են Օրբելյանի օգտագործած օրինակում, հրատարակվել են նրա ժամանակագրության հետ եւ ընկալվել որպես դրա մի մասը: Խոսքն առաջին հերթին վերաբերում է Մշո Ս. Կարապետ վանքի եւ Շահ Արմենների կամ Խլաթի ամիրայության պատմության 1185-1186 թվականների դեպքերը ներկայացնող մի հատվածի, որը մի փոքրիկ ինքնուրույն բնագիր է: Թիվ 9796 ձեռագրում այն պահպանվել է առավել ամբողջական ու անսխալ ընդօրինակությամբ եւ ներկայացվում է սույն գրքի բնագրերի մասում:

Ինչպես Ստեփանոս Օրբելյանի մոտ, այնպես էլ այս խմբի մյուս ձեռագրերում վերոնշյալ հատվածն ունի չարունակություն, որը վերաբերում է Հայոց ՈԼԶ (1187) թվականին Սալահեդդինի կողմից Երուսաղեմի գրավմանը: Մատենադարանի 9796 ձեռագրում այն անավարտ է, վերջին թերթերի կտրված լինելու պատճառով (պակասում է մի քանի տող):

Ինչպես նշել ենք, այս հատվածները Օրբելյանի ժամանակագրությունից զատ, որպես Սամվել Անեցու ժամանակագրության հավելում, Երուսաղեմի թիվ 3397 ձեռագրերից հրատարակել է Ն. Պողարյանը[133]: Իսկ նույն հավաքածուի թիվ 1221, Դավիթ գրչի ընդօրի-

[133] Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 10, էջ 289-290: Յավոք այս մատյանի մանրաժապավենը չկա Մատենադարանում եւ ձեռագրի մասին մեր պատկերացումները հիմնվում են միայն ձեռագրացուցակի վրա:

նակած ձեռագիրը (Մատենադարան, դրսի մանրաժապավեն, թիվ 749) ավելի ուշագրավ է, քանի որ այստեղ ոչ միայն վերոնշյալ մեծ հատվածներն են առավել անխաթար (էջ 111-114), այլեւ առկա են այն հակիրճ հավելումների մեծագույն մասը, որոնք եղել են նաեւ Օրբելյանի ձեռագրում: Օրինակ, ՆՀ (1021) «Թուրքն էհար զԱպիրատան»[134] (էջ 97), ՇԿԲ (1113) «Որդիքն Կիւրիկէ մերժեցան ի հայրենեաց իւրեանց»[135] (էջ 105), ՈԺ (1161) թվականի հատվածում՝ «Վախճանեցաւ թագաւորն Կիւրիկէ ի Մածնաբերդի եւ թաղեցաւ ի Հաղբատ»[136] (էջ 110), ՈԻԲ (1173) թվականի հատվածում (տեղեկությունները շատ խիտ տողերով են եւ միշտ չէ, որ ճիշտ թվականի հանդիպակաց մասում են). «Մեռանի Աբաս, որ եղեւ դաստարումն Բագրատունեաց»[137] (էջ 110) եւ այլն:

Համեմատությունից կարելի է եզրակացնել, որ Ստեփաննոս Օրբելյանի օրինակը, որը հասել է մինչեւ 1193 թվականը, արդեն ունեցել է վերը նշված տեղեկություններն ու մյուս հավելումները: Օրբելյանն այդ մասում նոր տեղեկություններ չի ավելացրել, այլ միայն չարունակել է ժամանակագրությունը: Նա մի նշում է կատարել Անանիա Մոկացու մահից հետո Վահան Սյունեցու աթոռակալության մասին տեղեկության առնչությամբ, որն իր ունեցած օրինակում ժամանակագրական առումով սխալ տեղում է եղել:

Երուսաղեմի թիվ 1221 ձեռագրում, ինչպես Մատենադարանի թիվ 9796 ձեռագրում, աղյուսակներից առաջ (Ժամանակագրության առաջին մասի վերջում) կրկին տեսնում ենք Բարսեղ Կեսարացու «Ի սուրբ քառասունսն» քարոզից քաղված հատվածը, միայն ավելի համառոտված (էջ 39): Օրբելյանի օրինակում այն բացակայում է, քանի

134 Հմմտ. Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 12: Խոսքը Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի մասին է:

135 Հմմտ. Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 16, Մատենադարան, ձեռ. թիվ 9796, թերթ 71բ:

136 Կյուրիկե Բ-ի (1145-1170) մասին է: Տե՛ս նաեւ Ռ. Մաթեւոսյան, Տաչիր-Զորագետ, էջ 109: Հմմտ. «Ի ՈԺԹ (1170) վախճանի թագաւորն Կիւրիկէ ի բերդին եւ թաղեցաւ ի Հաղբատ» (Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 18), Մատենադարան, ձեռ. թիվ 9796, թերթ 74բ:

137 Օրբելյանի մոտ այս տեղեկությունը, որ վերաբերում է Աբաս Բ Կյուրիկյանին (1170-1176), ՈԻԵ (1176) թվականի դիմաց է, Մատենադարանի թիվ 9796 ձեռագրում՝ ՈԻԴ (1175), (Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 19, Մատենադարան, ձեռ. թիվ 9796, թերթ 74բ, Ռ. Մաթեւոսյան, Տաչիր-Զորագետ, էջ 109-111):

որ այնտեղ Անեցու ժամանակագրությունը սկսվում է աղյուսակներից:

Երուսաղեմի թիվ 1221 ձեռագրում Տարոնի պատմությանը եւ Երուսաղեմի գրավմանը նվիրված հատվածներից հետո ժամանակագրությունը շարունակվում է ՈԼԵ (1186) թվականի դիմաց գրված տեղեկությամբ. «Լեւոն եղբայր Ռուբէնի իշխան ամս Ժ (10), որ եւ թագաւորեաց յետո ամս ԻԵ (25)» (էջ 115), որին հաջորդում է փառաբանական խոսք, հայոց թագավորության վերականգնման կապակցությամբ: Ժամանակագրության չարունակությունը հիմնականում պարունակում է Կիլիկիայի պատմության հայտնի տվյալները եւ ավարտվում աղյուսակի Հայոց ՉԽԱ (1292) թվականով (էջ 118):

Այսպիսով, Սամվել Անեցու ժամանակագրության մեր օրերը հասած յոթ տասնյակ մատյանների մեջ առանձնանում է չորս ձեռագրից բաղկացած մի խումբ՝ Մատենադարանի թիվ 8481, 9796 եւ Երուսաղեմի թիվ 1221, 3397 ձեռագրերը, որոնք ունեն ընդհանուր մի շարք կարճ հավելումներ, ինչպես նաեւ 1185-1186 թթ. Տարոնի պատմությանը վերաբերող հատվածը, որոնք ավելացվել են մինչեւ 1193 թվականը: Հասկանալի է, որ խոսքն այս ձեռագրերի նախօրինակների, նրանց պահպանած տեքստի մասին է, քանի որ նշված մատյանները 14-17-րդ դդ. ընդօրինակություններ են:

Մատենադարանում պահվում է 1851 թվականից հետո գրված մի ժողովածու, որն ունի մի փոքր հատված՝ «Հանեալ ի ժամանակագրութիւնէ Սամուէլի յԱնեցւոյ» (Մատենադարան, ձեռ. թիվ 6331, թերթ 79ա-84բ): Մի քանի թերթերի վրա ընտրողաբար ժամանակագրությունից տեղեկություններ արտագրած անանուն գրիչը քաղվածքներն ավարտել է 1185-1186 թթ. Տարոնի պատմությանը եւ 1187 թ. Երուսաղեմի գրավմանը վերաբերող հատվածներով: Փաստորեն նա որպես նախօրինակ ունեցել է մեր նշած խմբին պատկանած ձեռագիր[138]: Թեեւ այս ձեռագիրը ուշ շրջանի է եւ միայն ժամանակագրության հատվածների արտագրություն, սակայն քանի որ ընդգրկված է ձեռագրական փոնդում, այն եւս պետք է համարենք այս խմբին պատկանող մատյան:

138 Այստեղ Տարոնի պատմությանը վերաբերող հատվածը (թերթ 83բ-84ա) ոչ թե փոքրիկ բացթողումներով է, ինչպես Օրբելյանի մոտ եւ Երուսաղեմի թիվ 3397 ձեռագրում, այլ ամբողջական, ինչպես Մատենադարանի թիվ 9796 եւ Երուսաղեմի թիվ 1221 ձեռագրերում:

ԲՆԱԳՐԵՐ

Նյութեր Ժամանակագրության ձեռագրերից

Ներկայացվող ժամանակագրական հատվածները Սմվել Անեցու Ժամանակագրության Մատենադարանում պահվող 14 ձեռագրում տարբեր մարդկանց եւ տարբեր ժամանակ կատարած հավելումներ ու լրացումներ են: Դրանցից մի քանիսի հեղինակները հայտնի են, ինչպես Հայրապետ վարդապետը (13-րդ դ.), Նաթանայել եպիսկոպոս Հավուցթառեցին (14-րդ դ.), Եփրեմ Ղափանցին (18-րդ դ.): Մյուսների անուններն անհայտ են, ուստի նրանց զանազանելու համար սովորաբար նման դեպքերում օգտագործվող Անանուն անվան հետ կիրառել ենք հավելումների բնույթից բխող պայմանական մականուններ, ըստ նրանց բնակության տեղերի կամ գործունեության ժամանակի, ինչպես՝ Անանուն Տարոնեցի (12-րդ դ.), Անանուն Կիլիկեցի (13-րդ դ.), Անանուն (1400 թ.), Անանուն ժամանակագիրներ (17-18-րդ դդ.): Մի չարք անանուն հեղինակների համեմատաբար փոքրածավալ հավելումները խմբավորել ենք «Ժամանակագրական մանր միավորներ» բաժնում:

Նյութը չծանրաբեռնելու համար հանրահայտ դեպքերի, գործիչների, տեղավայրերի մասին ծանոթագրություններ չենք գրել, կամ նշել ենք նվազագույնը: Համեմատաբար հանգամանորեն ենք ծանոթագրել այն տեղեկությունները, որոնք առաջին անգամ են հանդիպում:

Ձեռագրերում եղած հավելումները երբեմն շատ համառոտ են, ուստի ըստ անհրաժեշտության լրացուցիչ ներկայացրել ենք ժամանակագրության մեջ դրանց գտնվելու տեղը (հատվածը): Բնագրերի ուղղագրությունը թողել ենք անփոփոխ, միայն բացել ենք համառոտագրությունները:

Գրչի վրիպած կամ ենթադրվող տառերը նշվում են կոր փակագծում՝ ( ), մեր վերականգնած տառերը՝ ուղիղ փակագծում՝ [ ], թափված, ջնջված տեղերը՝ համապատասխան նշանով՝ /// :

ա. ԱՆԱՆՈՒՆ ՏԱՐՈՆԵՑԻ (12-րդ դար)
Մատենադարան, ձեռ. թիվ 9796

Բնագիրը ներկայացնում է Տարոնի (Մշո) Ս. Կարապետ վանքում եւ Շահ Արմենների, կամ Խլաթի ամիրայության մեջ 1185-1186 թվականներին կատարված դեպքերը: Այն Սմվել Անեցու Ժամանակագրության մեջ մուծված հետագայի հավելում է, որը պահպանվել է մի քանի ձեռագրում: Մատենադարանի թիվ 8481 ձեռագրից քաղելով՝ 1942 թ. այն հրատարակել է Ա. Աբրահամյանը, որպես Ստեփանոս Օրբելյանի Ժամանակագրության մի հատված[1]:

Հիշյալ հատվածը, Ստեփանոս Օրբելյանի Ժամանակագրության հրատարակության տարբերակով, պահպանվել է նաեւ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի թիվ 3397 ձեռագրում, որը վերահրատարակել է Ն. Պողարյանը[2]:

Նույն հատվածն ավելի ընդարձակ եւ ստույգ ընդօրինակությամբ պահպանվել է նաեւ Մատենադարանի թիվ 9796 ձեռագրում: Որպես Ստեփանոս Օրբելյանի Ժամանակագրության մաս հրատարակված հատվածի թվականը՝ ՈԼ (1181)[3], սխալ է, իսկ Մատենադարանի թիվ 9796 ձեռագրում նշված է ՈԼԴ (1185), որը հաստատվում է նաեւ այլ աղբյուրներով: Բացի այդ, Ա. Աբրահամյանի եւ Ն. Պողարյանի հրատարակած օրինակներում կան տարընթերցումներ ու որոշ կարեւոր հատվածների կրճատումներ, իսկ տեքստի վերաբերյալ ծանոթագրություններ չեն արված:

Կրճատումների մասին կարելի է պատկերացում կազմել համեմատությունից:

Ստ. Օրբելյանի Ժամանակագրության հրատարակություն	*Մատենադարանի թիվ 9796 ձեռագիր*
Եւ վասն զի ազգն Հագարացոց առհասարակ միաբանեալ էին ի պատերազմն ընդդեմ Պարթեւական ազգին, որ Գունդն կոչի... (էջ 19):	*...եւ վասն զի ազգն Թուրքայց առհասարակ միաբանեալ էին ի պատերազմի ընդդէմ Պարթեւական ազգին, որ Քուրդն կոչի... (75ա):*

Աւերեցին զբազում վանորայս, որ եւ զմեծն եւ հռչակաւորն զսուրբ Կարապետն, որ եւ Գլակայ վանք, վասն զի յայսմ ժամանակի ամենայնիւ պայծառանայր՝ յառաջացեալ ի կամս աստուածոյ (էջ 20):

Իսկ յաւուրս պահոց առաջաւորին, քաղաքացիքն որ ասացաք, յառաջին տէրն իւրեանց դառնալ, զորս վազ իմացեալ ամիրայն Կարնոյ քաղաքի, յարձակեալ ի վերայ նոցա... (էջ 20):

Աւերեցին զբազում վանորայս, որ եւ զմեծ, հռչակաւոր, հոյակապ ուխտն սրբոյ Կարապետի նշխարացն, զոր սրբոյն Գրիգորի բերեալ ի Կեսարացոց քաղաքէն եւ անդ եդեալ եւ հիմնարկեալ տեղին կոչէ յանուն Սուրբ Կարապետ, մականուն Գլակայ վանս, յանուն առաջին առաջնորդին, զոր պատմութիւնն ցուցանէ եւ Աթանագինէ հայրապետին եւ այլ բազում միանձանց ճգնաւորաց խոտաճարակաց, որ անդ հանգուցեալ են, զոր եւ բազում բժշկութիւնս կատարէր Աստուած ի ձեռն սրբոյն, նաեւ բազում մասամբք Տէրունականաւք զարդարեալ էր եւ քահանայիւք սրբազանիւք, փառաւոր եւ անյաղթելի փիլիսոփայիւք, ունէր զհոգեւոր փարթամութիւն եւ զմարմնաւոր եւ յայսմ ժամանակի առաւել պայծառանայր ամենայնիւ յառաջացեալ ի կամս Աստուծոյ (75ա-75բ):

Իսկ յաւուրս պահոց առաջաւորին ապստամբեցին քաղաքացիքն, որ Աւխթիքն ասացաք, կամելով յառաջին տէրն իւրեանց դառնալ, զոր վաղիմաց եղեալ ամիրայն Կարնո քաղաքի յարձակեալ ի վերայ նոցա... (76ա):

Ներկայացվող բնագրի հեղինակը, որը դեպքերի ժամանակակիցն է եղել, պատմում է Սուքման Բ Շահ Արմենի մահից հետո՝ 1185-1186

թթ. Խլաթի ամիրայութիւնում առաջացած անիշխանութեան ժամանակ տեղի ունեցած դեպքերի եւ առավել հանգամանորէն՝ Ս. Կարապետ վանքին բաժին հասած դժբախտութիւնների մասին, ապա անդրադառնում Ուխտիք (Օլթի) քաղաքի շուրջ ծավալված անցքերին, որին միջամտել են Կարինի ամիրան եւ Խլաթի նոր ամիրա Բեկթամուրը:

Այն, որ բնագրի հեղինակը դեպքերի ժամանակակիցն ու Ս. Կարապետի վանքին մոտ կանգնած մարդ է եղել, երեւում է վանքից հեռացած միաբանների վերադարձի մասին նրա գրած, հիշատակարանային ձեւակերպում հիշեցնող խոսքերից. «...ժողովեցան ըստ առաջին ուխտին հաստատելոյ **եւ են այժմ խաղաղացեալ փոքր մի, այլ զառաջիկայն Աստուած գիտէ**»: Հեղինակի բնակութեան տարածքի մասին է հուշում նաեւ այն, որ նա Շահ Արմենին համարում է «Հայոց ազգիս ամիրայն», «քաղցր բարուց» տեր (Շիրակում կամ Այունիքում ապրողը նման բան չէր գրի), այսինքն Խլաթի ամիրայութեան բնակիչ էր, հավանաբար՝ տարոնեցի: Նրա խոսքն անմիջական է եւ գրված թարմ տպավորությունների ազդեցությամբ[4]: Հեղինակը կարեւոր դեպքերի առնչությամբ նշում է եկեղեցական տոների անունները, որը դրանց ժամանակը ամսաթվերի ճշգրտությամբ որոշելու հնարավորություն է տալիս:

Կամիմ աստանօր զանցս աղէտից եւ չարչարանաց ամենայն աշխարհի պատմել, առաւել ի վերայ աշխարհիս Հայոց, նախ ի վերայ քրիստոնէից, զի ի ՈԼԴ (1185) թվին մեռանի Հայոց ազգիս ամիրայն, որ յելից իրացն ունէր զանունն **Շահի Արմէնն** կոչեցեալ. այս(ինքն) թագաւոր Հայոց, յաղագս քաղցր բարուց իւրոց, զի ունէր զգութ եւ զողորմութիւն ամենեսեան: Իսկ առ այսու թուականաւս մեռանի[5] արտաքս աթոռոյն իւրոյ, ի գեօղն **Սարդխան** կոչեցեալ եւ վասն զի ազգն Թուրքաց առհասարակ միաբանեալ էին ի պատերազմի ընդդէմ Պարթեւական ազգին, որ Քուրդն կոչի[6], վասն որոյ պատրաստական գտեալ զինքեանս եւ զժամն դիպող, յարձակեցան ամենեքին առհասարակ ի վերայ ազգիս քրիստոնէից եւ հարին ի սուր սուսերի, զարս եւ զկանայս եւ զմանկունս վարեցին ի գերութիւն, քակեցին զբազում եկեղեցիս յափշտակելով զկտակարանս սուրբս, նաեւ զտունս յորում բնակեալ էին մարդիկ՝ այրեցին առհասարակ եւ զամենայն անդաս-

տանս անխնամաբար կերակուր արկին խաչանց իւրեանց եւ անասնոց, զի ժամ էր հնձոց[7], առհասարակ ամենեքեան մաշեցան սովով եւ սրով եւ գերութեամբ: Աւերեցին զբազում վանորայս, որ եւ զմեծ, հռչակաւոր, հոյակապ ուխտն **սրբոյ Կարապետի** նշխարացն, զոր **սրբոյն Գրիգորի** բերեալ ի **Կեսարացոց** քաղաքէն եւ անդ եդեալ եւ հիմնար // (75ա) կեալ տեղին կոչէ յանուն սրբոյն՝ **Սուրբ Կարապետ**, մականուն **Գլակայ** վանս[8], յանուն առաջին առաքնորդին, զոր պատմութիւնն ցուցանէ, եւ **Աթանագինէ** հայրապետին եւ այլ բազում միանձանց ճգնաւորաց խոտաճարակաց, որ անդ հանգուցեալ են, զոր եւ բազում բժշկութիւնս կատարէր Աստուած ի ձեռն սրբոյն, նաեւ բազում մասամբք Տէրունականօք զարդարեալ էր եւ քահանայիւք սրբազանիւք, փառաւոր եւ անյաղթելի փիլիսոփայիւք, ունէր զհոգեւոր փարթամութիւն եւ զմարմնաւոր, եւ յայսմ ժամանակի առաւել պայծառանայր ամենայնիւ յառաջացեալ ի կամս Աստուծոյ, զի եկք եւ պանդուխտք անդ հանդչէին, յաղագս ուսմանց եւ աստուածայնոց երաժշտական արհեստից յամենայն տեղեաց անդր ժողովելով:

Իսկ յաղագս այսպիսի համբաւուն լինելոյ ո՛չ կարաց տանել այսմ ճշմարտութեան թշնամի, այլ յարոյց ի վերայ զկամարարս իւր, զնախասացեալ ազգսդ, որք միանգամ յարձակեցան ի վերայ տեղեացն սրբութեան, զբնակութիւնսն հրոյ ճարակ տուեալ եւ զինչսն յաւարի առեալ զԿոտակարանս սուրբս եւ զսպասն սրբութեան գերի վարեալ ցրուեցին ընդ ամենայն ոլորտս տիեզերաց, զբազումս ի կրօնաւորացն սրբոց սպանին եւ զմեծ եպիսկոպոսն սուրբ **զՍտեփաննոս**[9], զկոչեցեալն **Երեմիայի** որդի, սպանին, եւս այս գործեցաւ յաւուրս պահոց Վարդաւառի տօնին[10], քանզի առին **զԱղաւնից** բերդն, որ այժմ կոչի **Կարճկօնից** բերդ, եւ **զՀանդերձաբերդն** կոչեցեալ[11], որ թէպէտ ամուր էր, սակայն ի հնարագիտութենէ չար ազգացն անգան եւ նոքա ի սուր սուսերի:

Իսկ ի խաղաղել փոքր մի թշուառութեանցն, յաւուրս տօնի Սրբոյ Խաչին դարձեալ ժողովեցան որք մնացեալք էին ի բարկութենէն, սպասաւորք **Սրբոյ Կարապետին** լալագին անգանելով առաջի սրբոյն, զի մի՛ իսպառ բարկասցի, կամելով միաբանական ուխտիւ առ միմեանս բնակել, զի յայնժամ դեռեւս խցաւորք էին, իւրաքանչիւր ոք զիւրն հոգալով եւ ո՛չ զնկերին, իսկ յայնմ հետէ կամեցան զմիմեանց բեռն բառնալ, ըստ գրեցելումն, թէ ոչ ոք ասէր զնչէից իւրոց, թէ իւր

իցէ, զոր եւ արարին իսկ: Բայց զի ոչ եւս էր հաստատեալ աթոռ բռնակալութեան աշխարհին զի // (75բ) ոչ ունէր ժառանգ թագաւորութեան իւրոյ **Շահի Արմէնն**, վասն որոյ իւրաքանչիւր ոք աւազակաբար բազում սպանութիւն գործէին, որ եւ յարձակեցան կրկին անգամ ի վերայ սպասաւորաց **Սրբոյ Կարապետին** յաւուրս տօնի Սրբոյ Խաչին[12], ի գիշերի եւ հալածական արարին զմնացեալսն եւ Բ (2) քահանայիցն սպանին, վասն որոյ երկուցեալ փախեան, անբնակ թողլով զտեղին զայն զամն ողջոյն եւ ապա յերկրորդ ամին ժողովեցան ըստ առաջին ուխտին հաստատելոյ եւ են այժմ խաղաղացեալ փոքր մի, այլ զառաջիկայն Աստուած գիտէ:

Ի նոյն ամի թշուառութեան, բռնակալն **Կարնո** քաղաքի[13] յարուցեալ ի վերայ անառիկ բերթին **Օխթիքն** անուանեալ եւ առեալ զնա յաւուրս տօնի Սուրբ Աստուածնին[14], իսկ ի գալ աշնանային աւուրց, յօր տաւնի Խաչ Գիւտին[15], **Բէկթամուրն**[16], որ եղեւ աթոռակալ **Շահի Արմէնին**, զի զօրապետ էր զօրաց նորայ, սայ յարուցեալ բազում զօրօք եկն ի դուռն **Կարնո** քաղաքի, խնդրելով **զՕխթիքն** դարձուցեալ ի բնիկ տէրն իւր եւ իբրեւ ոչ դարձոյց, առ զերկիրն ամենայն յաւարի եւ զմասն քաղաքին հրով այրեաց եւ **զԲասեանսն** զերկուսին ի գերութիւն վարեաց, որ եւ զհամար գերութեան Ը Ռ (8 000) ասացին, զոր գտին եւ գնեցին, թող զկորուսեալսն եւ զսպանեալսն:

Իսկ յաւուրս պահոց առաջաւորին[17] ապստամբեցին քաղաքացիքն, որ **Աւխթիքն** ասացաք, կամելով յառաջին տէրն իւրեանց դառնալ, զոր վաղիմաց եղեալ ամիրայն **Կարնո** քաղաքի յարձակեալ ի վերայ նոցա բազում զօրօք եւ զամենեսեան ի գերութիւն վարեաց, զինչս նոցա յափշտակելով գրաւեաց ընդ իւրոյ իշխանութեան զքաղաքն եւ զբերդն: Ի նոյն ամի էառ **Բէկթամուրն զՎան** եւ **զՈստան** եւ **զԲաղէշ**, զաշխարհն այրեաց մինչեւ հնազանդեցոյց ընդ իւրով իշխանութեամբն (76ա):

Մատենադարանի թիվ 9796 ձեռագրում վերը ներկայացված մեծ հատվածից առաջ տեղ է գտել Տարոնի պատմությանը՝ Սասունի վիզեն իշխանին վերաբերող երկու փոքրիկ նշում, որոնցից առաջինը չկա Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրության հրատարակության մեջ (հետեւաբար՝ Մատենադարանի թիվ 8481 ձեռագրում): Վրաց Գեորգի Գ (1156-1184) թագավորի՝ 1162 թվականին Դվինը գրավե-

լուն վերաբերող տեղեկությունից հետո նշված է. «**Եհան Շահի Արմէն զմեծ իշխանն Վէգեն ի Սանսոյ**»[18] (74բ):

Երկրորդ վկայությունը վերաբերում է Վիգենի մահվանը. «**Ի սոյն ամի մեռաւ Վէգեն տէրն Սասնո**»[19] (75ա): Հնարավոր է, որ ժամանակագրական այս երկու միավորները նույնպես մեծ հատվածի տարոնեցի հեղինակի կատարած ավելացումներն են:

Ծանոթագրություններ

1. Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 19-20:
2. Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 10, էջ 289-290:
3. Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 19:
4. Հեղինակի դիտողականության արտահայտություններից է այն, որ նա գերության ու կողոպուտի մասին գրելուց հետո նշում է երկրագործ բնակչության համար աղետալի մի իրողություն՝ «զամենայն անդաստանս անխնամաբար կերակուր արկին խաչանց իւրեանց եւ անասնոց»:
5. Շահ Արմենի մահվան եւ 1185 թ. անցքերի մասին շատ համառոտ նշում են նաեւ Վարդան Արեւելցին «...մեռաւ Շահի-արմէնն անորդի, եւ աւեր եւ սուր եւ գերութիւն բազմացաւ ի վերայ աշխարհի նորա ի շրջակայ ազգացն» (Վարդան Արեւելցի, էջ 135-136), եւ Սամվել Անեցու ժամանակագրության շարունակողները. «Ի ՈԼԴ թվին մեռանի Շահիարմէն սուլտանն Իզաթայ (պետք է լինի Խլաթայ – Կ. Մ.) ի գեօղն որ կոչի Սարթհան» (Անեցի, էջ 140): Այս շրջանի իրադարձություններին համակողմանիորեն անդրադարձել է Հ. Մարգարյանը (Հ. Մարգարյան, Քաղաքական կացությունը Մերձավոր Արեւելքում եւ Հայաստանի ազատագրման հեռանկարները (12-13-րդ դդ.), Պատմա-բանասիրական հանդես, 1989, № 1, էջ 36-40):
6. Ստ. Օրբելյանի ժամանակագրության մեջ՝ «Պարթեւական ազգին, որ Գունդն կոչի», (Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 19), Ն. Պողարյանի կատարած հրատարակության մեջ՝ «Պարթեւական ազգին, որ Գուրդն կոչի» (Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 10, էջ 289):
7. Անզավակ ամիրայի մահն անիշխանության ու ասպատակությունների առիթ է դառնում, որի հիմնական զոհը ամիրայության անպաշտպան քրիստոնյա բնակչությունն էր: Իբն ալ-Ասիրը հայտնում է, որ Շահ Արմենը մահացել է 1185-ի հունիսի 12-ին (Իբն ալ-Ասիր, Թարգմանություն բնագրից, առաջաբան եւ ծանոթագրություններ Ա. Տեր-Ղեւոնդյանի, Երեւան, 1981, էջ 269): Փաստորեն դրանից անմիջապես հետո սկսվել

են հայ բնակչության վրա հարձակումները, քանի որ այդ մասին գրող մեր հեղինակը նշում է՝ «զի ժամ էր հնձոց» (Հուլիս):
8. Հայոց ամենանշանավոր վանքերից է Մշո Ս. Կարապետ (Գլակա) վանքը, որի հիմնադիրը Սուրբ Գրիգոր Լուսավորիչն էր, եւ որը գործել է մինչեւ 1915 թվականը: Դեռեւս նախորդ դարի սկզբին Ս. Կարապետի միաբան կարապետ վարդապետ Լուսարարյանը հրատարակել է վանքի պատմությունն ու առաջնորդների գավազանագիրքը (Կ. Լուսարարեան, Գաւազանագիրք յաջորդութիւնք վանահարց ուխտիս Ս. Կարապետի Տարօնոյ, Երուսաղեմ, 1912):
9. Ս. Կարապետի վանահայր Ստեփանոս եպիսկոպոսի («որդի երեմիայի») անունը հայտնի է միայն այս աղբյուրից: Կարապետ վարդ. Լուսարարյանի կազմած վանահայրերի գավազանագրքում հիշյալ ժամանակաշրջանի պատկերը հետեւյալն է.

«33. Տ. Դաւիթ Բ յամի Տեառն 1180, Տարօնցի, յիշուած 1180-ին Հռոմկլայի եկեղեցական ժողովին առթիւ...
34. Տ. Յովհաննէս Դ՝ յամի Տեառն 1181 (Զամչեանը յիշած է զայն յամի իբր 1181),
35. Տ. Խաչատուր՝ յամի Տեառն 1204» (Կ. Լուսարարեան, Գաւազանագիրք..., էջ 64):

1185 թ. հուլիսին նահատակված Ստեփանոս եպիսկոպոսի անունը պետք է տեղ գրավի Հովհաննեսի անունից հետո, իսկ վանքի նույնանուն մյուս առաջնորդների շարքում (Ստեփանոս Գ - 629 թ., Ստեփանոս Դ - 1464 թ.) համարվի Ստեփանոս Դ:
10. Եպիսկոպոսը նահատակվել է «յաւուրս պահոց Վարդաւառի տոնին», այսինքն 1185 թ. հուլիսի 20-ին (Վարդավառ) նախորդած շաբաթվա մեջ (Հուլիսի 14-19):
11. Ստ. Օրբելյանի հրատարակության մեջ նույն հատվածը հետեւյալ տեսքն ունի. «...առին զԱստեղունից բերդն, որ այժմ կոչի Կաճկաւնից բերդ եւ զՀանդերձաբերդն» (Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 20): Բերդի մասին Ղ. Ինճիճյանը գրում է. «Ասղնաբերդը... Մուշէն ժամ մը հեռու» (Ղ. Ինճիճեան, Նոր Հայաստան, Վենետիկ, 1806, էջ 188): Սա այլ աղբյուրներում «Աստղօն», «Աստեղունք» անվանված Աստղաբերդն է (Մ. Յովհաննէսեան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 183-185): Ըստ Հովհան Մամիկոնյանի Գրիգոր Լուսավորիչը Սյունյաց իշխանի հինգ հազար զինվորներին մկրտել է այս բերդի մոտ: (Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Երեւան, 1980, էջ 46): Հայտնի են Կարճկանի լեռնաշղթան, Կարճկանի գետը, Կարճկանի դաշտը (Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երեւան, 1991, էջ 50): Վերը բերված հատվածը կարելի է նաեւ հասկանալ այնպես, որ «Հանդերձաբերդը» Աստղաբերդ-Կարճկունից բերդի երրորդ անունն էր:

12. 1185 թ. սեպտեմբերի 14:

13. Կարինի ամիրան այդ ժամանակ Նասիր ադ-դին Մուհամմադն էր, որի քույրը Սուքման Բ Շահ Արմենի կինն էր (Ա. Խաչատրյան, Կարնո Սալդուխյանների ժամանակագրությունը եւ տոհմաբանությունը ըստ արաբական վիմագիր աղբյուրների, «Արեւելյան աղբյուրագիտություն» ժողովածու 1, Երեւան, 1988, էջ 124):

14. Կարինի ամիրան Ուխտիքը (Օլթին) գրավել է «ի նոյն ամի թշուառութեան», այսինքն 1185 թ., «յաւուրս տօնի Սուրբ Աստուածածնին»՝ օգոստոսի 17-ին: Հայտնի է, որ Ուխտիքը պատկանել է Կեչրորի Ղարաչա ամիրային, որին ինչ-որ պատճառով սպանել է նրա զերական՝ Շահ Արմենը 1182 թ. (Վարդան Արեւելցի, էջ 135): Դրանից հետո նրա տիրույթները եւ մասնավորապես Ուխտիքը Շահ Արմենը հավանաբար հանձնել է նույն Ղարաչայի տնից որեւէ մեկին:

15. Շահ Արմենի զորսպետ ու նրա հաջորդ Բեկթամուրը փորձում է Ուխտիքը վերադարձնել նախկին տիրոջը: Նա արշավում է Կարին, բայց արդյունքի չհասնելով «յօր տաւնի Խաչ Գիւտին»՝ հոկտեմբերի 26-ին, այրում է քաղաքի մի մասը եւ ավարի առնում շրջակա գավառները, մասնավորապես նաեւ Կարինի եւ Ուխտիքի միջեւ գտնվող Բասենը:

16. Ստ. Օրբելյանի ժամանակագրության հրատարակության մեջ՝ «բէկ Թամուրն» (ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 20), Երուսաղեմի ձեռագրում՝ «Բեկդամուրն» (Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 10, էջ 290):

17. «Յաւուրս պահոց առաջաւորին», այսինքն 1186 թ. հունվարի 19-23-ն ընկած ժամանակամիջոցում, Ուխտիքի բնակիչները ապստամբություն են բարձրացնում՝ նախկին տիրոջը վերականգնելու պահանջով, սակայն Կարինի ամիրան այդ մասին չուտ իմանալով հարձակվում եւ գրավում է քաղաքն ու բերդը, բնակիչներին գերության մատնում: Ուխտիքի քաղաքացիների ապստամբության մասին տեղեկությունն ինքնին ուշագրավ է (այն բացակայում է բնագրի մյուս հրատարակություններում):

18. Շահ Արմենի՝ Խեդենեկ Արծրունուց Ամյուկը, իսկ Վիգենից Սասունը վերցնելու մասին հայտնում է նաեւ Վարդան Արեւելցին, առանց թվական նշելու (Վարդան Արեւելցի, էջ 127-128): Թիվ 9796 ձեռագրում եւս այս տեղեկության թվականը դժվար է որոշել, քանի որ ժամանակագրության վերջնամասում՝ 74բ-75ա էջերում նշված տեղեկություններից մի մասը թվական է պարունակում հենց իր մեջ (Հայոց մեծ թվականով) եւ դրանք կից գտնվող աղյուսակում նշված տարեթվերից բավական հեռու են:

Վիգեն իշխանի եւ երկրամասի անունների գրության ձեւը համահունչ է 1169 թ. Սասունի Ավետարանի (Արիստակես գրիչ) հիշատակարանի գրությանը. «...ի տէրութեան Սանսնոյ Վեգենայ...» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 194): Իշխանի անվան կապակցությամբ Ն. Ակինյանը գրում է. «Ճշտագոյնը կհամարիմ Վեգեն, ինչպես ներկայացուցած է ժամանակակից Արիստակէս գրիչ» (Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 404):

19. Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրության հրատարակության մեջ իշխանի մահվան մասին նշված է 1176 թվականի դիմաց (ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 19): Իսկ Մատենադարանի թիվ 9796 ձեռագրում տեղեկությունը նախորդում է 1175 թվականին կատարված դեպքին. «ՈԻԴ (1175) թվին աթաբակ էլտկուզն պաշարեաց զԱնի եւ աւերեաց բազում եկեղեցիս ի Շիրակ...» (75ա), համմտ. Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 18:

ԲՐ. ՀԱՅՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ (13-րդ դ. սկիզբ)
Մատենադարան, ձեռ. թիվ 1897

Հայրապետ վարդապետի մասյանն ի տարբերություն ժամանակագրության հնագույն ձեռագրերի, պատկանում է հավելումներ պարունակող խմբին. կամ նախօրինակն արդեն այդպիսին է եղել, կամ Հայրապետ վարդապետն է այդ փոքր հավելումների հեղինակը: Նա ոչ միայն մի քանի նոր տեղեկություններ է մուծել, այլեւ որոշ դեպքերում Սամվել Անեցու տեղեկություններին բացատրական բնույթի ավելացումներ կատարել[1]: Դատելով հիշատակարանում առկա որոշ արտահայտություններից՝ «չարագրեցի զսոսա ի չահ եւ ի յաւգուտ մանկանց եկեղեցւոյ..., յիշեայ, ով պատուական վերծանող եղբայր..., ով աստուածասէր ընթերցող ուսմամբ»[2], կարելի է ենթադրել, որ հավելումների հեղինակը հենց ինքը՝ Հայրապետ վարդապետն է: Այսինքն, գուցե «ուսմամբ» ընթերցողների դործը հեշտացնելու համար նա Անեցու հայտնած տեղեկություններին փոքրիկ բացատրական ավելացումներ է արել: Սակայն, եթե անգամ նրա օգտագործած նախօրինակն ունեցել է այդ հավելումները, որն այժմ անհնար է ճշտել, մի հերթական «Անանուն» հեղինակ երեւան չբերելու համար, թեկուզ որոշ վերապահումով, հավելումների հեղինակ ենք համարում Հայրապետ վարդապետին:

Հայրապետ վարդապետի որոշ տեղեկություններ չկան Սամվել Անեցու բնագրում, սակայն պահպանվել են այն օրինակում, որը չարունակելով՝ իր ժամանակագրությունն է կազմել Ստեփանոս Օրբելյանը: Ուստի ծանոթագրություններում համեմատության համար նշում ենք ժամանակագրության վաղարշապատյան հրատարակության, երբեմն նաեւ Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրության համապատասխան էջերը[3]:

Հայրապետ վարդապետի ձեռագրում առավել աչքի զարնողը Անիին վերաբերող հատվածներում կատարված հավելումներն են: Դրանք ոչ միայն ճշգրիտ են, ինչպես օրինակ Անիի Սմբատաշեն պարիսպների տեղորոշումը, այլեւ երբեմն պարունակում են ուշագրավ մանրամասներ, ինչպես Սմբատի հիմնադրած Կաթողիկե եկեղեցու

անկյուններում թագավորի անվան գրության փաստը: Հետաքրքրական են նաեւ կատրամիդե թագուհու անվան «Կարանիդե» ձեւով գրության, Ս. Փրկչի եկեղեցու կառուցողի անվան եւ պաշտոնի նշման, Վահրամ Պահլավունու պապի անվան հիշատակման հանգամանքները, որոնք Հայրապետ վարդապետի՝ Անիին քաջածանոթ լինելու մասին են վկայում:

(Հայոց) ՅԴ (855) **Մեծաշուք բախտի պատահեալն Աշոտ որդի Սմբատայ Խոստովանողի ամենեցուն նախնեացն գեր ի վերոյ եղեալ զընդ լծով կացեալքս լծադիրս բազում ազանց կացույց**[4] (60բ):

(Փրկչական) ՊՀԴ (874) **Աշոտ լեալ իշխանաց իշխան ի ԺԹ** (19) **ամի իւրոյ իշխանութեանն**[5] (60բ):

(Փրկչական) ՊՁԷ (887), (Հայոց) ՅԼԴ (885) **Աշոտ Բագրատունի յետ ԻԲ** (22) **ամի իշխանութեան ի վերա Հայոց թագաւորեաց ամս Ե** (5): **Սա առաջին թագաւոր ի Բագրատունեաց**[6] (61ա):

Սմբատ որդի Աշոտոյ, երկրորդ թագաւոր յետ հաւրն իւր, սա կոչեցաւ Տիեզերակալ, որ եւ մարտիւրոսացաւ[7] (61ա):

ՋԺԴ (914), (Հայոց) ՅԿԱ (912) **Յաւուրս յայսոսիկ ոստիկան ոմն եկեալ ի Պարսից չար եւ գազանաբարոյ Յուսուփ անուն, որ էր եղբայր Ափշնայ եւ նորա որոպքին կոչէր, որդիք Ապուսիճայ ամպարշտի, եւ դաւոյ եւ հնարիմաց նենգութեամբ ի ձեռն ածեալ զթագաւորն Հայոց զՍմբատ, որ Տիեզերակալն կոչէր, զորդի Աշոտի եւ վասն խոստովանելոյ զՔրիստոս կախեալ եղեւ զփայտէ ի Դըւին քաղաքի, նման գոլով Քրիստոսի՝ Տեառն իւրում, եւ զէ (7) ամ անիշխան կացին**[8] (63ա):

(Հայոց) ՆԱ (952) **Աշոտ ամս ԻԷ** (27), **այս Աշոտ որդի Աբասայ, Ողորմած կոչեցաւ, վասն որոյ եւ եղեւ իսկ**[9] (64ա):

Շինեաց ի Սեւորդիսն զՀրաշալի զուխտսն զՀաղբատ եւ զՍանահինն կինն Աշոտայ Ողորմածին, Խոսրովանուշ վասն արեւշատութեան որդւոց իւրոց Գուրգենայ, Սմբատայ եւ Գագկայ ՆԺԵ (966) **թվին**[10] (64ա):

(Հայոց) ՆԼԶ (987) **Սկիզբն շինուածոյ մեծանուն... ուխտին Մարմաշինոյ ի քրիստոսասէր իշխանաց իշխանէն Վահրամայ, որ էր թոռն Ապուղամրի**[11] (65ա):

(Հայոց) ՆԻԸ (979) **Սմբատ Շահնշահ որդի Ողորմածին Աշոտոյ.**

սա ի սկզբան թագաւորութեան իւրոյ լիր արկէալ պարսպի քաղաքին Անւոյ մեծատարած տեղաւք ընդարձակագոյն քան զհին շինուածն, բարձրաբերձ բրգամբք հաստակառոյց վիմաւք ի կողմանէ ի կոէն, յարեւելից հիւսիսոյ մինչեւ յարեւմուտս հիւսիսոյ տողս արկեալ շինուածոյն յԱխուրեան գետոյ մինչեւ ցՇաղկոցաձորն կոչեցեալ վայր:

Դարձեալ նոյն թագաւոր Սմբատ Շահնշահ յետ շինուածոյ քաղաքին հիմնարկէ զկաթուղիկէն պայծառափայլ ի նմին քաղաքի, չափ աշտիճանացն եւ երկուս կարգս ի տաճարէն, յորում կայ ի քառակողմն կուսէ անկեանցն դրոշմ գծոյ անուան նորա, եւ ոչ կարաց աւարտել վասն կանխաժաման մահու կենաց իւրոց[12] (65ա):

(Հայոց) ՆՕԷ (1008) Կաթուղիկէն սխրատեսիլ... աստանաւր գլխաւորեցաւ հրամանաւ եւ արդեամբք Կատրանիդեա[13] թագուհւոյ, որ էր կին Գագկայ Շահնշահի, եղբաւր Սմբատայ եւ Գուրգենայ[14] (65բ):

(Հայոց) ՇԼԵ (1086) Լիպարիտն տաճիկ եղեւ եւ կիւրիկէ Շաքոյ թագաւորն ի սուլդանն չոգաւ եւ դարձաւ անդրէն պատուով[15] (70ա):

(Հայոց) ՇԼԶ (1087) Ի սուլդանն գնացին Հայոց եւ Վրաց թագաւորքն Կիւրիկէ եւ Գաւրգի[16] (70ա):

(Հայոց) ՇԿԲ (1113) Մերժեցան ի հայրենեաց որդիքն Կիւրիկէի[17] (71բ):

(Հայոց) ՇԿԷ (1118) Դաւիթ թագաւորն Ափղազաց զաւրացեալ խաչիւն Քրիստոսի, հար զէլխազի եւ զՄլըք Տուղրիլն[18] (73ա):

(Հայոց) ՇՀԹ (1130) Փլաւ Ամենափրկիչն յԱնի շինեալն յԱպլղարիփ մարզպանէն[19] (74բ):

(Հայոց) ՇՁԱ (1132) Մեռաւ Փատլաւն ի պատերազմի եւ իշխեաց Անոյ եղբայր նորա Մահմուտն[20] (74բ):

(Հայոց) ՇՁԸ (1139) չարժն սաստիկ, որ կործանեաց զԳանձակ շահաստան, յորում եւ փլաւ սուրբ կաթուղիկէն Հաղբատ, այլ եւ մեռանին մին հարուածոյ Բ (2) սիւնքն հաւատոյ Գրիգոր եւ Սարգիս վարդապետք, որդի Թոքակերի եւ Կորխեցին[21] կոչեցեալ. եւ ի նոյն ամի Խարա Սնդուռն[22] զիւանէ եհար ի Խչենք[23] (75ա):

Ծանոթագրություններ

1. 1124 թ. Անիի գրավման մասին պատմությունը Սամվել Անեցին սկսում է հետեւյալ խոսքերով. «Ի բազում հինահարութեանց...» (Անեցի, էջ 125): Այս ձեռագրում՝ «Եւ աստանաւր առնու մեծազաւրն Դաւիթ զմայրաքաղաքն Հայոց զԱնի այսու պատճառաւ. Ի բազում հինահարութեանց...» (73ա): Բացատրական բնույթ ունեն գրչի նաեւ մի քանի հավելումները:

2. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 905:

3. Մենք համեմատության համար համապատասխան հատվածները ներկայացրել ենք զուգահեռ սյուներում, սույն ձեռագրին նվիրված հոդվածում (Կ. Մաթեւոսեան, Սամուէլ Անեցու ժամանակագրութեան Հայրապետ վարդապետի ընդօրինակութիւնը, «Հայկազեան հայագիտական հանդէս», 2007, էջ 81-84):

4. Համմտ. Անեցի, էջ 95: Հայրապետ վարդապետն օգտվել է Մ. Խորենացու խոսքերից, որ նա ասել էր Տիգրան Երվանդյանի մասին. «...զընդ լծով կացեալս՝ լծադիրս եւ հարկապահանջս կացոյց բազմաց» (Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը եւ ներածությունը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի (նմանահանութիւն), Երեւան, 1991, էջ 72):

5. Համմտ. Անեցի, էջ 95:

6. Համմտ. Անեցի, էջ 95:

7. Համմտ. Անեցի, էջ 95: Այս եւ հաջորդ հավելումն օգտակար են «տիեզերակալ» տիտղոսի խնդրի ուսումնասիրության առումով, որի առաջին կրողը Սմբատ Ա Բագրատունին էր (Հ. Մարգարյան, Բագրատունի թագավորների «տիեզերակալ» տիտղոսը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 6, Երեւան, 2005, էջ 99-106):

8. Համմտ. Անեցի, էջ 98-99:

9. Ժամանակագրության հրատարակության մեջ թագավորի հոր անունն ըստ որոշ օրինակների սխալմամբ նշված է «Սմբատայ» (Անեցի, էջ 100): Նույնը, նաեւ թվականի գրչական սխալով՝ ԻԷ (27)-ի փոխարեն ԽԷ (47), տեսնում ենք Ստեփանոս Օրբելյանի օրինակում (Մատենադարան, ձեռ. թիվ 8481, էջ 196բ):

10. Սամվել Անեցու ժամանակագրության հին օրինակները չունեն Հաղբատի եւ Սանահինի կառուցման մասին տեղեկությունը, իսկ հետագայի ընդմիջարկության մեջ նշված է ՆԺԶ (967) թվականը (Անեցի, էջ 100): Կ. Ղաֆադարյանն այն համարել է հենց Սամվել Անեցու տեղեկությունը, միաժամանակ ներկայացրել է նաեւ գրականության մեջ առկա մյուս թվականները (Կ. Ղաֆադարյան,

Հաղբատ, Երեւան, 1963, էջ 10-12): Ստ. Օրբելյանի ունեցած ձեռագրում տեղեկությունն այլ չարագրանքով է եւ Նժէ (968) թվականով (Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 11):

11. Հմմտ. Անեցի, էջ 103, Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 11:

12. Հմմտ. Անեցի, էջ 103: Այս տեղեկության մեջ հատկապես հետաքրքիր է Սմբատի հիմնադրած Կաթողիկե եկեղեցու անկյուններում նրա անվան գրության փաստի արձանագրումը: Այդ գրություններից մեկը բարեբախտաբար պահպանվել է: Տաճարի պատին «ՍՄՊԱ(Տ)» անվան տեղադրության մասին Անիի վիմագրական ժողովածուում նշվում է՝ «արտաքուստ, հյուսիսային պատի արեւելյան անկյունում» (Դիվան հայ վիմագրության, պր. 1, էջ 36): Հնարավոր է, որ Սմբատի «կանխաժաման» մահը եւ Կաթողիկեի անավարտ մնալն էր պատճառը, որ այս եղանակով արձանագրվել է նրա անունը, որը Հայրապետը բնորոշում է որպես «դրոշմ գծոյ անուան նորա»: Եկեղեցին անավարտ էր, չէր գրված շինարարական արձանագրություն եւ հնարավոր է, որ հենց այդ պատճառով կյանքից հեռացած արքայի անունը գրվել է պատերի այն մասում, ուր հասել էր շինարարությունը: Ըստ Ա. Ղուլյանի, Սմբատի ժամանակ եկեղեցու պատերը կառուցված են եղել «մոտ 10-11 մետր բարձրությամբ՝ մինչեւ ճակատների կամարաշարի վերին նիշը, կամ դրանից մի փոքր վեր՝ մինչեւ հորիզոնական քիվերը» (Ա. Ղուլյան, Անիի Մայր տաճարի հազարամյա խորհուրդը, «Հուշարձան» տարեգիրք Գ, Երեւան, 2005, էջ 29): Թերեւս պատերի բարձրության այդ չափն է նշել Հայրապետ վարդապետը՝ «...չափ աշտիճանացն եւ երկուս կարգս ի տաճարէն...»: Կարծում ենք, որ այս ձեւակերպումը հնարավոր կլինի ճիշտ մեկնաբանել, երբ հայտնի լինի թե Սմբատի անվան գրությունը գետնից կամ գետնախարսխից ինչ բարձրության վրա է գտնվում: Ուշագրավ է նաեւ տաճարում աստիճանների մասին հիշատակությունը (արդյոք գետնախարի՞սխն է): Դրանց նորոգման մասին նշում է Տիգրան Հոնենցը 1213 թ. իր արձանագրության մեջ. «Ես Տիգրան... չինեցի հալալ ընչիւք իմով զաշտիճաներս մեծափառ սրբոյ Կաթողիկէիս, զոր ի բազում ամաց հետէ խախտեալ էր...» (Դիվան հայ վիմագրության, պր. 1, էջ 34):

13. Թագուհու անունը Սամվել Անեցին նշում է «Կատրամիդե» (Մատենադարան, ձեռ. 5619, էջ 94ա, հմմտ. Անեցի, էջ 105), ինչպես որ Ասողիկի եւ այլ պատմիչների մոտ է: Հայրապետը գրում է «Կտրանիդե», ինչպես որ Կաթողիկե եկեղեցու շինարարական արձանագրության մեջ է (Դիվան հայ վիմագրության, պր. 1, էջ 35):

14. Հմմտ. Անեցի, էջ 105, Մատենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 94ա:

15. Այս եւ հաջորդ երկու վկայություններում հիշվում է Կյուրիկե Ա-ը (1050-1089): Սամվել Անեցին այս տեղեկությունը չունի: Ստ. Օրբելյանի օրինակում նշված է ՇԼԱ (1082) թվականը (Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 15):

16. Հմմտ. Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 15:

17. Հմմտ. Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 16, Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 61, Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քէօթուկը), աշխատասիրութեամբ Պ. Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 59:

18. Դավիթը Տուղրիլ իբն Մահմուդին (Մլըք Տուղրիլ) եւ Նաջմ ադ-դին իլ-Ղազիին (Էլխազի) հաղթել է 1121-ին (Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի..., էջ 56):

19. Հմմտ. Անեցի, էջ 129, Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 17:

20. Հմմտ. Անեցի, էջ 130, Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 17:

21. Այն, որ Թոքակերի որդի Գրիգոր վարդապետը մահացել է Գանձակի երկրաշարժի ժամանակ, հայտնի էր Կիրակոս Գանձակեցու պատմությունից (Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 200, տե՛ս նաեւ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երեւան, 1942, էջ 557): Սարգիս վարդապետի մասին ավելի քիչ տեղեկություններ են հայտնի (Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երեւան, 1948, էջ 412): Հայրապետի ձեռագրի չնորհիվ իմանում ենք նրա մականունը՝ **Կորխեցի**:

22. Խոսքը վերաբերում է Գանձակի Կարա-Սանկուր աթաբեկին (Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի..., էջ 72-73):

23. Անեցի, էջ 132, Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 17: Վերջին բառը՝ «ի Գանչէնքն»: Խոսքը Վրաստանում գտնվող Գաչիան (հայկական աղբյուրներում՝ Գաղձնք) քաղաքի մասին է (Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի..., էջ 73, 80):

գ. ԱՆԱՆՈՒՆ ԿԻԼԻԿԵՑԻ (13-րդ դ.)
Մատենադարան, ձեռ. թիվ 1898

Այս ձեռագիրը մեկն է այն 13 մատյաններից, որ եղել են Ա. Տեր-Միքելյանի ձեռքին Սամվել Անեցու ժամանակագրությունը հրատարակելիս, որը նա համարել է Ա օրինակ, սակայն դրանից քիչ է օգտվել: Աղյուսակների սկզբում եղած հենց առաջին վկայությունը տարբերվում է Սամվել Անեցու մյուս ձեռագրերում եղածներից, սակայն հրատարակության մեջ այն որպես տարընթերցում տողատակում չի նշված[1]:

Այս ձեռագրի առանձնահատկություններից մեկն այն է, որ Հայոց թվականի առաջին տարին դրված է Քրկչական ՇՄԲ (552) թվականի դիմաց (59բ), ի տարբերություն Սամվել Անեցու հնագույն ձեռագրերի, ուր 554 թվականի դիմաց է:

Ձեռագրում աղյուսակը գծված է մինչեւ Քրկչական ՌՅ (1300), Հայոց ՉԽԹ (1300) թ., բայց բուն գրչի վերջին տեղեկությունը Քրկչական ՌՄՂԴ (1294), Հայոց ՉԽԳ (1294) թվականի դիմաց է (96բ): Ժամանակագրության վերջին մասում նշված Կիլիկիայի պատմությանը վերաբերող հատվածները, որոնք ժամանակին գանց է առել Ա. Տեր-Միքելյանը, նորերս քաղվածաբար հրատարակել է Լ. Տեր-Պետրոսյանը[2]: Ժամանակագրության այս մասում անտիպ մնացած միավորները մենք ներկայացնում ենք ստորեւ, հեղինակին պայմանականորեն անվանելով Անանուն Կիլիկեցի (13-րդ դ.), նկատի ունենալով նրա հայտնած տեղեկությունների բնույթը եւ ողջ ձեռագրի պարունակությունը, ուր բազմաթիվ են Կիլիկիային վերաբերող նյութերը: Ժամանակագրության մեջ կան միավորներ, որոնք փոքր տարբերություններով (երբեմն բառացի) կրկնվում են Հեթում Բ-ի տարեգրության մեջ[3] եւ Հեթում Նղիրցու («ախտուց տեր») «Համառօտ պատմութիւն ժամանակաց» գործում[4], որոնք նշում ենք ծանոթագրություններում:

Քրկչական ՌԿԳ (1063), Հայոց[5] ՇԺԲ (1063) **Վախճանեցաւ Տաւրիկ սուլտանն Խորասանա եւ տիրեաց Ալփասլանն:**

ՇԺԳ (1064) **Ալփասլանն էառ զԱնի:**

ՇԺԴ (1065) **Ալփասլանն առաքեաց զՍուլիման[6] քուերորդին իւր յաչխարհն Հոռոմոց եւ Հայոց ընդ դէմ Յունաց: Յայսմ ամի Գագիկ դարձեալ ի Կոստանդնուպաւլսէ եսպան զմետրապաւլիտն Կիսարուոյ:**

ՇԺԶ (1067) **Կաթողիկոս եկաց Հայոց Տէր Գրիգորիս Վահրամն, որ կոչեցաւ Վկայասէր, ամս ԺԶ (16):**

ՇԺԹ (1070) **Դեաւժենն[7] եկն յարեւելս եւ էառ զՄանծկերտ ի թուրքաց եւ Ալփասլանն պատերազմեալ յաղթեաց նմա եւ կալաւ զնա եւ դարձեալ ազատեաց ուխտադրութեամբ[8]: Ոմանք զկոտորիլն Դիաւժենին ի թու. Հայոց ՇԺԸ (1069) են գրեալ[9]: Եւ ի ՇԺԹ (1070) Գողճախմատն[10] աւերեաց զՍեւ լեառն[11] եւ կոտորեաց զնա Գրիգոր Պիխան[12] ի դաշտն Հարունոյն[13] ի մամխենուտն[14] (85ա):**

ՇԻ (1071) **Եղեւ սով սաստիկ եւ կումիշտիկին[15] եկն յՈւռհա եւ կոտորեաց զՀոռոմոց զաւրսն:**

ՇԻԱ (1072) **զՊիխան յԱնդրիւնն խեղդեցին ծառայք իւր[16] (85բ):**

ՇԻԲ (1073) **Մեռաւ Ալփասլանն եւ եկաց սուլտան Խորասանա որդի նորա Մելէքշահն, այր քաղցր եւ իմաստուն:**

ՇԻԹ (1080) **Սուլիման էառ զԱնտիոք[17] (85բ):**

ՇԼԶ (1087) **Եկն սուլտանն Խորասանա Մելէքշահն եւ առ զԱնտիոք եւ զԿիլիկիա, եւ զՃիլառտոսն[18] տաճկցոյց, տալով նմա զՄարաշ: Ետ եւ զՀալպ Ախսնղոտին[19] եւ զՈւռհա՝ Բուզանին[20] եւ զԱնտաք՝ Էլիսանին եւ ինքն գնաց ի Խորասան[21] (86ա):**

ՇԽԱ (1092) **Մեռաւ սուլտանն Մելէքշահ եւ եկաց որդի նորա Պէքկիարուխն[22]. յաւուրս սորա պառակտեցաւ իշխանութիւն թուրքաց ի բազում մասունս, եւ ի գալ բասաճին[23], սա էր սուլտան ի Պարսս՝ թուրք գոլ ազգաւ:**

ՇԽԵ (1096) **Շարժեաց Աստուած զմեծ բասաճն Ֆռանգաց գալ ի Թափումն Երուսաղէմի[24]:**

ՇԽԶ (1097) **Բասաճն էառ զՆիկիա ի Սուլիման շահէն:**

ՇԽԸ (1098) **Բասաճն էառ զԱնտիոք եւ զՈւռհա:**

ՇԽԸ (1099) **Եղեւ Թափումն Երուսաղէմի եւ տուկն Գունդաւֆրէ[25] տիրեաց Երուսաղէմի:**

ՇԽԹ (1100) **Վախճանեցաւ Գունդաւֆրէ եւ պսակեցաւ առաջին թագաւոր Երուսաղէմի Պաղտին[26] եղբայր նորա, առաջին կոմսն Ուռհայու[27] (86բ):**

ՈՃԳ (1204) **(Կ)այսր եկաց ի Ֆռանկնոյն Կոստանդինուպաւլսոյ Պաղտինն[28] առաջին կացուցեալ զնա Գուլթնը տը Ֆլանտրն[29] եւ**

տուկն Վնէժու, որ առին զնա կացեալ ամս[30] (92ա):

ՈՂԱ (1242) Կլիմցիք արմտերն գողցան զՊռականա[31] ի թուրքէն:

ՈՂԴ (1244) Խորազմ(ց)իք մտան յերկիրն Երուսաղէմի եւ խանգրեցին զԱյհլցիք:

ՈՂԴ (1245) Հոռ(ո)մաց հեծելն սպարեցին[32] զՏարսուս եւ թագաւորն Հեթում ետ զՊռականա եւ արար հաշտութիւն[33]:

ՈՂԵ (1246) Թագաւորեաց Կիպրոսի Հեռի գէրն[34]:

ՈՂԶ (1247) Մսրցիք առին ի Ճռանգնոյն զՏապարի եւ զԱսխալան:

ՈՂԷ (1248) Լաւիզ ըռէ տը Ֆրանցն[35] եկն զաւրաւք ի Կիպրոս:

ՈՂԸ (1249) Ըռէ տը ֆրանցն էառ զԴամիաթ:

ՈՂԹ (1250) զԸռէ տ ֆրանցն կալան Մսրցիք եւ առեալ գին զՏամիաթն եւ ՃՌ (100 000) մարկ արծաթ ազատեցին զնա[36] (94ա):

Ջ (1251) Բրինձ եկաց Անտաքո Պեմունդ զերրորդն:

ՋԱ (1252) Ըռէ տը ֆրանցն չինեաց զՃաֆն եւ Ճուլիան Սայիտոյ տէրն էառ կին զՃիմի դուստր թագաւորին Հայոց Հեթմոյ:

ՋԳ (1254) Յայտնեցան Աղաճարիքն եւ Իսլամպակն[37]:

Ըռէ տը ֆրանցն դարձաւ իւր աշխարհն:

Վախճանեցաւ Քոտաթ[38] որդի ընդրուրին[39]:

Թէ (1258) Հուլայուն խանն էառ զԱլամուդ ի Հաշիշեցն եւ զՊաղտատ ի խալիփայէն[40]:

ՋԹ (1260) Ճուլիան Սայիտոյ տէրն ծախեց Դամփլուն զՍայիտէ եւ զՊիաֆատդն[41]:

Թուրքմանքն բռնեցին զՊերութայ տէրն:

Հուլայուն էառ զՀալպ եւ տիրեաց Շամպուն[42] եւ ի սոյն ամի Մսրցիք խանգրեցին զՔիթպաւղայն եւ սպանին զԽութուզ սուլտանն Մսրա եւ եկաց Պնտուխտարն[43] (94բ):

ՃԺ (1261) Պալիաւլաւղն էառ զԿոստանտինուպաւլիս ի Ճռանգնոյն[44]:

Պելիան Արսուֆին տէրն ծախեց զԱրսուֆն Ոսպեթլուն:

Վախճանեցաւ Թագուհին Կիպրոսի Բլաժանսն եւ եղեւ պայլ Կիպրոսի Ոյկ տը Լըզինայն[45]:

ՃԺԷ (1268) Պնդուխտար սուլտանն Մսրայ էառ զԱնտաք ի քրիստոնեից, որ է ի բասաճին առնելոյն մինչեւ աստ ՃԿՋ (166) ամ (95ա):

Ծանոթագրություններ

1. 1 թվականի դիմաց գրված է. «Յայսմ ամի եղեւ ծնունդն Յիսուսի Քրիստոսի Աստուածոյն մերոյ եւ մոգուցն գալն յերկրպագութիւն եւ ընծայիլն ի տաճարն եւ գնալն յԵգիպտոս» (թերթ 32ա), հմմտ. Աննեցի, էջ 52: Դրանից հետո այլ գրով եւ մուգ թանաքով հետագայի հավելում է արված. «Այն երեք թագաւորն որ եկին յերկրպագութիւն Տեառն են անօքն (իմա՝ անունքն, Կ. Մ.) այսոքիկ՝ Մէլքոն թ(ա)գ(ա)ւորն Պօրսից, երկրորդ թ(ա)գ(աւ)որն Հնդկաց՝ Գասպար, երրորդ թ(ա)գ(աւո)րն Արաբացոց՝ Բաղտասար» (Մատենադարան, ձեռ. թիվ 1898, թերթ 32ա):

2. «Սամուել Անեցու մի նորահայտ չարունակողի ժամանակագրական ցանկը» (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Ա, էջ 483-484):

3. Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 65-87:

4. Այս ժամանակագրությունն առաջին անգամ հրատարակել է Ա. Մաթեւոսյանը 1963 թ. (Ա. Մաթեւոսյան, Հեթում Ախտուց տիրոջ եւ վասիլ մարաջախտի ժամանակագրությունները, Պատմա-բանասիրական հանդես, 1963, № 4, էջ 183-201), 2007-ին վերահրատարակել է Լ. Տեր-Պետրոսյանը ավելի մանրամասն ծանոթագրություններով (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 525-553):

5. Քանի որ այս ձեռագրում Փրկչական եւ Հայոց թվականները նույնական են, չարունակության մեջ նշում ենք միայն Հայոց թվականը: Հայտնի բնակավայրերի եւ գործիչների չաղավաղված կամ քիչ փոխված անունները չենք ծանոթագրում:

6. Սուլեյման Ա, հետագայում Ռումի սելջուկյան սուլթան (1077-1086):

7. Բյուզանդական կայսր Ռոմանոս Դ Դիոգենեսը (1067-1071):

8. Այս եւ հաջորդ մի քանի տեղեկությունները փոքր տարբերություններով պահպանվել են Մատենադարանի թիվ 2965 ձեռագրում, որն, ի դեպ, նույնպես Ա. Տեր-Միքելյանի՝ Սամվել Անեցու ժամանակագրության հրատարակության համար օգտագործած մատյաններից է (ԺԹ օրինակը): Ժամանակագրական տվյալ միավորը թիվ 2965 ձեռագրում ավարտվում է՝ «ուխտադրութեամբ հարկին» բառերով (104ա):

9. Մասնավորապես այդ թվականն է հայտնում Անանուն եղեսացին (Անանուն Եղեսացի, Ժամանակագրություն, Թարգմանություն բնագրից, առաջաբան եւ ծանոթագրություններ Լ. Տեր-Պետրոսյանի, Երեւան, 1982, էջ 29-30):

10. Ձեռագրում գրված է «գողճախմատն»: Կարծում ենք, օտարա-

հունչ անվան աղավաղված ձեւ է: Հնարավոր է նաեւ, որ մի անուն է, որի սկզբում նշված է «Գող» մականունը, ինչպես որ այս նույն շրջանում հիշվում է հայ իշխան Գող Վասիլը: Իսկ չարունակությունը կարող է լինել Ահմատ անվանը մոտ հնչյունափոխված մի անուն:

11. Ամանոսի լեռնաշղթան Կիլիկիայի արեւելքում է, ուր այդ ժամանակ կային հայկական վանքեր եւ հայ բնակչություն:

12. 11-րդ դարի քաղկեդոնականություն ընդունած Շիրակացի հայ իշխան, որի անունը հայ պատմիչները չեն տալիս, այլ նշում են միայն նրա պաշտոնից ծագող մականունը: Մատթեոս Ուռհայեցին գրում է. «Եւ մի ոմն Հայոց քաջ զօրականացն... Պեխտ անուն, որ էր տուկ Անտիոքայ քաղաքին», մեկ այլ տեղ՝ «Եպիխտ իշխանն Հայոց, այր քաջ եւ պատերազմող ի Տանէն Շիրակայ» (Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, էջ 170, 230): Ուռհայեցու հրատարակիչ Հ. Բարթիկյանը ծանոթագրում է. «Պեխտը (Եպիխտ) անուն չէ, այլ հունարեն էպիխտես բառը, որ վերակացու, տեսուչ է նշանակում» (նույն տեղում, էջ 500): Վարդան Արեւելցին նրան կոչում է «Բեխդն, իշխանն Շիրակունի» (Վարդան Արեւելցի, էջ 109): Փաստորեն, ներկա բնագրում առաջին անգամ հանդիպում ենք իշխանի ամբողջական անվանն ու մականվանը՝ **Գրիգոր Պեխտ:** Մ. Զամչյանն այս իշխանին նույնացրել է Անտիոքի դուքս Խաչատուրի հետ, մի տեսակետ, որը բավականին տարածվել է (Մ. Զամչյանց, Հայոց Պատմություն, հ. Բ, Երեւան, 1984, էջ 972, տե՛ս նաեւ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երեւան, 1944, էջ 468, Ե. Քասունի, ԺԱ դարու Անտիոքի հայ կառավարիչներ Պեխտ-Խաչատուր եւ Վասակ Պահլավունի, «Հայկազեան հայագիտական հանդէս», 1971, հ. Բ, էջ 123-133): Հ. Բարթիկյանը վկայակոչելով Ժ. Լորանի մի հոդվածը (Խաչատուր իշխան Անտիոքի, «Հանդէս ամսօրեայ», 1930, էջ 303-310) մերժում է երկու գործիչների նույնացումը (Հովհաննես Սկիլիցես, Թարգմանություն բնագրից, առաջաբան եւ ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Երեւան, 1979, էջ 376):

13. Հարունի, Հարունիե բերդավանը գտնվում է Սարվանդիքարից հյուսիս, Մարաշից հարավ (Մարի-Աննա Շեվալիե, Կիլիկյան Հայաստանի եւ հոգեւորասպետական միաբանությունների փոխհարաբերությունների պատմությունից, Երեւան, 2007, էջ 25, 33, 35, 50), այստեղ պետք է եղած լինի նաեւ համանուն դաշտը: Այս տեղեկությունը համեմատելի է Հովհաննես Սկիլիցեսի չարունակողի հայտնած մի տվյալի հետ, ըստ որի նույն 1070 թ. թուրքական ջոկատները Իկոնիան ավերելուց հետո Սելեվկիայի լեռների կողմից ներթափանցել են Կիլիկիա եւ այստեղից նահանջել Հալեպ: Սակայն, մինչ այդ, նրանց ջարդ են տվել հայերը (Հովհաննես Սկիլիցես, էջ 231-232):

14. Հեղինակը կոնկրետացրել է կռվի տեղը՝ «ի մամխենուան», որ

հավանաբար նշանակում է մամխենի (փշոտ վայրի սալորենի) ծառերով տեղանք, ինչպես, օրինակ, եղեգնուտ: Այս ժամանակագրական միավորը Մատենադարանի թիվ 2965 ձեռագրում չնչին տարբերություններ ունի՝ «Ի ՇԻԹ (1070) թուին Գողճախմատն... ի մամխէնուտն» (104ա):

15. Գիմիշտեգին իբն Դանիշմանդ (Իբն Ալ-Ասիր, էջ 231): Մատթեոս Ուռհայեցու մոտ՝ «Գոմէշտիկին» (Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, էջ 200-205): Տեղեկության ընդարձակ տարբերակը տե՛ս Անեցի, էջ 113-114:

16. Մատթեոս Ուռհայեցին ավելի հանգամանորեն, իսկ Վարդան Արեւելցին՝ համառոտ, պատմում են իշխանի սպանության՝ խեղդամահ արվելու մասին, որ տեղի է ունեցել նրա հոռոմ (հույն, քաղկեդոնական) խոստովանահոր ձեռքով «ի բերդն իւր՝ յԱնդրիօնն» (Վարդան Արեւելցի, էջ 110): Անդրիուն բերդը գտնվում է Մարաշի մոտ (Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երեւան, 1986, էջ 260): Մատթեոս Ուռհայեցին այդ սպանության պատճառ է համարում այն, որ Պիխտը առերես էր դարձել քաղկեդոնական, բայց ծպտյալ հայադավան էր (Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, էջ 230):

17. Համմտ. Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 74:

18. Փիլարտոս Վարաժնունի, Ասորիքում եւ Կիլիկիայում ստեղծված հայկական իշխանության հիմնադիր (1070-ական թթ. - 1086 թ.):

19. Մատենադարանի թիվ 2965 ձեռագրում՝ «Ախսնդուրին» (105ա):

20. Հիշվում է նաեւ «Պուզան» ձեւով, Ուռհայի ամիրա (1087-1094):

21. Համմտ. Անեցի, էջ 118: «Եկն ի Խորասանայ Մելիքշահ Սուլտանն եւ էառ զԱնտաք՝ զՖիլշատոսն տաճկացոյց յիւր կամաց եւ ետ նմա զՄարաշ եւ կոխեալ երիվարաւն ի ծովն՝ եւ ետ չուքը Աստուծոյ որ տիրեաց խաղաղութեամբ ի ծովէն Պարսից մինչեւ ի ծովն արեւմտից. եւ ձուկն խորովեալ եկեր եւ զթուրն կապեալ ի ծովն ընկեց՝ եւ դարձաւ յԱնտիոք եւ ետ զԱնտիոք Էլխանին, եւ զՀալապաղան Կոյրին եւ զՈւռհայ Բուղանին եւ ինքն ի Խորասան գնաց»:

22. Բարկիյարուք (1093-1104):

23 .«Բասաճ» նշանակում է «անցում» (լատ.), կիրառվել է խորհրդանշելով խաչակրաց արշավանքը:

24. Այս եւ հաջորդ երեք վկայությունները՝ Համմտ. Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 74:

25. Գոդֆրուա Բուլոյնացի, Երուսաղեմի խաչակրաց պետության հիմնադիր (1199-1100):

26. Բալդուին՝ Եդեսիայի կոմս (1198-1100), Երուսաղեմի թագավոր (1100-1118):

27. Հմմտ. Անեցի, էջ 120:

28. Կոստանդնուպոլսի առաջին լատին կայսր Բալդուին Ա (1204-1206):

29. Այսինքն՝ Ֆլանդրիայի կոմսը:

30. Հմմտ. Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 78, Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 539:

31. Բերդ Կիլիկիայում, Սելեւկիայի մոտ:

32. «Սղարեցին», այսինքն՝ պաշարեցին:

33. Դեպքն ամբողջական է ներկայացնում Հեթում Նղիրցին (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 540):

34. Կիպրոսի թագավոր Հենրի Ա (1218-1253):

35. Լյուդովիկոս Թ-ի (1226-1270) մասին է: «Ըռէ տը Ֆրանցն» (roi de France) Ֆրանսիայի թագավոր:

36. Հմմտ. Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 81, Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 540:

37. Հմմտ. Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 541:

38. Կոնրադ Դ (1228–1254), գերմանական կայսր Ֆրիդրիխ Բ-ի որդին:

39. «Ընբրուբ», մեկ այլ տեղում՝ «ըմպրար»՝ «իմպերատոր» բառն է (Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 91):

40. Հմմտ. Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 541:

41. Հմմտ. Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 82:

42. Հեթում Նղիրցու մոտ՝ «Շամբուն», նկատի է առնված Դամասկոսը (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 541):

43. Եգիպտոսի սուլթան Բայբարս ալ-Բունդուկդարի (1260-1277):

44. Բյուզանդական կայսր Միքայել Ը Պալեոլոգոս (1242-1258): Հմմտ. Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 541:

45. Հուգո դը Լուսինյան (մահ. 1267 թ.):

դ. ԱՆԱՆՈՒՆ, 1400 թ.
Մատենադարան, ձեռ. թիվ 3613

Սամվել Անեցու հնագույն ձեռագրերից մեկում՝ 1177-ին Հռոմոսում ընդօրինակված մատյանում հիմնական հավելումները կատարած անանուն գրիչն օգտագործել է ավելի բաց գույնի թանաք, որն իսկույն տարբերվում է բուն գրչի՝ Մխիթար Անեցու ձեռագրից: Հավելումների հեղինակը նույն թանաքով ու գրչությամբ մատյանի վերջում թողել է մի տեղեկություն, որը վկայում է նրա ապրած ժամանակի մասին. «...եւ այժմ թվական Փրկչին է Ռ եւ Ն (1400) եւ է նահանջ... եւ թվականն Հայոց է Պ եւ ԽԹ (1400)» (71 բ)[1]:

Այս գրչին կարելի է պայմանական «լատինասեր» անվանել, քանի որ դա անթաքույց երեւում է նրա կատարած ընդմիջարկություններից: Նա չի բավարարվել հավելումներով, այլեւ երբեմն իմաստային աղավաղման հանգեցնող միջամտություններ է կատարել: 633 թ. Կարինի ժողովին վերաբերող հատվածում նա ջնջել է Սամվել Անեցու բնագրի բառերից մի քանիսը եւ նորերը գրել, որից հետո տեղեկությունն իմաստափոխվել է (ավելացված բառերն ու տառերը դնում ենք փակագծերում):

Սամվել Անեցի	Անանուն
«Հերակլի ի ժողով արարեալ ի Կարնոյ քաղաքի, կոչէ եւ զեզր ի Հայոց, որ տպիտաբար հաւանեալ Քաղկեդոնի, վասն զի ոչ տարաւ զՅոհան Մայրավանեցի, որ Աստուածային Գրոց բանիբուն ճանաչիւր...» (Անեցի, էջ 79-80, հմմտ. Մատենադարան, ձեռ. թիվ 5619, 76ա):	«Հերակլի ի ժողով արարեալ ի Կարնոյ քաղաքի, կոչէ եւ զեզր ի Հայոց, որ (եւ) հաւանեալ Քաղկեդոնի (ժողովոյն, բազում եպիսկոպոսօք եւ իշխանօք նզովեցին) զՅովհան Մայրա(գոմ)եցի, որ (հերետիկոս) ճանաչիւր...»[2] (Մատենադարան, ձեռ. թիվ 3613, 45ա):

Սամվել Անեցու բնագրի մեկ այլ հատվածում՝ «Աստանաւր ի բաց կացին վիրք միաբանութենէ Հայոց յաւանեալք աղանդոյն Քաղկեդոնի...»[3], նույնն տեսնում ենք այս դրչի միջամտություն՝ «...ստա-

նեալք (ժողով)ոյն Քաղկեդոնի...» (44բ):

Նշված փոփոխությունները, ինչպես նաեւ ժամանակագրության մեջ մուծված ստորեւ հրապարակվող որոշ տեղեկություններ վկայում են գրչի դավանական նախընտրությունների մասին, սակայն դրանք բավարար չեն նրան քաղկեդոնական կամ միարար անվանելու համար:

Ձեռագրի բուն գրչի՝ Մխիթար Անեցու ընդօրինակած տեքստի վերջին էջում պահպանվել է նաեւ Հայոց կաթողիկոսների, այլ գրչի պատկանող մի փոքր ցանկ, որը նույնպես հրապարակում ենք ստորեւ:

Յամի տեառն ԼԴ (34) Պետրոս առաքեալ յետ գալստեան Սուրբ Հոգւոյն նստաւ եպիսկոպոս յԵրուսաղէմ զամս Դ (4) [4] ***(28բ):***

Փրկչական ԽԶ (46) Պետրոս, իշխանն առաքելոց, նստի յաթոռ քահանապետութեան ի Հռոմ զամս ԻԵ (25), յամիսս Է (7), աւուրս Ը (8) (29ա):

Փրկչական ՅԺԶ (316) Կոստանդիանոս կայսրն դարձաւ ի Քրիստոս եւ մկրտեցաւ ի Սեղբեստրոսէ [5] *(36ա):*

Սուրբն Ռստագէս՝ որդի սուրբ Գրիգորի Լուսաւորչի, սպանաւ յիշխանէ ումեմնէ Հայոց վասն յանդիմանելոյ ի նմանէ (36բ) [6]***:***

Փրկչական ՅԽԷ (347) Տէր Յուսիկ եւ Տէր Գրիգորիս թոռունք սրբոյն Գրիգորի Լուսաւորչի ամս Զ (6): Զսա բրածեծ արարեալ արքայն Տիրան յաղագս ոչ թողլոյ մուծանել զպատկերս կռոց յեկեղեցի եւ վախճանի ի ձեռաց նորա: Իսկ սուրբն Գրիգորիս առաքեալ կաթողիկոսն կողմանն Աղուանից եւ անդ կատարի նահատակութեամբ (37ա):

*Կաթողիկոս Ներսես Մեծի (353-373) մասին. «**Սա վախճանի ի ձեռանէ արքային Պապա յաղագս յանդիմանելոյ ի նմանէ, դեղ մահոյ արբուցեալ նմա: Եւ նա լի Հոգւով Սրբով բազում ինչ ի հանդերձելոցն մարգարէացաւ վասն կործանման քահանապետութեան եւ թագաւորութեան ազգիս Հայոց եւ վասն գալստեան Նեռինն եւ եւս՝ զոր թէ կամիս գտցէս յիւրումն ճա(ռիս)» (37բ):*

Փրկչական ՅՂԹ (399) Երանելին Ճէրօնիմոս զամենայն սուրբ գիրս թարգմանէ յեբրաեցոց լեզվէ ի լատինն [7] *(38ա):*

Կաթողիկոս Սահակ Պարթեւի (387-436) աթոռակալության մասին

*նշող էջի ձախակողմյան ողջ լուսանցքով. «**Տէր սուրբ Սահակ Սուրբ-նեան, Պալհաւ, որդի Մեծին Ներսեսի, թոռին Յուսկանն, թոռին սրբոյն Գրիգորի, ամս ՃԱ (51): Առ սա եկեալ նախարարացն Հայոց խնդրէին միաբանել ի չարախօսութիւն թագաւորին իւրեանց Արտաշիրի առ Պարսից արքայն Շապուհ: Որ ոչ միաբանեալ նոցա, ընդհանուն յաթոռոյն զկաթողիկոսն եւ զթագաւորն եւ զոմն Սորմակ բարդէշ, փառամոլ եւ սուտանուն քահանայ կացուցանեն ի տեղի իւր ի նոյն Պարսից արքայէն հաստատեալ*** [8]***:***

Իսկ յայնմ ժամանակի կողմ Ասիոյ զոր ոմանք սովորեալ տօնէն զտօն ծննդեանն եւ զմկրտութեան ի միում աւուր՝ յունվար Զ (6): Միաբանեալք ընդ միմեանս ամենայն տիեզերք ըստ Հռոմա սուրբ եկեղեցոյն սահմանեցին տօնել զտօն ծննդեանն Քրիստոսի ի դեկտեմբեր ամսոյ ի ԻԵ (25) եւ զտօն մկրտութեան ի յունվար ի Զ (6): Ի ժամանակս Յոհաննու Ոսկեբերանին, գրեն ամենայն եկեղեցիս այսպես եւ առ սուրբն Սահակ՝ այսպես կատարել եւ գնալ ի համաձայնութիւն կաթոլիկէ եկեղեցոյն: Իսկ նա աքսորեալ գոլով յԱրտաւազ գաւառի, անկարանայր զիրն» [9] ***(38բ):***

Ժամանակագրության 430-ական թվականների մոտ եղած ազատ տեղում ավելացված է. «Ի Յիպօնիոյ քաղաքն Աֆրիքա տիեզերալոյս մեծ վարդապետն ընդհանուր եկեղեցոյ զսուրբն Օգոստինոս ծաղկէր անպատմելի գիտութեամբ եւ վարիւք: Յետ ՀԶ (76) ամի իւրոյ հասակին եւ ԻԹ (29) ամի իւրոյ եպիսկոպոսութեան յանգեաւ ի Քրիստոս» [10] *(39ա):*

Կաթողիկոս Ներսես Բ Բագրեւանդցու (548-557) վերաբերյալ Սամվել Անեցու գրածին՝ «ՇԻԶ (526) Տէր Ներսէս ամս Թ (9)» [11]*, Անանունն ավելացրել է կաթողիկոսի մականունը՝ «Աչտարակեցի»* [12] *(գրված է անվան վերեւում), ապա՝ «Սա արար ժողովք ի Դվին հրամանաւ արքային Պարսից Կաւ(ատ), վասն բաժանման ի Յունաց եւ զտօն ծննդեանն եւ զմկրտութեան ի միում աւուր առնել սահմանեաց: Եւ յաւել զխաչեցարն յերէքսրբէանն: Եւ արգել ոչ գնալ յԵրուսաղէմ»* [13] *(42ա):*

Փրկչական ՇՄԴ (554) Յուստիանոսս այս չինեաց զՍուրբ Սոֆիա եւ այլ բազում եկեղեցիք եւ զարմանալի չինուածք ի Կոստանդինոպոլիս [14] *(43ա):*

Մուհամմեդին նվիրված հատվածի ստորին լուսանցքում գրված է.

«Պիղծ Մահմէտս այս խ (40) ամաց էր, յորժամ սկսաւ զսուտ օրէնքն իւր, եւ ԻԳ (23) ամ բռնակալեաց, ԿԳ (63) ամաց վճարեաց զգարշելի կեանս իւր եւ էջ ի դժոխս ներքինս» (46բ):

Սրանից վեր՝ ուր Սամվել Անեցին նշում է Մուհամեդի հալորդների մասին՝ «...Ապուբաքար, Աւթման եւ Ամր ամս ՀԸ (78)»[15] մի երրորդ գրիչ[16] հետեւյալ հավելումն է արել. **«Այլ եւ չորս ազգք են տաճիկք. Շաֆէհղի, Հանիֆի, Համբալի եւ Մալէքի»**[17]:

Կաթողիկոս Հովհաննես Օձնեցու (717-728) աթոռակալության մասին Սամվել Անեցու հայտնած տեղեկությունից հետո ավելացված է. **«Սա արար զժողով ի Մանազկերտ հրամանաւ ամիրապէտին տաճկաց Օմարա եւ ձեռնտուութեամբ խալիֆային, որ ի Բաղտատ եւ կային անտ Զ (6) եպիսկոպոսք յԱսորոց եւ եղին կանոնս միաբանութեամբ խոստովանել զՔրիստոս մի բնութիւն, մի կամք եւ մի ներգործութիւն եւ ոչ արկանել ջուր ի սուրբ իւղոյ զպատարագին եւ ի յաղուհացն զաւաք չաբաթ օրն լուծանել զպահքն: Եւ յաւաք հինգշաբթւոջն ոչ հաղորդել ժողովրդեանն ասելով նուիրումն է խորհրդոյն, զի Տէրն ոչ է խաչեալ եւ ոչ յարուցեալ, եւ զձուկն եւ զձեթ, զգինի եւ զթան, զպանիր եւ զձու միապես կարգեց»** (48բ):

Հայոց ՃՀԳ (724) **Որոշեցին զՀան Տիկորեցի**[18] (49ա):

Հայոց ՄԻ (771) **Կար ի ժմեռն ոչխարն Ա (1) դրամ, եղն՝ Ե (5)**[19] (50ա):

Հայոց ՄԽԵ (796), Սահակ եւ Հովսեփ եղբայրների նահատակության մասին վկայությունը, որ կատարվել է «ի Կարնոյ քաղաքի», ծանոթագրված է՝ «որ է Արզրումն» (51ա):

Հայոց ՆՋԼ (1038) **Շինուած Հոռոմոսի վանացն վերի Սուրբ Յովհաննէսի, ի թագաւորէն Յովհաննիսէ կատարեցաւ**[20] (60բ):

Կաթողիկոս Գրիգոր Բ Վկայասերի (1066-1105) աթոռակալությանը վերաբերող հատվածում Անանունն ավելացրել է. **«Տէր Գրիգորիս որդի Գրիգորի Մագէստրոսի թողեալ զհայրենի պատիւն հետեւեցաւ կրօնաւորութեան եւ բռնադատեալ նստուցաւ յաթոռ հայրապետութեան եւ վկայասէր անուանէցաւ, գնաց ի Կոստանդինօպոլիս եւ բազում ճառս սրբոց թարգմանեաց ի Յունաց ի Հայս»**[21] (62բ):

Ժամանակագրության վերջին էջի ձախ լուսանցքում, մեկական տողով նշված են Ներսես Շնորհալուն հաջորդող կաթողիկոսներն ու նրանց աթոռակալության տարիների թիվը (Գրիգոր Դ Տղան եւ Գրիգոր Ե Քարավեժը նույնացվել են):

Ի Տէր Նէրսէսի փոխման յետոյ Տէր Գրիգորիս Տղայն[22] **ամս Ա (1) - Ա (1),**

Տէր Գրիգոր Ապիրատն[23] **է** (7),

Տէր Յոհաննէս Մէծաբարոյ[24] **ամս ԺԸ** (18),

Տէր Կոստանտին[25] **ԽԸ** (48),

Տէր Յակոբ[26] **ամս ԺԹ** (19),

Տէր Կոստանտն Պրունդործին որդին[27] **ամս Գ** (3),

Տէր Ստէփանոս Հռոմայեցին[28]**, որ գերեցաւ ի Կլայեն եւ մեռ(աւ), ամս Գ** (3),

Տէր Գրիգոր Թուրքերիցանց[29]**, ամս:ԺԴ** (14): **Ե** (5)[30]:

Կաթողիկոսք ամեն ՀԲ (72), **թվին ԷՃԽԲին** (1293)[31] (70բ):

Ծանոթագրություններ

1. Այս հատվածը հրատարակվել է Մանր ժամանակագրություններում, սակայն թվականը սխալ է. «Եւ այժմ թվական Փրկչին է Ռ եւ Ն եւ Է (1407), նահանջ» (Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 513): 1400 թվականը նահանջ տարի է եղել: Նշված տեղեկությունից հետո գրիչն ընթերցողին պարզաբանում է Հայոց թվականի գտնելու եղանակը. «Կալ զթվական Փրկչին եւ ՇԾԱ (551) ի բաց, երբ որ մնա՝ թվական է Հայոց» (Մատենադարան, ձեռ. թիվ 3613, էջ 71բ):

2. Հետագայում մեկ այլ գրիչ «Հերետիկոս» բառի վրայից մուգ թանաքով գրել է «ուղղափառ»:

3. Մատենադարան, ձեռ. 5619, էջ 75 բ, Անեցի, էջ 79:

4. Այս հավելումից ավելի առաջ հեղինակը երկու փոքրիկ ավելացում ունի ժամանակագրության առաջին մասում (մինչեւ աղյուսակները). «...ի Սառայէ լինի Սահակ՝ ուստի ազգն Հրէից, եւ ի Քեսուբայն լինի (Մադիամ, ուստի) ազգն Պարթեւաց» (8բ, համմտ. Անեցի, էջ 17, Մադիամի անունը՝ Ծննդ. Իե, 2): «Պաղոմեոս Փիլադելփոս ամս ԼՀ: Սայ զՀրէից գիրսն ի Յոյն լեզու եւ թարգմանել (Հ (70) թարգմանչօքն)» (16ա, համմտ. Անեցի, էջ 34-35): Իսկ աղյուսակների սկզբում մի քանի հավելում կատարել է ավետարանական պատմությունից (27ա, 27բ, 28ա):

5. Կոստանդին Մեծի (306-337) Հռոմի պապ Սեղբեստրոսի (314-335)

ձեռքով մկրտված լինելու ավանդությունը ծագել է 6-րդ դարում:

6. Սամվել Անեցին Գրիգոր Լուսավորչի որդու՝ Արիստակեսի մահվան մասին առանձին չի նշում: Հրատարակության մեջ այլ հավելում է (Անեցի, էջ 65):

7. Վերաբերում է Հերոնիմոս Ստրիդոնացուն (տե՛ս Հ. Քյոսեյան, Եկեղեցու հայրեր, վարդապետներ, 4-8-րդ դդ., Երեւան, 2007, էջ 275-277):

8. Համմտ. Խորենացի, էջ 347: Պարսից Թագավորն այդ ժամանակ ոչ թե Շապուհն էր, այլ Վռամ Ե Գոռը (421-439): Սուրմակի (բնագրում՝ Սորմակ) անվանը հաջորդող «բարդէչ» բառն անհասկանալի է:

9. Պարսկաստանում Սահակ Պարթեւի աքսորավայրի մասին այլ տեղեկություն հայտնի չէ (տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 349): «Արտավազը» Արտազ գավառի անուններից մեկն է: Ինչ վերաբերում է կաթողիկոսին գրված նամակի եւ նրա աքսորված լինելու պատճառով այն չստանալու մասին պատմությանը, ապա այն հավանաբար հորինվել է միարարական միջավայրում:

10. Վերաբերում է սուրբ Օգոստինոս Հիպպոնացուն (354-430), տե՛ս Հ. Քյոսեյան, նշվ. աշխ., էջ 280-281:

11. Անեցի, էջ 73:

12. Ներսեսը ծնունդով Բագրեւանդի կամ Ալաշկերտի Աշտարակք գյուղից էր (Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 621):

13. Սկզբնաղբյուրների քննությամբ Դվինի այս ժողովին հանգամանորեն անդրադարձել է Մ. Օրմանյանը, բայց նրա վկայակոչած տեղեկությունների մեջ խոսք չկա Երուսաղեմ գնալու արգելքի հաստատման մասին (Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 633-641): Սամվել Անեցու ժամանակագրության հրատարակության համար օգտագործված «է» օրինակն ունի Դվինի ժողովի մասին հավելում՝ քաղված Ստեփանոս Տարոնեցի Ասողիկից (Անեցի, էջ 73, Ստեփանոսի Տարօնեցւոյ Պատմութիւն, էջ 82-83):

14. Վերաբերում է բյուզանդական կայսր Հուստինիանոս Ա-ին (527-565), որը Ս. Սոֆիայի տաճարը կառուցել է 532-537 թթ.:

15. Անեցի, էջ 82, համմտ. Մատենադարան, ձեռ. 5619, թերթ 78ա:

16. Գրչությունը հստակ տարբերվում է Անանունի գրից, հատկապես ինքնատիպ է «ք» տառը:

17. Իսլամի կրոնաիրավական ուղղություններ են:

18. Հոհան Տեկորեցու մասին տեղեկությունները սուղ եւ հակասական են (Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 984): Նրան հիշատակում է նաեւ Հովհաննես Սարկավագը. «...ի քաղաքի ժողովն, ի Սուրբ Կաթողիկէ... յորում որոշեցին զՅոհան Տիկորեցի, եւ էր թվականն Հայոց ՃՀԳ (724)» (Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 23, 147):

19. Այս տեղեկությունը չի կապվում ժամանակագրության սույն

հատվածի նախորդ եւ հաջորդ վկայությունների հետ եւ անհասկանալի է:

20. Հոռոմոսի Ս. Հովհաննեսի կառուցման թվականը միանգամայն ճիշտ է (նույն թվականն է չինարարական արձանագրության մեջ): Ուշագրավ է «վերի Սուրբ Յովհաննէս» տեղագրական ձեւակերպումը, որն առաջին անգամ է հանդիպում: Թագավորաշեն Ս. Հովհաննեսն իրոք ավելի բարձր դիրքում է գտնվում, քան վանքի հնագույն մյուս եկեղեցիները:

21. Մեզ հայտնի չէ այլ աղբյուր, ուր նշված լինի, թե Գրիգոր Մամիսթոսի որդի Վահրամը (Գրիգոր Բ Վկայասեր) կաթողիկոսական աթոռին է նստել ոչ իր կամքով՝ «բռնադատեալ»:

22. Կաթողիկոս Գրիգոր Ե Քարավեժին (1193-1194) աղբյուրները երբեմն «Տղա» մականունն են տալիս նկատի ունենալով երիտասարդ տարիքը (օրինակ, Մխիթար Անեցի, էջ 69):

23. Գրիգոր Զ Ապիրատ (1194-1203):

24. Հովհաննես Զ Սեցի (1203-1221):

25. Կոստանդին Ա Բարձրաբերդցի (1221-1267):

26. Հակոբ Ա Կլայեցի (1268-1286)

27. Այս փոքրիկ տեղեկությունը ճշգրտում է կաթողիկոս Կոստանդին Բ Կատուկեցու (1286-1289) մականվան հարցը: Նրան տված «Պրունգործ» մականունը բավական մեծ տարածում է գտել, որով հիշվում է բազմիցս (Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 105, 107, հ. 2, էջ 148, 149, 347 եւ այլն): Մ. Օրմանյանը փորձել է պարզել մականվան ծագումը («Կոստանդին Կատուկեցի՝ Պրօնագործ (ՍՄԲ. 125) կամ Պրօնագործ (ՍԱՄ. 152) մականունով ալ կը յիշուի, որ կը նշանակէ պրօն կամ այծի բուրդ գործող արհեստաւոր մը, ինչ որ կրնայ՝ կամ Կոստանդինի հօրը արհեստը եղած ըլլալ, կամ թէ նոյնիսկ Կոստանդինի վանական անձնաւորութեան մէջ՝ ձեռագործ զբաղումը ենթադրուիլ»), սակայն հստակ փաստ չունենալով, ամփոփել է՝ «Պատմութիւնը մականունին ծագումը չտար» (Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001, էջ 1986):

Ներկա ցանկի կազմողը Կոստանդին Կատուկեցուն անվանելով «Պրունգործի որդի», միանշանակ պարզում է կաթողիկոսի մականվան ծագումը:

28. Ստեփանոս Դ Հռոմկլայեցի (1290-1293):

29. Կաթողիկոս Գրիգոր Անավարզեցու (1293-1307) մականունը հայտնի է «Տուրքերիցանց» ձեւով (Անեցի, էջ 153): Մ. Օրմանյանն այս մականունն անբացատրելի է համարում եւ գրում է, թե Անավարզեցուն «տրուած է Տուրքերիցանց մականունը (ՀԵԹ. 85), որուն ոչ բացատրութիւնը ունինք եւ ոչ մեկնութեամբ կը գտնենք. զի եթէ երիցու տուրք կամ քահանայի որդի իմանանք, անմեկնելի կը մնայ երիցանց յոգնակի

կիլրաուքիւնը» (Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, էջ 2033): 13-րդ դ. վերջին եւ 14-րդ դ. սկզբին Կիլիկիայում աշխատած Ստեփանոս Գոյնեբերիացնց նշանավոր գրչի անունը մեկնաբանվում է «Գոյներ երեցի որդի»: Տուրք անձնանունից առաջացած «Տուրքերիցանց» մականունը նույն իմաստն ունի եւ Անավարզեցու՝ Տուրք երեցի որդին լինելն է մատնանշում: Իր լատինասեր ընթացքի համար այս կաթողիկոսին մականվանել են նաեւ «Ջրող» (պատարագի խորհրդական բաժակին ջուր խառնել սկսելու համար), «Հռոմ»: Հիշենք նաեւ Անավարզեցու՝ Հռոմին կատարած դավանաբանական զիջումների եւ Սյունյաց աթոռից նույնը պահանջող նամակի պատճառով, Ստեփանոս Օրբելյանի՝ կաթողիկոսին ուղղված աննախադեպ խիստ տոնով շարադրված թուղթը: Զի բացառվում, որ Սամվել Անեցու ձեռագրում հավելում կատարողը նկատի ունենալով Անավարզեցու գործունեության այս կողմերը, կաթողիկոսի Տուրքերիցանց մականունը ձեւափոխել է Թուրքերիցանցի:

30. Գրիչը նկատի ունի 14 տարի, 5 ամիս: Նման մանրամասնությամբ է նշել, քանի որ իր ժամանակի կաթողիկոսն է եղել:

31. Հեղինակը հասել է մինչեւ Գրիգոր Է Անավարզեցուն (1293-1307) եւ ցանկը եզրափակել «թվին ԷշՃ-ին (1293)» բառերով, սակայն դա գրության թվականը չէ: Քանի որ հիշվում են Գրիգոր Անավարզեցու աթոռակալության 14 տարիներն ու հինգ ամիսը, ենթադրելի է, որ գրառումն արվել է (հայրապետների այս ցանկը կազմվել է) կաթողիկոսի մահից հետո (1307 թ., հունվար), մինչեւ հաջորդ կաթողիկոս Կոստանդին Գ կեսարացու ընտրությունը (1307 թ., մարտի 23): Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, էջ 2084, 2107:

ե. ՆԱԹԱՆԱՅԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱՎՈՒՑԹԱՌԵՑԻ (14-րդ դ.) Մատենադարան, ձեռ. թիվ 3681

Ջեռագիրն ընդօրինակել է Հայրապետ կրոնավորը Արճեշի գավառի Ուռընկար վանքում 1315 թ.[1]: Այս փոքրածավալ մատյանը Սամվել Անեցու ժամանակագրության՝ Մատենադարանում պահվող ամենաարժեքավոր ձեռագրերից է[2], որի մեջ տեղ գտած, բուն գրչությունից տարբերվող գրով հավելումները ուշագրավ տեղեկություններ են պարունակում Գառնիի, Հավուց թառ վանքի պատմության եւ այդ համատեքստում Հասանյան (Ապիրատյան) իշխանատոհմի վերաբերյալ[3]:

Հավուց թառի պատմությանն անդրադարձած Գարեգին Հովսեփյանը հիշատակում է ժամանակին Սեբաստիայի Ս. Նշան եկեղեցում գտնված 13-րդ դարի մի ձեռագիր, որն ինչ-որ ժամանակ պահվել է Հավուց թառում: Ջեռագրի անթվական հիշատակարաններից մեկում նշվում է. «Յիշեցէք ի սուրբ եւ ի մաքրափայլ յաղաւթս ձեր զիս զմեղապարտ զնուաստ եւ զհողոյ հաւասար Նաթանայէլ եպիսկոպոս Հայոց թառոյ...»[4]: Հենց նա է Մատենադարանի թիվ 3681 ձեռագրի ստացողը, որը հիշատակարանում գրում է, որ 1343 թվականին վեց ամիս բնակվել է իր հոգեւոր եղբայր Ամիրզայի մոտ, Մաղասբերդում: Իր բարերար Ամիրզային Նաթանայել եպիսկոպոսը հիշատակում է նաեւ այլ հիշատակագրություններում:

Հավանաբար ձեռագիրը Նաթանայելի ձեռքն է անցել հենց Մաղասբերդում: Դա երեւում է ժամանակագրությանը հաջորդող հատվածում պահպանված, դարձյալ Մաղասբերդի անունը պարունակող հիշատակագրությունից: Հարկ է նշել, որ 14-րդ դարի 40-ական թվականներին Անին տակավին պատկանում էր մոնղոլների գերիշխանությունն ընդունած Զաքարյաններին[5]: Սույն ձեռագրի հիշատակագրություններից պարզվում է, որ վերջիններիս ձեռքին էր նաեւ քաղաքի հետ սերտ կապ ունեցող Մաղասբերդը:

Հավուց թառի Նաթանայել եպիսկոպոսը 1343 թ. հավանաբար հալածանքների պատճառով ապաստանել է Մաղասբերդում: Այս մասին նա գրում է բերդում վեց ամիս մնալուց հետո եւ պատահական չէ, որ հիշատակարանի առաջին բառը ամսանվան հիշատակությունն է՝

«սահմի»: Սա նաեւ ենթագրել է տալիս, որ նա հենց այդ ժամանակ է ձեռք բերել մատյանը եւ հիշատակագրել իր հետ կատարվածը: Սամվել Անեցու ժամանակագրության մեջ հավելումները նա հավանորեն կատարել է Հավուց թառ վերադառնալուց հետո, դատելով դրանցում եղած որոշ արտահայտություններից («յառ որ մերն կայ», «ի Հայոց թառոյ, ի յաստ»):

Սամվել Անեցու ժամանակագրության ընդօրինակությունը Նաթանայել եպիսկոպոսի ձեռքն է հասել արդեն բավական վնասված (հավանաբար ժամանակին վնասվել է ջրի ազդեցությունից): Թերևս այդ է պատճառը, որ Նաթանայելը որոշ էջերում Հայրապետ գրչի բաց թանաքով գրած տողերի կամ առանձին բառերի վրայից անցել է իր գործածած մուգ թանաքով[6], վնասված 81-րդ թերթը փոխարինել է նորով ու արտագրել տեքստը[7]: Կարծում ենք, նրա միջամտությամբ է փոխվել նաեւ ժամանակագրության վերնագրի բառերից մեկը՝ «գրոցը» դարձել է «հնոց» («Սամուելի քահանայի հաւաքմունք ի հնոց պատմագրաց...», թերթ 2ա):

Հետաքրքրական են ձեռագրի ստորին լուսանցքներում Նաթանայելի գրած, ցավոք վատ պահպանված, մի քանի հիշատակագրությունները, որոնցում երեք անգամ հիշվում է Զաքարյան տոհմի քիչ հայտնի վերջին ներկայացուցիչներից մեկը՝ Շրվանշահը, իսկ մեկ անգամ՝ նրա հանրահայտ եղբայր Շահնշահ Գ-ը:

Այս արժեքավոր ձեռագրի հիշատակարաններից ոչ մեկը տեղ չի գտել հիշատակարանների հրատարակված ժողովածուներում, ուստի նախ ներկայացնում ենք հիշատակարանները[8] (Ամիրզային եւ Շրվանշահին վերաբերողները խմբավորելով), ապա ժամանակագրության մեջ Նաթանայելի կատարած հավելումները:

Գրիչ՝ Հայրապետ կրոնավոր
Ուռընկար, 1315 թ.

Գրեցաւ գիրքս երկրիս Արճիշո ի Սուրբ ուխտս որ Ուռընկար առնուանակոչի սրբոյն... (ի) խնդրոյ սուրբ եւ խստակրաւն ընդրեալ վարդապետի Յովհաննէս, ձեռամբ Հայրապետի սուտանուն կրաւնաւորի եւ յոյժ մեղաւորի: Արդ, որք հանդիպիք սմա՝ յիշեցէք զՅովհաննէս վարդապետ եւ ծնողսն իւր եւ զուք յիշեալ լինիք: Ի թվականիս ՉԿԴ (1315) (1բ):

Հետագայի ստացող՝ Նաթանայել եպիսկոպոս

Մաղասբերդ, 1343 թ.

ՋՂԲ (1343)[9] սահմի: Ես նուաստ Նաթ (Նաթանայել – Կ. Մ.) եպ(իսկոպոս) Հայոց թառոյ յոյժ ...ե(ա)լ եւ անմխիթար տրտմե(ա)լ եւ ի լալագին աչա[ւք] ...կացի ի Մաղասբերդ[10] Զ (6) ամիս եւ յԱստուած հաւատարիմ հո[գե]ւոր եղբայրն իմ Ամիրզայն մեծաւ սիրով ընկալաւ զիս եւ (83բ) քաղցրութեամբ մխիթարեց, Աստուած զինքն մխիթարէ, ամէն (84ա):

Ես Ն[աթանայել] /// ստացայ զգիրքս ի յիշա[տակ][11]/// (91ա):

Քրիստոս Աստուած պահեայ զպարծանաց եղբայրքն զպարոն Ամիրզայն եւ զթանզութն եւ փրկեայ ի չարեաց (45բ):

Քրիստոս Աստուած քում արդ բարեխաւսութեամբ/// յարքայութիւնդ հոգեւոր մաւրն իմ Արազ Խաթունին, որ բազում ար[ար]/// զմեզ ///եայ զԱմիրզայն եւ զՄաղազ Խաթ[ունն][12]... (93բ-94ա):

Աստուած լոյս արայ խաւարն, որ/// բազում զորաւք եկն ի վերայ բերդիս Մաղասայ/// (92բ):

///աց սրբոցն միջնորդութեամբ ազա[տեա՛] [զՇրվ]անշահն[13] ի յանաւրի[նաց] (4ա):

///այ զպարոն Թամարն եւ զՇրվանշահն ի ձեռա/// եւ ժառանգեցայ զտունս հայրէնի: Ամէն (5ա):

(Քրիստոս) որդի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, սուրբ Աստուածածնիդ միջնորդութեամբ եւ քո ///ած խաչիդ եւ սուրբ ամենափրկչիդ եւ սուրբ/// (114բ), [զ]Շահան[շ]ահ եւ զՇրվանշահ[14] յանաւրինացն չարեն/// եա[15] եւ հաստատեա/// (115ա):

Կազմող՝ Աթանաս
Ջրաբերդի գավառ, 1548 թ.

Կազմեցաւ գիրքս թվիս Հայոց ՋՂԷ (1548) յերկիրս Ջրաբերթոյ[16], ձեռամբ անարժան Աթանասի: Ով ոք հանդիպիք սմա յիշեցէք զտացող սորա զՅովհաննէս վարդապետն եւ բոլոր սրտիւ Աստուած ողորմի ասացէք նմա: Եւ մէկ բերան ինձ, մեղաւորիս եւ Աստուած ձեզ ողոր-

մի յաւուր գալըստեան իւրոյ: Ամէն: Այսաւր տաւն է Հռիփսիմեանց (91ա):

Նաթանայել եպիսկոպոսի՝ Սամվել Անեցու ժամանակագրության մեջ կատարած հավելումները

Փրկչական ՅԺԲ (312) Յայսմ ամի չինեց արքայն Հայոց Տրտատ զարմանալին տեսողաց զհովանոցն քեռն իւրոյ աւրեորդին Խոստրովիթխթոյ ի գեղաքաղաքին ի Գառնի, որ այժմ կոչի Սարաւոյթ Դրդատայ[17], յառ որ մերն կայ գերեզման սուրբ հայրապետացն Հայոց Տէր Գէորգայ եւ երիցս երանե(ա)լ սուրբ ճգնաւորին Տէր Մաշտոցին եւ Տէր Յովանեսի[18], եւ սուրբն Գրիգոր չինե(ա)ց զՍուրբն Գրիգոր եկեղեցին ի Գառնի եւ կանկնե(ա)ց նշանք տէրունականս[19] (49ա):

Փրկչական ՆԺԷ (417) (որպես Սահակ Պարթեւի աթոռակալության մասին Սամվել Անեցու գրածի[20] չարունակություն) Եւ արար սկիզբն շինվածոյ մեծա/// եւ վայելչաչէն զարմանակերտ եւ հոյակապ ուխտին Հայոց թառոյ եւ ժողովեց կրաւնաւորս Գճ (300) հնտակերս եւ բոկագնայ:

Էջի ստորին մասում՝ Հայոց դպրության սկզբնավորման, Մեսրոպ Մաշտոցի եւ Սահակ Պարթեւի մասին Սամվել Անեցու գրածը[21] չարունակված է՝ ///[Հայրա]պետն Սահակ եւ Մաշտոց վարդապետն հիմնարկեցին եւ անուանեցաւ աթոռ Հայոց եւ թառ թարգմանութե(անց) /// [Հաւ]ուց թառ ան[ուան]աւ[22] (52ա):

Փրկչական ՆԻԶ (426) թվականի եւ Սահակի կաթողիկոսության 10-րդ տարվա դիմաց գրված է. «Յաստ ամի չինեց սուրբ հայրապետն Հայոց Սահակ զՍուրբ Կաթողիկէն ի Գառնոյ ձորին ի վերա գետին եւ ժողովեց բազում կրաւնաւորս հնտակեր եւ բոկագնայ եւ հաստատեց վանք եւ ինքն առանձնանայր ի Հայոց թառոյ ի յաստ եւ անուանեցաւ Գետոց վանք [եւ այ]ժմ ունի զտեղիս զայս սուրբ ուխտն [Հայոց] թառ (52բ):

Փրկչական ՈԾԴ (654), Հայոց ճԱ (652) թվականի դիմաց Ներսես Գ Շինողի գործունեության՝ Ս. Գրիգորի (Զվարթնոց), Դվինի Ս. Սարգսի եւ Խոր վիրապի եկեղեցիների կառուցման մասին Անեցու հայտնած տեղեկությունը[23] չարունակված է. Եւ ի Գառնի ի վերայ բլրին որ հայի ի դաշտն Դվնայ շինել զեկեղեցին յանուն Եղիայ մարգարէին[24] (62բ):

Արուճի եկեղեցու օծման ժամանակ մկրտված եւ հետագայում նահատակված Դավիթ Դվնեցու մասին Անեցու տեղեկությունը[25] չարունակված է՝ Եւ սուրբ գլուխ նորայ (Դավիթ Դվնեցու – Կ. Մ.) կայ ի Հաւուց թառ[26] եւ այլ նշխարքն կայ ի... (63ա):

Կաթողիկոս Հովհաննես Օձնեցուն (717-728) վերաբերող հատվածում, Սամվել Անեցու մի քանի մեծարական խոսքերից հետո («կանոնական կարգօք պայծառացոյց զեկեղեցի»)[27], հետեւյալ հավելումն է. Եւ արար ժողով եւ հաստատեց զազգս Հայոց ի յուղղափառ դաւանութիւն զոր զսուրբ հարքն ի Նիկիայ սահմանեցին եւ եկն ի ժողովս Գաբրիել Վրաց կաթողիկոսն ԺԵ (15) եպիսկոպոսաւք[28] եւ նզովեց զժողովն Քաղկեդոնի /// (64բ):

Փրկչական ՊՀԹ (879), Հայոց ՅԻԶ (877) Եւ սուրբ հայրապետն եւ մեծ պատրիարգն Հայոց սուրբն Գէորգ վերստին նորոգեց զնախաշրական ուխտն Հաւուց թառ եւ պայծառացոյց, փարթամացոյց գոյիւք եւ ա[րա]ր իրն բնակ[ար]ան յամար[այ]նի ժամանակս[29] (էջ 71բ):

Փրկչական ՋՀՐ (978) Հայոց ՆԻԵ (976) Եւ ոմանք ասէն թե Վասիլ կայսրն Աշոտ Թագաւորին պարգեւեց զԱմենափրկիչ խաչն եւ մասն Տէրունական խաչեն, որ Աստուածընկալ ասեն եւ մնան երկուքն ի Հա[ւու]ց թառ մեծափայծառ փառաւք[30] (77ա):

Փրկչական ՌԴ (1004), Հայոց ՆԾԱ (1002) Գէորգ[31] իշխանաց[32] իշխանն, որդի Հասանայ[33], եղբար Ապիւրատին[34] վերըստին նորոգեց զնախաշրական հռչակաւոր սուրբ ուխտն զՀաւուց թառ եւ շինեց զփառաւոր զհրաշալի կաթողիկէն Թ (9) խորանաւ[35]: Եւ արար գանձագին զմերճակաց գեղն զԿոխթ[36] ի Գագիկ չահանշահէ եւ Յովանիսէ եւ ետ Հաւուց թառոյ Սուրբ կաթողիկէին հայրենիք եւ ետ ի հայրենե(ա)ց իր զԳետոց վանն եւ զՀովայան վանքագեղ[37] եւ ժողովեց Գճ (300) կրաւնաւոր:

Նույն էջում, մի փոքր ներքեւ՝ Եւ աստ ասեն եկե(ա)լ ի Հայս Վա[սի]լ կայսր/// եւ ընդ ինքե[ա]ն զխաչն/// հան եւ զպատկե[րն] տիրական/// զսուրբ Ամենափրկիչն եւ պարգեւ[եաց] արքային Հայոց Գա[գկայ] չահանշահի եւ Թագ[աւորն]/// Գեորգայ իշխ[ան]ին[38]/// զարեգակն/// մեծահրաշ եւ բազում ակամբ յաւրինե(ա)լ եւ [ո]ր ի գլուխս դրոշային [որ] կայս///[39] յԵրեւան գեղա[ք]աղաքն[40], որ ասեն երկ[ու]/// եւ ի սուրբ նշան եւ է անունն ///այ տէրունական սուրբ

նշան/// (78ա):

Փրկչական ՌՃՀ (1170), Հայոց ՈԺԷ (1168) թվականի դիմաց Հայոց Թորոս իշխանի մահվան մասին տեղեկությունը[41] չարունակված է. **Եւ կատարեցաւ նոր վկայն Քրիստոսի սուրբն Յովսէփ[42] ի Դվին քաղաքի ի յազգականաց իւրոց եւ էր ազգաւ ի պարսից եւ Սարգիս քահանայ առե(ա)լ զլուսայ/// նչխար նորա տարաւ ի գերադրականն ի Հայոց թառ եւ անդ հանկու/// եւ յետոյ չինեց/// նորա (90ա):**

Ծանոթագրություններ

1. Գրված է թղթի վրա (16,5×12 սմ), բոլորգրով: Անեցու ժամանակագրությունը զբաղեցնում է 2ա–89բ թերթերը (ամբողջ մատյանն ունի 116 թերթ, երկրորդ մասը՝ «Յաղագս աղանդոյն Մայրագոմեցւոյ», գրված է այլ գրով):

2. Բուն գրիչը ժամանակագրության բավական հին գաղափար օրինակ է ունեցել, բայց այստեղ էլ կան որոշ հավելումներ: Օրինակ, Գապիկ Բ-ի սպանության մասին հատվածը, որը չկա ժամանակագրության հնագույն օրինակներում, իսկ հրատարակության մեջ ներկայացված է ուշ շրջանի եւ ընդարձակ հավելումներով (Անեցի, էջ 116), այս ձեռագրում հետեւյալ բովանդակությունն ունի. «ՇԻԷ (1078) Այսմ ամի թագաւորն Հայոց Գագիկ գնաց ի Տարսոն քաղաք եւ դարձե(ա)լ եկն Ռ (1000) արամբք ի դաշտն Առճիասայ ի բերդն Կիզիստռոյ եւ անդ սպ[անա]ւ յաստուածուրաց Հոռոմոցն» (83բ):

3. Կ. Մաթեւոսյան, Հավուց Թառի վանքի եւ Ապիրատյան տոհմի պատմության նորահայտ տվյալներ, էջ 147-167:

4. Գ. Հովսեփյան, Հավուց Թառի ամենափրկիչը եւ նույնանուն հուշարձաններ հայ արվեստի մեջ, Նյութեր եւ ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Բ, Երեւան, 1987, էջ 24:

5. Վահրամ Զաքարյանի, Շահնշահ Գ-ի, ինչպես նաեւ Անիում նրանց նշանակած պաշտոնյա Գրիգոր Խուցեսի ու նրա որդիներ Ասիլի եւ Պարոնի գործունեության մասին պահպանված մի շարք տվյալներ վկայում են, որ քաղաքն այդ շրջանում համեմատաբար բարվոք վիճակում էր գտնվում (Հ. Մանանդյան, Երկեր, հ. Գ, Երեւան, 1977, էջ 343, Կ. Մաթեւոսյան, Անի, էջ 331, 364-365):

6. Թերթ 54ա, 60ա, 61ա, 71ա, 72ա, 78ա, 79ա, 80բ, 83բ, 89ա, 89բ, 90ա եւ այլն:

7. Այս էջում ժամանակագրության այն հատվածն է, ուր Սամվել Անեցին Բագրատունյաց թագավորության անկման մասին փոքրիկ ողբ է գրել հենց ժամանակագրական նեղ սյունակի մեջ, եւ որի այսօրինակ գրությունը հատուկ է ժամանակագրության հնագույն ձեռագրերին: Սա մի հավելյալ վկայություն է, որ Հայրապետ գրիչի ունեցած նախօրինակը բավական հին է եղել:

8. Բոլոր հիշատակարանների գիրն էլ շատ մաշված է, բայց կան նաեւ պարզապես անընթեռնելիները: 2բ-3ա բացվածքի ստորին լուսանցքում 5-ական տողերով գրության իմաստը պահպանված հատուկենտ բառերից չի հասկացվում: Նախավերջին տողում կարդացվում է. «////Հայրապետն որ յետես///» (3ա): Մեկ այլ չվերծանվող հիշատակարան կամ հավելում կա 79բ-80ա, 80բ թերթերի ստորին մասում: Վերջինն ունի 6 տող, չորրորդում երեւում է՝ «Գճ (300)», հինգերորդում՝ փակագրով՝ «եպիսկոպոս եւ վարդապետ եւ քահանայ/// մեծաւ///», վեցերորդ տողում՝ «///ընկալաւ արքայն///»:

9. Թվականի մասը խիստ մաշված է, հատկապես վատ է երեւում տասնավորը:

10. 14-րդ դարի 50-ականների սկզբին Զաքարյանները վերջնականապես կորցրեցին Անին, հավանորեն նաեւ Մաղասբերդը: Սակայն Նաթանայել Հավուցթառեցու մատյանի հիշատակարանները վկայում են, որ 1343 թ. բերդը հայերի ձեռքին էր: Հնարավոր է, որ Մաղասբերդը հենց Շրվանշահին էր պատկանում, եւ Նաթանայելի հովանավոր Ամիրզան նրա ենթականերից մեկն էր:

11. Գրված է կազմողի հիշատակարանի ստորին մասում, ավելի բաց գույնի թանաքով: Սկզբնապես չորս տող է եղել, պահպանվել են միայն առաջին տողի մի քանի բառերը:

12. Այս հիշատակագրություններով մասամբ ուրվագծվում է Ամիրզայի ընտանիքի կազմը: Արազ Խաթունը հավանաբար նրա մայրն էր, որին Նաթանայելը կարող էր իր հոգեւոր մայրը համարել: Մաղազ Խաթունը պետք է որ Ամիրզայի կինը եղած լինի, իսկ նախորդ հիշատակագրության մեջ նշվում է եղբայրը՝ Թանզուրը: Այս ընտանիքը բնակվում էր Մաղասբերդում, ուր եւ իր գիրկն էր առել տարագիր Նաթանայել Հավուցթառեցուն:

13. Կարող է եղած լինի «զՇահանշահն»:

14. Շրվանշահը Անիում իշխած վերջին Զաքարյան իշխանի՝ Շահնշահ Գ-ի եղբայրն էր: «Բագնայրի ավետարանի» 14-րդ դարի մի հիշատակարանի գրիչը խնդրում է հիշել «...աթաբակ **Շահանշահին** եւ եղբաւր իւրոյ պարոն **Շրվանշահի**...» (Գ. Յովսեփեան, Յիշատակարանց ձեռագրաց, էջ 891, Գ. Հովսեփյան, Հավուց Թառի ամենափրկիչը..., էջ 29): Շահնշահ Գ-ը «տաճկաց զորքի» հարձակման պատճառով մաղապուրծ փախել է Անիից, ինչպես այդ մասին վկայում է 1357 թ. Անիում գրված մի հիշա-

տակարան (Մատենադարան, ձեռ. թիվ 6764, թերթ 264ա, Կ. Մաթեւոսյան, Անի, էջ 364): Նույն դեպքերն են ակնարկվում Հովհաննավանքի մի անթվական արձանագրության մեջ: Գրիգորի որդի Ամսայլանը գրում է. «///Հեց ելաւ **պար(ոնաց) ձեռնէ զերկիրս առին**, ես չբաժանեցայ ի ծառայութենէս: Աստուած պարոնացն աջողում էրետ երկիրս էրեկ, Ոհանայվանք ինձ տվին էէրէնիք...», ապա նշում է Հովհաննավանքում իր բարեգործությունները՝ կատարված «...վասն արեւշատութեան պարոնաց մերոց եւ պարոն **աթապակ Շահանշահի եւ Երվանշահի**...» (Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները, Երեւան, 1948, էջ 101): Վերը ներկայացված հիշատակագրություններում կարելի է տեսնել նույն դրամատիկ դեպքերի արձագանքը:

15. Կարող է լինել «փրկեա» կամ «պահեա»: Իմաստային առումով այս հատվածը չարունակությունն է 114բ թերթի տեքստի: Այստեղ գրիչն աղոթքի ոճով Աստծո օգնությունն է հայցում Շահանշահի եւ Երվանշահի համար, խնդրակատար սրբությունների թվում նշելով նաեւ Հավուց թառի Ամենափրկիչը:

16. Գավառ Արցախում, Թարթառ եւ Խաչեն գետերի միջեւ: 17-րդ դարում այստեղ ստեղծվեց մելիքություն Ջրաբերդ կենտրոնով (Ա. Մաղալյան, Արցախի մելիքությունները եւ մելիքական տները XVII-XIX դդ., Երեւան, 2007, էջ 103):

17. Գառնիի «Հովանոցի» կառուցումը Տրդատ Գ-ին վերագրելու ավանդությունը գալիս է դեռեւս Մովսես Խորենացուց. «...չինեալ եւ տուն հովանոց... ի համար քեռ իւրոյ Խոսրովիդխտոյ...» (Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 241-242): Իսկ «սարաւոյթ Տրդատայ» արտահայտությունն առաջին անգամ հանդիպում է Կիրակոս Գանձակեցու մոտ. «Այր ոմն առաքինի... Յովհաննէս անուն ի քաղաքագիւղէն Գառնւոյ, ուր զարմանալի **սարաւոյթն է Տրդատայ**» (Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 348):

18. Միմյանց հաջորդած այս երեք հայրապետներից միայն Մաշտոց Ա Եղիվարդեցու համար է վկայված Գառնիում թաղված լինելը (Ստեփանոսի Տարօնեցւոյ Պատմութիւն, էջ 160, Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 1184): Այստեղ հայտնաբերվել է նաեւ յոթ ամիս աթոռակալած կաթողիկոսի 897 թվակիր արձանագրությամբ տապանաքարը (Հ. Պետրոսյան, Գառնին 9-14-րդ դարերում, Երեւան, 1988, էջ 27): Բայց ծնունդով գառնեցի էր նրա նախորդ Գեւորգ Բ Գառնեցի կաթողիկոսը (877-897): Հովհաննես Դրասխանակերտցին (898-929) հայտնում է, որ նա մահացել է Վասպուրականում եւ թաղվել «ի քնարանի Ջորոյ վանաց», այնուհետեւ նշելով Մաշտոցի կարճատեւ հաջորդելը, նրա թաղման վայրի մասին լռում է (Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ. եւ ծանոթագր. Գ. Թոսունյանի, Երեւան, 1996, էջ 184-187): Հովհաննեսն ինքն էլ վախճանվել է Վասպուրականում, բայց թաղման տեղի մասին ստույգ վկայություն

չկա (Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 1240-1242): Հետաքրքիր է, որ Կիրակոս Գանձակեցին նրան համարում է ծնունդով գառնեցի՝ «Սա էր այր իմաստուն եւ բանաւոր ի քաղաքագեղջէն Գառնւոյ, ուստի սուրբ հայրապետն Գէորգ էր» (Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 82): Եթե հավատանք Նաթանայել Հավուցթառեցուն, որ այս երեք հայրապետները թաղված են եղել Գառնիում, ապա կարելի է ենթադրել, որ ինչպես Մաշտոց Եղիվարդեցու մասին է գրված, թե հողին են հանձնել «նչխարք ոսկերաց նորա» (Ասողիկ), կարող էին նույն կերպ Գառնի փոխադրած լինել Գեւորգ Գառնեցու մասունքները, մանավանդ որ նա սերտորեն կապված էր ծննդավայրի հետ: Այդ դեպքում հասկանալի կդառնա նաեւ, թե ինչու է Գառնիում թաղվել այս բնակավայրի հետ ուղղակի կապ չունեցող՝ նրան հաջորդած կաթողիկոսը՝ Մաշտոց Եփվարդեցին: Հնարավոր է, որ նույն ձեւով Գառնի են հասել նաեւ այս կաղմերի ծնունդ Հովհաննես Դրասխանակերտցու (Ասողիկը նրան կոչում է Դվնեցի) մասունքները: Ամեն դեպքում 14-րդ դարում ապրող Նաթանայել եպիսկոպոսը պետք է ինչ-որ հիմք ունեցած լինի այս երեք հայրապետների հանգստարանը Գառնիում տեղորոշելու համար:

19. Նաթանայելի հայտնած տեղեկությունը, որ Ս. Գրիգոր Լուսավորիչը կառուցել է Գառնիի Ս. Գրիգոր եկեղեցին եւ այստեղ խաչեր կանգնեցրել, այլ աղբյուրներից հայտնի չէ: Լուսավորչին բազմաթիվ եկեղեցիների հիմնադրում է վերագրվում ողջ Հայաստանով մեկ, բայց Տրդատին պատկանող Գառնիում նրա հայտնվելը օրինաչափ պիտի համարել: Նաթանայելի գրածի մեջ «կանկնե(ա)ց նշանք տէրունականաս» խոսքերը իրականությանը շատ մոտ են, քանզի հայտնի է, որ Լուսավորիչն իր այցելած տեղերում խաչեր էր կանգնեցնում, որոնց տեղում հետագայում եկեղեցիներ էին կառուցվում: Գառնիի կենտրոնում պահպանվել է բազիլիկ եկեղեցու ավերակ, որը «միանավ, հարավային ավանդատնով եւ հարավային ու հյուսիսային սյունասրահով տուֆակերտ կառուցվածք է՝ բնորոշ 4-5-րդ դդ. հայկական ճարտարապետությանը» (Հ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 25): Հնարավոր է, որ այս եկեղեցին է Նաթանայել Ս. Գրիգոր անվանել:

20. Անեցի, էջ 68:

21. Նույն տեղում:

22. Նաթանայելը Հավուց թառի հիմնադրումը վերագրում է Սահակ Պարթեւին եւ Մեսրոպ Մաշտոցին, հետեւելով այս շրջանի վանքերի վերաբերյալ զոյություն ունեցող ավանդությանը (Գ. Հովսեփյան, Հավուց Թառի ամենափրկիչը..., էջ 16): Նա նաեւ յուրովի ստուգաբանում է վանքի անունը՝ «աթոռ Հայոց» եւ «թառ թարգմանութե(անց)», որոնցից մեկի՝ երկրորդ, իսկ մյուսի՝ առաջին բառերից է առաջացել «Հայոց թառ» անվանումը: Ցավոք չարունակությունն անընթեռնելի է, եւ չենք կարող ասել, թե Նաթանայելն ինչպես է բացատրում «Հայոց թառի» եւ «Հավուց թառի» զուգադրումը: Իր գրություններում նա օգտագործում է եր-

կու ձեւն էլ:

Սեբաստիայի Ս. Նշանում պահված վերը նշված ձեռագրի անթվական հիշատակարանում Նաթանայելը Հավուց թառի կառուցման ու վերաշինման մասին գրում է. «Գիրքս Հայոց թառոյ է, որ է աղօթատեղ Սուրբ Լուսաւորչին, եւ հաստակառոյց հաստատեաց եւ հանդիսացոյց տեղի թարգմանութեան... սուրբ հայրապետն Սահակ եւ սուրբ վարդապետն Մեսրովբ եւ եւոյ նորոգեաց սպարապետն Գորք իշխան» (Գ. Հովսեփյան, Հավուց Թառի ամենափրկիչը..., էջ 24):

Հնարավոր է, որ նույն աղբյուրից են օգտվել Նաթանայելը եւ Մատենադարանի թիվ 4166 ձեռագրի (Տօնապատճառ) հետագայի գրիչը, որը հայտնում է «Շինեցաւ սուրբ եւ հռչակաւոր բազմաժողով մեծ մենաբանն **Հայոց Թառ** ի սուրբ թարգմանչացն՝ ի **Սահակ** հայրապետէ Հայոց եւ ի **Մեսրոփ** վարդապետէ Դճ եւ ԻԳ (423) ամի ծնընդեանն Քրիստոսի...» (ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 351):

23. Անեցի, էջ 83:

24. Գառնիի մյուս եկեղեցու կառուցումը՝ Դվինի դաշտահայաց մասում, Նաթանայելը վերագրում է Ներսես Գ Տայեցուն: Գառնիի եկեղեցիներից 7-րդ դարի է համարվում հեթանոսական տաճարի արեւմտյան կողմում գտնվող արտաքինից չրջանաձեւ քառախորան եկեղեցին, որի ճարտարապետական մանրամասներն առնչություններ ունեն Զվարթնոցի հետ (Ա. Սահինյան, Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը, Երեւան, 1983, էջ 198-201): Գրականության մեջ եկեղեցին կոչվում է Ս. Սիոն: Ըստ Նաթանայելի՝ եկեղեցին եղել է Եղիա մարգարեի անունով:

25. Անեցի, էջ 84:

26. 701 թ. Դվինում նահատակված եւ հենց այստեղ Ս. Գրիգոր եկեղեցու մոտ թաղված **Դավիթ Դվնեցու** վարքը հայտնի է (Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, էջ 94-99, Շնորհք արք. Գալուստեան, Հայազգի սուրբեր, Երեւան, 1997, էջ 228-229): Նաթանայելը միակ հեղինակն է, որ գրում է Դվնեցու գլուխը (գանգը) Հավուց Թառում թաղելու (վերաթաղելու) մասին:

27. Անեցի, էջ 87:

28. Վրաց Գաբրիել կաթողիկոսը մասնակցել է կաթողիկոս Բաբկեն Ոթմսեցու (490-516) հրավիրած Դվինի 506 կամ 508 թ. ժողովին, որին, ըստ «Գիրք թղթոցում» պահպանված տեղեկության, մասնակցել է նաեւ 23 վրացի եպիսկոպոս (Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994, էջ 334, 343, Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 583-584): Նաթանայելի մոտ չփոթություն է տեղի ունեցել, ըստ երեւույթին Հովհաննես Օձնեցու հրավիրած Մանազկերտի հակաքաղկեդոնական ժողովում ասորիների մասնակցությունը չփոթվել է ավելի վաղ՝ Դվինում կայացած ժողովին վրացիների մասնակցության հետ:

29. Սա առայժմ միակ վկայությունն է այն մասին, որ Գեւորգ Գառնեցի կաթողիկոսը նորոգել ու պայծառացրել է Հավուց թառի վանքը: Առավել հետաքրքիր է Հավուց թառի՝ Գեւորգ կաթողիկոսի ամառային նստոց լինելու մասին վկայությունը: Հավանաբար ամառանոցի նույն դերն է ունեցել Բյուրականը՝ քիչ հետո աթոռակալած Հովհաննես Դրասխանակերտցու համար (նաեւ ուշ շրջանում՝ Էջմիածնի կաթողիկոսարանի համար): Հետաքրքիր է, որ 13-րդ դարի վերջերին Նորավանքում աթոռակալող Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանն ավելի պով վայրում գտնվող Արատեսի վանքը դարձրել էր ամառային նստոց (Կ. Մաթեւոսեան, Դրուագներ Նորավանքի եպիսկոպոսական աթոռի պատմութիւնից (Արատես եւ Վերին Նորավանք), «Նորավանք» հայագիտական տարեգիրք, Մոնրէալ-Երեւան, 2001, էջ 62-63):

30. Տեղեկությունը վերաբերում է Հավուց թառում պահված սրբազան խաչերին եւ մասնավորապես Ամենափրկիչ անունով հայտնի, այժմ Ս. Էջմիածնում պահվող, Քրիստոսին խաչից իջեցնելու քանդակապատկերը ներկայացնող նշանավոր փայտյա խաչին: Գ. Հովսեփյանն այս կապակցությամբ ընդարձակ հետազոտություն է կատարել, որի սկզբում փորձում է պարզել սրբության ծագումը, բայց, վկայակոչելով հին ու նոր շրջանի մի շարք տեղեկություններ (մասնավորապես Մանուել Բյնեցու գրած գանձը), ուսումնասիրության առաջին մասը եզրափակում է հետեւյալ խոսքերով՝ «Հակասությունների մի բավիղ, որ թվում է, թե դժվար է միջից դուրս գալ» (Գ. Հովսեփյան, Հավուց Թառի ամենափրկիչը..., էջ 10): Նաթանայել Հավուցթառեցին Ամենափրկիչի ծագման մասին գրում է երկու տեղ, մեկի սկզբում որոշ վերապահությամբ նշում է՝ «ոմանք ասէն թէ»: Ըստ այս տեսակետի Ամենափրկիչը եւ Տերունական խաչի մասունքը, որն անվանում է «Աստուածընկալ», Աչոտ Թագավորին է տվել Վասիլ կայսրը (երկրորդ տեսակետը գրում է քիչ հետո):

31. Մինչեւ այժմ Մխիթար Այրիվանեցու կարճ հաղորդմամբ հայտնի՝ «Շինի եւ Հաւուց Թառն ի Գէորգեայ իշխանէն Քեղւոյ» (Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, էջ 57) տեղեկությունը Նաթանայելը հարստացրել է Քեղի (Գեղի) ամրոցի տեր Գեւորգ իշխանի ծագման մասին եզակի վկայությամբ, նաեւ հանգամանորեն ներկայացնում է իշխանի Հավուց թառում կատարած աշխատանքները:

32. Բառը կրկնված է:

33. Կեչառիսի վանքի 1003 թ. շինարարական արձանագրության մեջ Գրիգոր Ապիրատը հիշատակում է հորը՝ Հասանին: Մատթեոս Ուռհայեցին նույնպես նշում է նրա անունը. «Ապիրատ ոմն, որ էր մեծ իշխան Հայոց, որդի Հասանայ» (Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, էջ 16): Ն. Ակինյանը Հասանյան (Ապիրատյան) տոհմին նվիրված ուսումնասիրության մեջ գրում է. «Հասան. սա հայրն էր Ապիրատի. իր

մասին աւելի բան չենք գիտեր» (Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 373): Ապիրատի մասին պահպանվել է նաեւ Մխիթար Անեցու հայտնած տեղեկությունը, որը մեզ է հասել Վարդան Արեւելցու միջոցով. «Զսմանէ (Ապիրատի մասին – Կ. Մ.) ասեն յաննչանից մեծացեալ, եւ վասն խելացի եւ առատ ձեռացն մինչեւ լիներ տէր երկոտասան հազար հեծելոց, որ եւ չինեաց զսուրբ ուխտն Կեչառուս» (Վարդան Արեւելցի, էջ 102-103), որից ենթադրվել է, թե նա թերեւս իշխանական ծագում չուներ: Նաթանայելի հայտնած տեղեկության չնորհիվ պարզ է դառնում, որ Հասանը իշխան էր, եւ նրա որդիներն էին Ապիրատը եւ Գեւորգ իշխանը: Քեղի ամրոցը հորից ժառանգած Գեւորգը հավանաբար Հասանի ավագ որդին էր, իսկ Ապիրատը՝ կրտսերը, դրա համար է նրա առաջխաղացումը բնութագրվել «յաննչանից մեծացեալ» բառերով (այս մասին հանգամանորեն տե՛ս Կ. Մաթեւոսյան, Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը եւ նրա տոհմը 11-րդ դարում, «Բանբեր Մատենադարանի», 18, Երեւան, 2008, էջ 67-76):

34. Մատենագրական աղբյուրները (Մխիթար Անեցի, Վարդան Արեւելցի, Մխիթար Այրիվանեցի, Սմբատ Սպարապետ) Ապիրատ անունով են կոչում Հասանի որդի մեծ իշխանին, որը կառուցել է Կեչառիսի վանքը, եւ որը նույն Կեչառիսում, Արզականում Գորգ քահանայի թողած 1001 թ. արձանագրության (Գ. Սարգսյան, Գրիգոր-Ապիրատ Հասանյան. Հիմնադիր Կեչառիսի վանքի «վիմագրական նոր վկայություն», «Հին Հայաստանի մշակույթը» ժողովածու 12, Երեւան, 2002, էջ 111) եւ Տեկորում իր դստեր գրած արձանագրության մեջ (Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 135) անվանվում է Գրիգոր Մագիստրոս: Հայագետները խնդրի լուծման միջոց են առաջարկել իշխանին վերագրելով Գրիգոր Ապիրատ երկանունը (Կ. Մաթեւոսյան, Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը եւ նրա տոհմը, էջ 67-72):

35. Գ. Հովսեփյանը Հավուց թառի Կաթողիկե եկեղեցու ավերակները ենթադրաբար տեղորոշել է գավիթի հարավարեւելյան անկյան մոտ (Գ. Հովսեփյան, Հավուց Թառի ամենափրկիչը..., էջ 16): Հավուց թառի համալիրի ուսումնասիրությամբ հանգամանորեն զբաղված Գագիկ Սարգսյանը եկել է այն եզրակացության, որ «Կաթողիկե եկեղեցին ոչ թե Գ. Հովսեփյանի նշած կառույցն է, այլ վերջինիս հյուսիսային կողմում գտնվող չինությունը, որից միայն հարավային պատն է պահպանվել: Ցավոք, այս կառույցի ճարտարապետական հորինվածքի մասին չենք կարող որոշակի կարծիք հայտնել, որովհետեւ մյուս պատերը հիմնովին քանդված են, իսկ տեղանքը ծածկված է հաստ հողաշերտով» (Գ. Սարգսյան, Հավուց թառի հիմնադրման վկայագրի շուրջ, ՀՀ ԳԱ «Լրաբեր» հաս. գիտ., 1988, թիվ 4, էջ 68): Նաթանայելի վկայությունից տե-

ղեկանում ենք, որ եկեղեցին սկզբնապես ինը խորան է ունեցել: Ինչպես երեւում է, այն կանգուն ու անխաթար է եղել մինչեւ 1679 թվականի մեծ երկրաշարժը, որովհետեւ 17-րդ դարի կեսերին Սիմեոն Ջուղայեցի եպիսկոպոսը Հավուց թառին նվիրված չափածո գրվածքում նշում է՝ «Կաթողիկէս հանդիսարան... Բարձրայդումբեթ ու **ինն խորան**...» (Գ. Հովսեփյան, Հավուց Թառի ամենափրկիչը..., էջ 106):

36. Սա Գառնիի եւ Գեղարդի միջեւ գտնվող Կոխթ (Գողթ) գյուղի մասին մատենագրության մեջ պահպանված ամենավաղ հիշատակությունն է: Ինքնին հետաքրքիր փաստ է, որ գյուղը 10-րդ դարի վերջին եղել է արքունի սեփականություն, եւ որ այն Գագիկ Թագավորից եւ Հովհաննեսից (Հովհաննես Սմբատ) գնել ու որպես սեփականություն Հավուց թառի Կաթողիկեին է տվել Գեւորգ իշխանը:

37. Կարծում ենք, որ այստեղ պետք է հասկանալ, թե իշխանն իր սեփականությունից «Հովայ» գյուղը, որպես «վանքագեղ», տվել է «Գետոց վանքին», որը նույնն է Հավուց թառի հետ: Ինչպես վերը տեսանք, Սահակ Պարթեւի ձեռամբ «ի Գառնոյ ձորին ի վերա գետին» վանքի հիմնադրման մասին խոսելիս Նաթանայելը նշում է, որ այն «անուանեցաւ Գետոց վանք» (52բ): Հավուց թառի՝ ձորի մեջ եւ գետամերձ լինելու հանգամանքը կարող էր այս անվան առաջացման պատճառ դառնալ: Ինչ վերաբերում է գյուղին, ապա այն հավանորեն Հովհաննես Դ Ոձայեցի կաթողիկոսի (833-855) ծննդավայրն է, որի մասին Հովհաննես Դրասխանակերտցին գրում է՝ «...Յովհաննէս ի գաւառէն Կոտայից ի գեղջէ **Ովայից**» (Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 118):

38. Ինչպես երեւում է, Նաթանայելն այս հատվածում ներկայացնում է Հավուց թառի Ամենափրկիչ խաչի ծագման մեկ այլ վարկած, ընդ որում ցայժմ անհայտ, քանի որ Վասիլ կայսրից Ամենափրկիչը ստացողի դերում հանդես է գալիս Գագիկ Ա Բագրատունին (989-1017): Նա ժամանակակիցն էր Վասիլ Բ (976-1025) կայսեր եւ Հավուց թառի հովանավոր Գեւորգ իշխանի, ուստի, գոնե ժամանակագրական առումով, այստեղ հակասություններ չկան, ինչպես նախորդ վարկածի դեպքում է:

39. Այստեղ տողի սկզբից կարդացվում է. «կայս(օղակաձեւ գիծ, թերեւս գրչական վրիպում)մ», որով հատվածն անհասկանալի է մնում, կարելի է նաեւ «այսմ» կարդալ, բայց այդ դեպքում առկախ է մնում «կ» տառը:

40. Ցավոք այս հատվածը չատ վնասված է, պահպանված տողերից կարելի է ենթադրել, որ Ամենափրկիչն ու Տերունական խաչի մասունքն ինչ-որ ժամանակ գտնվել են Երեւան գյուղաքաղաքում: Հնարավոր է նաեւ, որ այստեղ խոսվում է զարդարուն խաչվառի մասին:

41. «Յայսմ ամի մեռաւ մեծ իշխանն Հայոց Թորոս» (Մատենադա-

բան, ձեռ. թիվ 5619, թերթ 107ա):

42. 12-րդ դարում Դվինում նահատակված «նոր վկա» Հովսեփ Դվնեցու եւ նրա՝ Հավուց թառում թաղված լինելու վերաբերյալ հայտնի են նաեւ այլ սկզբնաղբյուրներ (Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, էջ 96, էջ 175, Հայոց նոր վկաները (գիտական հրատ.), աշխատասիրությամբ Յ. Մանանդեանի եւ Հ. Աճառեանի, Վաղարշապատ, 1903, էջ 46-60): Վերջերս Հովսեփի վկայաբանությանն անդրադարձել, նրա դեպքումների ուղին «քարտեզագրել» եւ թաղման տեղի ու դամբարանի հարցին անդրադարձել է Գ. Սարգսյանը (Գ. Սարգսյան, Վկայաբանությունները որպես պատմաաչխարհագրական սկզբնաղբյուր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 6, Երեւան, 2005, էջ 173-182):

գ. ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐՆԵՐ (17-18-րդ դդ.)
Մատենադարան, ձեռ. թիվ 7261, 10202

«Մանր ժամանակագրությունների» առաջին հատորում Վազգեն Հակոբյանի հրատարակած բնագրերից մեկը կրում է «Անանուն ժամանակագրություն» (18-րդ դ.) խորագիրը[1]: Ինչպես հրատարակիչն է գրում «Ժամանակագրությունը կազմված է Ս. Անեցու ժամանակագրության օրինակով», ունի ընդարձակ վերնագիր («Մասնաւոր ժամանակագրութիւն եւ գաւազանագիրք...» եւ այլն), սկսվում է թուրքերի կողմից Կ. Պոլսի գրավման հիշատակությամբ, վերջանում՝ 1734 թ., «Աբրահամ Գ Կրետացու կաթողիկոս օծվելու վկայությամբ, ընդգրկելով 280 տարվա անցուդարձ»[2]:

Այս նույն ժամանակագրությունը պահպանվել է նաեւ Մատենադարանի երկու ձեռագրում՝ թիվ 7261-ում, ուր հասնում է մինչեւ 1702 թ., եւ թիվ 10202-ում՝ հասնելով 1692 թ.[3]: Թեեւ երկու ձեռագրի դրչության վայրն ու ստույգ թվականն անհայտ է[4], բայց դրանք կապված են միմյանց հետ. երկրորդը, հավանաբար, ընդօրինակված է առաջինից, քանի որ այստեղ առկա հավելումները հիմնական գրից տարբերվող դրչություն ունեն, իսկ երկրորդի ողջ դրչությունը միատարը է:

Երկու ձեռագրերում Վազգեն Հակոբյանի հրատարակած «Անանուն ժամանակագրության» ընդգրկած ժամանակահատվածը սկսվում է առանց վերնագրի, բայց տեղեկությունների մեծ մասը կրկնվում է: Շատ սակավ են վերաշարադրված տվյալները, սակայն կան որոշ բացթողումներ[5]: Մյուս կողմից, ձեռագրերում կան մի քանի տեղեկություններ, որ չունի Անանունը: Եթե նկատի ունենանք այն, որ նշված ձեռագրերում ժամանակագրությունն ավելի շուտ է ավարտվում, կարող ենք ենթադրել, որ «Անանուն ժամանակագրությունը» եւ այս երկու մատյանները միմյանցից չեն արտագրված, այլ ունեցել են տարբեր գաղափար օրինակներ:

Երկու ձեռագրերում հավելումների մեծ մասը Սամվել Անեցու բուն ժամանակագրության եւ նրան հաջորդող մասում են (մինչեւ «Անանուն ժամանակագրության» սահմանը՝ Կ. Պոլսի գրավումը): Իսկ դրան հաջորդող մասում ձեռագրերն ունեն ավելի քիչ, բայց նույն ժամանակին՝ 17-րդ դարի վերջերին եւ 18-րդ դարի սկզբներին

վերաբերող, իրարից անկախ՝ չկրկնվող տեղեկություններ: Սա վկայում է այն մասին, որ մենք գործ ունենք տարբեր հեղինակների կատարած հավելումների հետ: Դրանցից մեկը «Անանուն ժամանակագրություն» (18-րդ դ.) վերնագրով հրատարակված բնագրի հեղինակն է, մյուսն այն գրիչը, որը թողել է հետեւյալ վկայությունը՝ «...նստաւ չահ Սուլեյմանն, **որ այժմ տիրէ** արեւելեան աշխարհիս, ի թվականիս Հայոց ՌՃԼԶ (1687)», վերջապես Մատենադարանի թիվ 7261 եւ 10202 ձեռագրերի գրիչները, որոնք, ինչպես երեւում է, ունեն ինքնուրույն հավելումներ: Այս է պատճառը, որ մենք սույն հատվածը վերնագրել ենք «Անանուն ժամանակագիրներ (17-18-րդ դդ.)»:

Ստորեւ Մատենադարանի թիվ 7261 ձեռագիրը (բնագիրը) կհամարենք **Ա օրինակ**, իսկ թիվ 10202 ձեռագիրը՝ **Բ օրինակ**: Երկու ձեռագրում ժամանակագրական միավորները հիմնականում կրկնվում են (յուրաքանչյուր միավորի վերջում մենք նշում ենք ձեռագրերի էջերը), սակայն կան նաեւ միավորներ, որոնք առկա են միայն մեկում կամ մյուսում: Ըստ անհրաժեշտության ներկայացնում ենք ժամանակագրության մեջ հավելումների գտնվելու տեղը:

Սամվել Անեցու երկի այն հատվածում, որտեղ հեղինակն անցնում է ժամանակագրական աղյուսակներին (եւ համապատասխան բացատրական խոսքով դիմում պատվիրատուին), սույն ձեռագրերն ունեն երկու հավելում:

***Ըստ Լատինացւոց յԱդամայ մինչեւ ի Քրիստոս ԴՌԾԱ** (4051) ամ է, Դանիէլի եւթներորդք եւթներորդքն մինչեւ ի տաճարին շինուելիւնն **ՆՂ** (490) ամ է եւ անտի մինչեւ ի յայտնութիւն Քրիստոսի, **որ մկրտեցաւ ԿԲ** (62), **ՇԲ** (502) **թուին ՅԶԴ** (374) ամ է, յորում մեռաւ օծեալ **Տէրն**[6] (Ա, 29բ, Բ, 33ա):*

Հաջորդ էջում (Բ օրինակում՝ թերթում) ժամանակագրական աղյուսակների սկզբում մյուս հավելումն է:

***Աննա Գ** (3) այր էառ. առաջինն էր Յովակիմ, յորմէ ծնաւ զՄարիամ, մայրն Տէառն, եւ յետ մահուան Յովակիմայ էառ զԿղեոպա, յորմէ ծնաւ միւս այլ Մարիամ եւ ամուսնացոյց Ալփիոս Յովսեփայ, ասէ եւ Կղեոպաս Յովսեփայ յեղբայրն է Ալփիոսի, յորմէ ծնան **Դ** (4) որդիք՝ Յովսէ, Թադէոս, Սիմոն, Յակոբոս եւ յետ մահուն Կղեոպա,*

*նոյն Աննայս էառ միւս այր, որ կոչէր Սողոմէ, յորմէ ծնաւ դուստր մի այլ անուն Մարիամ, որ եւս զնա ի կնութիւն Զեբեդեա եւ ի նմանէ ծնաւ **Բ** (2) որդի՝ յՀովհաննէս աւետարանիչ եւ Յակոբոս մեծն*[7] *(Ա, 30ա, Բ, 34ա):*

Փրկչական[8] *ՉԺԸ (718), Հայոց ՃԿԵ (716) թվականից առաջ, Հովհաննես Օձնեցու աթոռակալության հատվածում հետեւյալ անկանոն տեղեկությունն է. **Օձնեցին**[9] **Յոհաննէս հնգետասան աշխարհաց Հայաստանեայց երկոտասաներորդն ի սմանէ Գուգարացն չորրորդ եւ ի Ո (600) եւ ԻԶ (26) գաւառաց իշխօղ եւ Ջ (900) գաւազանաց կարգաւորիչ**[10] *(Ա, 45բ, Բ, 49բ):*

*ՉԼԳ (733), Հայոց ՃՋ (731) **Ստեփանոս Սիւնեցին գրեաց պատասխանի Թղթոյն Գերմանոսի պատրիարգին հրամանաւ տեառն Դաւթի հայրապետի**[11] (Ա, 46ա, Բ, 50ա):*

*ՊԿ (860), Հայոց ՅԷ (858) **Աստ եղեւ ժողովն Շիրակուանայ յորում միաբանեցան Հայք ընդ Յունաց եւ ընկալան զժողովն Քաղկեդոնի եւ զերկու բնութիւնս միաւորեալ ասել ի մի Քրիստոս**[12] (Ա, 50ա, Բ, 54ա):*

ՋԺԴ (914), Հայոց ՅԿԱ (912) թվականի դիմաց հրատարակության մեջ եղած հավելումը՝ «Ապուսէճն զՀայս էառ եւ աւերեաց եւ զՍմբատ էսպան»[13] *չարունակված է.*

***Ուսուֆ ամիրայն սպան զՍմբատ եւ թագաւորեցոյց զԳագիկ**[14] **ի տանէն Արծրունեաց, որդի Դերենկան եւ քըւերորդի Սմբատայ Բագրատունւոյ ի վերայ Վասպուրական աշխարհին. սա չինեաց զԱղթամարայ զՍուրբ Խաչի վանքն եւ զեկեղեցին գեղեցիկ յօրինուածով (Ա, 51բ, Բ, 55բ):*

*ՋՇԱ (951), Հայոց ՅՂԸ (949) **Յայսոսիկ ժամանակի էր սուրբ հայրն Վարդուկ, որ զգազանս հնազանդեցոյց եւ զկոյր կորիւնս առիւծոց լուսաբանաց: Որ եւ էր բեմն բարձեալ, զՔրիստոս մրմնջ(եալ) ի կերպ աղքատի ունէր: Այլ եւ սուրբ հայրն կարմիր, որ աղօթիւք զվիշապն սատակեց: Սոքա ի կաղզվանայ ձորն բնակէին, սքանչելագործք եւ առաքինութեամբ զարդարեալք**[15] *(Ա, 52բ):*

*ՋԿԴ (964), Հայոց ՆԺԱ (962) **Գագիկ թագաւոր օծաւ Հայոց, որ է նոյն Աշոտ որդի Աբասայ**[16] *(Ա, 52բ, Բ, 56 բ):*

*ՌԴ (1004) Հայոց ՆՇԱ (1002) **«Աստանօր առնու կատարումն Ստեփանոսի Տարօնացւոյ պատմագրութիւն: Զկնի նորա սկսանի Ա-***

բիստակէս Լաստիվերցի զաղէտս, որ ի թուրքաց եւ ի թոնդրակացւոց, մինչեւ ի ՇԼ (1081)»[17] (Ա, 54ա, Բ 58ա):

*ՌԾԶ (1056), Հայոց ՇԳ (1054) **Առաքեաց Մօնոմախն զՊետոս, որ եկեալ ի Պաղին եւ յԱրկղնի եւ էառ զամրոցս նոցա եւ զիշխանսն Հայոց, որք անտ, զոմանս էսպան եւ զոմանս տարաւ ի Բիւզանդիա[18]** (Ա, 55բ, Բ, 59բ):*

*Կաթողիկոս Գրիգոր Վկայասերին վերաբերող հատվածից հետո[19] չարունակված է. **Որ թարգմանեաց զմեկնութիւն Գործոց Առաքելոցն[20]: Սպանին Հոռոմք զՎասակ, եղբայր կաթողիկոսին Վահրամայ, զտէրն Անտիոքու[21]** (Ա, 57ա):*

*Մելիքշահի մահվան մասին Սամվել Անեցու՝ Հովհաննես Սարկավագի թղթից մեջբերված հատվածից հետո չարունակված է. **Սորա որդին՝ Տափար[22] սուլտան նստաւ եւ նորա որդիքն՝ աւագն Մահմուտ՝ ի Պարս եւ կրսերն՝ Մելիք՝ ի Գանձակ Հայոց նստան սուլտանք** (Ա, 57բ, Բ, 61բ):*

*Կիլիկիայի Թորոս Ա (1100-1129) իշխանի՝ Գագիկ Բ-ին սպանողներից վրեժ լուծելու, Դրազարկի վանքը հիմնելու եւ այլ գործերի մասին հատվածից հետո[23] ավելացված է Թորոս Բ-ի (1145-1168) տոհմագրությունը. **Այս Թորոս իշխան եւ եղբայր իւր Ստեփանէ, որդիք էին Լեւոնի իշխանին, որդւոյ Կոստանդեայ, որդւոյ Ռուբենայ, Թոռունք Գագկայ Արծրունեաց[24]** (Ա, 58ա, Բ, 61բ):*

*ՌՃՀԲ (1172), Հայոց ՈԺԹ (1170) **Արար Սարգիս վարդապետն մեկնութիւն Կաթողիկեաց Թղթոցն, որ կոչի Սարգիս գիրք[25]** (Ա, 61ա, Բ, 65ա):*

***Իգնատիոս վարդապետն արար մեկնութիւն Ղուկասու աւետարանին** (Հայոց) **ՈՒԸ (1179)[26]** (Ա, 61բ, Բ, 65բ):*

*ՌՄԺԱ (1211), Հայոց ՈԾԸ (1209) **Զաքարէ եւ Իւանէ իշխանք յազգէ Հայոց սպասալարք Թամար դիդօփլին[27] Վրաց, առին ի թուրքաց զԿարս եւ զԱրարատեան աշխարհն եւ գերեցին զԱրտաւիլ քաղաք եւ բազում եկեղեցեաց չինութեան առիթք եղեն** (Ա, 62ա, Բ, 66ա):*

*ՌՄԻԴ (1224), Հայոց ՈՀԱ (1222) **Եւ զի Լեւոն որդի ոչ ուներ այլ դուստր մի Զապէլ անուն, զոր ետուն Փիլիպեայ ումեմն ֆռանկի, որ ոչ վարէր զիշխանութիւն ըստ կամաց իշխանացն, վասն որոյ ընկեցեալ զնա ետուն Զապէլ Հեթմոյ, որդւոյ Կոստանդեայ եւ թագաւորեցուցին զնա** (Ա, 62ա, Բ, 66ա):*

*Ներսես Լամբրոնացուն վերաբերող հատվածից հետո[28] չարունակված է. **Այլ եւ զգիր պատրիարգական աթոռոց եւ եպիսկոպոսաց թարգմանեաց սուրբն Ներսէս ի Յունաց, եւ մեռաւ ամաց ԽԶ (46)** (Ա, 62ա, Բ, 66ա):*

*ՌՄԽԸ (1248), Հայոց ՈՂԵ (1246) **Յայսմ ժամանակի առաքեաց Կոստանդին կաթողիկոս ընծայս եւ անօթս եկեղեցւոյ Սուրբ Թադէոս Առաքելոյն եւ թուղթ շրջաբերական ի ձեռն նորա առաջնորդ Յովսէփ վարդապետին զի չին(ե)սցէ զեկեղեցին եւ զգաւիթ նորա հրամանաւ թաթարին որ(ոյ) անուն էր Անագուրակ նուին[29]** (Ա, 62բ):*

*ՌՄԾԳ (1253), Հայոց Ջ (1251) Թվականի դիմաց, Վանական վարդապետի մահվան մասին տեղեկությունից հետո[30] չարունակված է. **Եւ աշակերտ նորա յաւել Յայսմաւուրք գիրսն ճառս ՃԻԲ (112)[31]** (Ա, 63ա, Բ, 67ա):*

*ՌՅԽԵ (1345), Հայոց ՉՂԲ (1343) **Մեռաւ Եսայի վարդապետն, աշակերտ Ներսէսի, որ արար զմեկնութիւն Եղեկիելի մարգարէին[32]** (Ա, 64բ, Բ, 68բ):*

*ՌՅՉԸ (1388), Հայոց ՊԼԵ (1386) **Մեռաւ Յհովհաննես վարդապետն Որոտնեցին, նստաւ Գրիգոր վարդապետ Տաթեւացին[33]** (Ա, 65բ, Բ, 69բ):*

*ՌՅՂ (1390), Հայոց ՊԼԷ (1388) **Արար Տաթեւացին զՀարցմանց գիրքն** (Ա, 65բ, Բ, 69բ):*

*ՌՅՂԳ (1393), Հայոց ՊԽ (1391) **Գրիգոր վարդապետ Տաթեւացին՝ զպարապմանց լուծմունք[34]** (Ա, 65բ, Բ, 69բ):*

*ՌՆԲ (1402), Հայոց ՊԽԹ (1400) «**Ծերենց Գրիգոր վարդապետն ի բազմաց գրոց ժողովեաց զայսմաւուրեաց պատմութիւնն[35]** (Ա, 65բ, Բ, 69բ):*

ՌՆԴ (1404), Հայոց ՊԾԱ (1402) Թվականի դիմաց գրված է մի տեղեկություն, որը Լենկ Թեմուրին հաջորդած մահմեդական գահակալների թվարկում է եւ գալիս հասնում է մինչեւ ժամանակագրությունը հավաքող-կազմողի ժամանակը:

***Ի սոյն ժամանակս Լանկ Թամուրն սատակեցաւ, յետ որոյ որդիք նորա Շահռուհ եւ Եարանշահ տիրեցին Թարվիզու: Յետ սոցա Ահմատ խանն, որդի Օյիս խանին, որ փախուցեալ էր ի Թամուրէ: Ապա յարեաւ Ղարայ Ուսուֆն, ազգաւ թուրքման եւ հալածական արար**

զամենայնսն եւ թագաւորեաց միայն: Զկնի նորա, որդի նորա Սկանդարն եւ ապա եղբայր նորա Ջհանշահն եւ ապա Հասանն եւ ապա Եաղուպ շահն[36], որոյ քոյրն էր կին Շըխհայտարին, յորմէ ծնաւ Իսմայէլ, եւ նա՝ զԹահմազ, եւ նա՝ զՍուլտապանդէն[37], եւ նա՝ զմեծ Շահապասն, եւ նա՝ զշահ Սէֆի, թոռն իւր: Յետ շա(հ) Սեփուն նստաւ երկրորդ Շահապասն, զկնի նորա նստաւ շահ Սուլեյմանն, որ այժմ տիրէ արեւելեան աշխարհիս, ի թվականիս Հայոց ՌՃԼԶ (1687) ամին[38] (Ա, 65բ, Բ, 69բ):

ՌՆԶ (1406), Հայոց ՊԾԳ (1404) Տէր Յակոբ եպս. Բ (2), սմա դեղ մահու արբուցին[39] (Ա, 65բ, Բ, 69բ):

Հայոց ՊԾԸ (1409) Վաղճանեցաւ սուրբ Գրիգոր աստուածաբան բարեւնապետն եւ եղաւ ի Տաթեւու վանքն[40] (Ա, 65բ):

ՌՆԺԴ (1414), Հայոց ՊԿԱ (1412) Տէր Պօղոս եպս. Բ (2) յԱրարատէ: Սմա դեղ մահուան արբուցին[41] (Ա, 66ա, Բ, 70ա):

ՌՆԻԷ (1427), Հայոց ՊԿԴ (1425) Տէր Գրիգոր եպս. Գ. յաւուրս սորա Աղն գարճաւ ի գաւառ իւր[42] (Ա, 66ա, Բ, 70ա):

Այս վկայութիւնից հետո գրված է՝ «Ցայլ պատմութեանց գրեցաւ» եւ չարունակված է. Ապա թագաւորեաց Լեւոն որդի բրնձին[43] ՊԻԳ (1374) զոր Մսրայ սուլտանն հանդերձ թագուհեաւն եւ բազում իշխանօք եւ ժողովրդեամբ գերի տարաւ եւ բարձաւ թագաւորութիւն Հայոց ի Սըսայ: Այս թագաւորս Լեւոն է (7) ամիս թագաւորեաց եւ ապա գերեցաւ եւ անուն գլխաւորին, որ գերեցն՝ Այշեխուր կոչիւր[44]:

Յետ բառնալոյ թագաւորութեան Հայոց ի Սըսայ ի ՊԿԲ (1413) ժողովեցան թագաւորազունքն եւ իշխանքն եւ բազումք ի ժողովրդենէն, մտեալ ի նաւ գնացին ի Ֆռանկստան, ԼՌ (30 000) տուն քրիստոնեայք հայ ազգաւ[45]:

Ի ՊՀԶ (1427) Սկանդար իմիրզէն, որդի Ղարայ Ուսուֆին, էառ զբերթն Մակուայ ի ձեռաց երկաբնակաց եւ զՆըւան՝ ի քրթաց եւ եղեւ խաղաղութիւն[46] (Ա, 66ա, Բ, 70ա):

Վ. Հակոբյանի հրատարակած Անանունի ժամանակագրության մասում Ա եւ Բ օրինակներն ունեն միայն երկու հավելում: Ամերիկայի հայտնագործման մասին տեղեկությունը չարունակված է. «Սա է (Ամերիկան, Կ. Մ.) ի ներքոյ երկրիս հակոտնեայս մեզ եւ մեծ է քան զերիս մասունս, որ յայս աշխարհիս բաժանին, որոյ տիրէ արքայն Սպանիացւոց եւ կոչի Ենկիդոյնայ[47], որ է Նոր աշխարհ» (Ա, 67ա, Բ, 71ա):

Միայն Բ ձեռագրում՝ ՌՈԽԹ (1643), Հայոց ՌՂ (1641) թվականի դիմաց. Թաթարն եկն եւ սակաւ ինչ գերեաց զգաւառն Նիգ եւ Կոտայէից եւ Ծաղկոցաց[48] (Բ, 74ա):

ՌՈՁԷ (1687), Հայոց ՌՃԼԶ (1687) «Ցայսմ ժամանակի օսմանցւոց թագաւորն Մահմէտ բանս հայհոյութեան խօսեցաւ ի Քրիստոս: Գրեաց առ թագաւորսն քրիստոնէից առ կայսրն Ալամանայ[49], թէ որպէս ունիմ զգերեզման Աստուծոյ քոյ, նոյնպէս կամիմ իշխել ի վերայ Հռոմայ եւ ամենայն արեւմտեայց եւ անհուն բազմութեամբ յարեաւ ի պատերազմ եւ պարտեցաւ ի զօրութիւնէն Աստուծոյ եւ օրեաւ ի պատերազմ եւ պարտեցաւ ի զօրութիւնէն Աստուծոյ եւ ժանդակութեամբ փափին եւ առեալ եղեւ Պուտում քաղաք մեծ եւ յառաջեցին մինչեւ ի Բէլրդատ քաղաք Նամցա կայսրն եւ Լէհայ գռալն եւ Վենետիկացւոց թուճն, Ա(ստուծո)վ»[50] (Ա, 71ա, Բ, 75ա):

Ա եւ Բ օրինակներն օգնում են Վ. Հակոբյանի հրատարակած Անանունի ժամանակագրության մի եղծված հատվածի ճշգրտմանը. «Հայկական գաւեղի թիւն ի բաց ձգեցաք եւ զԼատինացւոց համեմատ գրեցաք զփրկիչն մերոյ ընդ մերոյս»[51]: Մեր ձեռագրերի չնորհիվ միանգամայն հստակ է դառնում գրվածի բովանդակությունը. Հայկականի զաւեղեալ թիւն ի բաց ձգեցաք եւ ըստ Լատինացւոց համեմատութեամբ գրեցաք զՓրկչին մերոյ ընդ մերոյս հաւասար[52] (Ա, 70բ, Բ, 74բ):

Ա ձեռագրի բուն գրչությամբ վերջին վկայությունը վերաբերում է եղիազար կաթողիկոսի մահվանն ու Նահապետի աթոռակալության.

ՌՈՂԱ (1691), Հայոց ՌՃԽ (1691) Վախճանեցաւ Եղիազար կաթողիկոսն եւ նստաւ նորա աշակերտն Նահապետ կաթողիկոս[53] (Ա, 71ա):

Բ ձեռագրի նախավերջին վկայությունը՝ Իսկ ի ՌՃԽԱ (1692) թուին յարեաւ գաղան մի մարդակեր յաշխարհն Արարատեան եւ աղջիկ մի ի Սուրբ Էջմիածնայ գեղջեն յափշտակեաց եւ այլոց տեղեաց բազում վնաս հասոյց, մինչ զի ի դիշերի ոչ ոք կարէր հանգիստ կալ, կամ այլ ուրէք երթալ եւ եւոյ անյայտ եղեւ: Եւ յետ այնորիկ եկն մարախ բազում յամսեանն օգոստոսի, բայց ոչինչ վնասեաց, միայն եկեր սակաւ ինչ տերեւ բամբակոյ եւ էանց մինչեւ ի լեռն Արագած

եւ ոչնչացեալ փուչ եղեն[54] (Բ, 75ա):

Բ ձեռագրի վերջին տեղեկութիւնը:

ՌՈՂԱ (1691), (Հայոց) ՌՃԽԱ (1692) **Ի սոյն ամի Գ (3) քրիստոնեայք ի յԱնի նահատակեցին ջախջախելով կացնաւ յոտից մինչեւ գլուխ, նոյնպես եւ ոմն սարկաւագ ի Կարս քաղաքի քարկոծեցին, յորոց վերայ լոյս ճառագայթեցաւ ի տեսիլ ամենեցուն եւ եղեւ հատատութիւն ի վերջին դարուս հաւատացս Քրիստոսի**[55] (Բ, 75ա):

Ա ձեռագրի ժամանակագրության վերջին միավորը՝ այլ գրով.

ՌՋԲ (1702), Հայոց ՌՃԾԱ (1702) **Վաղճանեցաւ Իսահակ վարդապետն, առաջնորդ Սուրբ Առաքելոյն Թադէոսի, յուլիս ամսոյ ԺԳ (13), ի ծագիլ արշալուսին, օրն երկուշաբթի եւ թաղեցաւ ի ձախակողման խորանին ի վանս Սրբոյն Գրիգորի, որ մականուամբ Ուչքիլիսայ կոչի որ եւ նորոգեաց կաթուղիկէն եւ զսալարկսն կտրին եւ զպարիսպն եւ զխցերն եւ զարդարեաց հոգեւոր կարգաւորութեամբ հոգեւորական**[56] (Ա, 71ա):

Ծանոթագրություններ

1. Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 317-332: Յավոք ժամանակագրության նախորդող փոքրիկ ներածականում կամ գրքի առաջաբանում չի նշված, թե որ ձեռագրից է քաղված բնագիրը:

2. Նույն տեղում, էջ 317:

3. Երկու ձեռագիրն էլ սկսվում են «Գաւազանագիրք Աստուածաշունչ գրոց» պատկերազարդ նյութով, երկրորդում էջ առ էջ կրկնվում է առաջինի ձեւավորումը, միայն մանրանկարներն անավարտ են (դեմքերը չեն պատկերված): Սամվել Անեցու ժամանակագրությունը երկուսում էլ սկսվում է լուսանցազարդով ու «Յ» զարդագրով (Մատենադարան, ձեռ. թիվ 7261, թերթ 17բ, ձեռ. թիվ 10202, թերթ 16բ): Ժամանակագրությունը առաջին ձեռագրում զբաղեցնում է 17բ-71ա, երկրորդում՝ 16բ-75ա թերթերը:

4. Մատենադարանի թիվ 7261 ձեռագիրը Սամվել Անեցու չարունակված ժամանակագրությունից հետո ունի նաեւ այլ նյութեր (Թովմա Մեծոփեցւոյ Պատմութիւն, Կիրակոս Բանասիրի՝ վարք Թովմայի Մեծոփեցւոյ, փոքրիկ նյութ՝ «Անունք քաղաքացն», ուր թուղթ է ուղարկել Պողոս առաքյալը), իսկ վերջին էջում՝ հիշատակարան, որը ձեռագրացուցակում համարվում է հետագայի. «Հիշատակարան հետագայի՝ 107ա (ԺԷ դ.)» (Յուցակ ձեռագրաց Մատենադարանի, հ. Բ, էջ 494): Նկատենք, որ ժամանակագրությունը չարունակված է մինչեւ 18-րդ դարի սկիզբը: Փոքրիկ գրությունը զետեղված է էջի ներքեւում, թվական չունի, բայց բովանդակությունը վերաբերում է գրչությանը. **«Ես Մինաս ծառայ Աստուծոյ զայս գիրքս սուրբ գրե[ցի] ձեռամբ իմով»**: Դրանից քիչ վերեւ ավելի մանր տառերով փոքրիկ չափածո է գրված. «Գծող բանիցս այսմ տառի, Անհաս բանից անծիր բառի, Որ եմս տրուփ, որ մեղս առի, Որ կամիմ մեղս ծ///»: Միանգամայն հնարավոր է, որ այս հիշատակարանները հետագայի չեն, այլ պատկանում են հենց ձեռագրի գրչին: Մատյանի պահվելու վայրին է վերաբերում ձեռագրի սկզբում եղած մակագրությունը՝ «Ի դրան Սուրբ Առաքելոյ Թադէոսին 59» (թերթ 1ա):

5. Օրինակ՝ «ՌՆԿԹ (1469), Պարոն Լոյն նահատակեցին ի Կաֆայ» եւ «ՌՈՒԳ (1643), Մակուայ բերդն քակեցին» (Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 319, 326) Ա եւ Բ բնագրերը չունեն:

6. Տե՛ս Դանիել, Թ, 21-27, համմտ. ժամանակագրության Ստեփաննոսի Օրբելէանի, էջ 21, Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 35:

7. Տեղեկությունը հիմնականում պարականոն բնույթ ունի:

8. Հաջորդ միավորներից առաջ չենք կրկնում «Փրկչական» բառը:

9. Մականունը միայն Ա օրինակն ունի:

10. Վերջին բառերը հավանաբար վերաբերում են «Կանոնագիրք Հայոց»-ի կազմմանը:

11. Թղթի գրության ստույգ թվականն այլ աղբյուրներից հայտնի չէ, բայց հավանաբար ավելի վաղ է եղել, քանի որ Գերմանոսը մահացել է 728 թ. (Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 1003-1008):

12. Շիրակավանի ժողովի արդյունքների մասին կան հակադիր կարծիքներ (տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 1137-1139):

13. Անեցի, էջ 98:

14. Գագիկ Արծրունին արաբներից թագ է ստացել 908 թ., սակայն երկրորդ անգամ թագ է ստացել 914 թ. Սմբատ Ա Բագրատունու մահապատժից հետո (Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 75-77):

15. Հայր Վարդիկի եւ հայր Կարմիրի մասին տեղեկությունները քաղված են Ստեփանոս Տարոնեցու Պատմությունից (Ստեփանոսի Տարոնեցւոյ Պատմութիւն, էջ 176-177):

16. Աբասի որդի Աշոտ Գ Ողորմածին, որը թագավոր օծվեց Անիում 961 թ., Աշոտ-Գագիկ կամ Գագիկ է կոչում Մատթեոս Ուռհայեցին (Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրություն, էջ 8-9): Ն. Ադոնցն Ուռհայեցու հայտնածը համարել է «խառնակ» տեղեկություն (Ն. Ադոնց, Հայեցու հայտնածը համարել է «խառնակ» տեղեկություն (Ն. Ադոնց, Երկեր, հ. Ա, Երեւան, 2006, էջ 521): Ներկայացված ժամանակագրական միավորը հաստատում է Ուռհայեցու հաղորդածն այն մասին, որ Աշոտ Ողորմածը «Աշոտ Գագիկ» երկանուն է ունեցել: Վերջինս միայն Գագիկ անունով է հիշվում մանր ժամանակագրություններից մեկում («Գագիկ օծաւ թագաւոր 411 (962) ի թուին Հայոց»), որը ծանոթագրելով վ. Հա-

կոբյանը կարծել է, թե ժամանակագիրը նշել է ավելի ուշ՝ 989-ից թագավորած Գագիկ Ա-ին (Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 337, 347):

17. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի պատմությունը հասնում է մինչեւ 1004 թ., իսկ Արիստակես Լաստիվերցու պատմությունը սկսվում է 1001 թվականից: Պատմական վերջին տվյալը, որ արձանագրել է Արիստակես Լաստիվերցին, Ալփասլանի մահն է՝ 1072 թ.: Սա համարվում է Լաստիվերցու պատմության ավարտման ժամանակը, թեեւ ենթադրվել է նաեւ, որ պատմությունը նա գրել է 1072-79 թթ. ժամանակամիջոցում (Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, թարգմանությունը Վ. Գեւորգյանի, առաջաբանը եւ ծանոթագրությունները Գ. Մանուկյանի, Երեւան, 1971, էջ VIII): Գ. Մանուկյանը Արիստակես Լաստիվերցու մասին ավելացնում է. «...կարելի է նրա ծնունդը մոտավորապես դնել 1002 թ., իսկ մահը՝ 1080 թ.» (Նույն տեղում): Հայտնի է, որ Արիստակես Լաստիվերցու պատմությունը բաղկացած է 25 մասից եւ վերջաբան հիշատակարանից, որն ի դեպ, անավարտ է: Հոհան գրչին պատկանող հնագույն ընդօրինակությունից (Մատենադարան, ձեռ. թիվ 2865) երեւում է, որ վերջից թերթ է ընկել եւ Լաստիվերցու երկի ավարտական հատվածը, փաստորեն, առայժմ հայտնի չէ: Լաստիվերցու հիշատակարանը սույն ձեռագրից հրատարակած Ա. Մաթեւոսյանն այն զետեղել է 1080 թվականի տակ եւ անավարտ մնալը ծանոթագրել. «Թերթ է պակաս: Գրվել է մինչեւ 1080 թվականը» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 115): Հավանաբար նկատի է առնվել պատմիչի մահվան մասին եղած ենթադրությունը (1080 թ.): Սակայն վերը հրատարակված հավելման մեջ առկա՝ Լաստիվերցու պատմության ավարտի համար նշված ՇԼ (1081) թվականը թույլ է տալիս ենթադրել, որ այն եղել է պատմիչի հիշատակարանի վերջնամասում:

18. Մատթեոս Ուռհայեցին դեպքերի ժամանակ է նշում 1051 թվականը, ամրոցներից մեկը կոչում է Արկնի (Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, էջ 119-121, 129-130):

19. Անեցի, էջ 117:

20. Մինչեւ այստեղ ունի նաեւ Բ օրինակը՝ էջ 61ա:

21. Խոսքը վերաբերում է Գրիգոր Մագիստրոս Պահլավունու ավագ որդի եւ Գրիգոր (Վահրամ) Վկայասեր կաթողիկոսի եղբայր Անտիոքի դուքս Վասակին, որը դավադրաբար սպանվեց 1078 թ. (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. 1, էջ 418-419):

22. Մոհամմադ Տափար (1093-1105), Տե՛ս Ս. Բուռնազյան, Հայաստանը եւ սելջուկները XI-XII դդ., Երեւան, 1980, էջ 270-271:

23. Անեցի, էջ 121:

24. Հավանաբար համառոտված է Կիրակոս Գանձակեցու հայտնած տեղեկությունը. «Այս Թորոս իշխան եւ եղբայր իւր Ստեփանէ, որդիք

էին իշխանին Լեւոնի, որդւոյ Կոստանդեայ, որդւոյ Ռուբենայ, թոռունք յառաջագոյն ասացեալ առնն, որ յազգականութենէ եւ ի զաւակացն Գագկայ Արծրունեաց» (Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, էջ 109): Այս վկայությունը նպաստում է Ռուբեն Ա-ի ծագման քննությանը (Է. Բաղդասարյան, Կիլիկիայում Ռուբինյան հարստության հիմնադիր Ռուբեն Ա իշխանը եւ իր գործը, «Էջմիածին», 2006, Զ, էջ 92-93):

25. 12-րդ դարի նշանավոր վարդապետ Սարգիս Շնորհալին Կաթողիկեից թղթերի մեկնությունը կատարել է 1154 թ. (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 168):

26. Իգնատիոս վարդապետի մեկնության գրության թվականը հայտնի չէ: Նա իր աշխատությունը հանձնել է Գրիգոր Դ Տղա (1173-1193) կաթողիկոսին (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 270-271):

27. Վրացերեն՝ «Թագուհի»:

28. Անեցի, էջ 145:

29. Այս մասին մանրամասնորեն պատմում է Կիրակոս Գանձակեցին, որը ճանաչում էր Թագեի վանքի առաջնորդ Հովսեփ վարդապետին (Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, էջ 311-312, 328):

30. Անեցի, էջ 150:

31. Խոսքը Հայսմավուրքը խմբագրող Կիրակոս Արեւելցու մասին է, որը գրում է. «Ես... Կիրակոս վարդապետ ի թուականիս Հայոց ՁԲ (1253) աշխատասիրեալ յաւելի... ճառս համառաւտս ՃԺԲ (112)...» (Մատենադարան, ձեռ. թիվ 7433, էջ 428, Ա. Մաթեւոսյան, Ս. Մարաբյան, Գրիգոր Մերենց Խլաթեցի, Երեւան, 2000, էջ 77):

32. Եսայի Նչեցին մահացել է 1338 թ., հմմտ. Անեցի, էջ 168:

33. Հովհան Որոտնեցին մահացել է 1386 թ.: «Նստաւ» ասելով հեղինակը նկատի ունի, որ Տաթեւացին գրավեց Հայոց բարունապետության աթոռը:

34. Նկատի ունի «Լուծումն պարապմանց սրբոյն Կիւրղի» գործը:

35. Գրիգոր Խլաթեցու ձեռքով Հայսմավուրքի խմբագրության թվականի վերաբերյալ մի հիշատակարանում ասվում է, որ դա տեղի է ունեցել «...մերումս ժամանակի, որ էր թվական... ՊՇ (1401)» (Ա. Մաթեւոսյան, Ս. Մարաբյան, Գրիգոր Մերենց Խլաթեցի, Երեւան, 2000, էջ 74-78):

36. Լենկ Թեմուրի (1335-1405), նրա որդիներ Միրանշահի (Եարանշահ) եւ Շահռուխի, Ջելաիրյան սուլթան Ահմադի, ինչպես նաեւ կարակոյունլու Թուրքմեն Կարա-Յուսուֆի (մահ. 1420), նրա որդի Իսքանդարի (մահ. 1437), սրա եղբայր Ջհանշահի (մահ. 1467), աղ-կոյունլու Հղուն Հասանի (մահ. 1478), նրա որդի Յաղուբի (1478-1490) մասին տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 24, 32-53, Գ. Կիրակոսյան, Հայաստանը Լանկ-Թամուրի եւ Թուրքմեն ցեղերի արշավանքների շրջա-

նում, Երեւան, 1997, էջ 74-118:

37. Ա օրինակում տեքստը հասնում է մինչեւ այստեղ, էջի ստորին մասի վնասված լինելու պատճառով: Շահ Մուհամմադ Խուդաբանդայի (1578-1587), նրա նախորդ եւ հաջորդ շահերի մասին տե՛ս Առաքել Դաւրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Խանլարյանի, Երեւան, 1990, էջ 440-441, 474-475, 521:

38. Այստեղ հիշատակված պարսից վերջին գահակալ Շահ Սուլեյման Ա-ի (1667-1694) ժամանակակիցն է այս տեղեկությունը գրող հեղինակը, որն այս տեղեկությունն արձանագրել է 1687 թվականին:

39. Հակոբ Գ Սսեցու աթոռակալության շրջան է համարվում 1404-1411 թթ., մահացել է թունավորմամբ (Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, էջ 2372):

40. Գրիգոր Տաթեւացու (1346-1409) մահվան թվականն ու թաղման վայրը ճիշտ է ներկայացված:

41. Պողոս Բ Գառնեցին (1418-1430) թունավորվել է (Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, էջ 2406):

42. Թվականի սխալ կա: Հավանաբար խոսքը երեք տարի աթոռակալած Գրիգոր Թ Մուսաբեկյանցի (1439-1441) մասին է, որի ժամանակ Ս. Գրիգոր Լուսավորչի Աջը Սսից բերվեց Վաղարշապատ՝ «ի գաւառ իւր»:

43. Լեւոն Զ Լուսինյան (1374-1375), որի հայրը Հովհաննես-Ջեհան Լուսինյանն էր, Կիլիկիո գունդստապլ (1329-1344): Տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 450-452:

44. «Այշեխուր» անվանվածը Հալեպի ամիրա Իչիկ (Աչըգ) Թեմուրն է: Նրան այդպես է կոչել նաեւ Մաղաքիա դպիրը (Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 542, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 784):

45. Բ օրինակում՝ «Ճռանկաստան»: Այս եւ նախորդ վկայություններն են համապատասխանում են Մաղաքիա դպիրի ժամանակագրությանը, որից օգտվել է Ղ. Ալիշանը (Ալիշան, Սիսուան, էջ 542):

46. Այս դեպքերի մասին գրում է Թումա Մինասենցը (1428 թ.): Մակվի «երկաբնակներին» (կաթոլիկ հայերին) պատկանելու մասին նա չի նշում, բայց գրում է, որ բոլոր քրիստոնյաները կսկիծ ապրեցին, «զի բոլոր աշխարհացս այս մին բերթն միայն էր մնացեալ ի ձեռս քրիստոնէից»: Նաեւ նշում է, որ Սքանդարը հասել է «մինչ ի Հէչատ եւ ի Նըլան»: Լ. Խաչիկյանն այս վերջինի «վայրն անորոշ» է համարել (Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, կազմեց Լ. Խաչիկյան, Երեւան, 1955, էջ 374-376, 807), իսկ Ս. Երեմյանն այն նույնացրել է Ուրմիա լճի ափին գտնվող Նախճավանի հետ (տե՛ս Վ. Վարդանյան, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, Երեւան, 1969, էջ 199): «Նըլանի» 15-րդ դ. սկզբներին քրդերին պատկանելը հայտնի է դառնում միայն վերը ներկայացված ժամանակագրության միջոցով:

47. Բ օրինակում՝ «Ենկիդունիա»:

48. Առայժմ որեւէ այլ աղբյուրից այս տեղեկությունը հայտնի չէ:

49. Բ օրինակում՝ «Ալամայ»:

50. Տեղեկությունը 1683-1687 թթ. ավստրո-թուրքական պատերազմի մասին է: «Պուտումը» Հունգարիայի մայրաքաղաք Բուդան է (Օֆենի), որը 1686 թ. գրավել է քրիստոնյա զորքը, ապա առաջացել ու հասել է Բելգրադ: Հեղինակը սկզբում «ալամանայ կայսր» անվանվածին հետո կոչում է «Նամցա կայսրն» (հմմտ. «Նէմցա», Մանր ժամանակագրություններ, հ. 2, կազմեց Վ. Հակոբյան, Երեւան, 1956, էջ 404-405): Հետաքրքիր է նաեւ քրիստոնյա մյուս առաջնորդներին անվանելու կերպը. «Լէհայ գռալն» լեհական թագավորը՝ «կառլոն» է, իսկ վենետիկցիների «թուճճն» Վենետիկի դոժը: Երկհատոր «Մանր ժամանակագրությունների» առարկայական ցանկերում այս պաշտոնները չեն հիշատակվում:

51. Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 326: Վ. Հակոբյանը ծանոթագրել է. «Սույն հատվածի վերջին բառը չկարողացանք ընթեռնել, միայն պարզ երեւում է առաջին «հ» եւ վերջին «րս» տառերը. գուցե «հորս»: Սակայն հատվածից հետո, տեղեկությունները հիշատակվում են հայոց եւ այժմ մեր կողմից գործածվող տարեթվերի ոչ թե 553 : 1 հարաբերությամբ, ինչպես մինչեւ այդ, այլ 551 : 1 հարաբերությամբ» (Նույն տեղում, էջ 331):

52. Փաստորեն, այս հատվածում ժամանակագրության կազմողը Քրիստոսի թվականին զուգահեռ դրվող Հայոց թվականի երկու տարին բաց է թողել, որպեսզի համապատասխանեցման համար ոչ թե 553 գումարվի, այլ՝ 551: Այսպես. Քրիստոս ՌՈԿԴ (1664) թվականի դիմաց Հայոց ՌՃԺԱ (1111+553=1664) թվականն է, որից հետո Հայոց ՌՃԺԲ, ՌՃԺԳ թվականների դիմաց Քրիստոս թվական չի նշված: Այնուհետեւ Քրիստոս ՌՈԿԵ (1665) թվականի դիմաց գրված է Հայոց ՌՃԺԴ (1114+551=1665) թվականը: Վերը նշված վերջին՝ ՌՈՁԷ (1687) թ. տեղեկության դեպքում արդեն տեսնում ենք, որ երկու տարվա տարբերությունը վերացած է:

53. Եղիազար Ա Այնթապցի (1681-1691), Նահապետ Ա Եղեսացի (1691-1705):

54. Անմիջական տպավորություններ արտահայտող եւ ստույգ մանրամասներ պարունակող (մորեխի՝ օգոստոսին գալը, բամբակի տերեւները ուտելը եւ այլն) այս վկայությունը ենթադրել է տալիս, որ այն արձանագրողը բնակվել է այս տարածքում՝ Արարատյան երկրամասում:

55. 17-րդ դարի վերջին Անիում երեք քրիստոնյաների նահատակության մասին վկայությունը շատ հետաքրքրական տեղեկություն է: Ընդունված է կարծել, որ 15-17-րդ դարերում Անին լքված ու անմարդաբնակ էր: Սակայն, ինչպես երեւում է, բնակավայրը, թեկուզ խղճուկ վիճակում, չարունակել է գոյատեւել: Ուշագրավ է, որ 1658 թ. Կարսում Ա-

թանաս երեցն իր ընդօրինակած ավետարանի գրչության վայրը նշելիս գրում է. «...ի քաղաքս Ղարս կոչեցեալ, հուպ ի Շիրակայս յԱնու...» (Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Գ, էջ 1658, տե՛ս նաեւ Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 562): Պատահական չէ, որ 17-րդ դարի վերջերին վերականգնվել է Անիի մերձակա Հոռոմոսի վանքը (Կ. Մաթեւոսյան, Հոռոմոսի վանքի պատմության նոր էջեր (ԺԴ-ԺԹ դդ.), «Էջմիածին», 1993, Դ-Ջ, էջ 77): Անիում երեք քրիստոնյաների եւ Կարսի սարկավագի նահատակությունը՝ «յորոց վերայ լոյս ճառագայթեցաւ ի տեսիլ ամենեցուն», հեղինակը համարում է «վերջին դարում» քրիստոնյաների հավատն ամրապնդող փաստ: Բարեբախտաբար Կարսեցի սարկավագի անունը հայտնի է եւ ընդգրկված Հայոց նոր վկաների ցանկում՝ Սարգիս սարկավագ Կարսեցի, նահատակության վայրը՝ Կարս, 1691-92 (Հայոց նոր վկաներ, էջ 528-530):

56. Թադեի վանքի առաջնորդ Իսահակ վարդապետի (Արդար Իսահակ, Իսահակ Մակվեցի) մահվան մասին վկայող տեղեկություններ են պահպանվել այլ ժամանակագրությունների մեջ (Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 304, 311, 315, 328, Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 414, 420), նաեւ նրա աշակերտ Իգնատիոս Համթեցու հիշատակարանում, որը նշում է, թե Արդար Իսահակը մահացել է ՌՃՃԱ (1702) թ. եւ թաղվել «յՈւէքիլիսէն, ի յիւրում աթոռին, ի ձախակողմն խորան» (Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ժ, Մանր մատենագիրք, ԺԵ-ԺԹ դար, հրատարակեց Գիւտ Աղանեանց, Թիֆլիս, 1912, էջ 381, Իսահակի կենսագրությունը տե՛ս Կ. Ամատունի, ԺԷ դարու երեւելի վարդապետներ, Վենետիկ, Ս. Ղազար 1989, էջ 81-84 (Հայագիտական մատենաշար, «Բազմավէպ», 27): Սակայն վերը հրապարակված տեղեկությունն առավել հանգամանալից է եւ ճշգրիտ մանրամասներով է ներկայացնում Բագավանում (Ուէքիլիսե) նրա կատարած աշխատանքները: Ինչպես նշել ենք, այս ձեռագիրը պահվել է Ս. Թադեի վանքում: Հավանաբար այս վերջին տեղեկությունը գրվել է հենց այնտեղ:

Է. ԵՓՐԵՄ ՂԱՓԱՆՑԻ (18-րդ դ.)
Մատենադարան ձեռ. թիվ 3965

Ձեռագիրը գրվել է Կամենեցում 1624 թ., Ներսես Կամենեցու ձեռքով, որի մասին վկայում է հիշատակարանը. «Գրեցաւ Գաւազանագիրքս ձեռամբ մեղաւոր եւ անարժան Ներսէս դպրապետի, ի քաղաքն Կամէնից, որդոյ Հօլուպ վոյթի, թվին ՌՀԳ (1624) հոկտէմբեր ամսոյ Գ (3): Աստուած ողորմի վարպետաց հոգոյն» (Թերթ 63բ)[1]:

18-րդ դարի սկզբին ձեռագիրը պատկանել է Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք **Եփրեմ Ղափանցուն**[2], որն իր ժամանակին վերաբերող տեղեկություններ է մուծել ժամանակագրության վերջին հատվածում: Լինելով գրասեր մարդ, նա հավաքել, նաեւ հեղինակել է տաղեր, կազմել մի Տաղարան եւ ընդօրինակել տվել 1695 թ. (Մատենադարան, ձեռ. թիվ 7717): Հետաքրքիր է, որ 1687 թ. Եփրեմ Ղափանցին ստացել է Սամվել Անեցու ժամանակագրության մեկ այլ օրինակ[3]:

Մեկընդմեջ երկու անգամ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքի եւ Ադրիանուպոլսի (Էդրինե) առաջնորդի աթոռը զբաղեցրած Եփրեմ Ղափանցին 1699-ին Ադրիանուպոլսում էր[4]: 1701 թվականի օգոստոսին այս քաղաքում պատահած մեծ հրդեհի մասին Սամվել Անեցու ժամանակագրության վերջում ավելացրած հատվածում նա իրեն համարում է «ծերունի վարդապետ»: 1701 թ. սեպտեմբերի 1-ին նա կրկին պատրիարք է ընտրվում, սակայն չարունակում է մնալ Ադրիանուպոլսում[5], ուր այդ տարվա վերջին ավարտում է իր հիմնած Ս. Աստվածածին եկեղեցու կառուցումը:

1702 թ. մարտի 7-ին Եփրեմ Ղափանցին աթոռանկ է արվում եւ հեռացվում Կոստանդնուպոլսից՝ ուղարկվելով Էջմիածին[6]: Իր հետ ունենալով սույն ձեռագիրը, նա ժամանակագրության մեջ արձանագրում է Էջմիածին հասնելու օրը (օգոստոսի 1): Հետաքրքիր է, որ Եփրեմ Ղափանցին ժամանակագրության մեջ հիշատակություններ է ավելացրել նաեւ իր նախկին ուսուցիչների՝ երէցկակի Ս. Կարապետ վանքի առաջնորդ Եսայի վարդապետի եւ Գրիգոր Ջեյթունցու վերաբերյալ[7]: Եփրեմ Ղափանցու հավելումները կատարված են կամ իր,

կամ նրա քարտուղարի ձեռքով[8]: Համենայն դեպս նույն ոճն ունեցող հավելումները հասնում են մինչեւ 1735 թվականը, երբ դժվար թե ստացողը ողջ լիներ:

*«Թուին ՌՃԻԳ (1674) **Նախճուանայ Սուրբ Կարապետու** վանայ առաջնորդ **Եսայի** աստուածաբան վարդապետն ի Ջ[9] (80) ամեայ գոլով առ Աստուած փոխեցաւ եւ թաղեցաւ ի **Սուրբ Էջմիածինն**, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի»[10] (81բ):*

*«Թուին ՌՃԺԲ (1663) **Զեյթունայ** առաջնորդ կատարեալ երաժիշտ **Գրիգոր** աստուածաբան վարդապետն հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս, յիւրում մենաստանի, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի»[11] (81բ):*

*«Թուին ՌՃԾ-ն (1701) եւ օգոստոսի ԻԳ-ն (23) յաւուր չաբաթու զկնի յերեկոյեան ժամուն ի մէջ այս **Էտէրնէու** հրկիզութիւն եղեւ նախ եւ առաջ բերդէն ի դուրսն այրվեցաւ եւ ապա թէ հուրն մտաւ ի մէջ բերդին եւ մինչեւ ի ԺԴ (14) ժամն վառեցաւ ըզ Ա (1) Լատինացոց եւ Ա (1) Հայոց եւ ԺԵ (15) սինովայ Հրէից եւ Է (7) ջամի Տաճկաց, թէ ի դուրսն եւ թէ ի մէջ բերդին եւ Ռ եւ ԵՃ (1500) տուն, ասացին թէ այրեցաւ, թէ էքմէքչու փուռն եւ թէ ջաղաց, թէ տներ եւ թէ մեչխանայք[12] եւ թէ ամենայն արհեստաւորաց խանութներ:*

*Իսկ յետ այսորիկ եւ ես **Էտրէնու** առաջնորդ ծերունի **Եփրէմ** վարդապետս այլուի ՌՃԾ (1701) թուին յիշեցի զԱստուած եւ կանգնեալ կրկին անգամ չինել եաու մէր Հայոց եկեղեցին քան ըզառաջինն այլ պատուական եւ ի դեկտեմբերի ԻԳ-ի (23) ի տօնի Դաւթայ մարգարէին օծեցի զեկեղեցին եւ եղի յանունն **Սուրբ Աստուածածնին**» (82ա):*

*«Ի ՌՃԾԱ (1702) թուին Հայոց ես **Եփրէմ** վարդապետս ելի ի **յէտրէնու** եւ եկեալ մտի ի **Սուրբ Էջմիածինս** յամսեանն օգոստոսի Ա (1), յաւուր չաբաթու» (82ա):*

*«Թվին ՌՃՁ (1731) Շահն եկաւ **Երեւան**, ի դառնալն եկաւ չալաբան զօրք, եկան **Թաթէ Առաքելոյ** վանից ոչխարն, դաւարն, թէ արծաթէղեն, թէ ոսկէղեն, թէ խաչ, թէ ոգեստ ամէն կողոպտեցին, տուին, կորան» (82բ):*

«Թվին ՌՃՁԱ-ին (1732) հաշտութիւն ար(արին) օսմանցին եւ կարմրագթակն, որ մականուամբ ղզլպաչ կոչին» (82բ):

«Թուին ՌՃՁԴ (1735) Պարսից զօրավարն ասպատակեաց երկիրն

***Բագրեւանդայ** եկեալ հինաւուքն հասին վանքն **Սրբոյն Գրիգորի**[13], իսպառ բնաջինջ արարին միաբանք ուխտին, անդ էր առաջնորդ մեծի Առաքելոյն Թադէոսի **Յոհաննէս** աստուածաբան վարդապետն, որ նահատակեցաւ Ժ (10) միաբանով, որոց յիշատակն աւրհնութեամբ եղիցի եւ աղօթիւք նոցին Տէր մեզ ողորմեսցի» (82բ):*

Ծանոթագրություններ

1. ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, էջ 131: Ձեռագիրը գրված է թղթի վրա, նոտրգրով (թերթ՝ 116, 19×16 սմ): Ժամանակագրությունը զբաղեցնում է 13ա-86բ թերթերը, սակայն վերջին վկայությունը 82բ թերթի վրա է եւ ավարտվում է 1735 թվականի դեկտեմբերի 31-ին: Հաջորդ մի քանի թերթերին 18-րդ դարում գծված տարեթվերի աղյուսակներն են, որոնք հասնում են մինչեւ Փրկչական Սի (2020) եւ Հայոց ՌՆԿԹ (2020) թվականը (թերթ 86բ): Ժամանակագրության բնագիրն ընդօրինակվել է Մխիթար Անեցու 1177-ին Հոռոմոսում կատարած ընդօրինակությունից (Մատենադարան, ձեռ. թիվ 3613): Համեմատությունն ցույց է տալիս, որ Ներսեսն ընդօրինակել է ժամանակագրության մեկ այլ օրինակ, սակայն ուրիշ նախօրինակից:

2. Եփրեմ Ղափանցու գործունեության մասին տե՛ս Յ. Սիրունի, Պօլիս եւ իր դերը, հ. Ա, Պէյրութ, 1965, էջ 599-603:

3. Մատենադարան, ձեռ. թիվ 2965: Հիշատակարանում կարդում ենք «Զայս ժողովածու գիրքս եւ գաւազանագիրքս է Ադրիանուպօլսոյ առաջնորդ Եփրէմ վարդապետի ի վայելումն իւրում անձին ՌՃԼԶ (1687) թուականին (118ա):

4. Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001, էջ 3080, 3089, 3109, 3122:

5. Նույն տեղում, էջ 3129:

6. Նույն տեղում, էջ 3135:

7. Ա. Այվազյան, Հայոց եկեղեցին 18-րդ դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, Երեւան, 2003, էջ 232:

8. Ձեռագրում 17-18-րդ դարերին վերաբերող հավելումներից բացի ժամանակագրության երկրորդ մասի սկզբում կան Ավետարանից քաղված ընդմիջարկություններ (թերթ 39բ, 41ա), նաեւ ժամանակին հետագրքրքրական համարված հետեւյալ հավելումը. «Յառաջին ամին ծննդեան Քրիստոսի էր կայսր Հռոմայ Հոգտաւիոս, որ կոչեցաւ Օգոստոս ///, սա արար զամենայն տիեզերս ընդ միոյ իշխանութեամբ, բայց այսպիսի մեծ կայսր ոչ էր առանց արատոյ, այլ ունէր յինքն բազում

պոռնկական ախտ, մինչեւ ի մերձաւորն իւր եւ ննջէր ի մէջ ԺԲ (12) կանանց եւ ԺԲ (12) կուսից» (39բ):

9. Տառը եղծված է:

10. Դավիթ Բաղիշեցին Եսայուն հիշատակում է որպես Փիլիպոս Աղբակեցու (1633-1655) ժամանակի նշանավոր վարդապետներից մեկը: 1653-55 թթ. նա հիմնովին նորոգել է Երնջակի Ս. Կարապետի վանքը, մասնակցել 1665 թ. եկեղեցական ժողովին (Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 359, հ. 1, էջ 400-401, Ա. Այվազյան, նշվ. աշխ., էջ 199, 205, 232):

11. Գրիգոր Զեյթունցին հիշվում է նաեւ 1633-ին, 1655 թ. Մաշտոց է ընդօրինակել (Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 519, Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Գ, կազմեց Վ. Հակոբյան, Երեւան, 1984, էջ 685-686):

12. Այս հատվածում մի քանի թուրքերեն բառեր են օգտագործվել՝ «ջամի»՝ մզկիթ, «էքմեքչի»՝ հացագործ կամ հացթուխ, «մեյխանա»՝ դինետուն:

13. Խոսքը Բագավանի եկեղեցու (Ուչքիլիսեի) մասին է (տե՛ս Պ. Մուրադեան, Կովկասեան մշակութային աշխարհը..., էջ 211-218):

Ը. ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՆՐ ՄԻԱՎՈՐՆԵՐ

Մատենադարան, ձեռ. թիվ 5619, 6354, 5889, 2965, 5596, 481

Մատենադարան, ձեռ. թիվ 5619

Ժամանակագրության հնագույն ընդօրինակության մեջ Սամվել Անեցու երկի ավարտից հետո այն շարունակել են երկու հոգի, տարբեր ժամանակ: **Առաջին շարունակողը** ներկայացրել է Կիլիկիայի 12-14-րդ դարի պատմությանը վերաբերող, այլ աղբյուրներից հայտնի տեղեկություններ պարունակող մի ժամանակագրություն[1] (108բ-113բ): Առաջին շարունակողի հայտնած տեղեկությունները, որ հավանաբար քաղվել են Սամվել Անեցու ժամանակագրության մեկ այլ ձեռագրից, տեղ են գտել վաղարշապատյան հրատարակության տարբեր էջերում[2]:

Երկրորդ շարունակողի հավելումները (114ա-118բ) գրված են նոտրգրով եւ հավանորեն նույնպես քաղվել են ժամանակագրության մեկ այլ ձեռագրից: Այստեղ նախ երեք թերթ (114ա-116բ) դատարկ է, միայն գծված են աղյուսակները: Հաջորդ թերթերում (117ա-118ա) տեղ է գտել յոթ վկայություն, վերջինը Հայոց ՋՄՐ (1499) թվականի դիմաց, որը վերաբերում է Բայազիտ Բ-ի (1481-1512) մի արշավանքին: Դրանից հետո տարեթվերի շարքը շարունակված է (118բ) եւ հասցված մինչեւ Հայոց ՋՀԲ (1523) թվականը: Դրանից կարող ենք եզրակացնել, որ երկրորդ շարունակողն ապրել է 16-րդ դարի առաջին կեսին:

Այս հատվածն ունի այն գրչությունը, որով հավելումներ են կատարվել Սամվել Անեցու ժամանակագրության մեջ: Այդ նույն ձեռագրով երկու փոքր հավելում կա նաեւ այս ձեռագրում ժամանակագրության առաջին շարունակողի գրած հատվածում: Վերջապես այդ ձեռագրով մի հիշատակարան է եղել Անեցու ժամանակագրության ավարտն ազդարարող ծանոթագրությունից հետո, որը ջնջված է, սակայն պահպանվել է առաջին տողը. «**Սեբի գիրքս յիշատակ է Մարտիրոս վարդապետին**»[3] (107բ):

Սամվել Անեցու ժամանակագրության հատվածում կատարված հավելումների մի մասը որոշ տարընթերցումներով առկա է հրատարակության մեջ, սակայն դրանք այնտեղ են հայտնվել այլ ձեռագրերի միջոցով:

Փրկչական ՄԼԸ (238) «**զԱղէքսանդրոս Մամեա ոմանք ԺԳ** (13) **ամ ասէն եւ այլք ԺԶ** (16)»[4] (62ա):

ՄԽԸ (248) «**Սկիզբն Թուականին Հըռոմայեցոց**»[5] (62բ):

Յհե (345) թվականից հետո, աղյուսակի ներքեւում (ստորին լուսանցքում). «**Կոստանդինոս ի Գալլիայ, Կոստաս ի Հռոմ եւ Կոստանդէս ի Կոստանդնուպոլիս, որ համախոհ եղեւ Արիոսի եւ ասաց դարձուցանել զսայ եւ ընդունել եւ էհաս նմա դատաստան Աստուծոյ**»[6] (66ա):

Հայոց ՁԸ (639) Թեոդորոս Ռշտունուն վերաբերող հատվածում. «**Սորա որդի էր Վարթ Պատրկ**» (76ա):

Սահակ Ձորափորեցի (677-703) կաթողիկոսի առնչությամբ Հայոց ՃԻԷ (678) թվականի դիմաց Սամվել Անեցու գրածը՝ «Տէր Սահակ ամս ԻԶ (26)», չարունակված է. «**Սա գնաց ընդդէմ Տաճկ(ա)ց Մահմէտի**»[7], իսկ այունակի հակառակ կողմում. «**Տէր Սահակ Ձորափորոյ ի գեղջէ Արքուայ, սա գնաց ընդդէմ Մահմէտի, ի խառան մեռանի**» (79ա):

Հայոց ՆԲ (953) թվականի դիմաց, Աշոտ Ողորմածի թագավորության հատվածում. «**ի սորա աւուրս չինեցան Հաղբատ եւ Սանահին ՆԺ** (961) **թուիս Հայոց**» (91բ):

Հայոց ՆՁԳ (1034) թվականի մոտ, բյուզանդական կայսեր վերաբերյալ («Միխայէլ ամս Զ (6)») ավելացված է. «**Սա չինեաց զՍուրբ Յարութիւն յերուսաղէմ, զաւերեալն. զՄիխայէլս այս զօրս ասէն ի դիւէ եւ չինեաց զսրբարան անարծաթ ի թ(ա)գաւորութիւնն**» (94բ):

Հայոց ՇԺԴ (1065) թվականին դիմաց («Տէր Գրիգորէս ամս ի (20)»), չարունակված է. «**Վկայսէր որդի Մագիստռոսի**» (97բ):

Հայոց ՇԼԲ (1083) «**Սկիզբն չրջանի Շ** (500)-**եկին**» (99բ):

Մատենադարան, ձեռ. թիվ 6354

17-րդ դարի ժողովածու է[8], գրիչներն են Հովհաննես եւ Դավիթ վարդապետները: Ժամանակագրությունն ունի բազմաթիվ հավելումներ, որոնք առկա են նաեւ Մատենադարանի թիվ 7261 եւ 10202 ձեռագրերում: Վերջին վկայությունը վերաբերում է Հայոց ՌՃԼԶ (1687) թվականին (թերթ 325ա), թեեւ աղյուսակը գծված է նաեւ հաջորդ էջում (վերջին տողը՝ 1735 թ.):

Փրկչական ՇԾԳ (553) թվականի հաջորդող, Հայոց թվականի հաստատման մասին վկայությունից հետո ունի հետեւյալը. «**Յայսմ ժամանակի եղեւ կրկին բաժ(ան)ումն ի Յունաց եւ ի քաղկեդոնական ժողովոյն**» (296բ):

990-ական թվականների հատվածում. «**Ի սկսանել թագաւորութեան Թուրքաց Ծ** (50) **այր հայ ազգաւ, նեղեալք ի նոցունց, ելին յանապատ սպառազինեալք, եկին ի Մարաշ, գտին այր մի քաջ, Փիլարտոս, հայ ազգաւ եւ նովաւ առին զԿկիլիկիայ**»[9] (308բ):

Փրկչական ՌՃՂԳ (1193), Հայոց ՈՆ (1191) թ. «**Զաքարէ եւ Իւանէ յառաջեցին եւ տիրեցին բազում աշխարհաց**»[10] (316ա):

Փրկչական ՌՃՂԹ (1199), Հայոց ՈՆԶ (1197) թ. «**Թագաւորեաց Լեւոն, որդի Ստէփանէի, որդւոյ Լեւոնի Ռուբենանց յազգէ Արշակունեաց**»[11] (316ա):

Փրկչական ՌՄԼԴ (1234), Հայոց ՈՁԱ (1232) թվականի հատվածում. «**Սկիզբն թագաւորութեանց օսմանեացոց, Օսմանն չինական գոլով յարեցաւ յԱլատին սուլթանն Միջագետաց եւ առեալ զօրս ի նմանէ եւ էառ զԲուրսայ եւ թագաւորեաց ամս ԾԸ** (58), **որոյ անուամբն օսմանլու կոչեցան**»[12] (317ա):

Փրկչական ՌՅԽԶ (1346), Հայոց ՉՂԳ (1344) թ. «**Յոհան վարդապետն Քռնեցի**[13] **արար միաբանութիւն ընդ Ցառնկաց միջնորդութեամբ Բարդուղիմոսի եպիսկոպոսին Մարաղոյ**» (319ա):

Փրկչական ՌՅԿԹ (1369), Հայոց ՊԺԶ (1367) թ. «**Մեռաւ Կոստանդին եւ թագաւորէ միւս Կոստանդին յայլմէ ազգէ, որ յայժմ ունի զթագաւորութիւնն**»[14] (319ա):

Փրկչական ՌՅՂԴ (1394), Հայոց ՊԽԱ (1392) թ. «**Կատարեցաւ սուրբ վկայն Աւագ ի Բաղէշ**»[15] (319բ):

1386-1399 թթ. հատվածում. «**Լանկ Թամուրն ելեալ ի Սմրղանտայ եւ գնաց աւ(եր)ելով զաշխարհս մինչեւ ի ծովն ովկիանոս ամս ԺԷ** (17), **զոր արարեալ է Թովմայ Մեծոփեցի վարդապետն զպատմութիւն եւ զաւերումն աշխարհի, որոց ազգի անունն ջաղաթայ կոչի:**

Որդի Թամուրին եարանչահ, որ նստաւ ի Թաւրէզ եւ որդի նորա Օմար յաջորդեաց զտեղի նորա եւ բռնութեամբ զարճոյց զԲուրթէլ ի հաւատոց, որդի Իւանէի Օրբելեանց, տէրն Որոտանա, եւ զՏարսայիճ, տէրն Եղեգեաց եւ զՍօղրոմիչ, տէրն Մոկաց, եւ զՂիտան, տէրն Ան-

բերթի[16] յԱրարատէ, որք բազումք յետոյ զղջացան եւ ի հաւատն Քրիստոսի հաստատեցան[17]:

Միւս որդի Թամուրին Շահռուհ, որ թագաւորեցաւ ի Հրէ քաղաք[18] եւ որդի նորա Ուլուբէկ, որ նստաւ ի Սամրղանդ, որոյ աւուրս զաշայ ասորոյ բարձաւ քրիստոնեութիւն ի Սուլթանիոյ»[19] (319բ):

Մատենադարան, ձեռ. թիվ 5889

Ձեռագրի գրչության հիմնական տվյալներն անհայտ են, ենթադրաբար 17-րդ դարի մատյան է[20]: Ձեռագրի բուն գրչի գրածն ավարտվում է 59բ թերթում, սակայն մինչ այդ եւ դրանից հետո (60ա-60բ)[21] այլ ձեռագրով կատարված են մի քանի հավելումներ:

Թեոդորոս Ռշտունու մասին Սամվել Անեցու կարճ վկայությունը[22] չարունակված է «Եւ այս Թէոդորոս Ռշտունի չինեաց Աղթամար կղզի» (28բ):

Փրկչական ՋԺԸ (918), Հայոց ՅԿԵ (916) «Գագիկ նոր թագաւոր, որ Արծրունեաց, չինեաց Աղթամար սուրբ յեկեղեցի Սուրբ Խաչին եւ իշխէր Գագիկ միայն Վասպուրականի»[23] (47ա):

«Ի թվին ՈՀԴ (1225) փայլէր իմաստութեամբ սուրբ վարդապետն Վանական ի վերին կողմանս Աղվանից. սայ աշակերտ մեծին Մխիթարայ, որ վաղճանեցաւ»[24] (57բ):

«Ի թուին ՉԺԲ (1263) ամին փոխի մահուամբ ի Քրիստոս Յօհաննէս Գառնեցին[25], յայսմ ամի փայլէր իմաստութեամբ սուրբ Ստեփաննոս վարդապետն, որդի Յուսկայ քահանայի ի կողմունս Բերկրու եւ Վասպուրականի»[26] (58ա):

Հայոց ՉՀԲ (1323) թվականի հատվածում. «Յայսմ ժամանակի փայլէր իմաստութեամբ Մխիթար վարդապետն ի Մեծոփայ վանս, հանգերձ աշակերտօքն»[27] (59ա):

Փրկչական ՌՅՉԶ (1386) եւ Հայոց ՊԼԳ (1384) թվականի դիմաց՝ «Ելանել Լանկ Թամուրին եւ տիրել ամենայն յերկրիս Պարսից եւ գալն յերկիրն Հայոց եւ ըմբռնե(ա)լ զԻլդրում Պայազիտն եւ երկաթի կաֆասօվ տանելն եւ գալն ի վերայ Վանայ եւ անթիւ մարդիք բերդէն ի վայր ձգելն եւ այլ ամենայն չարիս, զոր գործեաց չարն եւ գնացեալ ի Սմբրղանդ»[28] (60ա):

ՌՆԴ (1404), Հայոց ՊՃԱ (1402) «Վաղճանի Սարգիս վարդապետն

Սորբեցին»[29] (60ա):

ՌՆԹ (1409), Հայոց ՊՃԶ (1407) «Սատակումն Լանկ Թամուրին եւ իբր չուն գոչելն ի մաղաղ եւ ապա ի խոր իջուցանել եւ ջուր անցուցանել զի գարշելի ձայն ոչ դադարէր»[30] (60ա):

ՌՆԺԲ (1412), Հայոց ՊՃԹ (1410) «Շինումն Մեծոփայ վանիցն եւ օծումն ձեռամբ Տաթեւացւոյն»[31] (60ա):

ՌՆԺԸ (1418), Հայոց ՊԿԴ (1416) «Գրիգոր Խլաթեցին Մերենց կոչեցեալ կատարի մարտիրոսական մահուամբ ի Ցիպնայ վանսն»[32] (60ա):

ՌՆԼԳ (1433), Հայոց ՊՁ (1431) «Զօրք անողոք չաղաթային եկեալ յերկիրն Արճշու եւ Արծկու ի վերայ Սքանդարին եւ նայ փախուցեալ եւ զօրացն չաղաթին գերեալ զերկիրն Արճշու եւ Վանայ բազմում եւ անթիւ գերի տարեալ Խորասան»[33] (60ա):

ՌՆԽԹ (1449), Հայոց ՊՂԶ (1447) «Վաղճանի Թումայ վարդապետն Մեծոփեցին»[34] (60բ):

ՌՆՃԵ (1455), Հայոց ՋԲ (1453) «Սուլթան Մահմատն էառ Կոստանդնուպոլիս, ի ձեռաց Յունաց»[35] (60բ):

Մատենադարան, ձեռ. թիվ 2965

Ձեռագիրը Սամվել Անեցու ժամանակագրության հրատարակության համար Ա. Տեր-Միքելյանի օգտագործած ԺԳ մատյանն է (17-րդ դ.), ուր ժամանակագրությունը չարունակված է[36], բացի այդ ունի ավելի բաց թանաքով արված հավելումներ, որոնք որպես տարբերություններ մեղ չեն գտել հրատարակության մեջ: Դրանց մի մասը ներկայացնում է Հռոմի պապերի աթոռակալության թվականները, մի մասը Հայոց կաթողիկոսների անուններին կից գրված նշում է, թե ով էր այդ ժամանակ Հայոց մարզպան կամ իշխան: Հավելումների մի մասը հրատարակված է «Մանր ժամանակագրություններ» ժողովածուի տարբեր նյութերում, ուստի այստեղ ներկայացնում ենք միայն որոշ տարբերություններ ունեցողները:

Մաշտոց Եղիվարդեցու (կաթողիկոս՝ 897-898 թթ.) վերաբերյալ նշված է. «Տէր Մաշտոց Ժ (10) ճգնաւորօք պայծառանայր»[37] (94բ):

Փրկչական ՊՀԷ (877), Հայոց ՅԻԴ (875) «Կաթողիկոս էկաց Տէր Գորգ (Գեւորգ – Կ. Մ.) ի քաղաքագեղջէն Գառնւոյ՝ ամս ԻԲ (22)[38]

յաւուրս թագաւորին Աչոտոյ որդւոյ Սմբատայ, որ գերեցաւ եւ Համամ բարեպաշտ թագաւորն Աղուանից եհան»[39] (97ա):

Այն հատվածում, ուր խոսվում է Վասպուրականի Սենեքերիմ թագավորի՝ երկիրը բյուզանդացիներին տալու եւ Սեբաստիա տեղափոխվելու մասին[40], հավելված է. «**Եւ եկն անդ ե (5) որդովքն, որք էին Դաւիթ, Ատոմ, Կոստանդին, Վէստ եւ Ապուսահլ**»[41] (101բ):

Սամվել Անեցու՝ Հովհաննես Սմբատի թագավորության սկիզբը նշող տեղեկությունից հետո ավելացված է. «**Վաղճանի Տէր Սարգիսն, որ եկաց կաթողիկոս ամ Լ (30): Զկնի Բ (2) ամի կաթողիկոսութեան Տէր Պետրոսի վաղճանի**»[42] (101բ):

Փրկչական ՌՀԷ (1077), Հայոց ՇԻԴ (1075) «**Մեռաւ Ապլղարիպ իշխանաց իշխանն, որդի Հասանայ եւ թաղեցաւ ի Պապէռոնն**»[43] (105ա):

Հայոց ՈԼԶ (1187) «**Մխիթար քահանայ կաթողիկեցի թարգմանեաց զպատճառ խաւարման արեգական եւ լուսնի ի պարսկէ**»[44] (108բ):

Հայոց ՈԾԹ (1210) «**զԻւանէ աթաբէկն կալան ի Խլաթ**»[45] (109):

Հայոց ՈԿԲ (1213) «**Մեռաւ Մխիթար Գոշ վարդապետն**» (109ա):

Հայոց ՉԺ (1261) «**Սպանաւ Զաքարիայ**»[46] (110ա):

Հայոց ՉԾԵ (1306) «**Ղորբանտայ զանն հրամայեաց քրիստոնէից կամ թուրքասցէն եւ կամ տացէն Ը (8) դահեկանս եւ թքանիցէն յերեսս եւ ապտակեսցէն եւ ճողեսցէն զմորուսն եւ կարկատան մի սեւ ի վերայ աջոյ ուսոյն կարեսցէն. նախատինք վասն Քրիստոսի**»[47] (111բ-112ա):

Մատենադարան, ձեռ. թիվ 5596

Ժողովածու է[48], գրչության վայրն անհայտ է, ժամանակը ենթադրաբար համարվել է 13-րդ դարը, իսկ գրչի մասին ձեռագրացուցակում նշվում է. «Գրի՞չ, ստացող՝ Աստուածատուր»[49]: Սակայն այս անունը պահպանած միակ հիշատակարանից երեւում է, որ նա գրիչը չէ[50]: Մատյանի գրիչը բաց գույնի թանաքով է գրել, սակայն շատ տեղերում ինչ-որ մեկը մուգ թանաքով անցել է տողերի վրայից, կան նաեւ գրություններ այլ ձեռագրերով[51]:

Նոյ նահապետին վերաբերող հատվածից հետո, ձախ լուսանցքում, վերից վար գրված է. «**Եւ յետ ջրոյն եղեւ Նոյի որդի մի՝ Մանիտոն անուն եւ դուստր մի՝ Ատղիկ անուն**»[52] (241բ):

Փրկչական ՄՂԹ (299) թվականի դիմաց «Հռոմա ԻԶ (26) երորդ եպիսկոպոս եկաց»[53] տողից հետո գրիչը բացատրություններն է գրել. «**Բ (2) աւրինակ ունէի եւ անունն չկայր եպիսկոպոսին, ոչ ի մինն, ի միւսն հանդէպ գրած էր, թէ՝ դու գիտ: Ոչ գիտեմ թէ հեղնած, եւ թէ Գիւտն անուն էր**»[54] (282ա):

Փրկչական ՇՀԵ (575), Հայոց ԻԲ (573) «**Մարզպանք տաճիկք զկնի Մժեժա մարզպանութեանն զամս ԼԴ (34)**»[55] (294ա):

Փրկչական ՈՁԲ (672), Հայոց ՃԻԹ (670) «**Գրիգոր Մամիկոնեան որ էր իշխան աշխարհիս Հա[յո]ց պատիւ ունելով պատրկութեան, սպանին խազիկք ի պատերազմի եւ Ներսեհ Շիրակացի իշխան եկաց**»[56] (300ա):

Փրկչական ՊԼԶ (836), Հայոց ՄՁԳ (834) «**Զինէ Սմբատ զՍուրբ քաւարանն յերա[զ]գաւորս մե[ծ]ապայծառ զարդուք եւ կոչի այժմ Շի[ր]ակաւան տեղին այն եւ եկեղեցին ա/// ան եւ բնակարան անհաւատից եւ գայր...**»[57] (306բ):

Մատենադարան, ձեռ. թիվ 481

Այս ձեռագրին Ա. Տեր-Միքելյանը ծանոթացել է ժամանակագրության բնագիրը կազմելուց հետո[58]: Բուն գրչի չարադրանքը ավարտվում է Հայոց ՁՁԴ (1335) թվականով (62ա)[59], որից հետո միայն թվականների սյունակներով թերթեր են (62բ-66ա), իսկ չարունակության մեջ (66բ-68ա) կատարված է մի քանի հավելում:

«(Հայոց) **ՌԻԶ (1577) թվին գեսաւոր աստղ ելաւ յարեւմուտս ծարն յարեւելք, մեծ եւ երկայն եւ բազում աւուրք երեւէր յարեւմտի ցժամանակն մինչեւ Բ (2) Գ (3) ժամ գիշերուն**»[60] (66բ):

«(Հայոց) **ՌՀԳ (1624) յաւգոստոս ամիսն ի Համթայ գիւղն, որ կոչի Քապիկ, եղեւ նշան մեծ, որ ծնաւ կին մի մեռած զաւակ Բ (2) գլխէն Ա (1) գլուխն մարդոյ եւ մէկն հորթոյ եւ մարմինն անարատ հորդու ոտքն, կճղակն, ագին, ամէնն հորդու նման, բայց մին գլուխն մարդու**»[61] (67բ):

«(Հայոց) **ՌՃԻԵ (1676) ի սոյն ամի Շահնաւազ խանն Վրաց ելեալ Ռ (1000) արամբք մեծամեծօք եւ բազմաւ ընծայիւք ի տեսութիւն**

չահ Սուլէյմանին եւ հասեալ ի Խուշկառու հիւանդացաւ եւ յետ տասանց աւուրց հիւանդութեան իւրում մեռաւ, սեպտեմբեր Իէ (27) աւուրբ Գէորգայ պաս չորեքշաբթին ի մուտս արեւու, իսկ զօրք, որք ընդ նմայ, մինչ ի դեկտեմբեր քսան եւ հինգն դեռեւս ի յԱսպահան են»[62] *(68ա):*

Ծանոթագրություններ

1. Ժամանակագրությունը սկսվում է չորս սյունակով. առաջինում Քրիչական թվականն է՝ ՌՃՁԱ (1181), երկրորդում հայոց իշխանությունը՝ «Հայոց պատրոն Ռուբէն որդի Ստեփան» Ա (առաջին տարին), երրորդում կաթողիկոսական թվականը՝ «Կաթողիկոս Տէր Գրիգոր Տղա» Զ (6-րդ տարին) եւ չորրորդում Հայոց թվականը՝ ՈԻԸ (1180): Ժամանակագրությունը շարունակվում է մինչեւ Հայոց ՉՂՉ (1347) թվականը, որի դիմաց նշված է. «Ի սոյն ամի եղեւ սով յարեւելք, որ բազումք ի սովոյ մեռան» (Մատենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 113բ):

2. Անեցի, էջ 143-169: Այս ժամանակագրության 1305 թ. դիմաց (թերթ 112ա) նշված է աղանդավորության մասին ուշագրավ մի տեղեկություն, որը հրատարակել է Լ. Խաչիկյանը (Լ. Խաչիկյան, Աշխատություններ, հ. Գ, Երեւան, 2008, էջ 457):

3. Հավանաբար Սամվել Անեցու ժամանակագրության՝ Եւսեբիոս Կեսարացու գրքի հետ ունեցած նմանության պատճառով է ձեռագիրը «Սեբի գիրք» կոչվել, ինչպես Խորենացուց կատարված ընդօրինակության մեջ է՝ «Սեբի ժամանակագրի» (տե՛ս Ա. Մաթեւոսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» չորրորդ գիրքը, էջ 150, 192):

4. Համմա. Անեցի, էջ 60:

5. Համմա. Անեցի, էջ 61:

6. Հրատարակության մեջ՝ «ՅԽԴ (344) Հռոմայեցոց՝ Կոստանդին եւ Կոստաս եւ Կոստանդինոս՝ որդիք Կոստանդիանոսի, ամս ԻԴ» (Անեցի, էջ 65):

7. «Սահակն, գնաց ընդդէմ Տաճկաց» արտահայտությունը հավանաբար այս կաթողիկոսի մասին տարածված ձեւակերպում է եղել, որն օգտագործել է նաեւ Գր. Տաթեւացին (տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 877): Հիշված «Մահմէտը» Մուհամմեդ իբն Օկբան է:

8. Գրված է թղթի վրա (թերթ 327, 25×18 սմ): Սամվել Անեցու ժամանակագրությունը զբաղեցնում է 267ա-325բ թերթերը, առաջին մասը՝ մինչեւ աղյուսակները՝ գրված է բոլորգրով, իսկ երկրորդ մասը (286ա թերթից)՝ նոտրգրով: Աղյուսակներում Քրիչական եւ Հայոց թվականները գրված են կարմիրով:

9. Տեղեկությունը ժամանակագրական առումով իր տեղում չէ, քանի որ Փիլարտոս Վարաժնունու իշխանությունը ստեղծվեց 1071 թ. Մանազկերտի ճակատամարտից հետո: Վկայությունը քաղված է Միքայել Ասորուց (Տեառն Միխայէլի պատրիարգի Ասորւոց ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1870, էջ 406), որից օգտվել է նաեւ Կիրակոս Գանձակեցին (Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 83):

10. 1191 թվականին Զաքարյանները կարճ ժամանակով գրավել են Ախլաթածոտնը (Ա. Շահնազարյան, Զաքարյանների ազատամարտերի առաջին փուլը, էջ 135):

11. Տարբեր աղբյուրներում Ռուբեն Ա-ի (Ռուբինյանների) ծագումն ավելի հաճախ կապվել է Բագրատունիների եւ Արծրունիների տոհմի, անգամ Հայկազունների հետ (Է. Բաղդասարյան, Կիլիկիայում Ռուբինյան հարստության հիմնադիր Ռուբեն Ա իշխանը եւ իր գործը, «Էջմիածին», 2006, Զ, էջ 87): Անեցու ժամանակագրության հրատարակության մեջ Ռուբենի մասին տեղեկությունները բավականին մեծ թիվ են կազմում, այն դեպքում, երբ հեղինակային բնագրում դրանք իսպառ բացակայում են (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 65-66, 70):

12. Համմա. Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 348:

13. Հովհաննես Քռնեցին (մահ. 1347) Գլաձորի համալսարանի չրջանավարտ լինելով գնացել է Մարաղա, կաթոլիկություն ընդունել եւ 1330-ին նշանակվել Երնջակի դոմինիկյանների առաջնորդ:

14. Խոսքը Կիլիկիայի Հայոց Կոստանդին Դ (1344-1362) եւ Կոստանդին Ե (1365-1373) թագաւորների մասին է (այս ժամանակաշրջանի մասին տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 409-437): Այս տեղեկությունը հետաքրքիր է նրանով, որ պարզում է հավելումների մի մասի հեղինակի ապրած ժամանակը: Դժվար է ասել, թե հավելումների որ մասն է պատկանում այդ անանուն հեղինակին, որը լրացումներն արել է Կոստանդին Ե-ի ժամանակ («...որ յայժմ ունի զթագաւորութիւնն»), մինչեւ նրա մահը՝ 1373 թ.:

15. Ավագ Սալմաստեցու վկայաբանությունը չարաղրած Գրիգոր Խլաթեցին նշում է, որ նա նահատակվել է Բաղեշում 1390 թվականին (Ա. Մաթեւոսյան, Ս. Մարաբյան, Գրիգոր Մերենց Խլաթեցի, Երեւան, 2000, էջ 101, 155-159):

16. Ամբերդի տեր Ադիդանի անունն ընդմիջարկողը գրում է Ղիտան, ինչպես որ Մեծոփեցու ձեռագրերի մեծ մասում է (Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, էջ 120): Ընդունված կարծիքի համաձայն, Ամբերդը գոյատեւել է «մինչեւ Լենկթեմուրի աշխարհավեր արշավանքները», որից հետո կործանվել է եւ դադարել «որպես ամրոց գոյություն ունենալուց» (Ս. Հարությունյան, Անբերդ, Երեւան, 1978, էջ 30): Ադիդանի

մասին Մեծոփեցու տեղեկությունը՝ «...եւ ազատորդի մի Աղիդան անուն՝ ի յԱրարատեան գաւառէ, ի գեղջէն Աղցուց» (Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, էջ 109), մեր ձեռագրի գրիչը լրացրել է **«տէրն Անբերթի յԱրարատէ»** ուշագրավ ձեւակերպմամբ: Այստեղ տեղանվան չփոթության մասին խոսք լինել չի կարող, քանի որ Մեծոփեցին գրում է, որ ազատորդին ծագումով Աղցք գյուղից էր, իսկ հավելում կատարողը նշում է, որ նա Ամբերդի տերն էր: Այն, որ Ամբերդն այս շրջանում կործանված չի եղել, երեւում է նաեւ այլ փաստերից: 1460 թ. հիշատակվում է «վարդապետն Ստեփաննոս յԱրարադեան գաւառէ, ի յականաւոր եւ յանմատոյց դըղեկէն Անբերդւոյ...» (Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, էջ 436), իսկ 1469 թ. Բյուրականում գրված ձեռագրում հիշվում է. «զԱնբերդոյ ժողովուրդն առհասարակ» (Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, էջ 290):

17. Հայ իշխանների նկատմամբ գործադրված բռնությունը տեղի է ունեցել 1405-1406 թթ., քանի որ դրանից հետո Լենկ Թեմուրի որդիները Կարա Յուսուֆի ճնշմամբ կորցրեցին իրենց իշխանությունը: Մեծոփեցու եւ այս ձեռագրի վկայությունների մեջ հետաքրքրական է հատկապես իշխանների մասին ասվածը: Մեծոփեցին նախ պատմում է Թեմուրի որդի Միրանշահի եւ սրա որդի Օմարի (Միրզա-Օմար) մասին, որի իշխանության առաջին տարում կրոնափոխ են արվել երեք հայ իշխաններ («Գ (3) իշխան յազգէս մեր») (Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, էջ 108): Դրանք են Իվանեի որդի Բուրթելը (Բուրթել մեծի թոռը, որ հիշվում է 1403-1407 թթ), «յազգէ Օրբէլեանց, զտէրն Որոտան», սրա եղբայր Սմբատը, որոնք տարվել են Սամարղանդ, եւ Գորգունի որդի Տարսայիճը՝ «զտէրն Եղեգեաց» (հիշվում է 1403-1419 թթ) (Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը, Բանբեր Մատենադարանի, 9, Երեւան, 1969, էջ 180, 182, 188): Ապա առանց անունը տալու նշում է Մակվի երկաբնակ հայ իշխանին՝ «զտէրն Մակուայ» եւ «ազատորդի» Աղիդանին: Քիչ անց նույն դեպքը համառոտելով նշում է Մակվի իշխանին՝ «Սօրղաթմիշն»: (Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, էջ 109, 120): Մեր ձեռագրի գրիչն օգտվել է երկու վկայություններից, սակայն զանց է առել Սմբատ Օրբելյանի անունը եւ մի քանի այլ մանրամասներ: Նա «տէրն Մակուայ»-ը սխալմամբ գրել է «տէրն Մոկաց»:

18. Հրե քաղաքն այժմյան Հերաթն է:

19. Տեղեկությունների աղբյուրը Թովմա Մեծոփեցու պատմությունն է, որի մասին նշում է հենց ընդմիջարկություն կատարողը (Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, էջ 34-36, 108-109, 119-120):

20. Գրված է թղթի վրա, նոտրգրով (թերթ՝ 84, 19×12,5 սմ), ժամանակագրությունը զբաղեցնում է 17բ-61բ թերթերը:

21. Դրան հաջորդող թերթերին (61ա-61բ) տեքստ չկա եւ միայն թվականներով սյունակներն են գծված. վերջին թվականը՝ Քրկչական ՌՈՀ (1670), Հայոց ՌՃԺԷ (1668):

22. Անեցի, էջ 80:

23. Գագիկ Արծրունին թագավոր է դարձել 908 թ.:

24. Վանական վարդապետը (1181-1251) Մխիթար Գոշի աշակերտն էր:

25. Հովհաննես Գառնեցին մահացել է Հռոմկլայում, բայց մահվան թվականն այլ աղբյուրներից հայտնի չէ: Նրա մասին տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, էջ 582-583, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 260, Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության, աշխատասիրությամբ Պ. Խաչատրյանի եւ Հ. Բյոսեյանի, Ս. Էջմիածին, 2003, էջ 554:

26. Ստեփաննոս Հռոսկանորդին (Տերհռոսկանորդի) մահացել է 1251 թ.: Նրա գործունեության մասին տե՛ս Կ. Մաթեւոսյան, Երեք երեւելի վարդապետ, «Գարուն», 1991, էջ 82:

27. Խոսքը Մխիթար Սասնեցի (մահ. 1337 թ.) բառունապետի մասին է (տե՛ս Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության, էջ 649):

28. Այս տեղեկությունը որոշ տարընթերցումներով տեղ է գտել նաեւ այլ մանր ժամանակագրություններում, սակայն Հայոց ՊԼԶ (1387) թվականի դիմաց (Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 167, հ. 2, էջ 265, 351, 392):

29. Սարգիս Սորբեցու կամ Ապրակունեցու մահվան վերաբերյալ գրականության մեջ նշվում են 1401 կամ 1404 թվականները (Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, էջ 74, Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, էջ 440-441, Ա. Մաթեւոսյան, Մեծոփավանքի գրչության կենտրոնը, Ս. Էջմիածին, 1997, էջ 58):

30. Լենկ Թեմուրը մահացել է 1405 թ.: Հավելման հեղինակն օգտվել է Թովմա Մեծոփեցուց (Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, էջ 112-113):

31. Գրիգոր Տաթեւացին Մեծոփավանքում է եղել 1408-1409 թվականներին, մահացել է 1410-ին:

32. Գրիգոր Խլաթեցին նահատակվել է 1425 թ. (Ա. Մաթեւոսյան, Ս. Մարաբյան, Գրիգոր Մերենց Խլաթեցի, էջ 34-36):

33. Ժամանակի հիշատակարանների համաձայն դեպքերը տեղի են ունեցել 1429-1430 թթ. (Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ XXV, 419):

34. Թովմա Մեծոփեցին մահացել է 1446 թ.:

35. Թուրքերը Կոստանդնուպոլիսը գրավել են 1453 թ. մայիսի 29-ին:

36. Ա. Տեր-Միքելյանը շարունակված մասը հրատարակել է «Շարունակութիւն ԺԳ օրինակէն» վերնագրի տակ, ընդգրկելով Հայոց ՊԽԱ (1392) ՌՃԺԴ (1665) թվականները (Անեցի, էջ 175-180):

37. Տեղեկությունը նշված է Հայոց ՄԽԱ (792) թվականի դիմաց, որը սխալ է: Պետք է լիներ ՅԽԱ (892) թվականի դիմաց, ինչպես հնագույն

ժամանակագրություններից մեկում. «ՅԽԱ (892) Մաշտոց ճգնաւորական հանդեսիս պայծառանայր» (Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 24):

38. Հմմտ. Անեցի, էջ 95: Շարունակված է այլ գրով:

39. Խոսքը Սմբատ Ա Բագրատունու եւ արաբ Ափշին ոստիկանի համատարտության ժամանակ Գեւորգ Գառնեցի կաթողիկոսի գերության եւ երկամսյա բանտարկության մասին է, որն ավարտվեց փրկագնի վճարմամբ եւ Համամ Արեւելցու միջնորդությամբ, հավանաբար 894 թ. (Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 1173):

40. Անեցի, էջ 104:

41. Նույն դեպքին անդրադառնալով՝ Վարդան Արեւելցին նշում է, որ Սենեքերիմը գնաց «չորս որդւովք, որոց անունքն՝ Դաւիթ եւ Աբուսահլ, Ատոմ եւ Կոստանդին» (Վարդան Արեւելցի, էջ 97): Անունների այլ հերթականությամբ նրանց նշել է նաեւ Մատթեոս Ուռհայեցին՝ «...զ Դաւիթ եւ զ Ատոմ եւ զ Ապուսահլ եւ զ Կոստանդին» (Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, էջ 62): Ինչպես տեսնում ենք, այստեղ չկա Վեստ անունը: Այն առաջին անգամ հանդես է գալիս Անանուն Սեբաստացու (13-րդ դ.) տարեգրության մեջ (Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 131), այնուհետեւ ուշ շրջանի աղբյուրներում, Գրիգոր Կամախեցու խմբագրած եւ Առաքել Դավրիժեցու օգտագործած ժամանակագրություններում (Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 262, Առաքել Դաւրիժեցի, Գիրք պատմութեանց, էջ 467): Բյուզանդական տիտղոս վեստը կարող էր վաղ շրջանում նաեւ անձնանուն դառնալ, սակայն Սենեքերիմի կարծեցյալ որդին միակն է, որ հայտնի է այդ անունով: Հնարավոր է, որ նախնական բնագրում (որից ծագում են հետագա ընդօրինակությունները) նշված է եղել Կոստանդինի տիտղոսը՝ վեստ: Ցավոք հայտնի չէ, թե արդյոք նա ունեցել է այդ տիտղոսը, սակայն նկատենք, որ ի տարբերություն իր մյուս եղբայրների, Կոստանդինը չի մնացել Սեբաստիայում, այլ գտնվել է բյուզանդական ծառայության մեջ, հավանաբար Կոստանդնուպոլսում (Վ. Վարդանյան, Արծրունիները Հայոց պատմության մեջ, Երեւան, 2002, էջ 171):

42. Սարգիս Ա Սեւանցին կաթողիկոսական աթոռից հրաժարվել է 1019 թ., մահացել երկու տարի անց եւ հողին է հանձնվել Հոռոմոսում: Այս տեղեկությունն ուշագրավ է նրանով, որ Սարգսի հրաժարականը դրված է Հովհաննես Սմբատի գահակալության շրջանում: Մինչեւ այժմ այն կարծիքն է իշխել, թե Սարգիս կաթողիկոսն աթոռից հրաժարվել է Գագիկ Ա-ի ժամանակ, սակայն մի շարք փաստեր վկայում են, որ Գագիկը մահացել է 1017 թ., որին հաջորդել է Հովհաննես Սմբատի գահակալությունը, նրա եւ եղբոր՝ Աշոտ Դ-ի ընդհարումը եւ ստեղծված խառնակ իրավիճակում՝ Սարգիս կաթողիկոսի հրաժարականն ու Պետրոս Ա-ի ընտրությունը (այս մասին հանգամանորեն տե՛ս Կ. Մաթեւոսյան, Անին

մայրաքաղաք եւ կաթողիկոսանիստ, «Պատմա-բանասիրական հանդես», 2008, թիվ 3, էջ 12-16):

43. Ապլղարիբ Արծրունի իշխան: Իր ծառայությունների դիմաց Միքայել Է Դուկաս (1071-1078) կայսրը նրան նշանակել է Կիլիկիայի սպարապետ: Ենթադրվում է, որ մահացել է 1080 կամ 1078 թվականին (Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, էջ 22, Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Ա, էջ 415-416): Պատմիչները նրա թաղման տեղը չեն նշում, բայց այդ մասին գրում է Սամվել Սկեւռացին 1190 թ., ավելացնելով, որ իշխանը նախապես Պապեռոնում «չինեալ եկեղեցի մեծ՝ դամբարան հանգստեան սահմանեաց իւր եւ իւրոցն» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 255):

44. Թարգմանության այս թվականն են նշում նաեւ այլ աղբյուրներ: Տե՛ս Մխիթար Անեցի, էջ 7-8:

45. Հրատարակության մեջ այս տեղեկությունը ՈԿ (1211) թվականի դիմաց է (Անեցի, էջ 147): Իրականում Իվանեն գերվել է 1209 թ.:

46. Շահնշահ Ա-ի որդու սպանության թվագրությունը ճիշտ է: Հմմտ. Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 43, 149, Ն. Պողարյան, Ժամանակագրություն..., էջ 261:

47. Հմմտ. Գրիգոր Վարագեցու ժամանակագրությունը (Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 381):

48. Գրված է թղթի վրա, բոլորգրով (թերթ՝ 346, 17×13սմ): Ժամանակագրությունն զբաղեցնում է 238ա-323բ էջերը: Բնագիրը վերջից թերի է, ավարտվում է 1124-26 թթ. Անիի իրադարձություններին վերաբերող հատվածով («...կալեալ զԱպլասւար որդով ընդ իւր խաղացոյց յերկիրն Վրաց ի մահարար տեղի բնակեցուցեալ զնոսա որ եր...» (Մատենադարան, ձեռ. թիվ 5596, 323բ, Հմմտ. Անեցի, էջ 126): Գ. Աբգարյանն անդրադարձել է այս ձեռագրին Հայոց Խոսրով արքայի Կոռնակ (Կորնակ, Կոնակ) սպարապետի մասին գրույցի առիթով, ենթադրելով, որ այն սկզբնապես չի եղել Սամվել Անեցու ժամանակագրության մեջ (Գ. Աբգարյան, Մատենագրական նորույթներ, էջ 83-84): Բանն այն է, որ Մատենադարանում պահվող ժամանակագրության ձեռագրերում միայն այստեղ է բացակայում այդ հատվածը: Սակայն մյուս բոլոր, այդ թվում հնագույն ձեռագրերում, այն առկա է (Անեցի, էջ 62, Մատենադարան, ձեռ. թիվ 5619, 63բ): Մեր կարծիքով Կոռնակի հատվածն այս ձեռագրի գրիչը պարզապես վրիպել է:

49. Յուցակ ձեռագրաց Մատենադարանի, հ. Բ, էջ 141:

50. «Քրիստոս Աստուած ողորմեայ Աստուածատուրին հոգոյն եւ ինձ՝ գրչիս եւ իմոցն ամենայն եւ այնոցիկ որք բարի կամաւք մեզաց թողութիւն հայցեն յիշեցելոցն...» (Մատենադարան, ձեռ. թիվ 5596, էջ 116բ):

51. Ժամանակագրական աղյուսակների ազատ մասերում տեղ են գտել հետագայի ամենատարբեր բովանդակությամբ ու գրչությամբ հա-

վելումներ, համայագրեր (273բ, 274բ, 281բ, 285բ, 291բ, 309բ), ծածկագրեր (283ա, 293բ, 294ա), տոմարական գրառում (288ա), հետագայի հիշատակարան, որը հետեւյալն է. «Աստուած ողորմի Սարգիս միակեցին... չատ աշխատանք արար ի վերայ գրոցս» (315ա): Հնարավոր է, որ Սարգիսը ձեռագրի հետագայի կազմողը կամ նորոգողն է եղել:

52. Աստղիկ աստվածուհու անունը Նոյ նահապետի հետ է կապվել Վարդավառի տոնի քրիստոնեացման ընթացքում: «Բուն հեթանոսական Վարդավառի տոնը քրիստոնեական եկեղեցին փոխարինել է Քրիստոսի պայծառակերպության տոնով, պահպանելով, սակայն, ոչ միայն նրա հին անունը, այլեւ այն ծեսերն ու արարողությունները, որ կատարվել են նրա ժամանակ, հարմարեցնելով դրանք (ջուր սրսկելը, աղավնի բաց թողնելը) բիբլիական ջրհեղեղի եւ Նոյան աղավնու հետ, իսկ Աստղիկ դիցուհուն էլ դարձնելով Նոյի դուստր...» (Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երեւան, 1969, էջ 98):

53. Համմտ. Անեցի, էջ 63:

54. Հռոմի 26-րդ եպիսկոպոսի մասին տեղեկությունը այլ ձեռագրերում ՄՁԲ (282) թվականի դիմաց է, իսկ ՄՂԹ (299) թ. դիմաց 28-րդ եպիսկոպոսն է: Այս ձեռագրում խախտված է նրանց հերթականությունը: Բայց գրչի նշումը թույլ է տալիս որոշ կարծիք կազմելու նախօրինակներում եղած նույն հատվածի մասին: Մասնավորապես Կամրջաձորի օրինակում նշված է. «Ի Հռոմ եպիսկոպ ԻԶ (26) եւ ապա ԻԷ (27) Գայիոս» (Մատենադարան, ձեռ. թիվ 5619, 63բ): Փաստորեն 26-րդ եպիսկոպոսի անունը չկա, ինչպես մեր քննած ձեռագրի նախօրինակներից մեկում: Միջանկյալ նշենք, որ Գրիգոր Գ Պահլավունու աթոռակալության տարիների թիվն էլ այս մատյանում նշված է Ծ (50) (323ա), ինչպես Կամրջաձորի օրինակում (Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 103ա): Երկրորդ նախօրինակում կամ իրոք գրված է եղել «ղու գիտ», կամ եղել է Ուտիկիոս եպիսկոպոսի անունը, ինչպես որ ժամանակագրության այլ օրինակներում է («Ի Հռոմ եպիսկոպոս ԻԶ (26) Ուտիկիոս եւ ապա ԻԷ (27) Գայիոս») (Անեցի, էջ 62), սակայն, գուցե եղծված է եղել, եւ գրիչը չի կարողացել վերծանել:

55. Համմտ. Անեցի, էջ 75:

56. Համմտ. Անեցի, էջ 84: Խազարների դեմ պատերազմում զոհված Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանին (661-685) պատրիկ է կոչում Կիրակոս Գանձակեցին (Կիրակոս Գանձակեցի, էջ 62):

57. Համմտ. Անեցի, էջ 92: Սամվել Անեցին Երազգավորս-Շիրակավանի եկեղեցու կառուցող է համարել Սմբատ Բագրատունի (Արլաբաս) Խոստովանողին (մահ. 859), եւ ոչ թե Սմբատ Ա Բագրատունի (890-914) թագավորին, ինչպես գրում է Հովհաննես Դրասխանակերտցին, եւ ինչն ընդունված է պատմագրության մեջ: Այս հատվածում «զարդուք» բառից սկսած հետագայի գրիչը սեւ թանաքով անցել է բուն գրչի աղոտ երեւացող բառերի վրայով: Հնարավոր է, որ տառերի մաշվածության պատճառով նա ճիշտ չի ընկալել տեքստը, որի հետեւանքով անորոշ նախադասություն է ստացվել: Ստորին լուսանցքում եղած այս գրության ներքեւի մասում երեւում են բուն գրչի գրած վերջին բառի վերջին երկու տառերը՝ «ոց»: Հնարավոր է, որ վերջին բառը եղել է «Հայոց»:

58. Անեցի, էջ 99:

59. Բուն գրչի վերջին տեղեկությունը, որը վերաբերում է Բուսայիդ խանի սպանությանն ու հաջորդող դեպքերին, այլ ձեռագրերից վերցված, տեղ է գտել ժամանակագրության հրատարակության մեջ (Անեցի, էջ 158-159): Սակայն այնտեղ հիշատակությունը սկսվում է Հայոց ՋԾԳ (1304) եւ ավարտվում ՋԾԵ (1306) թվականներով: Տասնավորը սխալ է տպագրվել: Մեր ձեռագրում թվականները ճիշտ են՝ հատվածը սկսվում է ՋՋԳ (1334) եւ ավարտվում ՋՋԴ (1335) թվականով (Մատենադարան, ձեռ. թիվ 481, թերթ 62ա):

60. Այս երեւույթի մասին որոշ տարընթերցումներով (առանց գիշերային ժամերի հիշատակության) վկայություն է պահպանվել նաեւ այլ ժամանակագրություններում (Մանր ժամանակագրություններ, հ 1, էջ 172, հ. 2, էջ 355):

61. Համմտ. Անեցի, էջ 177:

62. Մահմեդականություն եւ Շահնավազ (Շահ Նավազ) անունն ընդունած Վրաց Վախտանգ 5-րդ թագավորի մահվան մասին հայտնում է նաեւ Զաքարիա Ագուլեցին, այլ մանրամասներով (Մանր ժամանակագրություններ, հ 1, էջ 290): Ամսաթվի եւ մահվան հանգամանքների առումով ներկա տեղեկությունն ավելի հանգամանալից է, իսկ վերջին բառերից կարելի է ենթադրել, որ այն հենց այդ ժամանակ, այսինքն 1676 թ. դեկտեմբերի վերջին է գրվել (Կ. Մաթեւոսյան, Ժամանակագրական նոր միավորներ Սամվել Անեցու ձեռագրերից, «Էջմիածին», 2007, ե, էջ 50-59):

ՀԱՎԵԼՎԱԾ

ա. ՀՈՀԱՆ ՇԻՐԱԿԱՑԻ (13-րդ դ.)
Մատենադարան, ձեռ. թիվ 2865

Սամվել Անեցու ժամանակագրության Մատենադարանի ձեռագրերում եղած հավելումներն ու լրացումները հրատարակելով, որպես հավելված ներկայացնում ենք նաեւ Անիի շրջանում բնակված Հոհան գրչի կատարած ընդմիջարկությունները, որոնք արվել են Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի եւ Արիստակես Լաստիվերցու երկերը պարունակող ձեռագրում:

Մատենադարանի թիվ 2865 մատյանը, որը ձեռագրացուցակում անվանված է «Պատմագիրք Հայոց», պարունակում է Մովսես Խորենացու Հայոց պատմության հնագույն ընդօրինակություններից մեկը (2բ-135ա), Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի Պատմության (137ա-242ա) եւ Արիստակես Լաստիվերցու Պատմության (242ա-311բ) առայժմ հայտնի ամենավաղ ընդօրինակությունները: Ձեռագրի գրիչը հիշատակարաններում իրեն անվանում է Յոհան: Մովսես Խորենացու Պատմության քննական բնագիրը հրատարակելիս ձեռագրին անդրադարձել են Մ. Աբեղյանն ու Ս. Հարությունյանը[1], իսկ Արիստակես Լաստիվերցու Պատմության համեմատական բնագիրը հրատարակելիս՝ Կ. Յուզբաշյանը[2]: Ասողիկի Պատմության Սանկտպետերբուրգյան հրատարակության ժամանակ Հոհանի ընդօրինակած մատյանը ծանոթ չի եղել Ստ. Մալխասյանցին: Բայց այս ձեռագիրը որպես նախօրինակ է ծառայել հրատարակության համար օգտագործված մի շարք մատյանների համար:

Հոհան գրիչը հիմնականում Ստեփանոս Ասողիկի եւ մասամբ Արիստակես Լաստիվերցու երկերի մեջ լուսանցքներում մի շարք հավելումներ է կատարել: Դրանց մեծ մասը հետագայի գրիչները մուծել են անմիջապես բնագրերի մեջ: Հոհան գրչի մանրատառ հավելումները հիմնականում գրված են լուսանցքներում, հազվադեպ գրասյուների միջեւ, վերաբերում են անիջապես կից տեքստին, կամ ունեն

տարբերանշան (փոքրիկ օղակի կամ լատինական չրջված v տառի նմանությամբ), որը կրկնվում է տեքստի համապատասխան մասում՝ ցույց տալով ընդմիջարկության գետեղման տեղը: Ձեռագրի ուսումնասիրությունը թույլ է տալիս Յոհանի կատարած ընդմիջարկությունները տարանջատել բնագրերից, միաժամանակ դրանց միջոցով մոտավոր պատկերացում կազմել Հոհանի ընդօրինակած մատյանի գրչության տեղի ու ժամանակի մասին:

Այն հարցը, թե որն է եղել Հոհանի բնակության տարածքը, կարող է պատասխան գտնել նրա արած հավելումների պարունակած տեղագրական տվյալների միջոցով: Դրանցում մատնանշվում է, որ նահատակ Տեառնթագի նշխարները գտնվում են **Շիրակ գավառի Բեռնոն գյուղի** եկեղեցում (որը հենց **Տեառընթագ** է կոչվում), որ Դավիթ Սահառունին կառուցել է **Մրենի** եկեղեցին, իսկ Աբաս Բագրատունին կառուցել է **Անիի Փոքր Կաթողիկեն** եւ **Քաղաքադաշտի Ս. Գրիգորը**, Վահրամ Պահլավունին կառուցել է **Մարմաշենը**, Սմբատ Մագիստրոսը՝ **Բագնայրը**, որ Տրդատը **Անիի Գագկաշեն Ս. Գրիգոր եկեղեցու** ճարտարապետն է, Սարգիս Սեւանցի կաթողիկոսը թաղվել է **Հոռոմոսում** եւ վերջապես, որ Ալփասլանից հետո **Անին** երկրորդ անգամ գրավել է Դավիթ Թագավորը՝ 1124 թ., երրորդ անգամ՝ Գեորգին՝ 1161 թ., իսկ 1236-ին թաթարները գրավել են **Անին** եւ ողջ աշխարհը: Դժվար է հավատալ, որ այս տեղեկությունները կարող էր փոխանցել վերը թվարկված բնակավայրերից հեռու գտնվող մեկ այլ տեղում ապրող մի գրիչ: Սա գուտ Շիրակի, իսկ ավելի ստույգ՝ Անիի շրջանի բնակչին հասու տեղեկությունների պաշար է, եւ կարծում ենք, որ սխալված չենք լինի Հոհանին Անիի շրջանում ապրած գրիչ համարելով: Հավանաբար նա գործել է Անիի մերձակա վանքերից մեկում:

Հոհան գրիչը հավելումները կատարել է հիմնականում հայրենի գավառի վանքերի ու եկեղեցիների մասին իրեն հայտնի մի քանի տվյալները պատմությանը փոխանցելու նպատակով (տեսնելով, որ դրանք չկան իր ընդօրինակած պատմագրքերում): Տեղեկություններ մի մասը նա կարող էր քաղել այլ հեղինակներից, ինչպես օրինակ՝ Մրենի եկեղեցու կառուցողի հարցում՝ Հովհաննես Դրասխանակերտցուց, Մարմաշենի ու Բագնայրի դեպքում՝ Սամվել Անեցուց: Սակայն հավանաբար եղել են տվյալներ, որ նա ինքն է իմացել կամ քաղել է առայժմ մեզ անհայտ աղբյուրից, ինչպես օրինակ Անիի Փոքր Կաթո-

դիկեի կառուցման, Տրդատ ճարտարապետի կամ Սարգիս Սեւանցու մասին տեղեկությունները:

Նախորդ հետազոտողները Մատենադարանի թիվ 2865 ձեռագիրը համարում են 13-րդ կամ 14-րդ դարի մատյան: Քանի որ Հոհանը հիշատակություն ունի 1236 թ. Անիի գրավման մասին, այն համարում ենք գրչության ժամանակի ստորին սահմանը: Դատելով գրչի հիշատակարանի ենթատեքստից, հնարավոր է, որ ձեռագիրը գրված լինի մոնղոլների տիրապետության առաջին տասնամյակներին՝ 1240-1250-ական թվականներին[3]:

Մյուս մանրամասները զանց առնելով ներկայացնում ենք նախ Հոհանի հիշատակարանները, որոնք դուրս են մնացել հիշատակարանների ժողովածուներից, ապա ձեռագրում առկա ընդմիջարկությունները (պահպանում ենք գրչի կետադրությունը)[4]:

Հայր մի մոռանար զաչխատութիւնս իմ որ գրեցի, չա՛տս ի լի՛ սրտէ առ Աստուած: Ի Քրիստոս ողորմե՛ա **Յոհաննայ** *քարոզի սորա յանկաչառդ դատաւորութեան, եւ յանակնունելի*[5] *առեւնին: Յորժամ (ղ)առես զտիեզերս*[6] *(189ա)*:

Արդարութեան եւ իմանալի արեգակն, ի գարնանաբեր ծոցածաւալ[7] *ծագողութեանն, ի յաղին աստուածակերտ ծառաստանս, Տանս Ասքանազեան Թորգոմապէ՛տ գրոհի: Ի ձեռն երկաքանչիւրոց դասուց սրբազանից եւթանասնի՛ց եւ երկոտասա՛նց, զԲարթուղիմէոս եւ զԹադէոս հոգիակի՛ր տածողութեամբ սերմանեցին զԲանն Կենաց: Ակնարկելով քաջ հովուապետին Քրիստոսի, զարթուցանել զՏէր առեգակին ի խորափի՛տ գրին: Որոյ արե՛ան վտակաւք ձայնէ՛ր առ նահատակն, արի որ ննջեսդ, զի մի՛ թշնամին որոմնացան յանդգնեսցի՛ զիւրն: Վասն որոյ ելանէր բազմատանջ հայրն, հաստահեղուս հիմամբ արեամբ վկայիցն, որոյ չաղեալ էր երկիրն այնու չինել զՍուրբ Կաթուղիկէ*[8]:

Անդո՛ւստ եւ ա՛յսր որ եարք աստուածայինք հովուապետեալք: Եւ ի կատարել ընթացից արեգականն ընդ ի՛ւր տարաւ զնշոյլս լուսոյ իւրոյ: Նաեւ չքացա՛ւ Գիչերավարն, եւ Արուսեակն[9] *ո՛չ երեւի: Բայց ես միգապատեալս որ զնոցայցն յիշատակ երկրորդեցի*[10] *ձեզ ո՛վ ծնունդք սրբութեան, ողորմութիւնն ի ձեռս ձե՛ր է, զի ես հատա՛յ տա-*

պարտանջ: Այդ ձե՛ր է ա՛ւր փրկու // (242ա) թեան եւ ժամանակ ընդունելի: Ողորմեցարո՛ւք չանս սովամահի: Տո՛ւք ողորմութիւն, ի՛նձ եւ եղբա՛րց իմոց, եւ ծնողա՛ց[11]*: Եւ Քրիստոս Աստուած ի մեծի սոսկալի աւուրն զնա որ զմեզ յիչելոյ արժանի արասցէ, Սրբոց Առաքելո՛ցն եւ Մարգարէիցն, եւ Մարտիրոսացն մասին արժանի արասցէ: Ամէն:*

Աղաչեմ մի՛ անփոյթ առնէր եւ Տէ՛ր հատուսցէ քեզ զվա՛րձս քո:

Ընդ նմին եւ ե՛ս յետինս յամենեսեան եւ քան զբնաւս յանցաւո՛րս, եւ անթի՛ւ մեղաւք ծանրաբեռնեալս, եւ արժանիս բազո՛ւմ մահուց եւ ո՛չ մի կենաց, խաւարամա՛ծս ոգւով **Յոհա՛ն** *գրիչ: Աղաչեմ*[12] *յիչե՛լ յաղաւթս առաջի Քրիստոսի զի՛ս եւ զծնո՛ղսն իմ, եւ զեղբայրս իմ: Եւ* **զԲամբկոցն**[13]*, որ յուսո՛վ սատարեաց ինձ ի գործառնութիւնս: Որպէս զի աղաւթիւք ձեր գտցո՛ւք ողորմութիւն ի Քրիստոսէ: Եւ Տէ՛ր տացէ զարիտուրն ձեզ բազո՛ւմս, ամէն (242բ)*:

*Քրիստոս Աստուած, որ հատուցանես ամենեցուն զվարձս: Հետո՛ **Բամբկոցին** հարիւրապատիկ եւ հազարապատիկ: Զի ի Քե՛ն եմք եղեալ եւ Քո՛ ողորմութեանդ սպասեալ մնամք, մի՛ ճշմարտութեամբ Քո քննեսցուք այլ գթութեամբ Քո քաւեսցուք: Եւ Քեզ փառս վերառաքեսցուք յաւիտեա՛նս յ(աւիտենից) (309ա)*:

Կաթողիկոս Հովհան Մանդակունու (478-490) աթոռակալության մասին գրելուց հետո Ասողիկը նշում է արշարունեցի Տեառնթագի նահատակության մասին[14]*, որի վերաբերյալ Հոհան գրիչը ձեռագրի ստորին լուսանցքում ավելացրել է. «**Նչխարք սորա հանգուցան ի Շիրա՛կ գաւառի ի գեւղն որ Բեռնա՛ւնս կոչի, յեկեղեցւոջն որ Տեառնթա՛գ ասեն**» (162բ)*:

*Վահան Մամիկոնյանին (Հայոց սպարապետ եւ մարզպան, մոտ 487-505 թթ.) եւ նրա ձեռամբ էջմիածնի տաճարի նորոգմանը նվիրված հատվածում, դարձյալ ստորին լուսանցքում, գրիչն ավելացրել է. «**Յաւուրս Վահանայ յայտնեցան նչխարք Սուրբ Առաքելոյն Թադէոսի եւ Սանդխտոյ եւ Սրբոյն Գրիգորի լուսաւորչին մերոյ**» (163ա)*[15]:

Ասողիկի պատմության այն հատվածում, ուր ասվում է, որ Պարսից թագավորը «իչխան հաստատէ Հայոց զԴաւիթ Սահառունի, որ կալաւ զհազարապետութիւն Հայոց ամս Լ (30)»[16]*, Հոհանը գրասյու-*

ների միջեւ ավելացրել է. «**Ի Մրեն զեկեղեցին սա չինեաց**»[17] (165ա):

Պատմության այն հատվածում, ուր Ասողիկը պատմում է, որ Աբաս Բագրատունի (929-953) թագավորը կառուցել է Կարսի եկեղեցին, Հոհանը ձախ լուսանցքում ավելացրել է հետեւյալը. «**Սա չինէ եւ զՓոքր Կաթուղիկէն Անւոյ: Եւ զՍուրբ Գրիգոր, ի Քաղաքոյ դաշտին**»[18] (196բ):

Ասողիկը գրում է, որ 998 թ. Մամլան ամիրայի դեմ մղված ճակատամարտի ժամանակ Անիի թագավորության վեց հազարանոց զորաբանակի հրամանատարությունը հանձնվել էր «...ի ձեռն իշխանաց իշխանին Վահրամայ որդւոյ Գրիգորոյ, եւ Սմբատայ մաժիստռոսի որդւոյ Վահրամայ, եւ մարզպանին Աշոտոյ»: Այս հատվածից աջ, լուսանցքում, Հոհանն ավելացրել է. «**Պալհաւունոյ որ զՄարմաշէն չինեց: Որ զԲգնէրն չինեց**»[19] (236ա):

Ասողիկի Պատմության համապատասխան հատվածի վերնագիրը՝ «Յաղագս չինելոյն Գագկայ արքային ի քաղաքն Անւոյ զեկեղեցին մեծ անուամբ սրբոյն Գրիգորի» (էջ 240բ-241ա) Հոհանը լրացրել է նույն կարմիր թանաքով, զարդագիծ շրջանակի մեջ գրված հետեւյալ բառերով. «**Տրդատ վարդապետ եկեղեցոյն**»[20] (241ա):

Հաջորդ երկու հավելումը վերաբերում է Արիստակես Լաստիվերցու Պատմությանը:

Սարգիս Սեւանցու (կաթողիկոս՝ 992-1019 թթ., մահ՝ 1022 թ.) մահվան մասին վկայող Արիստակես Լաստիվերցու գրած հատվածի մոտ Հոհանն ավելացրել է. «**Գերեզման նորա ի Հոռոմոսի վանքն**»[21] (248բ):

«Վասն տիեզերահռչակ քաղաքին Անւոյ խողխողմանն սրով» գլխի վերջում, ուր Արիստակես Լաստիվերցին, գրելով «Այս է բաժին անիրաւ քաղաքաց», շարունակում է եւ հարցնում՝ «եւ արդ զինո՞ւ լինի նոցա ի հասանել բարկութեանն Տէառն»[22], այ լուսանցքում ավելացված է հետեւյալը. «**Երկրորդ Դաւիթ թուականն ՇՀԳ** (1124): **Երրորդ Գէորգի թւ ՈԺ** (1161): **Ի ՈՁԵ** (1236) **թաթարն էառ զԱնի եւ զամենայն տիեզերս**»[23] (306ա):

Ծանոթագրություններ

1. Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Տփղիս, 1913 (նմանահանութիւն, Երեւան, 1991), էջ ԻԹ:

2. Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ, աշխատասիրությամբ Կ. Յուզբաշյանի, Երեւան, 1963, էջ 9:

3. Այս հարցի եւ Հոհան գրչի հավելումների մասին մանրամասն ուսումնասիրությունը տե՛ս Կ. Մաթեւոսյան, Յոհան գրչի ընդօրինակած պատմական ժողովածուն եւ կատարած հավելումները, «Էջմիածին», 2008, Զ-է, էջ 102-112:

4. Գրիչն օգտագործել է մեկ կետ, որպես ստորակետ (մենք դնում ենք ստորակետ), չեշտ, բավական շատ, եւ վերջակետ, որը նախադասությունների իմաստից ելնելով, հաճախ կարելի է փոխարինել ստորակետով, սակայն հեղինակի ոճն ու իմաստային չեշտադրումներն ամբողջությամբ արտահայտելու համար կետադրությունն անփոփոխ ենք թողնում:

5. Բնագրում՝ «յանակնանելի»:

6. Այս հիշատակարանը Ասողիկի բնագրի հետ արտագրել են մի շարք գրիչներ (Ստեփանոսի Տարօնեցւոյ Պատմութիւն տիեզերական, աշխատասիրութեամբ Ստ. Մալխասեանցի, Սանկտ-Պետերբուրգ, 1885, էջ 145): Հիշատակարաններից երեւում է, որ Հոհան գրիչն ապրել է վանական միջավայրում եւ դիմում է վանահորը:

7. Հիշատակարանի «ծոցածաւալ», «տապարատանջ» բառերը չկան Հայկազյան բառարանում:

8. Մեծ հիշատակարանի սկիզբը, որը խորհրդաբանորեն ներկայացնում է քրիստոնեության հաստատումը Հայաստանում, շատ ինքնատիպ է, եւ թվում է, որ պատրաստի ձեւակերպումների կրկնություն (շաբլոն) չէ: Հատկապես պատկերավոր է Գրիգոր Լուսավորչին վերաբերող մասը, ուր առանց անունը տալու՝ «բազմատանջ հայրն» եւ այլ հատկանշական արտահայտություններով հեղինակն ակնարկում է նրա գործունեությունը եւ անգամ Էջմիածնի կաթողիկեի կառուցումը:

9. Վեներա մոլորակի երկու անուններն են Գիշերավարն ու Արուսյակը: Երբ այն երկնքում երեւում է լուսաբացին, կոչվում է Արուսյակ, իսկ մայրամուտին՝ Գիշերավար: Այստեղ հիշատակվում են հոգեւոր լուսավորության խորհրդաբանական իմաստով (օրինակ. «Իբրեւ զգիշերավարն պայծառասցո՛ւք հոգւով խաւարային կողմ աշխարհիս» (Գր. Նարեկացի), տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, 1836, նմանահանութիւն, Երեւան, 1979, էջ 374, 555):

10. Գրիչը նշում է, որ պատմագրքերն ընդօրինակելով պահպանում է հին ու նոր «աստվածային հովվապետների» հիշատակը («զնոցայցն յիշատակ երկրորդեցի»): Այս հատվածից երեւում է, որ Հոհանի հիշատակարանը հեղինակային գործ է եւ նրա խոհերի արտահայտությունը:

11. Հոհանը երբ գրում է «Տո՛ւք ողորմութիւն, ի՛նձ եւ եղբա՛րց իմոց, եւ ծնողա՛ց», ամենայն հավանականությամբ նկատի ունի իր վանական հոգեւոր եղբայրներին (ազգականներին հիշատակելիս սովորաբար նախ նշում են ծնողներին, ապա մյուսներին), քանի որ շարունակության մեջ, երբ ավելի անձնական բնույթի տեղեկություններ է հայտնում, խնդրում է հիշել իրեն, ծնողներին եւ եղբորը («զի՛ս եւ զծնա՛ւղսն, իմ եւ զեղբայրն իմ»), այսինքն՝ մեկ եղբայր ուներ:

12. Բնագրում՝ «աղաչել»:

13. Հիշատակարաններում Հոհանից բացի հիշվող երկրորդ անձը Բամբկոցն է, որը սատարել է նրան: Այդ անունը չկա Աճառյանի անձնանունների բառարանում, բայց կա հետեւյալը. «**Բամկոց**, թվի իգական անուն, անշուշտ Բամբկոց (բամբակ) ձեւից» (Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երեւան, 1942, էջ 379): Հետաքրքիր է, որ մեծ հիշատակարանում Հոհանն այդ անունը գրել է Բամկոց եւ մոռացած «բ» տառն ավելացրել է բառի ներքեւի մասում: Կ. Յուզբաշյանը կարծում է, որ Բամբկոցը Հոհանի եղբայրն է: Մեծ հիշատակարանի համապատասխան հատվածը նա հրատարակել է հետեւյալ կերպ. «զծնաւղսն իմ եւ զեղբայրն իմ **զԲամբկոցն**...» (Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ..., էջ 9): Սակայն ձեռագրում այլ կերպ է: Երկրորդ անգամ Բամբկոցի անունը նշվում է առանձին հիշատակարանում եւ այնպիսի ձեւակերպմամբ, որով կարելի էր հիշատակել ձեռագրի ստացողին: Եթե Բամբկոց անունն իսկապես բամբակ բառից է ծագում, այդ դեպքում իրոք պատշաճելով կնոջ, ուրեմն Հոհանին ձեռագիրը գրելու համար սատարած (հավանաբար նյութական ծախսը հոգացած) Բամբկոցը կին է: Համենայն դեպս, Բամբկոցի՝ Հոհանի եղբայրը լինելու վարկածը շատ ավելի խոցելի է, որովհետեւ նման ազգակցության դեպքում վերոհիշյալ փոքր հիշատակարանում գրիչը պետք է որ նշեր այդ մասին կամ առնվազն կրկին հիշեր իր ծնողներին: Իսկ մեծ հիշատակարանում անուններ տալու մեջ ժլատ գրիչը հստակ տարանջատում է մի կողմից՝ իր ծնողներին ու եղբորը, եւ մյուս կողմից՝ «յուսով» (հոգու փրկության հույսով) իրեն սատարած Բամբկոցին: Մոռանալու չէ նաեւ Հոհանի՝ Անիին մոտ լինելու հանգամանքը, քանի որ այս քաղաքում, առավել քան հայկական մեկ այլ բնակավայրում, կանայք սոցիալական որոշակի դիրք էին զբաղեցնում, եւ անեցի ունեւոր մի կին անարգել կարող էր նյութապես սատարել վանական գրչին:

14. «Յայսմ ժամանակի երանելին Տեառնթագ, որ էր ի գաւառէն Արշարունեաց ի Կալոց գեղջէ՝ վկայեալ վասն Քրիստոսի քաջութեամբ՝ կա-

տարեցաւ ի Զառմիհրն Հազարաւուխտոյ, ի զօրավարէն Պարսից» (Ստեփանոսի Տարօնեցւոյ Պատմութիւն, էջ 80):

15. Համմ. Ստեփանոսի Տարօնեցւոյ Պատմութիւն, էջ 81:

16. Ստեփանոսի Տարօնեցւոյ Պատմութիւն, էջ 86: Դավիթ Սահառունու կողմից Մրենի եկեղեցու կառուցման մասին տե՛ս Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, էջ 82-85: Հոհանի ձեռագրից ընդօրինակություն կատարած գրիչներն այս հատվածը մուծել են սխալ տեղում, ուր խոսվում է Կոմիտաս Աղցեցի (615-628) կաթողիկոսի, ապա Հովհան Մայրագոմեցու գործունեության մասին, այդպես էլ նշված է հրատարակության տողատակում (Ստեփանոսի Տարօնեցւոյ Պատմութիւն, էջ 87, ծան. 5):

18. Անիի պատմության համար այս վկայությունը չափազանց կարեւոր է, քանի որ այդ եկեղեցին՝ Փոքր Կաթողիկեն, փաստորեն, կառուցվել է մինչեւ Անիի մայրաքաղաք հռչակվելը: 953 թվականից հորը՝ Աբասին փոխարինած Աշոտ Ողորմածը 961-ին ոչ միայն Անին մայրաքաղաք հռչակեց, այլեւ այդտեղ թագադրվեց, մի արարողություն, որը կատարվում էր կաթողիկոսի ձեռքով՝ եկեղեցում: Դրանից հետո Աշոտը ձեռնարկեց քաղաքի առաջին պարսպի կառուցումը, բայց իր նստավայրում եկեղեցի չկառուցեց (ի տարբերություն Բագրատունի նախորդ եւ հաջորդ թագավորների), քանի որ իր հոր հիմնած եկեղեցին՝ Փոքր Կաթողիկեն, արդեն կանգուն էր, եւ ինքն էլ այդտեղ էր թագադրվել (Կ. Մաթեւոսյան, Անի, էջ 155-158): Հատկանշական է, որ Աշոտ Ողորմածի որդու՝ Սմբատ Բ-ի Անիում կառուցած Մայր տաճարը աղբյուրներում սովորաբար կոչվում է Մեծ Կաթողիկե:

Ինչ վերաբերում է Աբասի կողմից Քաղաքաղաշտի Ս. Գրիգորը (Զվարթնոցը) «չքննելուն», այն պետք է հասկանալ որպես նորոգում, որի մասին նշվում է նաեւ այլ աղբյուրում (Գ. Յովսեփեան, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 87, Կ. Մաթեւոսյան, Անի, էջ 156, 338):

19. Գրիչը ցանկացել է նշել իրեն հայտնի փաստն այն մասին, որ Վահրամ Պահլավունին Մարմաշենն է կառուցել, իսկ Սմբատ Մագիստրոսը՝ Բագնայրը, այդ պատճառով երկու տվյալն առանձնացրել է վերջակետով: Բայց հետագայի ընդօրինակողներն այդ տողերը, որպես միասնական միտք, ներմուծել են բնագրի մեջ, մի դեպքում Վահրամի հոր անունից հետո (ինչպես Ասողիկի հրատարակության մեջ է), մյուս դեպքում՝ Աշոտ մարզպանի, ինչպես հրատարակության տողատակում նշված օրինակում (Ստեփանոսի Տարօնեցւոյ Պատմութիւն, էջ 270), որը տարբեր կարգի չփոթությունների առիթ է տվել: Պահլավունյաց տոհմաբանության տեսակետից հետաքրքրական փաստ է, որ Ասողիկը 1004 թվականին ավարտած իր Պատմության մեջ փաստորեն չի նշել «Պահլա-

վունի» տոհմանունը: Մինչդեռ այն համարվել է այդ տոհմի՝ հիշյալ անունով կոչելու ամենավաղ հիշատակությունը (Լ. Խաչերեան, Գրիգոր Պահլավունի Մագիստրոս, Լոս Անճելըս, 1987, էջ 30): Հոհանի այս ընդմիջարկությյան բացահայտումը նպաստել է նաեւ Սամբատ Մագիստրոսի ծագման խնդիրը պարզելուն (տե՛ս Կ. Մաթեւոսյան, Սմբատ Մագիստրոս, «Հանդէս ամսօրեայ», 2008):

20. Անիում Զվարթնոցի նմանությամբ կառուցված Գագկաշեն Ս. Գրիգոր եկեղեցու ճարտարապետի վերաբերյալ չեն պահպանվել վիմագիր եւ մատենագրական այլ տեղեկություններ: Մանանագետները միայն ենթադրել են, որ ճարտարապետը կարող էր Տրդատը լինել, աչքի առաջ ունենալով Ասողիկի Պատմության հրատարակությունը, ուր Հոհանի ընդմիջարկությունն արտագրող գրիչները որոշ բառեր էլ իրենք ավելացնելով ստացել են Ստ. Մալխասյանցի՝ տողատակում բերած հետեւյալ գրառումը. «Ջ.՝ որ անուամբ սրբոյն գէորգեա. միդատ (ընթերցիր՝ տրդատ) վարպետ եկեղեցւոյն» (Ստեփանոսի Տարօնեցւոյ Պատմութիւն, էջ 282:) Հոհանը ոչ միայն ստույգ նշել է Տրդատի անունը, այլեւ նրա ճարտարապետ՝ **«վարդապետ»** լինելը:

21. Մինչեւ այժմ այս տեղեկության հեղինակ է համարվել Լաստիվերցին: Բայց այն չկա պատմիչի մեկ այլ ձեռագրում (Մատենադարան, ձեռ. թիվ 6457), որը թեեւ 19-րդ դարից է, բայց ընդօրինակվել է «ի հին ձեռագրէ գրելոյն ի թվին Հայոց ՈԿԳ (1214)» (Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ..., էջ 14), այսինքն ավելի վաղ, քան Հոհանի ձեռագիրն է: Հետաքրքիր է, որ Հոհանի մատյանից ընդօրինակված մի քանի ձեռագրում այս վկայությունը պահպանվել է հենց լուսանցքում (Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ..., էջ 32):

22. Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ..., էջ 136:

23. Հոհան գրիչն Ալփասլանի՝ Անիի գրավումը համարելով քաղաքի առաջին առումը, համարակալելով հաջորդները միանգամայն ճիշտ թվագրմամբ նշում է, որ երկրորդ անգամ Անին գրավել է Վրաց Դավիթ Թագավորը՝ 1124 թ., երրորդ անգամ՝ Գեորգին՝ 1161 թ., իսկ 1236-ին քաղաքը գրավել են թաթարները: Հոհանի այս հավելումը նշված է հրատարակության տողատակում, որոշ տարընթերցումներով եւ առաջին թվականի սխալով՝ «ՋՀԳ» (Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ..., էջ 136):

Բ. ԳՐԻԳՈՐ ՀԱՌԻՃԵՑՈՒ ԹՈՒՂԹԸ
Մատենադարան, ձեռ. թիվ 2680

Հառիճի 12-րդ դարի նշանավոր վանահայր, Մխիթար Անեցու պատմության պատվիրատու Գրիգոր վարդապետի նորահայտ թուղթը բացահայտում է նրա ունեցած կապը Անիի դպրոցի ուսուցչապետ Հովհաննես Սարկավագի հետ: Մինչ թուղթը ներկայացնելը ծանոթանանք Գրիգոր վանահոր մասին պահպանված տեղեկություններին:

Հառիճը մեծ հռչակ ձեռք բերեց 12-րդ դարի վերջերին, երբ շուրջ 1197 թվականին Իվանե եւ Զաքարե Զաքարյաններն այն գնեցին նախկին հայրենատերերից, այստեղ հիմնեցին ամրոց եւ կառուցեցին Կաթողիկե Ս. Աստվածածին մեծադիր եկեղեցին (1201)[1]: Սակայն մինչ այդ Հառիճի վանքը վերականգնել էր Գրիգոր վանահայրը Անի-Շիրակն ավիրած 1064 թ. սելջուկյան արշավանքներից շուրջ 100 տարի անց, այսինքն՝ 1160-ական թվականների երկրորդ կեսին: Այդ մասին է վկայում վանքի Ս. Գրիգոր եկեղեցու պատին նրա թողած արձանագրությունը. «Ես Գրիգոր առաջնորդ սուրբ ուխտիս Հառիճայի չինեցի զտեղի սննդեան իմոյ ի ձ (100)ամեայ կործանմանէ եւ կարգեցի ի սա արս ընտրեալս եւ իրատեալս աւրինաւքն Աստուծոյ եւ հաստատեցի կամակցութեամբ եղբարց...»[2]:

Հառիճեցիները Գրիգոր վանահոր մահից հետո գնահատել են նրա վաստակը եւ հոգացել հիշատակը պահպանելու մասին[3]: Ինքնին խոսուն է նաեւ Գրիգորի՝ Հառիճում պահպանված տապանաքարի արձանագրությունը. **«Այս հանգիստ է երջանիկ ծերունի սուրբ հայր Գրիգորի՝ առաջին առաջնորդի երկրորդ չինութեան սուրբ ուխտիս, որ էր ուսուցիչ եւ աւրինակ բարեաց ամենեցուն:** Աղաչեմք, որք երկրպագէք սրբոյ խաչիս ասացէք. Աստուած յիշեսցէ զհայր Գրիգոր յողորմութեան իւրում եւ զգրիչս եւ զուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ. ամէն: Ի թուին Հայոց ՈԼԷ (1188)»[4]:

Գրիգորի մասին հաջորդ հիշատակությունը պահպանվել է պատմիչ Մխիթար Անեցու մոտ: Ցավոք այդ արժեքավոր պատմությունը, որը բարձր են գնահատել դրանից օգտված հաջորդ դարի հեղինակները (Վարդան Արեւելցի, Ստեփանոս Օրբելյան), այժմ կորած է եւ պահպանվել է միայն սկզբի մասը: Մխիթար Անեցու պատմության առաջին հատվածը պարունակող մեզ հասած միակ ընդօրինակության մեջ (15-րդ դ.) երկի անվանումը այսպիսին է. «Հանդէսք բանից

աշխարհագումար զրուցաց, տիեզերապատում անցից՝ վիպասանեալ ի քաջ գիտնականէ Մխիթարայ, աւագերիցու մեծ Կաթուղիկէին Անւոյ հոյակապ քաղաքի, ի խնդրոյ **հաւր Հառիճայի Գրիգորոյ վարդապետի**»[5]: Իսկ պատմության առաջին ճառում ներկայացնելով իր աշխատության նպատակը՝ Մխիթար Անեցին հետեւյալ խոսքերով է դիմում Գրիգորին. «Արդ՝ ո՛ պատուական հայր Գրիգորիէ, գրեթէ զհարիւր եւ ի (40) ամաց մեծամեծ գործս խնդրէ քո պատուականութիւնդ՝ ի ժամանակաց անտի Յովհաննիսի, յետին եւ վերջնոյն Բագրատունեաց, մինչեւ ի ներկայս յայս, յորում եմս դեռ եւս»[6]: Այսինքն՝ Գրիգորը խնդրել է գրել վերջին 140 տարվա պատմությունը՝ սկսած Հովհաննես Սմբատ թագավորի գահակալության ավարտից (1041 թ.): Ըստ այդմ, նա Մխիթար Անեցուն պատմությունը պատվիրել է մոտավորապես (1041+140) 1181 թվականին: Վերոնշյալ հատվածի չարունակության մեջ Մխիթար Անեցին պատվիրատուին բացատրում է, որ կարեւոր է նաեւ նախընթաց շրջանի պատմությունը, որն ինքը ներկայացնելու է շատ կարճ՝ «յոյժ համառաւատիւ», իսկ ամբողջ գործը՝ երեք պրակով[7]:

Ինչպես երեւում է, Մխիթար Անեցու գործը բավական երկար է տեւել եւ ավարտվել է պատվիրատուի մահից հետո, քանի որ, ինչպես ինքն է գրում, նրա պատմությունը «լայն եւ տարած բանիւք յընդարձակեալ» հասել է «մինչ ի ՈԽԲ (1193) թուականս»[8]:

Հառիճի Գրիգոր վանահոր մասին մինչեւ այժմ հայտնի այս տեղեկություններին ավելանում է Մատենադարանի ձեռագրերից մեկում պահպանված նրա գրած մի թուղթը, որը հասցեագրված է Հովսեփ վարդապետին[9]: Այդ նամակով Գրիգորը Հովսեփ վարդապետին (որը թերեւս ժամանակին իր սանն է եղել եւ որին «սիրելի որդի» է կոչում) խնդրում է գրել մի աղոթք այն քահանաների համար, որոնք պատարագին ներկա գտնվելով, չեն մասնակցում ծեսին եւ հաղորդություն պետք է ստանան ծխական քահանայից:

Գրիգորի թուղթը փոքրածավալ է, զբաղեցնում է ձեռագրի ընդամենը կես էջ, որին անմիջապես հաջորդում է Հովսեփ վարդապետի գրած աղոթքը՝ չուրջ 6 էջ[10]: Աղոթքի վերնագիրն է. «Յովսեփա վարդապետի աղաւթք քահանայից հանդերձելոց միջնորդաւ մերձենալ ի սուրբ Գոհութիւնն, ի խնդրոյ հաւր Գրիգորոյ Հառիճայի» (Հովսեփ վարդապետի՝ Հառիճի վանահայր Գրիգորի խնդրանքով գրած քահանաների աղոթքը, որոնք պատրաստվում են միջնորդով մոտենալ սուրբ Հաղորդությանը):

Դժվար է ստույգ ասել, թե ով է նշված Հովսեփ վարդապետը, սակայն մեր կարծիքով, նա կարող է Հովսեփ Հաղբատեցին լինել[11]:

Փոքր լինելով հանդերձ՝ Գրիգոր Հառիճեցու թուղթը որոշ պատկերացում է տալիս նրա գրավոր խոսքի կուռ ոճի եւ պատկերավորության մասին:

Գրիգորի թղթին հատկապես կարեւորություն է հաղորդում այն հատվածը, ուր նա խոսում է Հովհաննես Սարկավագի մասին: Նշելով, որ իր համար հույժ ցանկալի է եղել նման աղոթք ունենալը, Գրիգորն ավելացնում է, թե կցանկանար, որ այդ աղոթքը Հովհաննես Սարկավագը գրեր, սակայն Սուրբ Հոգին տնօրինել է, որ այդ գործը Հովսեփը կատարի: Իսկ նամակի վերջում կրկին չեշտում է իր կապը Հովհաննես Սարկավագի հետ՝ գրելով, որ «մանուկ» ժամանակ կորցրեց նրան՝ «ծեր իմաստունին», բայց երկրորդ «մանուկ եւ իմաստուն» (այսինքն՝ Հովսեփին) գտավ իր ծերության ժամանակ: Ակնեբեւ է, որ այստեղ նա «մանուկ» բառն օգտագործում է «երիտասարդ» իմաստով:

Գրիգորի տապանաքարի արձանագրությունից երեւում է, որ նա մահացել է ծեր հասակում, որպես «երջանիկ ծերունի»: Եթե ենթադրենք, որ Գրիգորն իր մահկանացուն կնքելիս՝ 1188-ին, մոտավորապես 80 տարեկան էր (եթե ոչ ավելի մեծ), ապա Հովհաննես Սարկավագի մահվան ժամանակ (1129 թ.) առնվազն 20-21 տարեկան պիտի լիներ: Իսկ այն, որ թղթում նա Հովհաննես Սարկավագին մտերմիկ ձեւով կոչում է «մեր Սարկավագը», թույլ է տալիս ենթադրել, որ ժամանակին Հառիճեցի երիտասարդը մեծ ուսուցչապետի կրտսեր աշակերտներից մեկն է եղել: Գրիգորի արդյունավոր գործունեությունը Հառիճում, նաեւ գրասեր եւ ուսումնասեր նկարագիրը, նույնպես դրա հավաստումն են:

Ստորեւ Գրիգոր Հառիճեցու թուղթը ներկայացնում ենք կից աշխարհաբար փոխադրությամբ:

Թուղթ Գրիգորոյ հաւրն Հառիճայի առ Յովսէփ վարդապետ, սիրելի որդի իւր

Ի հեռուստ ժամանակաց հետէ՝ գեղձմամբ սրտի, այս են փափագանք սրտի իմոյ, պատշաճաւոր եւ դիպող աղաւթք կարգել ի քաջէ եւ յաստուածունակ առնէ, զի որ արտաքոյ աղաւթելն կամիցի հա-

ղորդ սուրբ խորհրդոյն՝ ձայնակից լեալ աղաւթեսցէ ի միասին վճարմամբ, զի գեղեցկապէս եւ կարգաւոր լիցի դրութիւնն:

Եւ արդ՝ զի գըտի զոր սիրէի եւ հարկ առնեմ բռնութեամբ փափագանաց, զի լըցցես անյապաղապէս: Ցանկալի զայս լինել ի մերմէն Սարկաւագէ, այլ Հոգին քեզ պատշաճեալ պահեաց: Զի որպէս նայն // (513բ) այլովք յոլովիւքն սաապէս եւ դու սակաւուքս հաղորդեսցիս զտկարութիւն տկարաց բառնալ: Եւ դիցէս աղերս բանի սրտաբէկ ի բերան աղօթողին, զի փրկութեանն եւ արտասուացն մասնաւոր լինիցիս:

Հաւատա ինձ որդեակ իմ, զի թէ զիմն ծեր զվերասացեալն իմաստուն՝ լըքի ի մանկութենէ իմում, զմանուկ եւ զիմաստուն երկրորդ գըտի ի ծերութեան իմում, առաւել բերկրութիւն սրտի:

Ո՛ղջ լեր Աստուծով (514ա):

Հառիճի վանահայր Գրիգորի թուղթը Հովսեփ վարդապետին, իր սիրելի որդուն

Վաղ ժամանակից ի վեր, սրտի տենչանքով, այս է իմ սրտի փափագը, որ մի գիտակ եւ աստվածահաճո մարդ պատշաճ եւ հարմար աղօթք գրի, որպեսզի դրսում աղօթողը, կամենալով մասնակցել սուրբ խորհրդին, ձայնակից լինելով՝ աղօթի՝ միասին ավարտելով, որպեսզի գեղեցիկ եւ կանոնավոր լինի խոսքը:

Եւ ուրեմն՝ քանի որ գտա, ինչ ուզում էի, եւ փափագիս ճնշումից հարկադրված եմ, պիտի լիացնես՝ առանց հապաղելու: Կցանկանայի, որ դա մեր Սարկավագը (Հովհաննես Սարկավագ – Կ. Մ.) աներ, բայց Սուրբ Հոգին քե՛զ հարմար համարեց: Որպեսզի ինչպես որ նա այլ բազում բաներով, այդպես եւ դու փոքր ինչ մասնակցես տկարների տկարությունը վերացնելուն: Եւ սրտառուչ աղերսական խոսք դնես աղօթողի բերանում, որպեսզի նրա փրկությանն ու արտասուքներին մասնակից լինես:

Հավատա ինձ, որդյակ իմ, որ իմ՝ վերեւում հիշած ծեր իմաստունին հրաժեշտ տվեցի մանկությանս ժամանակ, բայց երկրորդ մանուկ եւ իմաստուն գտա իմ ծերության ժամանակ, սրտի մեծ բերկրանքով:

Ո՛ղջ եղիր Աստծով

Ծանոթագրություններ

1. Հառիճը Զաքարյանների առաջին տիրույթն ու հենակետը դարձավ Շադդադյանների տիրապետության տակ գտնվող Շիրակում, որի ոստանին՝ Անիին նրանք տիրեցին 1198 թ վերջերին: Տե՛ս Կ. Մաթեւոսյան, Հառիճի վանքը ԺԳ դարի սկզբին (գրչության կենտրոնը եւ հարակից հարցեր), «Էջմիածին», 1998, Ա, էջ 115-124:

2. Յ. Քիւրտեան, Հոռիճոյ վանքի արձանագրութիւնները, «Բազմավէպ», 1957, № 11-12, էջ 267-268:

3. «Կամաւն Աստուծոյ մեք Հառիճեցիքս՝ հայր Պետրոս եւ այլ եղբարքս, սահմանեցաք ի տաւնի Տապանակին ի մի մատուռն պատարագել զՔրիստոս յանուն Գրիգորոյ, փոխանակ արդեանց իւրոց... ՈՒԱ (1192)» (Յ. Քիւրտեան, Հոռիճոյ վանքի արձանագրութիւնները, էջ 268):

4. Յ. Քիւրտեան, Հոռիճոյ վանքի արձանագրութիւնները, էջ 268:

5. Մխիթար Անեցի, էջ 56:

6. Նույն տեղում, էջ 61:

7. Նույն տեղում: Մխիթար Անեցու եւ նրա պատմության մասին հանգամանորեն տե՛ս Հ. Մարգարյանի հետազոտությունը նշված հրատարակության սկզբում (էջ 5-56):

8. Նույն տեղում, էջ 59:

9. Թուղթը պահպանվել է 1371-1378 թթ. Անգեղակոթում գրված մի մեծարժեք ժողովածուի մեջ, որը թեեւ վերնագրված է «Հարանց վարք», բայց շատ ավելի բազմազան նյութեր է պարունակում (Մատենադարան, ձեռ. թիվ 2680, թերթ 513բ-514ա):

10. Մատենադարան, ձեռ. թիվ 2680, թերթ 514ա-516բ: Առայժմ անտիպ այս աղոթքի վերջին հատվածը վերնագրված է՝ «Յետ ճաշակմանն» (516ա), այսինքն այս հատվածը, որը եռամաս է՝ ուղղված «ի Հայր», «յՈրդիս», «ի Հոգին», պետք է ասվեր հաղորդությունն ստանալուց հետո:

*11. Հաղբատում 1173 թ. Բարսեղ Կեսարացու ճառերն ընդօրինակած Սարգիս գրիչը հիշատակարանի վերջում նշում է. «Կազմեցաւ ձեռամբ **Յովսեփա վարդապետի եւ եղաւ յարկեղ** Սրբոյ Նշանիս» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 208): Հովսեփ վարդապետը հավանաբար ոչ միայն կազմող էր, այլեւ եկեղեցու ձեռագրական պահոցով զբաղվող մարդ: Այդ երեւում է նաեւ Հովսեփ վարդապետի անվան մյուս հիշատակությունից: 1305 թ. Եսայու մարգարեությունն ընդօրինակած մի գրիչ իր ունեցած նախօրինակի մասին հայտնում է. «...կատարեցաւ տառս... ի ստոյգ եւ ընտիր աւրինակէ, որ կոչի Բագնայրեցի,*

զոր սուրբ վարդապետին Յովսէփայ գտեալ թարգմանչացն գրած ի մայրաքաղաքն Հաղբատ» (ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 34)։ Հիմնադրման ժամանակից Հաղբատի վանքը կապված էր Անիի հետ, իսկ Հովհաննես Սարկավագի գործունեության շրջանում ու դրանից հետո այդ կապն առավել սերտ էր (Հաղբատի վարդապետ լինելով Հովհաննես Սարկավագը շուրջ չորս տասնամյակ ուսուցչություն արեց Անիում, իսկ մահից հետո թաղվեց Հաղբատում)։ Սարկավագի սան Գրիգորի թղթում վարդապետի հիշատակման եղանակը՝ «մեր Սակավագ» («Յանկայի զայս լինել ի **մերմէն Սարկաւագէ**») հավասարապես հոգեհարազատ պիտի լիներ Հաղբատի միաբանի համար։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերը Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան

	ձեռ. թիվ	Թվական (դար)	գրիչ	գրչության վայր	ծանոթագրություն
1	481	17-րդ դ.			Հասնում է 1676 թ.
2	1483	1688	Մկրտում Ջուղայեցի	Եւդոկիա (Թոխաթ)	Հասնում է 1424 թ.
3	1484	1661-1671	Հովհաննես		Հասնում է 1424 թ.
4	1486	1597	Սահակ Երզնկացի	Բաբե՞րդ	Հասնում է 1335 թ.
5	1717	1664	Թորոս եպս.		Աղյուսակն ավարտվում է 1165 թ.
6	1718	17-րդ դ.	Ներսես Կամենեցի	Կամենեց	Հասնում է 1202 թ.
7	1719	1615-1616	Զատիք		Հասնում է 1173 թ.
8	1770	1589	Աստվածատուր		Հատված
9	1865	1656	Թորոս եպս.	Երուսաղեմ	Հասնում է 1356 թ., աղյուսակներ չունի
10	1869	1589	Անդրէաս	Եւդոկիա	Հասնում է 1424 թ.
11	1897	13-րդ դ.	Հայրապետ վրդ.		Հասնում է 1173 թ.
12	1898	13-րդ դ.			Հասնում է 1294 թ.
13	1899	1676-1677	Պողոս Գաւառցի	Ամրդոլու վ.	Հասնում է 1335 թ.
14	2965	17-րդ դ.			Հասնում է 1666 թ.
15	3072	17-րդ դ.	Կարապետ		Հասնում է 1425 թ.

16	3613	1177	Մխիթար Անեցի	Հոռոմոս	Հասնում է 1173 թ., առանձին մատյան է
17	3681	1315	Հայրապետ	Ուռընկար	Հասնում է 1173 թ.
18	3965	17-րդ դ.	Ներսես	Կամենեց	Հասնում է 1735 թ.
19	5120	17-րդ դ.			Սկզբից թերի է հասնում է 1335 թ.
20	5596	13-րդ դ.			Հասնում է 1124 թ. (վերջից թերի է)
